



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn


692

19 99. 



ԱՐԿԱԾ Զ

ՎԱՐԴԱՅ ՄԱՄԻԿՈՆԵՆՈՅ



ԱՐԿԱՆԷ

ՎԱՐԴԱՅ ՄԱՄԻԿՈՆԵՆՈՅ

ԳՐԵՑ

Հ. ՍԱՀԱԿ ԹՈՒՆԵԱՆ



1816.



ՎԻԷՆՆԱ

ԳԱՇՏԳԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆԿԸ

1869 ՌՅԺԸ.

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ի Ա Ն Ա Գ Ա Տ Ի մը առջեւ սքանչելի անձինք եւ լած ատեն, նախ ան կը փնտռէ եւ կը հարցընէ թէ նոյներն ուստի եւ ի՞նչ ազգէ են, եւ եթէ իր սիրած ազգի մը քաջերը կամ աւելի եւս իրեն ազգակից են, տենչ ու բորբոք եւ ուրախութիւն միանգամայն սրտին մէջ կը ծնանին. նախ անոնցմէ իրեն ալ պատիւ յառաջ գալուն համար եւ երկրորդ որ ան անձանց զարմանալի քաջութիւններն ու հռչակաւոր գործքերն այնուհետեւ իրեն աչքին ալ անկարելի չեն երեւնար. մանաւանդ թէ զինքն անոնց ետեւէն ինչալու եւ կամ անոնց հակառակներէն գարշելու կը յորդորեն: Սակայն աս ամէն բանին յորդորը միայն բաւական չէ: Գործօն ու հանճարեղ մարդը նոյն խրախուսին ու զարգարուն նկարին վրայ չի մնար, ճշմարիտը սորվել ու գիտնալ կ'ուզէ եւ անկից ետքը բուն գործքին ձեռք զարնել: Ահաբասիկ մեր ազգին պատանեկաց ալ գրգիռ մը, որպէս զի ազգային ճշմարիտ պատմութեանց աղբիւրներուն դիմեն եւ անկից չէ թէ միայն մէկերկու երեւելի ու աստուածապաշտ անձանց քաջութիւններն ու գործքերը սորվին ու անոնց նմանին, հապա նոյնպիսի բիւր հռչակաւոր

4692-60

28. 692

քաջաց կամ նշանաւոր վատաց գործքերը տեսնելով՝ երկու տեսակներէն ալ դաս առնեն, սորվելով միանգամայն այն պատմութիւնը, որն որ ամէն մարդուն պարտքն է գիտնալ, այս ինքն՝ իր Ազգային պատմութիւնը:

Ազգային մատենագրաց գրքերը կարգալուստեն, չի կրնար մարդ Արդայ Մամիկոնեոյ այն զարմանալի դէպքին ալ միտ չդնել, որուն վրայ Ղազար Փարպեցի այսպէս կ'ըսէ. «Աստուած՝ չէ թէ միայն զԱրդ Մամիկոնեան (որն որ Պարսկաստան բանտարկուած էր) այլ նաեւ իր ծառաներն ալ, Շահաստանին ամուր տեղերէն, բարձրաբերձ պարիսպներէն եւ ասպարափակ պահապանաց բազմութենէն, արծուի պէս իր թեւերուն վրայ առնելով՝ եւ զանոնք շատ բնակութիւններէն անցընելով՝ խաղաղութեամբ Հայոց երկիրը հասցուց»: Այս դէպքը դրդեց զմեզ Արդայ արկածից ու անոր զարմանալի ազատութեան վրայ վէպ մը գրել, որն որ կարծենք թէ վերոյիշեալ վախճաններուն համար բոլորովին անօգուտ չ'ըլլար:

Պարսից ահագին տէրութիւնը՝ սաստիկ մոլեռանդութեամբ զարհուրելի ու գարշելի մոգութեան կրօնքը ձեռքն առած եւ անյագ աշխարհակալութեան ոգւով լեցուած, ամէն ազգ իր մէջն ընկզմել կ'ուզէր, մանաւանդ իրեն մօտակաց ազգե-

րը, որոնց մէջ գլխաւորն էր Հայոց ազգը: Հայոց երեւելի իշխաններէն ոմանք իրենց անձնասիրութիւնն ու փառասիրութիւնը յագեցընելու համար այն տէրութեան համաձայնելով, իրենց հայրենիքը թշնամեաց ձեռքը կը մատնէին: Ժամանակին յանդուգն ու կրօնական ձեռնարկութիւնները շահասիրութեան հետ խառնուելով, մէկ կողմանէ հրէշներ կը ծնուցանէին, մէկալ կողմանէ ազնիւ ու դիւցազնական ոգիներ երեւան կը հանէին: Արօնի թշնամիները ճշմարիտ հաւատոյ սիւններն ու նեցուկները կործանել ուզելով, իրենք կործանեցան եւ այնպիսի դժբախտ իջեւան մ'իջան, ուսկից մէկ մ'ալ պրծելու յոյս չեն կրնար ունենալ: Երկայն ատեն արիւնաթաթախ քող մը երկիրը կարմիր ներկելով, հաւատադուժ վատ անձանց մտքին լոյսը կը ծածկէր: Անհաւատարիմ ու անմիտ մարդիկ ձեռքերնին նենգութիւն ու սուր առած՝ իրենց հայրենեաց ու եղբարց դէմ կը կռուէին եւ ապականող ու ամէն բան սպառող պատերազմն ու հուրն աւելի եւս կը բորբոքէին:

Այն ժամանակ բարեբարոյ ու հաւատարիմ քրիստոնեայք շատ աղետից, հազարապատիկ փորձութեանց մէջ ինկան. սակայն նոյն քաջերն ու անշարժ վէմերն այն բիւրաւոր վտանգներուն մէջէն ալ ելան եւ արմաւենեոյ կամ դափնեոյ ոստը՝ որն

որ անյաղթ մարտիկ մը կենդանութեան կամ մահոսան ժամանակը կը պսակէ ու կը խաղաղէ, իրենց ձեռքն առած՝ իրենք ալ պսակուեցան եւ ուրախացան:

Վարդ Մամիկոնեան՝ Հմայեկայ ու Չուիկայ կրտսեր որդին եւ բոլոր իր մերձաւորներն՝ աս քաջարի մարդիկներէն էին. իսկ Վասակ Սիւնին եւ իրեն պէս ուրիշ շատ դենակորոյս իշխաններ՝ անհաւատարիմ վատերէն, որոնք աւելի երկրաւոր մեծութեան ու պատուոյ ետեւէն իշխալով, իրենց կեանքն աս երկրիս վրայ խղճի դառն խայթով անցուցին եւ վերջապէս անարդ մահուամբ յաւիտենական արդար Գատաւորին ձեռքն ինկան:

Բոլոր հետեւեալ դարերն աս վերջինները դատեցին, մատենագիրք ալ անոնց անարժան ընթացքը խայտառակեցին. իսկ առջիններուն յիշատակը գովեստներով մեղի հասցուցին եւ անոնց անունն իրենց աւանդապահ գրքերուն մէջ միշտ պիտի պահեն, որպէս զի ասպագայ դարուց առջեւն ալ թէ անոնք հռչակուին եւ թէ Վերինը փառաւորի, որն որ ամենայն փառաց ու պատուոյ գլխաւոր տուիչն է: Սակայն թէեւ մենք նոյն առաքինի արանց անունները քիչ կամ ոչինչ ալ յիշենք, այսու ամենայնիւ Աննաց գրքին մէջ անջնջելի դրոշմուած են. որովհետեւ առաքինութեան վարձքը՝ երջանիկ անմահութիւն մըն է:



F. Rothbart fec.

Stahlich v. Carl Meyer's Kunst-Anstalt in Bamberg

ԳԼՈՒԽ Ա.

ՄԵՆՈՒԹԻՆ:

ԳԻՍԱԿ՝ անձնեայն ու ահագնատեսիլը խորին մտածմանց մեջ ընկզմած, նորէն այն անդրնդախոր ծովուն մրկալից պլէքներէն ելլելու գիւտ կը փնտռէր: Յորեկուան շքեղ լուսաւորն իր հեռանալու ատեն՝ ճառագայթները միայն լեռանց բարձրաբերձ դադաթներուն վրայ արձըկած էր, եւ ըիչ ատենուան մէջ անկից ալ ժողովուելէն ետեւ՝ երեկոցեան քողը կանաչագեղ մարդին վրայ անցաւ: Գիտակ նստած՝ աս զարմանալի ու փառաւոր բնութեան կը նայէր, եւ սիրտն այնպիսի մշտնջենաւոր զեղեցկութեան տեսութենէն զմայլած ու դիւթուած էր:

Արդեօք աս իրիկունն իմ կենացս նկարն ու պատկերը չէ, կ'ըսէր ինք իրեն: Ջերմ, նեղացուցիչ օրն անցնելէն ետեւ՝ քաղցր ու զովացուցիչ օդ մը կ'իջնէ կը նստի երկրիս վրայ, եւ հեզիկ հով մը քնացողներուն եւ անոնց բնակութեանց վրայ կու գայ կը հանդչի: Այսպէս իմ վրաս ալ՝ ծաղիկ տարիքս սահելէն ետեւ՝ իջաւ սիրտս խաղաղութիւն մը, որն որ հոս չէ կած, դեռ աս հանդարտ ու առանձնական բնակարանը չնստած,

երեւք չէի ունեցեր: Առատ հարստութիւն, փառք ու պատիւ, ամէն բարիք ձեռքս էին, որոնց մահկանացուն կը ցանկայ. զիս երջանիկ կը կարծէի, բայց...: Բարգաւաճ ու զուարթ, երբեմն շողողուն զինուք զարդաբուած, հաւատարիմ պողովատիկ սուրս մէջքէս կախած, սրաթռիչ նժուղի վրայ՝ կողուց եւ յազթուութեան կը վազէի: Բայց հիմայ. հիմակ աւելի երջանիկ եմ, քան թէ այն փառաւորութեան օրերուս մէջ: Աշխարհքիս փոթորիկներ կեանքը գնաց, հիմայ սիրտս հանդարտ է: Ո՛հ, Երկինք, շնորհակալ եմ, շնորհակալ, որ ընթացքս հոս ուղղեցիր, աս խաղաղիկ ապաստանարանը բերիք զիս: Ընորհքդ, Աստուած, ու օգնութիւնդ զիս հազարումէկ արկածներէ ապատեց, քու զօրութեամբդ հսկայ եղած եւ բիւր բարեաց հաղորդ, հիմակ աս հասակիս մէջ, ուրբա զուարթ՝ անցեալ օրերուս տխուր դէմքին կրնամ երկու լուսաւորքս դարձրնել: Գուն, Բարերար, առաջնորդէ, որ վերջին վայրկեանն ալ գալուն պէս՝ կարենամ ըսել. «Պատրաստ եմ»:

«Պութ գիշերն երկիրը կը պատէ, մարդարտաշար շաղ մը կանաչ դաշտերը կը ծածկէ. զով, սիրուն հով մը գլխէս կը սահի կ'երթայ: Ո՛ւր ես, սիրելի Աարդ, ո՛ւր ես: Հանդէս լուստներ կ'անցնի, բայց աչքս՝ դքեղ, սիրելի Աարդ, չհտեսներ. ո՛ւր ես»:

Գիտակ այսպէս խօսած ատեն, յանկարծ մտաւոր մէկ բլրէ գեղեցիկ երգ մը հնչեց, եւ գիշերուան սիւքը նոյն պրանչելի մրմունջը մինչեւ ծերունւոյն ականջը հասցուց:

Երգին ձայնն երթալով կը մտենար, եւ լմննալուն պէս՝ քաղցրանուագ դայլայլիկը մրմնջողը քաջ Գիտակին առջեւ ելաւ: Գիտակ անոյշ արտեւանունքը մատաղ պատանեկին վրայ դարձուց եւ անոր տղայական կերպարանաց ու աշուժութեան վրայ զարմանալով, գորովալիկ սրտով մը՝ իր ձեռքը պագնող պատանեկին այսպէս ըսաւ. «Ո՛ւր էիր, անդգոյ՛ղ տղայ, գիշերը կոխեց. չես գիտեր որ այսպէս մութ ատեն զիւրաւ կրնայ մարդ իր շիտակ շաւիղը կորսնցնել»:

«Խողութիւն, հայր, պատասխանեց բարեսրտութեամբ մանուկը. դուք քանի մը յանձնարարութիւններ բռած էիք ինձի, զանոնք լմնցընելու գացած էի. բայց աս ալ յայտնի է որ ձամբուն ամէն խորշերն ինձի պէս գիտցող չկայ: Չեր հրամանաւ մօտաւոր գեղն երթալով՝ շատ բարեւներ կը բերեմ: Պատուական ու սիրելի Մուշէ երեցին ալ այցելութեան ելլելով, ինձի հետ երկայն՝ գեղեցիկ բաներու վրայ խօսեցաւ, եւ ձեզի համար ալ Սերտ բարեկամիս շատ շատ բարեւներ տար, ըսաւ: Տեսէք, սիրելի հայր, աս գեղեցիկ գիւրքը՝ որն որ շքեղ պատկերով մը զարդարուած է, պարզեւեց ինձի, բտելով որ շատ կարգամ: Յուսամ որ դուք, սիրելի հայր, կը մեկնէք ինձի, այնպէս չէ: Նայեցէք տեսէք, ինչ գեղեցիկ է գիւրքը, ինչ պրանչելի մէջի նկարը: Աստուծոյ սիրելի սուրբերը նկարուած են. կարծեմ՝ չարչարանք ու վիշտ, անձկութիւն ու մահ կրելով եւ ուրիշ շատ ակեաց մէջէն անցնելով, իրենց սէրն ու հաւատքը կը ցուցնեն: Նկատեցէք աս ըմբիշ մարտիկը, ինչպէս իր փղե պէս հսկայ երիւարովը պատերազմի մէջ կը թափանցէ, մէկ ձեռքը՝ փալփլոյ սուր մը, մեկալը՝ կարծես թէ խաչ մ'առած, առիւծի պէս կը կռուի: Աչքը երկնից շափուղեայ կամարին, օսկեղէն շքեղութեամբ կռուց դաշտը ծածկող ձեղուն դարձուցեր է: Պատմեցէք, սիրելի հայր, բտէք ինձի, ո՛վ է ան գլխաւոր մարտիկը, ո՞վ իրեն ըով արիւթեամբ կռուող ու ինկող մարտիկները, որոնք երկիրն անկողին եւ երկինքն անշուշտ հրաշակերտ աթոս կ'ընտրեն. ո՞վ է գիմայինը կամ թշնամին, զորն որ անեւելոյթ ձեռք մը գետին կը կործանէ եւ անոր արեամբն երազընթաց վտակներ կը շինէ»:

Չերունին հառաչեց. բայց չուզեց Աարդայ սիրտը պատուել, քաջ եւ խայտակն գիւցաղին ու անոր մարտակիցներուն անուններն անոր առջեւ գնելով, եւ ոչ երկու գլխաւոր գիւցաղանց յիշատակն ընել կամ անոնց ցեղը յիշել կ'ուզէր: «Գիտես, ըսաւ, սիրելի Աարդ, գիտես Աւարայրի դաշտին վրայ, Տղմուտ

գետին քով եղած պատերազմը, կը յիշես Պարխարայ ամրոցներուն, Արջնհաղ գեղին քով պատահած կռիւր, որոնք քեզի շատ անգամ պատմած եմ. ո՛հ, սա երեւելի մարտիկը, մէկալ բմբիչն ու իրենց քովիննէրը, ամենքն ալ սքանչելի մարդիկ են. անուննին ուրիշ անգամ կը լսես: Գիմացիները հեթանոս Պարսիկներն են, որոնց գէմ խիստ կռուեցան եւ հօրը զօրութեամբ մը, Աստուծոյ վահանը ձեռքերնին՝ յաղթութիւնն ու պատկը մէկտեղ շահեցան: Գուն՝ միայն սա պատկերին վրայ նայելով՝ կրնաս քաջ բլլալ եւ գրքին պատմութիւնը կարգալու ատենդ կրնաս իմանալ, որ անխախտ հաւատքն ինչէր կ'ընէ, մեր յոյսն Աստուծոյ վրայ գնելը՝ որչափ յաղթութիւններ կու տայ. Անոր բազուկը ամէն գոթութեանց գէմ կը գնէ եւ մեծ ու անվիանդ ամրոցներ կը կործանէ: Արքա աւրեմն սա գիրքը, բիւր ու բիւր անգամ կարգա. բայց մեկնութիւնն ու դիւցազանց սլ բլլալն իմանալու գեոժամանակ կայ . . . »:

Արդ թէպէտ եւ Գիսակին երկու երեք վերջի խօսքերն ալ առանց գիմացութեանն ու անմուռնչ լսեց, սակայն իրեն անլուծանելի աւեղծուած երեւցան:

«Որդեակ, շարունակեց Գիսակ, քու երեկոյեան երգդ, այնպէս գեղեցիկ երգած նուազդ, սիրտս թափանցեց: Աչրդ, վայելուչ, վեհ կամ կրօնական երգ մը անսահման մխիթարութիւն ունի եւ շատ ազդեցութիւն՝ ազնիւ ու վսեմ զգածմունք զարթուցանելու: Երբ որ գոթախտութիւնն ու կարօտութիւնը մարդուն գլուխը կու դան, թանձր ամպերով անոր կեանքը կը մթլննայ, ան ատեն գեղեցիկ մրմունջները զնքը կը մխիթարեն, մանաւանդ անոնք՝ որ կրօնից զարմանալի ձգող ու գոթութիւնն ունին:

«Թէ որ ժամանակաւ Աստուծոյ մեծ, փառաւոր տաճար մը տեսնես, մարդիկներու ձեռագործ շքեղ եկեղեցի մը մտնես, ան ատեն բարձրագոյն ազդեցութիւնը կ'իմանաս. եկեղեցւոյ պաշտօնեկց զարդերը,

պաշտօնն ու Աստուծոյ եղած երկրպագութիւնը տեսնելով, երգերն ու դոհութիւնները լսելով, կը հաճիս եւ կը մխիթարուիս: Ան ատեն սրտիդ մէջ լըյս մը պիտի շողայ, ինչպէս հիմակ ալ միշտ կը շողալայ, ան ատեն մեր կրօնից սրբութիւնն ու շքեղութիւնը աւելի պիտի տեսնես, որոնք վառվառն արեգական մը պէս սիրող պիտի վառեն ու լուսաւորեն: Ան ժամանակ, սիրելի Արք, գլուխդ խնարհէ, ինձ մէ սորված պաղատանքներդ թող շրթունքդ սահին ելլեն, եւ բարի միտքդ ու հաստատուն կամքդ, կենացդ մշտնջենաւոր ընթացքին կանոնները նորէն սուրէ, զորոնք վայրկեան մ'ալ անգործունեայ պէտք չէ որ թողու մարդ: Բարա ու լուսեց:

Արդ կայտառ պատանեակը, Գիսակին ամէն մէկ խօսքը սիրաբ կը գրողմէր: «Հայր, ըստ կենդանի եւ սաստիկ եռանդով, ձեր պատմած բաները գուցէ տեսնեմ, նոյն փառաւորութիւնը գուցէ երբեմն նըշմարեմ, բայց մշտնջենաւոր բնութիւնն ալ Աստուծոյ հայակապ տաճար մը չէ: Երկնաբերձ ժայռերը՝ մարմարեայ սիւներուն շէն նմանիւր, որոնց մինչեւ երկնագոյն կամարն ելած դագաթը՝ ամէն աչաց զարմանալի են: Անտառն ու լեռը, դաշտն ու ծաղիկը, ամենափոքր տունին ու արմատն ալ Արարչին զօրութեան ցուցիչ չեն: Ար մարդը կամ մահահանացուն խտին ցողունն ու եղէգը, զորն որ ձեռքով դիւրաւ կրնայ բեկանել, կարող է միանգամայն կենդանացնել: Անաւազարդ ոստոյ տակ նստող կամ օդի մէջ թռչող ու խոյացող թռչուններն իրենց Անդանատուին փութք չեն հոչակեր: Ա՛հ, քանի եւ քանի անգամ, հայր, ան գեղեցիկ բլրին վրայ, թռչնոց հետ մէկտեղ ձայնս երկինք բարձրացուցի, Աստուծոյ զօրութեանն ու գթութեանը բիւր փառք տուի, մանաւանդ երբ որ լըյսը գիշերուան քողը կը պատուէր, եւ հրեղէն դունդն իր փառաւոր կտրքովը մեղմով վեր կ'ելլէր: Օրէ օր նոր ուրախութեամբ սիրտս լեցուելով ու ցորեկուան շարուն սաստը տեսնելով՝ աչքս կը թրջի եւ եռան-

զնայից խօսքերով առաւօտեան աղօթք մը սրտէս կը բխէ: Հայր, ձեզի ինչպէս շնորհակալ ըլլամ, որ հօր ձեռամբ երկինք Բռնորը, արեգական եւ աստեղաց անփոփոխ շրջանն ընել Տուողը սորվեցուցիք ինձի: Գարունն իր ծաղիկներովը, ամառն իր ոսկեթել հասկերու զարդերովը, աշունը թուխ ու թափանցիկ գեղին խաղողի պտակներովը, ձմեռը՝ տփռոյն դէմքովն եւ բնաջինջ շնչովն սփռաւ. անոնց փոփոխմունքն սփորոշեց: Անոր յաւիտենական կամքը...: Հայր, մեկնեցէք ինձի: Ինչո՞ւ մարդ Աստուծոյ ծառայելու համար սուն ու տաճար կը շինէ, ուր բնութեան գեղեցկութիւնը միայն նշմարելով՝ պէտք է որ Աստուծոյ առջեւն իյնայ եւ Անոր փառք տայ ու մեծ զօրութիւնը հնչեցնէ»:

Արդայ սիրուն աշուրները կարծես թէ երկու արեգակունք էին, իր դէմքը կրակ ու բոց կտրած՝ լուսաւոր կայծեր կը ցուայցնէր, կարմիր շրթունքներէն զարմանալի խօսքեր կ'ըլեին: Գիտակ լուիկ եւ ուրախութեամբ գեղեցիկ պատանեկին նայելով՝ անոր սիրտը թափանցող շատ գոյաւոր նետեր նետեց: «Որդեակ, ըսաւ, բնութեան այսչափ դովեստ տալու իրաւունք ունիս: Ապառաժ եւ ադամանդեայ սիրամով ալ բնութեան վրայ եղած գեղեցկութիւնը նշմարելով կը կակղնայ: Բնութեան վրայ միայն մտածելը պէտք էր որ մարդուն սիրտը շարժէր եւ անոր շքեղութիւն Տուողին շնորհակալ ըլլար: Բայց մարդ խորքը թափանցելու վարժած չէ: Արեգական ոսկեթել վարսը տեսնելով՝ ուրախ կ'ըլլայ. շանթը շառաչելու, որոտումը՝ երկնային կամարը տատանելու ատեն՝ կը դողդողայ: Մարդիկ՝ դեռ մեր կրօնին զարմանալիքը չըմբռնած՝ Աստուած ահագին ու զարհուրելի էր իրենց, Անոր բարկութիւնը դադրեցնելու միջոցները զոհերն էին: Բնութեան մէջ դանուող նիւթերու, հրոյ, արեգական եւ ասոնց բիւր արարածոց՝ աստուծոյ անուն ու պատիւ կու տային եւ կու տան, թէպէտ արարածոց ու Արարչին զանազանութիւնն

իրենք ալ կը տեսնէին: Աստուած ճանչցուց ինք զինք ազգի մը բիւր սքանչելիքներով. բայց անոր ալ՝ Աստուած հօր էր եւ ոչ թէ սիրոյ Աստուած: Մարդուն կապանքն ու շղթան քակուեցաւ, երբ որ հրեշտակն ու մարդն պայծառ աստղն եւ անով աշխարհքիս չորս ծայրը շողուն լոյս մը երեւցաւ: Գժբախտ ու եղուկ մարդը շատ բան սորվեցաւ. երկնաւայր Որդիէն հազարաւոր վարդապետութիւններ ուսաւ: Հեթանոսաց հուրն ու սուրբ, այլեւայլ բնութիւնները շատ զուպուեցան. բայց ո՞հ, երանի թէ անոնց զօրութիւնը բոլորովին ջնջուէր: Մեր հաւատքը լուսոյ պէս շուտ յառաջացաւ, թուաւ զնաց արեգական ու լուսնոյ պաշտաման, պէսպէս անշունչ արարածոց երկրպագութեան վրայ խաւար սփռեց, Յունաց բազմաստուածութիւնը ջնջեց ու անով զրեթէ բոլոր հեթանոսութիւնն անգունդ գահազնեցաւ եւ օրէ օր աներեւոյթ կ'ըլլայ: Որդեակ, սիրելի Աւարդ, բնութիւնը միշտ նոյն է, անցած դացած բաները քեզի չի կրնար սորվեցընել: Բայց կայ սորվեցընող՝ եկեղեցին. կայ ուղիղ շաւիղը՝ յիշեցընող՝ եկեղեցւոյ ծառան:


«Վամացա՞ր, սիրելի Աւարդ, ինչո՞ւ եկեղեցիները շինուեցան: Հոն բարեբախտն իր փրկութեան համար Աստուծոյ շնորհակալ կ'ըլլայ, դժբախտը մխիթարութիւն կը խնդրէ, մեղաւորն ու յանցաւորը իր յանցանքներուն թողութիւն կը գտնէ: Ուրեմն դուն ալ, Աւարդ, եկեղեցին մի մոռնար, անկից փախչելով՝ ամբարհաւած եւ թեթեւամիտ մ'ըլլար, որպէս զի Աստուած ալ քեզմէ չփախչի: Աս կենաց նաւը շուտ կ'անցնի կ'երթայ, աշխարհքիս փառաւորութիւնը մեզի հետ վիհ կ'իջնէ. թաղ ու պսակ կամ աղքատի դաւազան՝ պանդուխտը մեկդի կը դնէ եւ մէկէն աչքը կը դոցէ: Գարնան տարիքներուն մէջ եղած պատանին, այր կատարեալն ու արծաթամթել սպիտակալի ծերն ալ մի եւ նոյն ճամբէն կ'երթան, բայց ի՞նչ տարբերութեամբ ամէն մէկը: Բեր, սիրելի Աւարդ, բեր ասոնք միտքդ, երբ որ ես քովդ չեմ ըլլար եւ չեմ կրնար

օգնել. կեցիր եկեղեցւոյ մէջ, որն որ զքեզ միշտ կը պաշտպանէ: Ասոր օրէնքներն ու կանոնները յարգէ եւ իր պաշտօնեայքը մեծարէ»:

Վարդ գեղեցիկ վարդի պէս բացուած, ծեւրունւոյն խօսքերուն միտ կը դնէր, եւ ըսածներուն վրայ համոզուելով, բոլորն ալ իր սրտին խորքը կը թաղէր եւ զգուշութեամբ կը պահէր:

Արծաթեղէն մանդաղի նման լեռներէն շատ վեր բարձրացած էր գիշերուան աչքը եւ իր զուարթարար լոյսը բոլոր դաշտերու վրայ կը տարածէր: Գիսակին բնակարանին ըովն եղող հեղեկ կարկաչող վտակին ալեաց վրան ալ իր ճառագայթները ձգելով՝ դողդոջուն ու շարժուն ալեքը, մարդարտատեսիլ ջուրը Վարդայ եւ Գիսակին սրտերը կը զնայլեցնէր: «Վարդ, ըսաւ Գիսակ, ալ երթանք գիշերուան հանգիստը վայելէնք»:

Պատանին անմիջապէս սոք ելաւ եւ կամաց կամաց հիւղերնին երթալով ու երեկոյեան աղօթքն երկինք խրկելով, իրենց խիստ անխղճոյն այցելութեան ելան. բայց իրենց համար խիստ շէր, այլ քաղցր եւ հանգստաւէտ: Քունը փափուկ ձեռքով իրենց բիբը գոցեց, բայց Աստուծոյ աչքը վրանին բաց էր եւ կը հսկէր:



Տիոուր Գիներումն Գրերը:

ԲԱՅՑ ով էր Վարդ պատանեակն ու ով Գիսակ. եւ ինչ կերպով այն առանձնութեան մէջ կը դանուէին:

Տայոց աշխարհքը, Արահեղ գեղէն քիչ մը հեռու, Մուշէ ծերունի երեցը պատեբաղմնեբէն զերծ, Հայաստանին հազար ալեաց խոռվութեանն աներկիւղ, անագորոյն թշնամեաց ձեռքէն ազատ ու հանգիստ, իր սենեակն առանձին նստած կը մտածէր: Տրտում տխուր գիշեր մը երկիրը պատած էր, սաստիկ փութորիկ մը օդը տակնուվրայ կ'ընէր. յորդահոս անձրեւը, որոտումն ու շանթն ահաղին թնդիւն հանելով, հովը ծերունւոյն տունն ու անոր լուսամուտ երդը բախելով, շաչիւնն ու շառաչիւնն երկրիս մէկ ծայրէն մինչեւ մէկալ ծայրը հնչելով, խաղաղ եւ առանձին երէցը կը սարսափեցնէին: Այսպիսի օդը, երկինք շողացող շանթերը, երկրիս խոռվութիւնները վայրկեան վայրկեան կը սաստկանային:

«Ալ ժամանակն է, ըսաւ ինք իրեն Մուշէ, գիշերուան հանգիստը պէտք է վայելել. անձկու»

Թեանց ու հոգերու վերջ մը տալու համար քաղցր բունը քիչ շատ հարկաւոր է,:

Ինչպէս որ տնէն դուրս ազատ օդի մէջ խոռ- վայոյզ խառնակութիւնը կարծես թէ աշխարհք կը կործանէր եւ ամէնուն սիրտն ահաւոյնով մէջ կը խո- թէր, նոյնպէս ծերունւոյն սիրտն այլեւայլ անձկու- թիւններ ու հոգեր կը մաշեցընէին եւ անձանօթ եր- կիւզ մ'ալ անոր տիրել կ'ուզէր: Հայաստանի մէջ մորթած պատերազմները վրան սարսափ կը ձգէին: Խաղաղութեան ու միութեան զօրը, հանդիսան ու կարգաւորութիւնը արիւննուշտ զինուց բռնութեամբն եղծուած ու աներեւոյթ եղած էին: Գոյժն ու բօթը, ուրախլի կամ հաճոյական աւետիսն ամե- նուն ականջը կը հասնէր. բայց անօգուտ: Գաշտերը, այգեստաններն ու արտորայք աւեր անապատ դար- ձած, անասունները մեռցուած էին կամ բիրտ հեթա- նոս զինուորներէն յափշտակուած: Ամուրն ու անա- մուրը կործանուած էր: Ո՛հ, անմեղը, աղատն ու ան- ազատը, քաղաքացին ու գեղացին՝ թշնամիէն եւ երբեմն նաեւ բարեկամէն կը նեղուէին, թէ մէկը թէ մէկալը հազարումէկ վշտաց մէջ իյնալով՝ կրցած ան- զերնին կը փախչէին, եւ եղուկ, ողորմելի բերդն ու ապարանքը, տնակն ու հիւղը՝ օտարաց ոտնկոխ, դա- զաններու բոյն թող կու տային: Այսչափ աղետից ժամանակ՝ ազնիւ ծերունւոյն անիկը գեռ անարատ մնացած էր, եւ այն զարհուրելի ապականութեանց կարգն անոր չէր հասեր, բայց միշտ նոյն մերձակայ տեղերն ալ այլեւայլ ապիրատ մարդիկներէ կաղ- մուած գնդեր կը դիմէին, որոնց դորձքը՝ կործանել, յափշտակել, այրել ու գերել գերփել էր: Աս չա- ըիքներէն ազատ եղողը՝ ձեռքէն եկածին չափ ուրիշին կ'օգնէր եւ սիրով ու յօժարութեամբ դժբախտնե- րուն օգնական ձեռնտու կ'ըլլար. բայց ափսոս որ օրէ օր չարիքն աւելնալով եւ կերակուրն ու կենաց ամէն հարկաւորը պակսելով, դրեթէ ամէնքը չքաւոր կ'ըլ- լային եւ ապրելու դժուարութիւնը կը սաստկանար:

Բարի ու զթած երեցը իր բազմաթիւ ոչխար- ները կարօտելոց բաժնած էր, քտակն ու համբարա- նոցն անոնց օգնելու համար բացած էր, եւ վտանգ կամ մահ աչքին բան մը չերեւնալով՝ ասդին անդին կ'երթար կու գար ճշմարիտ Աստուծոյ ծառայի պէս, եւ դժբախտն ու ողորմելին կը մխիթարէր, վշտահանը կը բուժէր ու բոլոր թշուառացելոց ալ օգնելու պա- արաստ էր:

Արդ այսչափ ահագին աղէտքն ու Հայոց վըշ- տերը ծերունւոյն աչքին առջեւը դալով, ներկային ու ապագային անմխիթար հողը զենքը կը նեղէր. բնութեան զարհուրելի սօսաւիճնն ալ անոնց հետ միանալով՝ զենքը կը զարհուրեցընէր: Յանկարծ սաստ- կաձայն տնաւեր հով մը բոլոր տնիկը հիմէն շարժեց, լուսամուտ երդը բռնութեամբ բացաւ, հովն ուժգնու- թեամբ ներս յարձակելով՝ լոյսը մարեց, եւ խորին խաւար մը աչքէն ամէն բան աներեւոյթ ըրաւ: Ծե- րունին անապարեց լուսամուտ երդը գոցեց, որպէս զի սենեակը վազող Տիգրիսի պէս հովը ներս չմտնէ, ան- կից ետքը բռնի մարած գիշերուան փալփիլոյ ճրագի բոցը նորէն վառելու ատեն՝ մէկէն տան դուռը զար- նուեցաւ, որով ծերունւոյն խորհուրդներն աւելի խոռվեցան: Շատ, շատ մտածեց թէ արդեւք ո՞վ կրնայ ըլլալ այսպիսի փոթորիկալի գիշերուան մէջ եկողը: Երկիւղալից պատերազմներու ատեն, ահագին արիւնհեղութեանց ժամանակ, աղէկ բան մը չէր կըր- նար յուսացուիլ: Երեցն ասոնք մտածած ատեն՝ դուռը շարունակ ու ձեպով կը զարնուէր, ձիւ մը դափրելն եւ նոյն փոթորիկին զարհուրելի սուլելն ու ձչելը կը լսուէր:

Յատքեց մեծասիրտ ծերունին, հօգին՝ սրբան- չելի խորհուրդներով լեցուեցաւ: «Գուցէ, կ'ըսէր ինք իրեն, դուցէ մեռնելու հիւանդ մը ինձի կարօտ եւ զիս կը կանչէ. ամէն մէկ վայրկեանը հարկաւոր եւ անդիւտ չէ՞ մի. յապաղումը յանցանք չէ՞ մի: Թե որ մոլեղնութեան ու չարութեան ցո՛հ ալ ըլլամ, չեմ վախնար. ամենայն ինչ Աստուծոյ ձեռքն է,»:

Բայց եւ շուտ մը փոքր կայծով մը լոյս վառելով, մեծանձն քաջարտութեամբ մը դուռը բանալու գնաց: Գուռն անդադար կը զարնուէր. բայց երբ որ ձերունին մտեցաւ, խողաղութիւնը տիրեց, ասպնջն չակատութեան ձայնն ու ընդունելութեան նշանը դրօշին ականջը հասնելով, հանդարտեցաւ:

Չերունին մեկէնմէկ դուռը բացաւ եւ երկիւղազին՝ աշուրներն անկոչ հիւրին դարձուց: Բարձր հասակաւ հսկայ մարդ մը, վրան մեծ ու երկայն վերարկու մ'առած եւ անով զինքն ու տղայ մը ծածկած՝ ընդունելութիւն կը խնդրէր: Խոնարհ եւ հեզ կերպարանօք զձերունին ողջունեց եւ սանձէն բռնած յալթանդամ երիւարովն իրեն մտնեալով՝ այսպէս ըսաւ. «Թողութիւն տուր, պատուական ձերունի, որ այսպէս խոր ու մթին դիշերուան ատեն գրեզ անհանդիստ կ'ընեմ. բայց քեզի բտելու շատ բան ունիմ», եւ կարծեմ թէ մինչեւ հիմայ չգտած հանդիստ քովը կը գտնեմ»:

«Մտիւր, պատասխանեց ձերունին ուրախ ու զուարթ սրտիւ, դժբախտութիւնդ շատ մեծ կ'երեւայ այսպիսի ատեն դալուն համար. բայց ինչ եւ իցէ, իմ պաշտօնս օգնելու, ծառայելու պաշտօն է, մտիր: Մտիւր քիչ մը խուցս հանդէ, մինչեւ որ ձին հողամ, եւ սպասաւորս ալ արթնցընեմ, որպէս զի այսպիսի փոթորիկի, ամպրոպաց եւ տեղատարափի բռնուող դժբախտի մը հարկաւոր եղածին չափ օգնեմը»:

«Ինչ, ձին հողալ. նժոյզս պահել. չէ, չէ, չ'ըլար: Աւտիկ առ, ուրիշ աղնիւ բան մը կը յանձնեմ. քեզի. պաշտպանութեան կարօտ եղողն աս է», ըսաւ. եւ վերարկուն մեկդի առնելով՝ իր ասպնջականին ձեռքը հրեշտակամանն ու կայտառ տղայ մը յանձնեց:

Տղան կարծես թէ զինքն ընդունողը ճանչցաւ, եւ ձերունույն ձեռքին վրայ հանդէշէն ետեւ սեւաթոյր փայլուն աշուրներովն անոր կը նայէր: Իսկ ձերունին զանիկայ փայփայելով՝ հանդէշելու տեղ մը

տարաւ: Օտարականն իր սքանչելի ձին դռնէն քիչ մը հեռու տանելով՝ վրան եղածներն առաւ, սանձն ու թամբը մեկդի դրաւ եւ նոյնը վերջին անգամ սիրելէն ետեւ մղեց, հարուածով մը ազատ թողուց. «Գնա, ըսաւ, հաւատարիմ ընկեր, զիս շատ դժբախտութիւններէ ազատող. գնա, այսուհետեւ դուռն ալ ազատ ես», Ըսաւ չըսաւ, նժոյզն իր սրաթուիչ ընթացքովն անոր աչքէն աներեւոյթ եղաւ: Իսկ ինք ունեցածը չունեցածը ժողովելով՝ ներս երիցուն խուցը մտաւ, ուր իր առջեւ տրտմալի տեսիլ մը բացուեցաւ:

Տղան սպասաւորին ձեռքն ուրախ զուարթ, բայց օտար բնակարանը զարմանքով նշմարելով՝ անոր այնչափ բան կը պատմէր՝ որ աղնիւ սպասաւորն ուրախութեամբ լեցուած, ընելքը չէր դիտէր: «Աս դարմանալի մանկան ինչ զրուցեմ», կ'ըսէր մտքէն: «Չօրս հեռ, կ'ըսէր մանուկը, շատ ատեն է որ ձամբան, ազատ օգին մէջն էինք: Հայրս բարի է եւ ինձի շատ սիրելի, բայց արտում տխուր է, եւ երբեմն այնչափ կուլայ կ'ողբայ՝ որ ես ալ իրեն հետ կուլամ: Ես, կ'ըսէր դարձեալ, ես փառաւոր տան, շքեղ ապարանքի մը մէջ էի. բայց հիմայ, հիմակ ո՛ր եմ. մայր, սիրելի մայր . . .»:

Մանուկն աս քաղցր տրտունջներն ընելու եւ ամէն բան մեկտեղ խառնիխառն բտելու ատեն՝ զինքը բերողը ներս մտաւ, եւ ան մանկական խօսքերը, ան սքանչելի հրեշտակին աղաղակները լսելով, ի գուժ շարժեցաւ, ներքին ցաւոց սուր սիրտը թափանցեց:

«Վժբախտ ու վշտակիր բարեկամ, ըսաւ աղնիւ երեցը, ձին ո՛ր է, ինչ բրիր»:

«Հաւատարիմ կենդանոյն, պատասխանեց հիւրը, ազատութիւն շնորհեցի. կարծեմ թէ այսուհետեւ հեծնելք չունիմ: Պատճառը մի հարցընէր, քեզի ամէն բան կարգաւ կը պատմեմ: Մերեւայ որ զիս յառաջուան սերտ բարեկամդ ու սիրելիդ, հիմայ չես ճանչնար: Թողութիւն տուր, քիչ մը հանդէշ կ'ուզէի, որովհետեւ ան փոթորիկիւր օդը զիս շատ

աշխատողւց եւ ահագին սահմանաձայն անձրեւը գլխէս մինչեւ ոտքս զիս [Թրջեց], ըսաւ ու վերաբրլուն հանեց մէկդի դրաւ, փայլուն սաղաւարան ու [Թուրը դետին ձգեց ու նստաւ:

Այն ժամանակը ծերունի երեցն իր հիւրը զընտելաւ սկսաւ: Անոր բարձր ու հսկայածեւ հասակը, յաղթ մարմինն ու գեղեցիկ կերպարանքը զինքն իրեն ծանօթ կ'ընէին. իսկ [Թուխ մագերը անոր տարիներուն վրայ քող ու ստուեր մը կը ձգէին. վայելուչ դէմքը՝ շատ ու բիւրաւոր վշտերէն ու հոգերէն խորշամած ըլլալով, անոր բազմաթիւ ամաց շօջանները կը յայտնէր: Աս անյայտ ու հակառակ նշաններէն շէր կրնար ծերունին իր հին բարեկամը միտքը բերել: Անոր զգեստն ու զարդը հարուստ ու մեծազին էր, բայց սպականած եւ քանի մը տեղ ալ այրած, կարծեո թէ ահագին պատերազմէ կամ կրակէ մ'ելած էր: Պողովատիկ սուրը, որն որ հանած մէկդի դրած էր, զարհուրելի էր եւ անշուշտ շատ անձանց շունչն առած: Թէպէտ եւ աս կերպարանաց պատկերը զգեստը փոխելէն ետեւ ալ շէր երեւար, բայց օտարին երեւելի մարդ ըլլալը միշտ յայտնի էր: Այսպիսի փոփոխութենէն եւ հանդարտութենէն ետեւ՝ երկու հին բարեկամներն եկան քովէ քով նստեցան. սակայն ծերունի երեցն իր հիւրը դեռ շէր ծանչցած: Նոյն ատեն սպասաւորը կերակուր պատրաստելով՝ առջեւնին բերաւ, եւ հիւրերը սիրով ուտելէն ետեւ՝ սպասաւորն առաւ մանուկը պատրաստուած անկողին մը տարաւ, որուն աչքն անմիջապէս անոյշ ու քաղցր քուն մը գոցեց եւ մարմնոյն վրայ հանգիստն ու հանդարտութիւնն իջեցուց:

Արկու անձանօթները [Թախուցութեամբ եւ տրամազին քովէ քով նստած՝ զիշերուան հանդիստը վայելել չէին ուզեր, որովհետեւ նախ իրարու սրտերը հանդարտեցընել կը բաղձային: Այնպէս քիչ մ'ատեն լուռ կենալէն ետեւ՝ մէկէն հիւրն ոտք ելաւ եւ ձեռքը ծերունւոյն երկընցընելով, «Ո՛հ, ազնիւ,

սիրելի Մուշէ, ըսաւ, քու հին բարեկամը չէ՞ս ծանչնար. ի՛նչ, տարիքն ու վշտերը զմտքդ այնչափ կը փոխեն եղեր» չէ, այսուհետեւ հաւատարիմ եւ ցանկալի բարեկամիս անձանօթ մնալ չեմ ուզեր»:

Մ[Թին սենեկին փոքրիկ աստղն ըստ ամենայնի հիւրին վառվառն դէմքը զարնելով, անկից փայլատակած նշյլ մը ծերունւոյն սիրտն եկաւ, զինքը շփոթցուց: Արծեա թէ երիտասարդանալով՝ տեղէն վեր ցատքեց եւ անշունչ անմառնչ հիւրին ծոցը նստուեցաւ: Ուրախարար ժամանակ մը ծնած կ'երեւար, վասն զի երկու հին բարեկամը մէկգմէկ գտած էին: Իրենց աչքէն շողուն արցունքներ եւ առատ հոսանքներ կը վազէին: Ո՛հ զարմանալի ուրախութիւն. ո՛հ, մարդկային սիրտ, որ այսպիսի բարեբախտութեան ժամանակ վիշտ ու հոգ եւ հաղարու մէկ անձկութիւններ կը մտնաս: Ծերունին ձեռուրները տարածելով, աչքը երկինք դարձուց, եւ լուսնոյ պայծառութենէն լուսաւորուած կապուտակ կիսադնտին նայելով, «Տէր, գոչեց, Տէր, [Թող ասկից ետքը ծառադ մեռնի, վասն զի երկրիս աս մեծ եւ սուրբ մտիթարութիւնն ալ ստացաւ: Օրերս շատ երկընցուցիք, որպէս զի զիս Քեզմէ ետքը երջանիկ ընողը տեսնեմ: Շնորհակալ եմ, շնորհակալ, Ամենատէր, ինձի բրած շնորհքը մեծ է»:

Պատուական ծերունին քիչ մ'ատեն աղօթելէն ետեւ, արգահատութեան ձայնով մը գտած բարեկամին այսպէս ըսաւ. «Մտուզիւ, ազնիւ իշխան, շատ աղէկ ըրիր որ քու հին բարեկամիդ այցելութեան եկար, եւ իր վշտաց դառն վայրկեանը գոնէ քու ներկայութեամբ քաղցրացուցիր: Թողութիւն սուր, որ իսկզբան զքեզ չձանչցայ: Մեր անջատման վրայ շատ ատեն անցաւ. մեր երիտասարդութեան ատեն իրարմէ բաժնուելէն, իրարու հրաժարական ողջոյն տալէն վեր՝ երբեք քովէ քով չեկանք ու չտեսնուեցանք:

«Ո՛հ, դժբախտ ժամանակներ անցան, պատասխանեց Շաւարշ, աղէտքով եւ հոգերով լին, դառն

ժամանակ մը սահեցաւ զնայ, հիմայ, սիրելի բարեկամ, կ'ուզեմ ամէն բան առջեւդ դնել, եւ զիտեմ որ քու բերնէդ բխած մխիթարութիւնը զիս կը կանգնէ, ընելու բաներուս օգնական կը լլաս եւ յուսամ քովդ կրնամ գլուխ հանել:

«Արթողում երիտասարդութեանս ժամանակը, այն դարնան ծաղիկը՝ որուն մէջ մէկտեղ Վաղարշապատ քաղաքն երթալով, ուսման զբաղած էինք: Հայրս, սիրելի ընկեր մը ընտրած էր ինձի, զքեզ ալով ան երեւելի քաղաքն երթալու համար: Այն գեղեցիկ հասակին մէջ, այն եռանդման եւ անցաւանարտում ընթացքին ատեն, իրարու հետ սերտ կապուած էինք. զոր օրինակ երկու յասակի ճիւղեր, եղբայրաբար ծառի մը վրայ կը պլուրին, նոյնպէս մենք ալ մի սիրտ եւ մի հոգի էինք: Յիշէ ան օրերը՝ որոնց մէջ մեր ուրախութիւնն անբաւ էր, ցնձումն՝ անեղբ, եւ խօսքերնիս՝ Աստուծոյ ու անմահութեան վրայ, հոյակապ եւ շքեղ աշխարհքիս ու անոր Արարչին վրայ էին: Միտքդ բեր մեր օգտակար ու զուարթ խօսակցութիւնները, որոնք՝ ազգին մէջ նոր ծաղիկը գիտութեանց ու արուեստից յառաջացման կերպին վրայ էին ու հասարակաց օգտին վրայ կը դառնային: Ան, հիմակ . . . : Երբեմն, սիրելի Մուշէ, կամ շատ անգամ այն ուրախութեան օրերը յիշելով, դառնացած սրտիս մխիթարանք կը դանեի, անոնց յիշատակը խիստ աղետիցս ատեն անոյշ աշարակ էր ինձի:

«Գիտես ինչպէս Տօրս մահը հետու տեղերէն զմեզ տուն կանչեց, զմեզ Տայոց աշխարհք կոչեց, որուն գերեզմանին վրայ շատ արցունք թափեցինք: Ես Տօրս գլխաւոր ժառանգն ըլլալով, զքեզ սիրելի բարեկամս եւ հոգւոյ բժիշկս քովս պահեցի, բայց այլեւայլ դէպքեր ու ընկերութիւնը զքեզ ուրիշ տեղ կանչեց: Ա՛հ, նոյն ատեն ես շատ բան կորսնցուցի եւ միայն որդի մը, որն որ իր մօրը նկարն էր, սիրտս կը սփոփէր: Գէմքին վրայ անմեղութեան վայելութիւնը կը շողար, երանելի կեանք մը սկսած

էր վայելել եւ անով ես ալ կը ցնձայի: Վ.ս.մ՝ սիրելի որդւոյս արուած աղէկ կըթութիւնը զինքն ամենուն սիրելի բրած էր, ամէնքը վրանս կը զարմանային: Վ.ս.մ՝ զիս արտաքոյ կարգի կը սիրէր, զիս իր հայրն ամենէն աւելի կը մեծարէր: Իմ կամքս, գաղանի փափաքներս դուշակելով՝ կը կատարէր, եւ իր ուրախութիւնն ու ցնձումը մեծ կըլլար, երբ որ ինձի փոքր ծառայութիւն մը կ'ընէր: Աշխատութիւն ու ջանք առջին ոչինչ էին. Աստուծոյ, հայրական ու հայրենեանց սերն իր աչքին ամենայն ինչ էր: Ա՛հ, սիրելի եւ ազնիւ բարեկամ, որչափ բան կրնամ ան աղետաբարոյ մանկան վրայ պատմել ան սակաւ ժամանակեաց երջանիկ օրերուն վրայ խօսիլ. բայց ո՛ր են, անցան դացին եւ ա՛յ դառնակը շունին:

«Աչքիբիս ազբասն ու անանիը Վ.ս.մ. հրեշտակ կը կանչէր. Աստուծմէ խրխուած օգնական մը, բոլոր կարօտներն ու վշտակիքները հազալու համար խաւրուած ձեռնառու մըն էր: Քանի արցունք, որչափ աղէկք նուագցուց:

«Ղ.ս.մ. ան, դառն կորստեան յիշատակ. Տօրս եւ որդւոյս խիստ կորստեան յիշատակներ: Վ.ս.մ. մին անունը՝ դեռ ինք տասուեերկու տարւան չհասած՝ ամէն տեղ հռչակուած էր. ամէնքն ինձի երանի կու տային, ծառաներս՝ զիս եւ զերեւը երջանիկ կը համարէին այնպէս ազատորդի իշխան մ'ունենալուն:

«Այսպիսի ատեն՝ տունս եւ սիրելի որդեակս, ցանկալի Վ.ս.մ. Վարազին՝ տանս հողաբարձուին յանձնեցի, եւ շատոնց քովս ըլլալուն համար ամենայն ինչ իրեն ձեռքը վստահանալով, ես բարեկամներէս մէկուն հետ պատերազմի դացի: Երբեհէ Երուսաղուին՝ մտերիմ բարեկամս, բրած այլեւայլ պատերազմներէն ետ դառնալով՝ ինձի այցելութեան եկաւ: Ես Վաղարշապատ եղած ատեն եւ ուսման զբաղած ժամանակս իրեն հետ շատ բարեկամ ու մտերիմ էի եւ մինչեւ աս օրերս ալ զինքը չէի մոռցեր, իրեն հետ անբակ զօդի մէջ էի: Գունս ալ զիտես

98/

որ Ներսէճ Երուանդունին ինչպէս Պարսից արշաւանաց սկիզբը հարաւային Հայաստանէն Տայոց աշխարհքն ամբացաւ: Անոր կրակ ու բոց բնութիւնն անշուշտ կը ծանչնաս, երեւելի գործքերն ու արութիւնը լսած ես: Ներսէճ իր քաջութեամբը շատ զօրք ժողովելով Պարսից դէմ բիւր արութեան գործքեր բրաւ. ես ալ իրեն շատ անգամ օգնեցի: Աս այցելութեան ատեն նորէն ինձի աղաչելով որ իրեն հետ երթամ եւ Հայոց նշանաւոր դիւցազանց օգնական ըլլամ, պատրաստուեցայ, եւ դեռ չգացած սիրելի որդւոյս հրաժարական համբոյր մը տալով, զինքը նորէն տեսնելու շուտ տեսնելու խոստում տուի. բայց ինչպէս եւ ո՛ր պիտի տեսնեմ եղբր,):

Հաւարը աս խօսքերը զրուցելու ատեն, սրտին մէջ շատ թունալից նետեր մտան ելան, եւ քաշեց լռիկ մը սիրելի բարեկամին ձեռքն իր կուրծքին վրայ դրաւ, իմացընելու համար թէ սրչափ աստիկ էր սրտին բարբառումը, եւ նորէն անձկով խօսքը շարունակեց:

«Ներսէճ Երուանդունին եւ ես արութեամբ Աւարայրի դաշտին վրայ կուտեցանք. հոն շատերուն անուններն անմահացան, մանաւանդ խայտալին, սքանչելի Արարիանին յիշատակը. Երուանդունին ալ երեւելի եղաւ: Իս այնուհետեւ Ներսէճին՝ երկայն ատեն իր քովը կենալու աղաչանաց չէի կրնար անսալ, որովհետեւ անէս չարաչար լըր եւ անհարին դուժեր գալով՝ սիրտս կտոր կտոր կ'ընէին: Արարին չարութիւնն ու անպիտանութիւնն երթալով կ'աւելնար, երկրի վրայ ունեցած ամէնէն զեղեցիկ բարիքս, սիրելի որդիս գէշ ձեռք ինկած էր: Տունս՝ անկից բաժնուելէս քանի մ'որ ետքը, վայրենի եւ ապիրտոտ մարդիկներու բոյն կ'ըլլայ. Աւարաղին թուրութեամբն ու վատութեամբը, որն որ ուրացող Ասասկին հետ միացած եւ ուրիշ զեխ ու շուայլ եւ վատնող մարդիկներու հետ մէկ եղած էր, օրէ օր ինչքս կը սպառին: Առամ՝ ցանկալի որդիս, աս ամէն բան տեսնելով եւ չկրնալով խօսիլ կը հայն ու կը մաշի, եւ այնպիսի բռնաւորներուն մէջ ազատութիւնն ալ կը կորսնցնէ: Մինակ իր սենեկին մէջ անկիւն մը առանձնացած, թեւերը տարածած, Աստուծոյ աղօթք կ'ընէ, որպէս զի իրեն համբերութիւն տայ, աս վշտաց ծովուն մէջ զօրութիւն չնորհէ եւ նաւահանգիստն ու հայրը տեսնել տայ: Աւարաղ մը զեւի պէս տանս գրեթէ տէր, իսկ իր անձին բոլորովին վատ ծառայ եւ սարուկ կը դառնայ:

«Արդիս զԱւարաղ յայտնի ատելով, յանցաւոր կը սեպուի, եւ անոր համար այն զարհուրելի դադանը Առամէն վրէժ առնելու երգում ընելով, յարմար ժամանակին կը սպասէ: Մէկալ կողմանէ ալ սուտ ու առասպելեալ գոյժ մը հասնելով թէ ես մեռած եմ, աղէտը ու վեշտ չի մնար որ զժբախտ որդւոյս սիրտը չվերաւորէ: Սիրոյ եւ մխիթարութեան նամակներս, զինքը տեսնելու անձկութեան նամակներս՝ երբեք ձեռքը չեն հասնիր: Աւարաղ՝ անգութն ու աղէք չունեցողը, որդւոյս խրկած լըրս կ'ոչնչացնէ, եւ մեռնելուս անհիմ բօթն ելած ատեն՝ կ'ուրախանայ. բայց արծուի աչքով ու դիւական խորամանկութեամբ ալ կը դիտէ եւ կը զգուշանայ, որ չըլլայ թէ իր չարութիւններն երեւան ելլեն: Հաւատարիմ ծառաներս ալ կը մըլտըրնէ եւ արշաւոյս ծագած ժամէն մինչեւ հրեզնէս գունար լեռան անդիի կողմն իջնելու ատեն, անոնց հետ կ'ուտէ կը խմէ եւ կը դուրսծանայ: Միայն եզուկ որդւոյս վեճակը գէշնալով, ծառայ եղած Առամիս աստղը մթննալով, իր աղին սիրտը հազար վըշտաց ու նեղութեանց մէջ ընկղմած եւ աղիողորմ ու դաժան ցաւոց մէջ ծիւրած ծնդած, վերջապէս անկողին կ'իջնայ մէյ մ'ալ չելելու համար:

«Ասկից ետքը մութ գիշերը փարատեցաւ, բայց շատ ուշ: Հաւատարիմ ծառաներէս մէկը՝ որն որ իմ կենդանի ըլլալու իմացած էր, համարձակեցաւ ինք զինքը վտանդի մէջ ձգել եւ բանբերի մը ձեռօք ինձի ամէն բան իմացուց:

«Վեղեցիկ օր մը արեգական շողշողուն ճառագայթները դեռ ջրին վրայ նոր ինկած եւ անոր փողփողէլէն հալած ոսկւոյ վտակ մը ձեւացուցած ատեն, այլեւայլ թռչնոց գեղեցիկ մրմունջն ամէնքը զուարթ ու խրախ բրած ժամանակ, զիս միայն խորին խորհուրդներէս, արտուժ տխուր մտածմունքներէս ոչ ոք կրնար հանել: Ան խորին լուսթիւնը՝ որն որ շատ ատեն վեր սրդիս կը պահէր, ինծի առեղծուած մըն էր, ան լուսթիւնը՝ սիրտս անհանդիստ կ'ընէր. մէյ մ'ալ յանկարծ լսեցի որ ինծի լրարեր մ'եկած է, որուն անմիջապէս քովս գայու հրաման տուի: Զարմանալի ազդեցութիւն մը զիս հանդիստ չէրողուց, ես անձամբ ելայ անոր վաղեցի: Նամակ մը . . . անէս էր: Գողգոջուն ու արտաթամփ նամակը բացի եւ . . . ս'հ, ըսի ու զարհուրեցայ . . . : Բարկութիւն ու սէր, ատելութիւն ու սաստիկ ցաւ ինծի հետ կուռելու սկսան. չմնաց նեղութեան տեսակ, չկար զրդուութեան կերպ՝ որ սիրտս ու զուլխս չժողվուին . . . բայց, սիրելի Մուշէ . . .), ըսաւ եւ ալ չկրնարով խօսքը յառաջ տանիլ՝ քիչ մը լուռ կեցաւ:

Շաւարշ աչքը սրբեց եւ նորէն սկսաւ: «Ո՛հ, իշխան, իշխան, կը դրէր ինծի ծառաս, դառն պարտք մըն է ինծի, աս դժպէսի ու աղետարեր գոյժը տալ «ձեզի: Աղաչեցէր Աստուծոյ որ ոյժ ու զօրութիւն «չնորհէ ձեզի, աս դժնդակ ու դժուարին լուրը՝ հզօր «նահատակի պէս կրելու համբերութիւն տայ: Առամ» իմ՝ ձեռքս սերտ սիրոյ եւ հաւատարմութեան ողջ «ջոյն կը խրկէ ձեզի. գուցէ, սիրելի իշխան, գուցէ «վերջինն բլայ: Աարազ՝ ձեր վստահութեան փոխա- «րէն ամբարհաւածութիւն ու անամթութիւն ի գործ «կը դնէ: Ինք եւ ուրիշ իրեն նման անմիասնէր՝ ձեր «ապարանքն իրենց բնակութեան անդ բրած, մէջը «կ'իշխեն: Մեծութիւնն ու ինչքը գնաց, հաւատա- «րիմները ճնշուեցան, իշխանութեան սանձը մնում «թեան ձեռքն է: Բարեբարոյ Առամ՝ աղետից եւ «անձկութեանց տակ կը հեծէ. իրեն մեծ մխիթաւ-

«րութիւնն ու արութիւնը սիրուն եւ հրեշտակատե- «սիկ Աարդն է, որն որ Երախանի բերդէն իր սիրելի «եղբարց քով կու գայ. բայց ափսոս որ Աարազին «տտելութիւնն անոնց վրայ ալ սաստիկացաւ: Վու- «ղէք նէ թուղթս առնելուդ պէս, հոս աճագարե- «ցէք, գուցէ ցաւագին մխիթարութիւնը կ'ունենար «ձեր որդին դեռ աշխարհքէս չհեռացած, պողպա- «ջուն աչուրները չգոցած, մէյ մ'ալ գրկելու: Զձեզ «տեսնելու սաստիկ անձուկն ու բաղձանքը՝ վշտահա- «նին թռչող կեանքը գուցէ կրնայ արգելել: կը յու- «սանք որ գուք ալ այսպիսի վայրկեան մը հոս գբտ- «նուելու շէք դանդաղել: Եկէք, տէր, սրացէք եկէք, «կարծեմ թէ հօր եւ որդւոյ կեանքը կը շահինք: Ես «եւ ուրիշ մը Առամին քովէն չեմք բաժնուիր. քանի «մ'ուրիշ հաւատարիմ անձինք աս դժբախտութիւն- «ներէն վերաւորուած, իրենք ալ վշտաց մէջ կը գբտ- «նուին: Այսօր Աարազ իր բնկերներովը մեկտեղ ա- «նըրելոյթ եղան. գուցէ մեր ամենուս գլուխը չա- «րագոյն վտանգ մը բերելու համար: Ապարանքը «տխուր եւ լուռ շերմի մը նման է, խորին մենութենէ «մը տարբերութիւն չունի: Մեր վիճակն աս է. ձեր «պատասխանոյն կամ անձամբ գալուն կը սպասենք»:


«Աս լուռ եւ անմունչ վշտալի գրուած տողե- «րուն կը նայէի. կարծես թէ դաժան երազ մաչքիս տալեւ շողալով՝ զիս կը շարձարեր եւ արեգական լուսէն անպի մը ստուերի պէս կը ցրուէր, ոչինչ կը գառնար: Բայց չէ, երազ կամ ստուեր չէր. ակներեւ ճշմարտութիւն մըն էր, որն որ նամակին ամէն մէկ բառն ու խօսքն առջեւս կը բերէր: Աերջապէս աս նկարը հատու սրոյ պէս աչքիս փալփրելով՝ մէկէն զլիսէս մինչեւ կուրծքս թափանցեց եւ հոն ցաւերու բիւր վէրք բացաւ: Ար կարծէի որ աս ցաւը սիրտս աղերներէս փրցնելով՝ դուրս պիտի հանէ. սակայն չէի մտածած որ ներկայ աղետը միշտ անցեալ անձկութենէն ծանր կ'երեւայ մարդուն, վասն զի աս կը զգայ, իսկ անցած գացածը հազու թէ կը յիշէ. այսու

ամենայնիւ ես ճեպով ու յուսահատական ուժով մը տեղէս ելայ եւ սիրելի բարեկամիս, Ներսէ՛հին վրանը վազեցի: Մէկ երկու խօսք միայն աղետիցս քողը մէկդի առին: Քաջին եւ առիւծասիրտ Ներսէ՛հին սիրտը շարժեցաւ, ձեռքս բռնեց. ցաւով եւ տրամութեամբ իրարու հրաժարական բարեւ տալուն պէս, ես՝ հետս ուրիշ հաւատարիմ մ'ալ առած՝ արժուի պէս սրացայ. տունս հասնելու վայրկեանը չէի տեսներ:



Գ Լ Ո Ւ Ս Գ

Յառաջի Բաժանման Վայրկեան:



“ԱՐՆԱՔ երեւակայել, սիրելի բարեկամ, որ ինչ հանգիստ, սրչափ հանդարտութիւն ունէի աս ճամբորդութեան ատեն: Անտուխ՝ դեռ արեւուն շքեղ գեմքն երկիրս չտեսած, ես ծառայիս հետ ձիով երթալու սկսած կ'ըլլայի, եւ նսեմ վերջնալսյան իր հրաժեշտը տալէն շատ ետքը՝ ես հազիւ հանգչելու տեղ կը սկսէի փնտռել:

“Վիշերը խոնջած եւ դժբախտ մարդիկներուն ալ մեծ երախտիք մըն է. բայց սաստիկ ցաւ մը շատակեր անգղի պէս մէկուն սիրտը մտնեալէն ետեւ, անոր ծոցը կը պատռի, նոյն սիրտը կտոր կտոր կ'ըլլայ, երբ որ վերջնալուսոյ առաջին ստուերը զգիշերը բերելու սկիզբ կ'ընէ: Ա՛հ, քանի ու քանի անգամ անվիշտ ծառայիս վրայ կը նախանձէի, որ անհոգ եւ լռիկ խաղաղութեան մէջ հանգչած, տեղ մը տարածուած կը քնանար: Գուն երջանիկ ես, կ'ըսէի մտքէս, իսկ ես՝ ողորմելի ու դժբախտ: Մտացս ցնորքները տունս աչքիս առջեւ կը բերէին. զորդիս դիմացս տժգոյն դեղ-

նեալ դէմքով՝ անկողնոյ մէջ կը ներկայացնէին: Անոր թուխ մազերն երկնցած, հեղեկ, դեղեցկատես ու լուսաւոր աչուրնները մթնցած, ձեռքը խաչածեւ բռնած, ահագին, սարսափելի տեսիլ մը կ'երեւար: Ինծի նամակ գրող Արտէն ծառաս Առամին քով նստած՝ ճակտէն վազող ստուած կայլակները կը սրբէր, բերնէն կարծես թէ անդադար աս հալած երկաթի պէս ծանր խօսքերը կը թափէր. Գնաց, կ'ըսէր, գնաց, աս գեղեցիկ դարուներ, վերջացաւ եւ ալ դառնալէք չունի: Երեց մը քաղցր ու մսիթարական խօսքեր բերնէն բխելով եւ աչուրնները գրեթէ միշտ երկկնք վերցնելով՝ իր աղօթքը Բարձրելոյն աթոռը կը ներկայացնէր: Մտքիս առջեւ ուրիշ սգոյ եւ տրամու թեան տեսիլ մ'ալ ելաւ: Շատ ամբոխի բազմութիւն մեկտեղ ժողովուած, երեւելի շիրիմ մը կ'երթային. դազաղ մը՝ մէջը թարշամած ծաղիկ մը դրուած՝ զիս սարսափեցուց. դազաղին մէջն եղողը՝ կարծեմ որ դիս, շուշանի մը նման էր, որուն վրայ առաւօտեան եղեամբ կը հանդէս...: Պատերազմի ատեն դունստ մահուան դէմքը շատ տեսայ, անոր դուր աչուրնները նշմարեցի. բայց երբէք այնպէս զարհուրած չէի: Երազ կամ տեսիլ մը, սաստիկ տանջող ցնորք մը՝ նոյն ժամանակ շատ ահուդողի մէջ խոթեց զիս:

«Շատ անգամ, երբ որ քնացած տեղս՝ հովը կամ փոթորիկը հնչին կը հանէր, արագ ու շուտ ոտք կ'ելլէի, երկիւղէս ու զարհուրանքէս չարչարուած, զարհուրելի մթան՝ դուրս դաշար կ'աճապարէի, որպէս զի զով ու ցուրտ օդը գլխուս կրակն ու բոցը մարէ, բիւր տեղերէ խցուած սրտիս վերքերը սառեցնէ եւ զոնէ քիչ մը ժամանակ զիս հանդիստ անզգայ ընէ: Ատեղադարդ կամարին տակ, կանաչագեղ դաշտին վրայ փռուած, ձեռքս կը տարածէի, եւ Աստուծմէ շնորհք կը խնդրէի որդուոյ կենաց ընթացքին համար, ուրիշ շատ տարիներու շքաններ ալ կը խնդրէի: Քանի մը զիշեր այսպէս անցնելով՝ առտուան լուսըննալուն կը սպասէի, եւ գիշերուան ցրտէն ստեղծ ու

դողդողալով՝ դժբախտս նորէն տեղս կը դառնայի, եւ ճանապարհորդակիցս իր հանդիստ քնէն արթնցընելով, առջեւ իրիկուրնէն աւելի յոգնած՝ դարձեալ ճամբայ ընելու կը սկսէի:

«Վախի մ'որ ետքը, դարնան գեղեցիկ առաւօտ մը՝ երբ որ վարդամասն ծայրակարմիր արշալոյսը բոլոր երկիրս կը տարածուէր, մենք ալ Երախանի բերդը, սիրելի Հմայեկին ամրոցը հեռուէն նշմարեցինք, իմ սպարանիցս ալ դժբախտ ճակատը տեսնաւ: Աս տեսութիւնը զիս զարհուրեցուց. նժոյզս ետ ետ քաշեցի՝ բրածս չգիտնալով. ո՛հ, ողորմելի վիճակ: Յառաջուան ամօգոյն ու ձեան պէս դէմքիս վրայ ուրիշ գուհոց խառնուրդ մ'եկաւ, սիրտս ծոցիս մէջ երազ վեր վար կ'երթար կու գար, աւելի խորքը մտնել թափանցել կ'ուզէր, եւ երբեմն կարծես թէ իր բանտը խորտակելու ու անկից փախչելու կը ջանար:

«Մտրակեցի յառաջ եւ հասայ վերջապէս ապարանքիս առջեւ: Խիստ դժնդակ ցաւ մըն է՝ կենաց այն դեղեցիկ թեւին կտրուելը տեսնել, որն որ Աստուած շատ ծաղկանց զարդերով զարդարած է: Ուրախ գուարթ երիտասարդը, զորաւոր այր կատարեալն ու արծաթահեր ձերուներն եւ ամէն արարածք կը սարսափին մահուրնէ, որն որ անխոնջ հնձողի մը պէս կը հնձէ ու կը ժողվէ: Բայց ասոնց մէջէն՝ աւելի հայր կամ ծնողք մը կը զարհուրի, երբ որ իր միակ որդին, սիրելի որդին՝ աչքին առջեւ, առդիէն անդին կ'անցնի կ'երթայ, ուսկից երբէք մարդ մը ետ դարձած չունի...:

«Վժիշկն եկաւ զիս Առամիս անկողնը տարաւ: Թեթեւ ու ծանծաղ քուն մը վշտամբերին աչքը դուցած էր: Ո՛հ, Աստուած, ան շքեղ ծաղիկն ճորձափ թարշամած էր: Անկողնոյն մէջ մարմարեայ արձանի նման տեսայ զինքը: Այտերուն երփն երփն ծաղիկը փոփոխուած, վարդագոյն շքանց թաւիչը դիակի մը դոյն փոխուած, մազերը ցրուած, բոլոր անդամները լուծուած կ'երեւային: Հազիւ շունչ կ'առնէր կու տար

աստիկ ցաւէն ալ երբեմն մարմնով աս կամ ան կողմը կը դառնար: Ես քար կարեցայ, երկայն ատեն անոր առջեւ կեցայ...: Ախ, սիրելի Մուշէ, կարծեմ չափն անցուցի. բայց չէ, չէ... Տրաման տուր, նոյն ատեն նուան վշտերս քեզի մանր ստորադրեմ, առանց տրարնջելու՝ սրտիս մխիթարութիւն դանեմ:

«Օ Արտէն եւ զերեցը մէկդի առի, մէկուն՝ հաւատարմութեամբ ինծի դրելուն, մէկայլին՝ իր խրատներովն սրգիս առաքինութեան ճամբուն մէջ պահելուն շնորհակալ եղայ: Անոնք եւ Մամիկոնեանք ալ զիս մխիթարելու սկսան: Անուշահոտ Վարդն ալ իմ քաղցրաբարոյ Առամիս քովերն եկած՝ մերթ ինծի, մերթ սիրելի որդւոյս կը նայէր, եւ կարծես թէ ան դառնադառն բաժանումն իմանալով՝ ցանկալն հայրիկ, կ'ըսէր ինծի. զուշակելով որ ես՝ Հմայեկին տեղ իրեն հայր պիտ'որ բլամ:

«Գժշկին հարցուցի թէ կայ արդեօք յոյս ազատութեան որդւոյս. բայց անոր պատասխանը՝ լուսթիւնն ու ցաւն էր, որով յայտնի եղաւ Առամիս վիճակը: Ալ քիչ, քիչ ատեն ունէր Առամս երկրիս վրայ: Բարձր բազուկ մը իր սրածեւ խոյացող կեանքը մինչեւ հիմակ անցնիլ թող չէր տուած, որպէս զի ես... երբ որ բարեկամներուս աս կ'ըսէի, անոնք պատասխանեցին ինծի. «Գժբախտ հիւանդին, ներքին ազդեցութիւն մ'եղած էր՝ որ հայրը պիտի դայ: Երբեմն անկողնոյ մէջ՝ աչքն երկինք բարձրացուցած, սքանչելի խօսքեր կը խօսի, իրեւ թէ հայրը կը տեսնէ. բարձր աղերսագին ձայնով զԱստուած կ'ողագչէ որ իր հօրը՝ դէպ ի տուն առաջնորդէ եւ ուրիշ այսպիսի շատ խօսքեր»:

«Ինչը զոհոթութիւն տուի Երկնից որ կարօտութեան եւ վտանգներու ժամանակ մեզի կ'օգնէ: Ասկից ետքը նորէն Առամիս քով դացի եւ ան հրեշտակատեսիլ ու պայծառ արձանին առջեւ անշարժ կեցայ. երկայն ատեն, շատ ժամանակ դէմքս անոր դարձուցած իր երեսը կը նայէի: Մեկէն մեզմ' ու քաղցր ձայ-

նով մը՝ Հայր խօսքը բերնէն հնչեց: Երկնային դեղդեղանոց կամ երգի պէս մտաւ թափանցեց սիրտս նոյն անոյշ ձայնը: Բայց... երազ կը տեսնէր, նորաքանչ բաներ անոր միտքը կը նկարուէին, եւ քանի մ'անսայտ խօսքերէ ետեւ՝ իմացայ որ ան տեսնանկարն ես եմ: Բերանն ու դէմքը ծիծաղ մը նկարուեցաւ, կամաց կամաց շունչ առաւ տուաւ եւ աչքը հեղիկ մը բանալով՝ առաջին տեսածն՝ ես... անոր հայրն եղայ:

«Ո՛հ, սէր, խանդաղատանք ու գորով. զարմանալի ազդեցութիւններ: Սքանչելի ուժով ելաւ մէկէն անկողին նստաւ, բացաւ թեւերն ու շատնոց փափաքած հայրը գրկեց: Երկայն լուսթեանէ ետեւ՝ իր վշտագին ծոցէն աս խօսքը հանեց. «Հայր, ըսաւ, սիրելի հայր, շնորհակալ եմ քեզի որ այնպիսի ատեն էլ թողուցիր եւ չմոռցար զիս: Ա՛հ, ա՛հ, արդեօք կարող էի ես հայրս տեսնելն յառաջ ասկից բաժնուիլ երթալ, պանդուխտ մարդիկներուն մշտնջենաւոր բնակարանն անցնիլ. չէ, չէ, Աստուած չէր թողուր. Ինք շատ զթած է: Աստուած, ձեռքը մանդաղով Ոգին կ'ուզէս նէ, այսուհետեւ խրկէ: Հայր, բաղապրէ մէջ՝ դառն վշտացս բաժալը քաղցր աւշարակ է ինծի»:

«Այսպիսի աղետալի ատեն իր աղբերակունքն ո՞վ կրնար դոց բռնել եւ առատութեամբ գետինը շողանել: Նոյն իսկ Վարդ ալ, զեռ այնպիսի մատաղ հասակի մէջ, վարդագոյն դէմքէն ցաւոց նշաններ կը ցուցնէր եւ ամէնուն սիրտը կը վերաւորէր. բայց նոյն ատեն Առամս նորէն բերանը բացաւ եւ ինծի՝ «Հայր, ըսաւ, զՎարդ քեզի որդի բրէ, ինծի շատ նման է. ալ զիս թող, այսուհետեւ թող»): Ըսաւ չըսաւ հոգւոյ բաժանման բռնութիւնը զինքը լռեցուց. ծըռեց, դրաւ դարձեալ զլուխը բարձին վրայ: Բայց անշուշտ Աստուծոյ հրեշտակը զինքը զօրացնելով՝ նորէն ելաւ նստաւ եւ օտար, այլակերպ աչքով մը կարծես թէ երկրաւոր բլամային դադրելով, դէմքն երկնաւոր փառաւորութեամբ փայլելով, մեզի կը նայէր: Բժիշկը ձեռքս բռնեց. իմացայ...: Եկած էր, եկած

ան սոսկալի վայրկեանք: Վստամ՝ մէյ մ'ալ դլուխը
 ծոցս խոթեց, նորէն ինծի հրաժարական ողջոյն մը
 տուաւ, բոլոր ներկայ եղողներէն հրաժեշտ առաւ:
 Վարազին, ան կատաղի պատառող վարազին ալ թո-
 զութիւն չնորհեց, եւ սրտիս վրայ գլուխը դնելով՝
 յաւիտենական քաղցր քուն մտաւ:»

Ը աւարչ մինչեւ հոս զօրաւոր ու հաստատուն
 ձայնով մը իր աղետից դէպքերը շարելէն ետեւ, ալ
 չկրցաւ տանիլ այն ցաւալի յիշատակը. սիրտը վե-
 րաւորուած երկու եղաւ, ու բիւրաւոր անձկութիւն-
 ներէն խորշոմած դէմքը գոցելով՝ թողուց երկու ար-
 տեւանտներն որ առատ արատաւաց ծովուն մէջ լողան:

Կորէն հողի առնելէն ետեւ՝ «Միրելի Մուշէ,
 բաւա, Աստուած ինծի զօրութիւն տուաւ որ քեզի
 պատմեմ զարհուրելի եւ ծովացեալ վշտերս, բայց
 մտիկ բո՛ւ ուրիշ ինչ փորձանքներ ալ գլուխս եկան:

«Վ սամ իր հօրը շիրիմները հանգչելով, ես
 ամէն օր զինքը փակող հողն արցունքներովս կը թրք-
 ջլէի. եւ ոչ մէկ միսթարութիւն ունէի. միայն յոյսս
 Աստուած էր, անմահ Մամիկոնեանց Երախանի բերդն
 ինծի մեծ ուրախութիւն էր: Որդւոյս բնակած տե-
 ղերն ինչպէս կրնայի տեսնել: Հոն՝ դժբախտ Երախա-
 նի բերդը ստեպ այցելութեան կամ բնակելու կ'եր-
 թայի, ուր խօսքս միշտ Հմայելիին վրայ կը դառնար,
 որն որ իր որդիներէն հեռու, Պարսից դէմ պատե-
 ըրազմելու կը պատրաստուէր ու իր սիրելի Վարդան
 եղբորը մահը շատ անգամ կ'ողորար, կամ ինք զինք
 կ'աշխարհէր որ անկից բաժնուեցաւ եւ երկնաւոր պա-
 կէն զրկուեցաւ:

«Այսպէս դառն եւ ուրախ օրեր տունս կամ
 աւելի նոյն բերդն անցընելով, շատ անգամ առանձին
 սեղ մը, զՎարդ՝ Հմայելիին կրտսեր որդին՝ քովս կ'առ-
 նէի, եւ որդւոյս նմանակերպ պատկերովն, աս գրեթէ
 նմանակեղ հրեշտակով կը զուարճանայի եւ իր հօրը
 տեղ ես իրեն հայր կ'ըլլայի, ինչպէս աս օրերս սքան-
 չելապէս ալ եղայ: Գեռ երկու օր է որ Վարդ նոյն-

պէս քովս նստած, եւ ծիծաղերես դէմքը, սեւագոյն
 դանդաղահար գլուխը ծոցս դրած, քաղցր կը քնանար,
 ես ալ աչքս դարձուցած կը նայէի: Ստուերամած ու
 մթնապատ երկինքն աստղ մը չէր երեւար, կարկտաշափ
 անձրեւ մը հեղեղի պէս վար կ'իջնէր, եւ փոթորիկ
 մ'ալ իր սոսկալի մնչմամբը բոլոր ոգիները խռովու-
 թեան մէջ կը ձգէր: Ես անոնց ամենեւին միտ չդնե-
 լով՝ իմ ցաւերուս անդնդին մէջ ընկզմած էի եւ սի-
 րելի Վարդս կը դիտէի, ուսկից ուրիշ աւելի ցանկալի
 բան երկրիս վրայ չէի կրնար ունենալ, վասն զի ան էր
 իմ անփոխանքս, ան իմ անձկալի սրբուոյս կերպարանաց
 նկարը:


«Անտարակոյս լսած պիտ'որ ըլլաս, ազնիւ Մու-
 շէ, կամ դուցէ անյայտ ու մթին կերպով եկած հա-
 սած ըլլան քու հանգստաւեա ու խաղաղ բնակարանդ
 ան նշանաւոր լոբերը, Վարդան Մամիկոնեան եւ իր ե-
 ըւեւելի քաջերէն շատերն այլեւայլ արութեան դործ-
 քեր բնէլէն ետեւ պատերազմի մէջ ինկան, բայց
 յաղթութիւնն ալ իրենց եղաւ: Անկից ետեւ Մուշ-
 կան Կիւսալուուրտ Պարսից զօրախախտ ու Վասակ
 Միւնին աւելի եւս կատղեցան եւ իրենց ջանքն ան է'
 որ բոլոր Հայաստան անաղաս դարձրնէն: Բայց հայ
 զօրաց գնդերն իրենց արխարիտ իշխաններովն ու
 զխուսորներով մեկտեղ շատ կռիւններուն մէջ Պարսից
 յաղթեցին եւ տեղ տեղ զանոնք ջարդեցին: Ներսէհ
 Երուանդունին ալ այն սախախտ քաջերէն մէկն
 ըլլալով, շատ սքանչելի դործքեր դործեց եւ իր սի-
 րելի բարեկամին Հմայելիին քով երթալով, զիս ալ
 հրաւիրեց որ հասարակաց օգտին համար հաւատով
 ու սիրով մէկ եղած՝ մեկտեղ հեթանոսաց դէմ կուռ-
 ինք, եւ կամ յաղթենք կամ մեր կեանքը կնքենք.
 բայց ես աղետիցս նեղութեանէն եւ վշտերէս ընկճեալ
 չուզեցի, մանաւանդ թէ չէի կրնար իրենց հետ միանալ:

«Մեկալ կողմանէ Վասակ Միւնեաց ուրացող
 իշխանը բոլոր նախարարներուն իրեն եւ Պարսից հետ
 միաբանելու հրաւեր խաւրեց. շանսացողն վիճակը

մտածել քեզի կը թողում: Մամիկոնեանք եւ ես՝
 Վասակին ահագին մայրեղնութեան ու ատելութեան
 գլխաւոր զոհերն էինք: Ի՞մ որդւոյս մահուան պատ-
 ճառ եղող Վարդան ալ, ինչպէս կը լսէի, հաւատքն
 ուրանալով՝ Մուշկանին քով գացած էր, հոն թշուա-
 ռականն արդար բարկութենէս ազատ էր եւ Պարսիկ-
 ներուն ու Սիւնեաց իշխանին զիս բռնաբռնելն ատելի
 կ'ընէր: Աս ամէն բանին կերպարանքն ու Վասակին
 սիր զիս չէին վախցըներ, վասն զի գիտէի որ միայն
 արդարութեան ու անոխակալութեան ոգին կրնայ
 ազդուբաց ու ոխակալ մարդիկներուն յաղթել եւ
 չարաթոյն հակառակորդներուն զօրութիւնը վերջա-
 պէս բեկանել: Բայց հայրենեաց անյաջող ու դժըն-
 դակ բեխտը, ազգին եղած անհամար վնասները,
 եկեղեցիներուն աւերն ու քանդումը, քաղաքաց ու
 դատակերտաց եղծումը, բնակութեանց ապականու-
 թիւնները սիրտս կը վերաւորէին եւ միայն բիւր ու
 բիւր աղէտքս, գլուխս եկած վշտերն ու տարիքս կըր-
 նային զիս քիչ մ'ատեն ալ արգելել, որ ես ալ
 հայրենեաց մեկալ նահատակներուն հետ այսպիսի
 անօրէն եւ աշխարհաւեր մարդիկներուն գէժ պողո-
 վատիկ սուրս ձեռքս չառնեմ»:



Անպիկալ պատուին:



Երբ որ այսպիսի դժբախտ վիճակի մէջ էր Հայ-
 աստան, եւ ես անոյշ քնացող Վարդայ գէմբը
 նշմարելով՝ մանկութեան անմեղութիւնն ու
 հանգստութիւնը կը մտածէի, պատանեակը մէկէն
 երկու աչուրները բացաւ, եւ իր անմեղ ծիծաղովը՝
 զիս ցաւալի խորհուրդներուս վհէն դուրս հանեց:

«Երբ որ տեսնուիս արագութեամբ ներս մըտ-
 նելով, «Տէր, ըսաւ ինձի, զարհուրելի դուժեր կան:
 Պարսիկ զօրաց գունդ մը մերձակայ տեղերը հասած է
 ու սարսափելի գործքեր կը գործէ: Վայրենի ու բիրտ
 ամբոխ մը չորս կողմը տարածուած՝ մեծ շիտթութիւն
 հանելէն ետեւ, այրելով՝ ու կողոպտելով յառաջ կը
 քալէ: Վարազ անոնց գլուխն անցած է, ձեր տունը
 ջնջող անօրէնն ան գազաններուն առաջնորդ եղած
 է: Անգութ Վարազը գեղացւոյ մը հարցուց թէ
 Շաւարշ իշխանը տունն է, իրեն այցելութիւն մը
 կ'ուզեմ ընել. եւ ան դժբախտ մարդն կերպարանքէն
 զարհուրելուն՝ պատասխան չտալով, վայ եկաւ գլու-
 իսը. գազանասիրտը դողդոջուն մարդուն սաստիկ հա-

րուած մ'իջեցուց. ինկաւ սղորմելն, դետինը թաւա-
լեցաւ ու հողին փչեց: Եւ ջահերուն լուսով զՎարազ
ճանչնալով եւ ձայնէն՝ տարակոյսս բոլորովին փարա-
տելով, թռչոյ արագութեամբ հոս վազեցի: Արտէն
շփոթութեամբ ու այլայլած՝ աս դժբախտութեան
դէպքը պատմելն ետեւ՝ աճապարեց դուրս ելաւ:

«Աս ահագին ոճիրը լսելով՝ զարհուրեցայ, եւ
անշունչ անմուռնչ կեցած՝ ուրիշ վերահաս չարեաց
առջեւն առնելու հնարք մտածած ատենս, լուսամուտ
երդերէն մեր նստած սենեակը կարմիր բոցերու շողին
մը մտաւ եւ չէ թէ զՎարդ միայն, հապա զիս ալ
սարսափեցուց: Անմիջապէս դուրս վազեցի, բոլոր
տունս բոցերու մէջ տեսայ, անկից՝ վայրենի աղաղակ-
ներու հնչիւն մը լսեցի: Շարժուն ոսկեղէն սիւներ
մինչեւ երկինք բարձրացած՝ բոլոր ապարանքս չորս
կողմանէ պաշարած էին. անս, արդէն ան ծախիչ սիւ-
ները՝ տունս կանգուն բռնելու տեղ, հարթ յատակ
ըսած կամ վիմաշէն պատերը միայն թողուցած էին,
Գիշերուան մութը՝ պայծառ լուսոյ տեղի տուած էր:
այն լուսոյ ու բոցերուն մէջէն եկող անազորոյն դուռը
մը կը տեսնուէր: Մէկ մասը ձեռքը ջահեր առած,
շաան ալ սայրասուր թրեր բռնած, մուլեղին կատա-
ղութեամբ՝ Մահ Շաւարշայ, կորուստ եւ դերութիւն
Մամիկոնեանց կը գոչէր: Սրախ յառաջուան արիւ-
թիւնը բորբոքեցաւ. բերնէս ելած ահագին գոչիւնն
ամէնքը հուր վառեց: Պողովատիկ սուրս շողաղբնե-
լով՝ օդը թնդացուցի, սուրբն սակ եզող երկիրը դու-
րացուցի եւ աճապարելով՝ ժողովուելու հրաման ու
քաջալեր տուի: Մէկ վայրկենի մէջ՝ թուր շարժել
կրցողները պատրաստ էին: Ճեպով բերդին անցքերը
բռնելու վազեցինք եւ սանդուղ դնելու տեղերուն կը
զգուշանայինք. բայց բոլոր բոլոր քառասուն հոգի
էինք:

«Ամէնքս գիտէինք որ հոս քաջութիւն պետք
է ցուցնել, վասն զի անդութ եւ անազորոյն մարդիկ-
ներէն ազատութեան յոյս չկար: Ամէն բան կարգաւորե-

լէն եւ մարդիկներս բերդին վրայ շարեւէն ետեւ,
թէպէտ չորս կողմը կը վազէի եւ իմ հաւատարիմ ու
սիրելի ծառաներուս ու Երախանի բերդին բնակնե-
րուն արութեամբ կուռելու յորդոր ու տայի, բայց
բուն իմ կեցած տեղս վտանգաւոր տեղ էր:

«Ինչնամիք այրող աւերակներէն կատաղի դա-
ղաններու պէս մեր բռնած բերդը վազեցին: Քանի մը
վայրկենի մէջ բերդը պաշարուած տեսանք. խիստ
սպառնալիքներ բնելով՝ Անմիջապէս անձնատուր չըլ-
լար նէ, կոտորած ու մահ է, կ'ըսէին: Գարձեալ պու-
ռացին եւ իմ անունս տալով՝ Շաւարշ, անձնատուր
եղիր, բսին: Բայց ես արդար բարկութեամբ բարձրա-
ձայն գոչեցի. Չէ, չէ, Մամիկոնեանց Երախանի բեր-
դը պէտք է որ պաշտպանեմ: Աս խօսքիս պատասխան՝
քանի մը նետեր տրուեցան եւ քովս կեցողներէն մե-
կը գետինը ձգեցին: Սարսափեցայ եւ քիչ մը մէկդի
քաշուեցի: Հրամայեցի որ ան աւազակներուն վրայ
նետերու անձրեւ մը թափեն: Շատ, շատ զազաններ
թաւաղեցան անգունը գաջին եւ իրենց արիւնտով
յորդահոս վտակներ շինեցին, բայց մեր կողմէն ինկող-
ներն ալ քիչ չէին: Պարսիկ զօրաց խմբերն երթա-
լով աւելի կատաղութեամբ ու խիստ բազմութեամբ
բերդին կը մտնեային. բայց վերէն նետուած քարերն
ու այլեւայլ նիւթերը զերենք կը ջախջախէին եւ այս-
պէսով շատերն իրենց մուլեղնութեան զոհ կ'ըլլային:

«Ես ուրիշ կողմ մը կեցած՝ շունչ չէի կրնար
առնել. մէկ կողմանէ թշնամեաց դուռը մը ինձի դէմ
վեր կը սողար, մէկալ կողմանէ վար վազելով՝ կը
փախէր. փախուստն ինձի անխմանալի ու զարմանալի
եկաւ, բայց քիչ մ'ետքը հակառակորդներուն զննուց
չաչունը բերդին վրայ լսեցի: Այ, ապերախտ, անու-
ղորմ գազան Վարազ: Վարազ բերդին ամէն դաղա-
նի շաւիղը գիտէր: Յանկարճ շատ թշնամիներ, դեռ
եւ ուրիշ աւելի ամուր տեղ մը չապաստանած, մուլ
եւ խաւարազգած դեւերու նման, ծակամուտ սորա-
մուտ անասնոց պէս՝ իրենց ստորերկրեայ բոցներէն

գուրս ելան: Իմ գունդս առիւծաբար կռուելով ու երկայրի սուրբ շողացընելով, չէր իջեցընե՛ր՝ առանց գտնելու, չէր գտնե՛ր՝ առանց վերաւորելու, չէր վերաւորե՛ր՝ առանց մահ տալու. բայց ի՛նչ օգուտ որ քիչուր էր:

«Ի՛նչ երներուն հետ ես ալ կռուոյ մէջ նետուեցայ. երկնաւոր բազուկ մը ինձի ոյժ ու զօրութիւն կու տար. թուրս աջ ու ձախ դին շողացած ատեն՝ անթիւ անհամար զլուիններ կը հնձեր: Ինչպէս Երասի գետն իր սրբութացութեամբը լեռներ փորելով՝ կը պատուէ, եւ մեծամեծ ու ահագին ժայռեր ձորերուն անդունդը կը թաւալէ, նոյնպէս մենք ալ մեր վառվառն շարժմամբն եւ ուժովը շատ թշնամիներ մղեցինք, զերեւը գեախիւր կործանելով՝ յառաջ քալեցինք: Այսպիսի կռուոյ կրակի մը մէջ, մեկէն խժական գոռում մը ականջս դռնչեց: Անունս դազանի մը բերանը կը հնչէր. դարձայ եւ առջեւս. . . ջահերու լուսովը զԱարազ, արիւնուռայ թշնամիս տեսայ: Ան ապերախտ, զեղծ մարդը, սարսափելի արիւնկազկը՝ սիրելի որդիս մեռցընելէն ետեւ՝ ինձմէ ալ վրէժ կ'ուզէր. ան հաւատադրուժ գեներալորոյս, նենգաւոր անկրօնը՝ եռանդնոտ ու առաքինի Մամիկոնեանց սոհմին հաւատոց հաստատութիւնն ալ փորձելու կը փափաքէր:

«Չարմանալի բան. ուստի արդեօք եկաւ ինձի այնչափ զօրութիւն ու զայրոյթ: Չոր օրինակ փախչող անասնձ նժոյգ մը, երազ ու ընդոտ վազքով ձորն ու դաշար կ'երթայ ճարակելու համար. իր ընթացից մէջ կրակ ու բոց կտրած՝ դափրելովն Երկիրը կը դողացընէ, դռնչական խնձիւնովը դաշար կը թնդացընէ, բաշն ապին անդին կը խաղայ, ուսոց վրայ վիզը բարձր ու ամբարհաւած կը կենայ. նոյնպէս ես ալ անադորոյն Աարազին դիմացն ելայ. շանթարձակ ու վայրենի աչուրներով, անվեհեր ճակատով, սրաթուխ ու արագոտն՝ հազիւ թէ փուշոյ վրայ հետք թողով, ան դազանին առջեւ անկուեցայ ու

բարձրաբարբառ գոչեցի. Ո՛վ վատ, հաւատադրուժ մարդ. ուսկից է արդեօք այնչափ ժպրհութիւնդ, Երակոտակորոյս:

«Ան ատեն իմ եւ անոր սուրբ մեր գլխուն վրայ խաղալու սկսան: Երկու կողման մարտիկներուն մէջ ալ զինադադար ու լուութիւն տիրեց. ամէնքն ալ մեզի դարձած մեր ահագին ու սրոշիչ մարտին միտ կը դնէին: Գիշերը բիւր ջահերով զարդարուած՝ պայծառ ու լուսաւոր օրուան մը պէս ըլլալով, երկու կռուողներուն ամէն մէկ շարժումը յայտնի կ'երեւար: Նենգաւոր Աարազին երկայն սուրբ՝ մէկ, երկու, երեք անգամ կուրծքիս վրայ կը ճօճէր. բայց ես երիտասարդական ուժով ան խաղերն ինձմէ հեռու մերժելով՝ յարմար ու աղէկ տեղ մը թունահեղ եւ մահաբեր սուրս հանդիպցընելու միջոց կը փնտռէի:

«Նոր որ վերջին որոշիչ շարուած մը տալու թուրս վերցուցած կ'իջեցընէի, յանկարծ ազմկալից խոռվութիւն մը հնչեց, ամբողջն մէկ մասը կործանելով՝ անկից երկնաբերձ բոցեր գուրս ելան ծառացան: Աարազ ահուդողի մէջ մտաւ. ես նոյն բոսկէն դիպող ժամանակ դաայ. . . հօր հարուածով մը ան գազանը գետին կործանեցի: Անմիջապէս Պարսիկներուն բերնէն կատաղութեան աղաղակ մը օդը թնդացուց: Ոմանք զենքը մեկդի առին, ոմանք իմ ետեւէս ինչ կան: Կարծեցի որ վախճանս մօտ է: Յուսահատութիւնը կրկին զօրութիւն տուաւ, ըմբշի պէս կռուեցայ. Երկիրը վերէն պաշտպան էր, որ թշնամին կրոնար ինձի մնասել. եւ ոչ մէկ վէրք մ'առի. իմ հաւատարիմ ընկերներս արիւնթաթախ մարմնով, գրեթէ ամէնքն ալ երկիրը մահի՞՞ ընտրեցին. . . քիչ մնաց՝ ես ալ նոյն տեղը մշանջենաւոր քնարան կ'ընէի. . . :

«Ան խուճապական վտանդին մէջ, երկու սիրելի բարեկամներս՝ Արսէն ու Երեցս քովս եկան: Առջինն երկու թեւաւոր ու թուշող խօսք զըռցեց. Տէր, ըսաւ մեղմով մը, գտնէ ձեր երկրորդ որդւոյն

կեանքն ազատեցէք, զինքը պաշտպանելու խոստումն նիդ յիշեցէք. եկէք, զեռ ազատութեան միջոց եղած առեն՝ մեր հետն եկէք: Աչքս ընկերներուս դարձուցի, եւ առիւծի պէս կռուող ու ինծի համար մեռնող բարեկամներս դիտեցի: Արդեօք թողո՞ւմ, կըսէի մտքէս. չէ՛ նէ՛ ես ալ անոնց հետ մեռնիմ: Բայց երկու եկողները չթողուցին. ձեպով զիս մեկդի առին: Մէկ երկու վայրկենի մէջ ծածուկ դռնակէ մը դուրս ելլելով, թշնամիներէ զերծ տեղ մ'եկանք, հոն ծառայ մը զՎարդ բերելով եւ դեղեցկատեսս յաղթ երիվար մը պատրաստած՝ ինծի կը սպասէր: Լացող պատանեակն առի եւ ձի հեծնելով՝ տղան վերարկուաւ ծածկեցի: Մնա՞ք բարով, ընկերք, ըսի. բախտը զիս դարձեալ խռովալից աշխարհքը կը ձգէ. ո՞ գիտէ ինչ դժբախտութեանց մէջ զիս պիտ'որ ընկըմե՞. . . : Բայց չէ. Աստուծոյ դուժը՝ մեծ, բազուկը զօրաւոր է: Սակայն թէ որ նոյն փոփոխական բախտն երկրիս վրայ մէջ մ'ալ զմեզ քովէ քով չբերելու ըլլայ, անշուշտ վերը, աստեղաց վրայ յորինած դարպասին մէջ կը տեսնուինք, ուր աղէտք եւ ցաւ ամէնուն քովէն աներեւոյթ կ'ըլլան: Այնպէս է, պատասխանեցին ընկերներս, եւ դաժան ու խիստ ցաւով մը անոնց հրաժարական տալով, տղան հետս առած՝ մութ գիշերուան մէջ երիվարս սրանալու ստիպեցի:

«Վրիչ ժամանակէն բերդն ինձմէ հեռու մնաց. շատ անգամ արտասուազին աչքով բոցերու ճարակ եղած տեղերը կը նայէի: Ո՛հ դժբախտութիւն, որ դուցս շիրմին վրայ արտասուք թափելէն ալ զրկուեցայ: Գլխէս հուր կը ցոլանար, սիրտս աստիկ կը թնդար, ահազողի մէջ եւ երազ վաղքէն նուազած էի, բայց ան դար վեր դար վար ընթացքն ալ պէտք էր որ ընէի: Վերջապէս թանձրախիտ անտառի մը մէջ, պզտիկ հիւղե մ'առջեւ կեցայ. հոն հիւղին բնակը մեզն գիշերուան մը տեղ շնորհեց:

«Այսպէս փախտական եւ տարագիր եղած,

առանձին կամ մանաւանդ վշտերս ինծի ընկեր առած՝ ապաստանարան մը կը փնտռէի: Սիրելի սրբուհոյ շնորհմն աւերակներուն տակ, ցանկալի Մամիկոնեան Հմայեկին Երախանի բերդը բոցերու մէջ, ամենայն ինչ վերջապէս աներեւոյթ եղած էր: Բայց նոյն իսկ Հմայեակին ալ ուր է արդեօք. իր երեք սրդիքն ու կինն աւերակաց սր մասին տակ կամ սր անոցսրմ թշնամոյն ձեռքն են ինկած: Աս, սիրելի, աս ամէն բան միտքս դալով, Ախ, յաւիտենական Վարիչ աստեղաց, կըսէի մտքէս, Գու՛ն շատ փորձանքներ գլուխս բերիր. բայց Բու վճիռներդ ու խորհուրդներդ անհաս են: Չոր օրինակ աստղներուն սակեղէն արծաթեայ բանակին ընթացքն երկնից վրայ անդադար ու անփոփոխ ընել կու տաս, նոյնպէս մարդուն ընթացքին ալ Գուն կ'առաջնորդես: Հեղիկ ու գթած աչքով մը անոր վրայ կը հսկես, եւ զինքն աղետից մթութենէն հանելով՝ վերջապէս խաղաղութեան լուսոյ մէջ կը դնես: Ո՛հ, Տէր, քու հզօր ձեռքդ մեր վրայ տարածէ: Գթաւ աս անմեղ մանկան վրայ, որ իր կենաց արեւը՝ մահուան եւ վշտաց մէջ տեսաւ: Հողատղան, ընթացքն ու զղէ, եւ ես անձկութիւններս ոչինչ կը սեպեմ:

«Աս պաղատանքով զարմանալի զօրութիւն ստացած, ինծի համար պատրաստուած աղքատիկ անկողինը մտնել կը տենչայի: Անկից աւելի ինչ կրնայի ուղեւ կամ այնուհետեւ աշխարհքէս ինչ կրնայի յուսալ: Անոնցս ծառք գրեթէ տերեւաթափ եղած էր. վիրաւորուած սիրտս մենութենէն ու հանդարտութենէն ուրիշ բանի չէր կրնար բաղձալ: Ո՞ր պէտք էր փախչել: Գուցէ Գուգարաց աշխարհքը կամ սրանչէլի Հմայեկին քով կրնայի երթալ, կամ ուրիշ շատ բարեկամներու ապաւինիլ. բայց ալեկոծ ծովածուփ նաւ մը աւելի աղմկալից ծովուն խորքն երթալով՝ ինչ կը շահի: Աչօքներս՝ շատ անգամ Աստուծոյ պատիւն անարգանաց մէջ նշմարեցին, շատ մարդիկներուն անմիաբանութիւնն ու շահասիրութիւնը զրգուռուած տեսան:


«Մէկէն գեղեցիկ ու մխիթարիչ յիշատակ մը միտքս եկաւ, երիտասարդութեանս ներքին բարեկամը յիշեցի: Գիտէի աս խաղաղական ձորը, որուն մէջ դուն, սիրելի Մուշէ, Աստուծոյ հաւատարիմ սպասաւորն ըլլալով, միայն աստուածային սէր կը սփռես եւ բոլոր բնական բուն սիրտն անով կը վառես: Ուստի քեզի դալ որոշեցի, քեզի իմ դժբախտութիւններս յայտնել, քու առջեւ իմ աղէտքս դնել էր միտքս, որ դուն ալ աս սքանչելի մենութեան մէջ ինձի ապաւեն ըլլաս, իմ սիրելի Աարդս Աստուծոյ երկիւղին մէջ կրթելու օգնական ըլլաս: Աս է, պատուական ծերունի, իմ կամքս, ասոր համար քեզի եկայ: Ա՛լ կը ճանչնաս իմ դժբախտութիւններս, իմ խիտ ու դառնադառն վշտերս. ընդունէ զիս քու բազկացոյց մէջ, թող որ կենացս ձմեռն աս մենութեան մէջ անցընեմ: Այսուհետեւ փառք ու պատիւ, կամ ինչք եւ աշխարհի մեծութիւն մեկդի կը թողում, հոս անյայտ ու անծանօթ՝ պղտիկ հիւղի մը մէջ, ես Աարդայ հետ մէկտեղ անցընել կ'ուզեմ: Երբ որ աս առանձնութեան մէջ մանուկը մեծնայ եւ ասկից ելլելով աշխարհքին վրդովմանց մէջ մտնէ, անշուշտ մեր ճշմարիտ հաւատքը սորված ու անոր մէջ աղէկ կըրթում անձ կ'ըլլայ: Կամքն ու միտքը բարեոյն եւ ճշմարտին վրայ բոբոբած, բոլոր մեզմէ առած ծանօթութիւնները սիրտը դրոշմած, հզօր, զգուշաւոր ու անեղձ՝ զարտուղի շաւիղներու մէջ անտարակոյս չիմուրիբ, Աստուած զինքը ձեռքէ չիթողուր: Երբ որ մէկը բարի եւ կրօնական ոգւով կրթում է, երիտասարդութեան բախար զինքն ամբարհաւած չ'ըներ, դժբախտութեան աստղը՝ փատասիրտ ու երկշոտ տղու մը չիդարձներ: Ար բաղձամ, սիրելի Մուշէ, նախ աս դործքս յաջողցընել եւ անկից ետքը ան բարձր աշխարհքն անցնիլ, ուր Աստուած ստուգիւ շքեղ սեղ մը պատրաստած է մեզի: Ասոր համար կ'աղաչեմ, կը խնդրեմ քեզմէ, թող որ քովդ հանգիստ դանեմ եւ քու ձեռնաստութեամբդ ալ օգնէ ինձի: Ես՝ այր

խաղաղութեան եւ ճշմարիտ հաւատոյ որդի ըլլալով, թէ որ կարելի է նե՛՛ հոս աս մենութեան մէջ ապրիլ ու մեռնիլ կը տենչամ,»: Ըսաւ ու լռեց:

Ծերունի երէցն ներքին վշտակցութեամբ իշխանին ամէն մէկ խօսքը մտիկ ընելէն եւ անոր վերջին խօսքերուն կատարումն Աստուծոյ խնդրելէն ետեւ, այսպէս ըսաւ. «Ազնիւ Շաւարշ, մեր կրօնը մշտնջենաւոր հանգիստ կը հեղու մեր վրայ: Մեր ժամանակաւոր յոյսը՝ լուսաւոր երկինքի պէս պիտի պայծառանայ, եւ դէմ՝ յանդիման սքանչելի տեսութեամբ մը՝ աս աշխարհքին քիչ վշտերը բոլորովն պիտի մոռնանք»: Աս ըսելով՝ ձեռուրները բացաւ ու բարեկամին գիրկն ինկաւ:

Այսպէս երկայն ատեն զրկխառնութեան մէջ կենալէն ետեւ, երէցը բարեկամին աղաչեց որ խոնջած անդամներուն քիչ մը հանգիստ շնորհէ, գէթ քիչ մը ատեն անկողին մանելով՝ նորէն ոյժ ու զօրութիւն ստանայ:

Արեւելեան կողմն արշալոյսն արդէն երեւնալու կը սկսէր, երբ որ երկու բարեկամներ իրենց հանդստաւետ անկողինը կ'երթային: Շատ ցաւոց օրերէն ետեւ մխիթարութեան հրեշտակն եկաւ իշխանին վրայ, եւ կարծես թէ ահագին ժայռեր ու վիմեր անոր վրայէն մեկդի առաւ, զորոնք արիութեամբ կը բառնար գիւցազը:



Գ Լ Ո Ւ Խ Ե .

Երևանի-Յիւն ու Երկա-որ պատի:

ՊԱՏԳԱՄԱՐԵՐ արշալոյսն իր ընթացքը սկսե-
լու ատեն՝ շքեղ դէմքը մեղմով ամենուն ցու-
ցնելով եւ հրաշեկ զլինէն զուարթ ճաճանչ-
ներ երկրիս վրայ սիւսելով, շնչաւորն ու անշունչը
կը կենդանացընէր: Աս առաջին կենդանատու վայր-
կենին մէջ գրեթէ միշտ Շաւարշ ու Վարդ իրենց
անկողինը թող տուած կ'ըլլային: Շաւարշ քանի մը
տարի Մուշէ բարեկամին քով անցընելով, ուրախ
զուարթ էր եւ աս հանգստաւէտ կեանքը զինքը կը
զօրացընէր: Իր բնակութեան տեղը գրեթէ ամենուն
անծանօթ էր: Շատերը զինքն աւերակներու տակ
թաղուած, ոմանք ալ հեռու տեղ մը փախած կը
թամարէին: Անոր համար ինքն ալ հոս իր բարեկամին
քով հասնելուն գէտ էր. զբեռան ալ փոխած ըլլա-
լով՝ բոլոր իր կերպարանաց ուրիշ տեղք մը տուած
էր: Մաքուր՝ բայց դձուձ զգեստով ամէն օր գեղին
մատուռն աղօթելու կ'երթար եւ սիրելի Վարդայ
հետ մեկտեղ խաղալ ու քաղցր օրեր կ'անցընէր:
Բարետիրտ գեղացիք աս անծանօթները տեսած ատեն՝

շատ կը զարմանային. Վարդայ վայելուչ կերպարանքը,
անոր ազնուաբարոյ բնութիւնն ու զէմքին վրայ շողա-
ցած հրեշտականման անմեղութիւնը՝ իրենց սրտին
մէջ սէր ու մեծարանք կը ծնուցանէր: Անոր համար
անոնց, պատահած ատեն՝ ուրախութեամբ եւ մեծա-
րանօք ողջոյն կու տային: Շատ անգամ Շաւարշ իր
քանի մը բարեկամներէն ընդունած ստիկն գեղին
աղքատներուն համար երիցուն ձեռքը մեծ գումար
կը դնէր եւ կը բաղձար որ մեկը չհիմանայ ուսկից զալը.
բայց Ժողովուրդն իմանալով՝ իր առատաձեռն բարե-
բարին շորհակալ կ'ըլլար եւ ստեպ երախտագիտու-
թիւնն արտաքին նշաններով ալ կը ցուցընէր:

Այսպէս Շաւարշ քանի մը խտաշունչ ձմեռ
Մուշէին քով անցընելէն ետեւ, իրեն ուրիշ տեղ
մ'որոշեց: Վայելատես ու անուշահոտ գարունն իր
նորոգիչ շնչովն ամէն բան ծաղկեցընելու եւ բոլոր
բնութեան կեանք ու զուարթութիւն տալու ատեն՝
Շաւարշ Վարդայ հետ մեկտեղ պղտիկ հիւղ կամ
անիկ մը գնաց, որն որ երիցուն բնակութենէն շատ
հեռու չէր: Հոն խոշոր զգեստ մը իր անդամները կը
ծածկէր. հոն բոլոր իր զբաղմունքը՝ աղօթք, աշխա-
տանք ու սղուն կրթութիւնն էր: Ասոնցմով կամաց
կամաց իր կրած ահագին վշտերն աներեւոյթ կ'ըլլային
եւ բախտին թողուցած հարուածները կը բժշկուէին:

Վարդ ուրախ զուարթ օրէ օր կ'աճէր ու կը
զարգանար: Ազատ բնութեան մէջ կեանք անցընելն
իր մարմնոյն աղէկ զօրութիւն կու տար. Գիտակին մեծ
հոգաբարձութեամբն իր ազնիւ ու հարուստ ձիւրքերն
ետեւէ ետեւ երեւան կ'էլլէին եւ շատ մեծամեծ բա-
նէր կը խոստանային: Վառվռուն Վարդն իր սիրելի
դաստիարակին վարդապետութեանց շատ եռանդով
միտ կը դնէր. նոյն իսկ աչքն ալ գրեթէ միշտ Գի-
տակին շրթունքներուն վրայ էր, որն որ հաւատոյ բա-
նէրն ու մեր կրօնից ուսմունքն եւ իշխանի մը հար-
կաւոր եղած սրպիտութիւնները կը սրովեցընէր, սրոնց
ձեռքով կամաց կամաց իր դիտած նպատակին կրնար

Հասնիլ: Աւարդայ ծոցին մէջ ճշմարտութեան եւ իրաւանց զգածումը կ'եռար. երբ որ անիրաւութեան գործք մը կը տեսնէր կամ կը լսէր, շքեղ դէմքին վրայ մեղմ ու ազնիւ զայրոյթ մը կը վառէր. սքանչելի Հմայեկին հեղութիւնն ու արդարասիրութիւնն իր սրտին մէջ եկած, բնակութիւն դասած էր:

Աւարդ ձորանիստ ու դաշտաբնակ ժողովրդեան սիրելի եղած, իր մանկութեան տարիները մեկգի թողուց եւ անցաւ, ինչպէս ծաղկաւեա մարդագետնէ մը ոսկեհոս վտակ մը կը սահի, անցաւ ուրիշ ծաղկեայ Հասակի մը: Աս երիտասարդութեան տարիներուն մէջ իր քաջ դաստիարակին ակնկալութիւնը գերազանցեց: Հրեշտականման ու սուր միտք ունէր, եւ սրտին բարութիւնը՝ բերնէն ելած խօսքերն ալ կը ցուցնէին: Շատ անգամ սքանչելի ու շքեղ բնութեան ազդեցութիւնները գիտնական աչքով մը դիտելով եւ իր սիրելի դաստիարակին բիւր հարցումներ բնելով, իր իմաստութիւնն ու հանձարը կը ցուցնէր: Հանձարեղ եւ սրամիտ Գիտակէն բաւական հրահանգ եւ քանի մը լեզուներ սորվելով, իր յաջողակութեամբն ու համարձակութեամբը գիտունն ու անդէտը, ծերն ու երիտասարդը կը դիւթէր: Այսու ամենայնիւ սնապարծութիւնն ու ամբարտաւանութիւնն իրմէ հեռու էին. հպատակելու համար նշան մը միայն բաւական էր, իր անձին զարմանալի ձիւրքերը ճանչնալ չուզելով՝ բոլոր վտասհութիւնն Աստուծոյ վրայ դրած էր, սրտին հանգստութիւնը՝ Բարձրելոյն իրեն հետ ունեցած մշտնջենաւոր զօգն էր եւ նոյն կապն անբակ պահելու ջանքը: Ո՛հ, ցանկալի խաղաղութիւն ու անմեղութիւն:

Աս հասակը հասած էր Աւարդ եւ դեռ իր ծնողաց ու եղբարց պատմութիւնը չէր լսած. նոյն իսկ իր սովորաբար չէր գիտէր: Գիտակ եւ ոչ ինք զինքը յայտնած էր անոր: Աւարդ իր մանկութեան յիշատակներով՝ աս գիտէր որ անիկայ իր հայրը չէ. սակայն անոր իրեն ցուցուցած սէրն ու ինամբը սրտին մէջ անոր

վրայ ան աստիճանի սէր ու մեծարանք ծնուցած էին, որ երբեք ուրիշ անուն չէր տար՝ բայց եթէ Հայր: Շատ անգամ պատանին երիտասարդական աշտուժով կ'ուզէր աս մթութիւնն ու տարակոյսը փարատել տալ. բայց Գիտակ միշտ դէմ կը դնէր, վասն զի չէր ուզէր աղուն սիրտը վերաւորել եւ վշտալի դէպքերուն քողը մեկգի առնելով՝ քիչ շատ անոր զուարթ բնութեան մէջ լեղի խառնել: Սակայն վերջապէս ալ յայտնութեանց ժամանակն եկած սեպելով, անգամ մը երբ որ Աւարդ նորէն իր ծնողաց վրայ հարցմունք կ'ընէր, իր դաստիարակն առանց ուրիշ բան զրուցելու՝ Մուշէ երիցուն անոր պարզեւած գիրքը ձեռքն առնելով, «Եկուր, սրբեակ, ըսաւ իր սիրելոյն, մոիկ ըրէ. աս գրքին մէջ եղած պատմութիւնն ու նկարները քեզի ստորագրել կ'ուզեմ», եւ այսպէս սկսաւ:

«Բայ Աւարդանանց կռիւները շատնց գիտես, սիրելի Աւարդ: Աւարդանայ արի եղբայրը, հաստաբազուկ Հմայեակն ալ, իր որդիներէն շատ աւելի արեւի տեղ դասած, թռած՝ եղբորը Աւարդանայ քով գացած է: Առան զի երբ որ ան մեծ Մարտիկն իր մշտնջենաւոր բնակարանն անցաւ, կու լար կ'ողբար Հմայեակ. Հէք ու դժբախտ եմ, կ'ըսէր ինք իրեն, ո՛հ, Աւարդան, սիրելի եղբայր, կը գոչէր, ո՛ւր ես. ինչու դուն մինակ գլուխդ պսակ առած՝ ինձմէ հեռացար եւ զիս հետդ չառիր ու հոս թողուցիր:

«Այսպէս շատ ատեն անցնելէն ետեւ, թռաւ սրաթեւ արծուի պէս խայտակն Հմայեակ, Տայոց աշխարհքն եկաւ եւ Պարխարայ ամրոցներէն իջնալով՝ Որջնահող գեղը բանակեցաւ:

«Աստակ Սիւնեայ իշխանը՝ Պարսից եւ Հայոց անթիւ բազմութեամբ ահագին բանակ ժողովելով, երկու բաժնեց. մէկը Գարեղեաց, մէկալը Պալունի հայ ուրացող իշխաններուն ձեռքը յանձնեց, որոնք դազանաբար ասդին անդին աւրելով եւ այրելով՝ կողոպտեցին, շատ եկեղեցիներ կործանեցին եւ վերջապէս մուկնութեամբ Հմայեկայ գիւմացն եկան շարուեցան:

« Հմայեկեանք աներկիւղ քաջութեամբ եւ անպիանդ ու անառիկ պարսպի մը պէս ամբացան կեցան: Մէկէնիմէկ պատերազմին դըրդելովն ամենուն ականջը դռնչեց. Հեթմանոսք եւ Հայք իրենց թուրը շողացընելով՝ իրարու վրայ ինկան: Երկու կողմէն ալ փողերուն ու թմբուկներուն ահագին հնչիւնն ու դափիւնն ամէնքը սարսափեցուց. օդը մթընցաւ, զերկիրը սեւաթոյր քող մը պատեց. թրերուն շողիւնը՝ թանձր ու մթին ամպէ ելած կայծակի հրոյն պէս սառիին անդին կ'երթ եւեկէր, կարմիր, սոկեգոյն եւ մանուշակակերպ նետեր ու սլաքներ օդի մէջ կը խաղային: Մոլի Պարսիկներուն աղաղակն ու գոչիւնը, իրենց պատերազմական երիւարներուն խնջիւնը՝ երկիրը դողացընել, ժայռերը ճեղքել կը սպառնային: Ե՛րբ մարդ այսպիսի կռիւ տեսաւ: Նետերն ու թրերն ամէն բան հնձելով եւ կտորտելով, քաջաց ու վատաց արեամբը դաշտը ծով կը դարձընէին: Աս ծովուն պէտք վրայ՝ բիւրաւոր թրեր, սլաքներ ու վահաններ իրարու հետ զարնուելով գըզգիւն կը հանէին. անոր մէջ՝ նաւերու պէս խոյացող ձիերն ընկղմելու բաղձանք կը ցուցընէին: Հարուած հարուածի վրայ՝ անձրեւի պէս կ'իջնար, վէրքերը՝ աշնան անթիւ անհասմար անրեւներուն պէս՝ մարմինը կը ծածկէին: Այս պէս երկու կողմն ալ կատաղութեամբ կռուելու ատեն՝ Հմայեակ սպարապետը սաղաւարտը գլխէն վար առաւ, ինկաւ Աստուծոյ առջեւ եւ լալով այսպէս բտաւ. Տէր, ճշմարտութեան սիրող Աստուած, տուր մեզի յաղթութիւն կամ թագ եւ պոսակ, որպէս զեքու առջեւդ յաղթող դանք եւ քեզի փառք տանք. աս յանգուզն եւ մտապարծ անհաւատներուն պէս Ամենատեղծիչը չարհամարհէնք:

«Նորէն ոտք ելլելով՝ սաղաւարտը դուրսը դրաւ եւ սրացաւ իրեններուն մէջ մտաւ, աղաղակն ու պղնձէ փողերը դարձեալ հնչեցին. Հմայեակ առիւծի պէս թշնամեաց մէկ ծայրէն մտաւ մինչեւ մէկալ ծայրը դնաց եկաւ, իրեններուն շունչ ու հոգի տուաւ. եր-

կայն ատեն արիւնը վտակներու պէս վազեց. զթութիւնն ու մարդկութիւնն աներեւոյթ եղած, ամենուն զէմքէն կրակ կը ցառքէր: Շատ մեռեալ դիականց բլուրներ կը բարձրանային. անոնց արեամբը դաշտերն ու այդեատանները կ'ոռոգուէին. կենդանի մնացողները շանթ երու պէս կ'որոտային: Նոյն ատեն մէկէնիմէկ բնութիւնը տխուր զգեստ մը հագաւ, արեգակը սեւ քողով զէմքը ծածկեց, Հմայեակ Արեաց դէմ դիմեց, իր եղբօրն եւ ուրիշ բիւրաւոր քաջաց վրէժն առաւ: Ահագին գիւցապնէ Աստուծոյ անունը կրկին տուաւ, իր կապարճակրէն նորէն նետ, սուր ուղեց, վերաւորեց, մեռցուց. Աստուծոյ անունն երրորդ անգամ անուանեց եւ ինկաւ վախճանեցաւ ու հոգին, ս՛հ, ան սքանչելի հոգին՝ երկինք իրեն համար պատրաստուած դահի մը վրայ, իր եղբօրը՝ Վարդանայ քով նստաւ»:

Պիսակ ասոնք պատմելէն ետեւ լուեց, չուղեց Վարդին իմացընել Հմայեկայ իրեն հետ ինչ կապակցութիւն ունենալը: Բայց իր խօսքերը պատանայն սրտին մէջ Պարսից դէմ հուր վառած եւ բոլոր անդամներուն սաստիկ ցաւ պատճառած էր: Սակայն անիկայ հլու եւ բարի բլլալով, երկու երեք խօսքով նորէն հանդարտեցաւ քանի մը քաղցր յիշատակներով, իրեն անձանթ եղած ցաւերը մէկդի թողուց ու առջի զուարթութիւնն առաւ: Եւ թէպէտ աս պատմութենէն՝ մաքին մէջ իր ծնողաց վրայ այլեւայլ տարակոյսներ ծագած էին, բայց տեսնելով որ իր դաստիարակն աւելի յայտնի կերպով խօսիլ չ'ուզեր, լուեց եւ Աստուծոյ ու իր երկրորդ հօր խոհեմութեան թող տուաւ պատշաճ ժամանակին ամէն բան յայտնելու հոգը:





ԳԼՈՒԽ Զ

Ուրախութիւն եւ վեշտ:

ԳԱՐՆԱՆ պայծառ ու յստակ օր մը Գիսակ եւ Վարդ իրենց պզտիկ հիւզին սեամբ նստած՝ արեգական շքեղ քառածին կը գիտէին եւ անոր անիւներէն ելած կայծերը կը գննէին: Գիսակ իմաստուն խրատներով իր մտադիր աշկերտը կը թելու ատեն, սրբնթաց ձիւ մը վազքը լսուեցաւ եւ հեծեալ մ'եկաւ առջեւին կեցաւ: Եկողը՝ Ներսէս Երուանդունուոյն ծառաներէն մէկն էր, անմիջապէս երիվարէն վար իջնալով, Գիսակին ձեռքն իր տիրոջ կողմանէ նամակ մը տուաւ: Գիսակ նամակն առնելով՝ ձիաւորին ազաչեց որ իր անկան մէջ մտնէ, այնչափ ընթացից աշխատութենէն քիչ մը հանգիստ առնէ եւ յոգնած ու տկարացած անդամները կերակրով ու ըմպելեօք զօրացնէ: Վարդ վազեց հաց, պանիր, կոզի ու կաթ բերաւ հիւրին առջեւ դրաւ: բարեբարոյն ու զօրութեան կարօտը շատ չսպասեց, սիրով ու յօժարութեամբ փոքրիկ ընթրիքն ըրաւ եւ իրեն ծառայող սիրուն պատանեկին շնորհակալ ըլլալով՝ ոտք ելաւ:

Գիսակ անկիւն մը քաշուած՝ նամակին վրայէն թռչելով անցաւ. կարգացած ատեն՝ կ'երեւար որ ուրախալի լըեր իր սիրտը կը քաղցրացընէին, վասն զի խորշումած ու տխուր գեմքն ուրախութեան նշոյլներով զուարթացաւ եւ երեսին վրայ վարդազգին նկար մը նկարուեցաւ: Շատ անգամ զուարթագին՝ Վարդայ կողմը դարձաւ նայեցաւ, եւ քանի մը վայրկեան ինք իրեն խօսելէն ետեւ՝ ուրախ կերպարանքով թղթաբերին առջեւն եկաւ կեցաւ ու այսպէս խօսեցաւ. «Բարեկամ, շատ հաճոյական լըեր բերիք ինձի: Ինչ տասր տարի կայ որ բուն Երուանդունուոյն ձեռքէն գիր առած չէի. եւ ստուգիւ զարմացայ՝ իմանալով որ Ներսէս սիրելի բարեկամս Պարսկաստանէն դարձեր է: Որչափ ատեն է որ ամէնքը Հայաստան դարձան:

— «Շատ չէ: Երուանդունի իշխանը Տայոց աշխարհն ու իր ապարանքը դալուն պէս՝ բերած նամակս ինք անձամբ ձեռքս տուաւ եւ հրամայեց որ ձեզի բերեմ, ուրախ եմ որ հաճոյաբար լըեր բերի եւ ոչ թէ դառն գուժեր: Բան մը հրամայելու կամ բտելու խօսք մ'ունիք նե, պատրաստ եմ կատարելու:

— «Բարեկամ, թէ որ շիտակ Մկնատինջ կ'երթաս, իմ կողմանէս արի Ներսէսին բարեւ տար եւ ըսէ որ ժամանակին հոն կը գտնուիմ. Մկնատինջ անձամբ կը խօսինք, ուրիշ բան չունիմ»:

Օրուցաբերն աս պատասխանն առնելէն ետեւ՝ ձի հեծաւ, եւ յարգանօք Գիսակին ողջոյն ու հրաժարական տալով՝ թուաւ Մկնատինջ գնաց:

Վարդ դաստիարակէն քիչ մը հեռու կեցած՝ անոր խօսքերուն միտ կը դնէր, օտարին ու անոր ըսածներուն մէջ շատ աւեղճուածներ լսեց, զորոնք ինք չէր կրնար լուծել: Նամակին գաղտնութիւնն ու վերիվերոյ եւ ճեպով կարդալը սրտին մէջ հետաքրքրութիւն յարոյց: Գիսակ ուզելով պատանուոյն համբերութիւնը փորձել, պզտիկ սեղանը մաքրել սկսաւ եւ այնպէս կը ձեւացընէր որ Վարդայ միտքը չ'իմանար: Վարդ նոյն ատեն քիչ մ'երգեց, բայց շուտ դադրե-

ցաւ. ձեռքը դիրք մ' առաւ, բայց աչքը դռքին վրայ
չէր, այլ կարծես թէ հօրը գեմքին կամ ճակատին վրայ
շատ բան դրոշմուած կը տեսնէր: Գիտակ իր սանին
ջանքը տեսնելով, չկրցաւ ծիծաղը բռնել եւ զինքը
կանչելով՝ գլծով գրկեց, քովը նստեցուց եւ այսպէս
խօսելու սկսաւ:

«Միրելի Աարդ, ալ ժամանակն է, ընելու մեծ
փոփոխութեանդ ատենը հասաւ, ուստի պէտք է որ
ալ քողը բոլորովին վերցընեմ: Իմ հոգաբարձու-
թեանս տակ՝ աղքատ ու ողորմելի մեծցար, աչքդ
քիչ մարդ, ոչինչ բան տեսաւ: Աս մենութեան մէջ
մեր ունեցած անիկն ու զմեզ պատող ձորը քու տե-
սած աշխարհքդ էր: Ես զքեզ ջանքով ու աշխատու-
թեամբ խոսովայոյզ ծովուն ալիքներէն հեռու պահե-
ցի որ առանձնութեան մէջ սիրտդ կըթեմ, միտքդ
հարստացընեմ: Գուն ալ, սիրելի Աարդ, մանկական
փութովդ զիս երջանիկ ըրիր. քեզն հրահանգ ու
կըթուծիւն տալու ատենս՝ եռանդդ ու ջանքդ ինձի
փոխարէն պարգեւեցիր: Քու մանկութեանդ ժամա-
նակէն մինչեւ երիտասարդութեանդ չքնաղ ծաղիկը,
նեղքին մտածմանցդ հաւատարիմ խորհրդականն ես
էի: Բարձրացած եւ զեղուն հոսանքի մը պէս կրօնքն
ու հաւատքը սրտիդ մէջ զեղան. դժբախտ երկրիս
օգնելու հնարքն ու հրահանգն անոր մէջ անկուեցան:
Հիմայ ծաղկանց վրայ, պտուղ պտղոց վրայ ծնուցին
քեզն՝ սորված սքանչելի ու երկնաւոր գիտութիւն-
ներդ. ետքը . . . : Գիտեմ, կրնամ ես այսուհետեւ
զուարթ աչքով իմ գեղեցիկ գործքիս վրայ նայիլ ու
զարմանալ: Ո՛հ, սիրելի որդեակ, իմ ձեռութեանս
մխիթարութիւնը, եկուր զքեզ օրհնեմ»:

Աարդ շինեմ՝ դաստիարակին առջեւ ծուր
իջաւ: Գիտակ ձեռքը պատանեկին սեւաթոյր գան-
գրահեր գլխոյն վրայ դնելով եւ Աստուծոյ սիրովն իր
սիրտը հնոցի պէս վառուելով՝ այսպէս ըսաւ. «Եր-
կինքը, որդեակ, երկինքն օրհնէ զքեզ եւ պաշտպա-
նէ: Հգօրն իր հայրական ձեռքը գլխեդ չվերցընելով՝

ոյժ ու զօրութիւն ունենաս, ամէն ատեն եւ ամէն
տեղ հիմակուան պէս ամուր ու անվիանդ բլլայու:
Երկրիս վրայ անուող սիրելի ու մեծարոյ երեւեալ, Եր-
կինքն ալ նոյնպէս իրօք բլլայ: Ո՛րդեակ, կեանքդ
վշտերով սկսաւ, մահաբեր Ողի մ'ալ քովդ անցաւ,
բայց զքեզ աշխարհքէս չառաւ: Ապրէ, սիրելի Աարդ,
սպիտակալի, ձիւնափայլ ողի ունենաս, բիւր ամաց
չըջաններ տեսնես, եւ անկից ետքը Աէրը՝ յաւիտե-
նական խաղաղութեան դրախտը հանդչես»:

Հոս Գիտակ խորունկ հառաչելէն, եւ իրբեւ
թէ զօրութիւն խնդրելու համար աչուրները քանի
մը անգամ երկինք վերցընելէն ետեւ՝ սաստիկ այլայ-
լութեամբ խօսքն այսպէս յառաջ տարաւ: «Վերը,
կրսեմ, սիրելի Աարդ, ուր երբեմն ես ու դուն, եւ
շատոնց արդէն քու երջանիկ . . . ո՛հ, ինչպէս զու-
ցեմ, ցանկալի որդեակ. ինչո՞ւ սիրտդ երկու կտոր
ընեմ կամ զքեզ սաստիկ ցաւոց ծովու մը մէջ ըն-
կըզմեմ. . . : Բայց ալ չեմ կրնար սպասել. յայտնու-
թեան ժամանակը հասած է, եւ զիտեմ որ դուն
մեծանձն ես ու Երկինց կամքին եւ օրինաց դեմ չես
տրանջար: Քու հայրդ՝ սիրելի Աարդ, քու հայրդ . . .
արի ու քաջ ըմբիշը . . . սքանչելի շմայեակն է, որն
որ ինչպէս յառաջագոյն պատմեցի, թո՛ւած իր եղբօրը
Աարդանայ քով դացած է, եւ հիմակ ան հրաշակերտ
դարպասը կը վայլէ ու միշտ ալ պիտ'որ ուրախանայ.
բայց ան ատեն աւելի պիտի ցնծայ՝ երբ որ զքեզ աս
աշխարհքիս մէջ հեռուէն առաքինի նշմարէ ու ետքն
ալ անդին իր քովը՝ իրեն արժանի երկնաւոր որդի
տեսնէ»:

Գիտակ աս խօսքերն ըսաւ չըսաւ, Աարդայ
կուրծքին վրայ կարծես թէ ծանրաբեռն լեւներն ին-
կան ու սիրտը ջախջախեցին կամ ճնշեցին: Գժբախտ
երիտասարդն երկու ձեռքով գեմքը ծածկելով՝ երկայն
ատեն անշարժ ու լուռ կեցաւ: Սրտին մէջ անպայման
ուրախութիւն ու սաստիկ ցաւ իրարու հետ կը մրցէին.
ուրախութիւն՝ այնպիսի սքանչելի գիւցազին մը որդի

ըլլալուն համար. ցաւ՝ զինքն այնպէս շուտով մանաւանդ թէ առանց ճանչնալու կորսնցրնելուն համար: Գիտակ պատանիէն նուազ այլայլութեան մէջ չէր. սակայն իր արամութեան ու ցաւին յաղթելով՝ ամէն կերպով աշակերտը միմիջարեւու կը ջանար: Իր հայրական խօսքերէն պատանւոյն երկու պաղպաջուն աղբիւրները բացուելով՝ սիրտը քիչ մը թեթեւցաւ ու հանդարտեցաւ, եւ իր երկրորդ հօրը գողար խօսքերուն սկսաւ միտ դնել, որն որ զինքը հանդարտեցընելէն ետեւ՝ խօսքը նորէն այսպէս սկսաւ:

«Գիտնաս, Աւարդ, որ ան երկնաբերձ ու համապայծառ կամարէն՝ ննջող հօրդ օրհնութիւնը միշտ վրադ կ'իջնայ, աս դժբախտ երկրէս՝ կենդանի մօրդ ցաւերն եւ զքեզ տեսնելու բաղձանքները մինչեւ երկինք կը վերանան: Սիրելի՛ Աւարդ, զերութեանէն դարձող եղբարցդ անուններն ալ լսէ: Անդրանիկը կամ սքանչելի Աահանն ու Աասակ եւ Արատշէս՝ զքեզ, Աւարդ, զքեզ տեսնել կ'ուզեն: Իսկ զես . . . Բայց ես ո՛վ եմ:

«Մէ բաւական է, թող այսօր քողը բոլորովին մէկդի առնեմ, որն որ մինչեւ հիմակ աչքիդ առջեւ ամէն բան կը ծածկէր: Իմացիր, լսէ, սրդեակ, զքեզ ազատողին անունը: Աերցուր զլուխդ, սիրելի՛ Աւարդ, քեզի հետ խօսող ծերունւոյն աչքը նայէ, գիտե դաստիարակդ, որն որ երկայն ատեն կրթեց զքեզ եւ քու ծաղիկ հասակդ հոգաց: Ի՛նչ, չկայ արդեօք սրբտիդ մէջ ազդեցութիւն կամ գուշակ խթան մը. պետք է որ ըլլայ: Հողուդը կենդանի հայելին՝ ճակտիդ վրայ է. գիտեմ՝ հոն գրոշմուած ներքին զգացումդ կամ բնութեան հզօր ձայնը կ'ազդէ քեզի: Սիրելի՛ Աւարդ, եկուր մօրեղբօրդ ծոցը, սքանչելի հայրդ շատ սիրող ազգականիդ գիրկն ինկիր. . . Ըսաւ ու բիւր արցունք թափելով՝ զԱւարդ գրկեց:

Իրջանիկ պատանեկին սրաին խորքը հոյակապ երկինք բացուեցաւ, որուն մէջ ուրախութիւն ու այլեւայլ զարմանալի զգացումներ մէկէնիմէկ լեցուեցան.

ազգականութեան սերն ու անոր զօրութիւնը սաստիկ կերպով մը գրգռուեցան: Ան գեղեցիկ անունը, մօրեղբօր քաղցր անունը տալով՝ լացաւ Աւարդ ծերունւոյն գիրկը եւ մանկական գորովով մը զինքը կը համբուրէր ու իր լուծեամբը սրտաշարժ տեսարան մը կը ներկայացընէր:

Մայր պէս քիչ մը ատեն անցնելէն ետեւ՝ Աւարդ կարծես թէ թեթեւ ու քաղցր քնէ մ'արթնցած, ուրիշ կենդանութիւն մը ստացաւ եւ աղաչելով Գիտակին ըսաւ. «Հայր, երթանք. եղբարցս եւ մօրս երթանք, որոնք այնչափ անձկութեամբ կը փնտռեն զմեզ: Շնորհք ըրէ, զես երջանիկ ըրէ. թող որ մօրս քով երթամ ուրախանամ, ինչպէս քու քովդ ալ: Վաղաչեմ չղանդաղէնք: Ախ, սիրելի՛ Աահան, ո՞ր ես: Անշուշտ Աահան եղբայրս վաղը մէկաւն օր ինքն ալ կ'ուռայ կ'երթայ, անոր քովն ըլլայի. թող զես, հայր. իրեն հետ պատերազմիլ կ'ուզեմ, իրեն հետ թշնամեաց գեմ մրցիլ կը բաղձամ. եւ կենդքս ալ մեծին Աւարդանայ ու հօրս պէս, մեր կրօնքին եւ մեր ճշմարիտ հաւատքին համար տալ կը տենչամ: Զօրաւոր երիտասարդ եմ եւ կարծեմ եղբօրս հետ կրնամ հօրս վրէժն առնել, ինձի կ'երեւայ որ սուր կրնամ խաղցընել. կրնամ, կրնամ»:

Պատանին աս խօսքերն ըսաւ չըսաւ, արի եւ քաջ ըմբռն մը պէս ոտքի վրայ հաստատուն կեցաւ: Արտեւանունքը՝ հուր ու բոց դարձած, բայց անոյշ հայեցումաւքով, աջ բազուկն օղին մէջ տարածած ու ձեռքովն իրբեւ թէ պողովատիկ սուր մը խաղցընելով, Գողովթն ու դեւը դաշտ կը կոչէր, երիտասարդ եւ սքանչելի Գաւթին պէս մէկ կամ մանաւանդ շատ հզօր թշնամեաց գեմ կ'ուռայ եւ յաղթութեան միանգամայն կ'ուզէր երթալ: Գիտակ արտաքոյ կարգի ուրախութեամբ իր սիրելւոյն շարժումներուն հաճեցաւ եւ զպատանին իր մտածմանց յարմար տեսնելով՝ իրեն աս խօսքերն ըսաւ:

«Շանդչէ, սիրելի՛ Աւարդ, երեւելի՛ դիւցան՝

քիչ մ'ալ համբերէ: Մայրդ կը տեսնես, եղբօրդ հետ կը պատերազմես եւ այնուհետեւ միշտ իրենց հետ կ'ըլլաս: Բայց դեռ ժամանակը չէ, քու դիտուող վառ վռուռն խորհուրդներուն համաձայն բանը ձեռքով յառաջ չ'երթար: Հիմայ դեռ սորվելու հասակի մէջ ես: Նախ պէտք եւ բոլոր պատերազմական արուեստին մէջ կրթուել ու վարժիլ: Ուստի մտածածս մտիկ ըրէ եւ կարծեմ քու բարեոյդ ալ օգտակար ու շահաւետ կը տեսնես:

«Ինչ ատենէ զքեզ Մկնառինջ տանելով՝ սիրելի բարեկամին Ներսէ՛՛՛ Նրուանդունւոյն պիտի յանձնեմ: Հոն քու իշխանդ կամ թէ բեմ՝ քու սերտ բարեկամդ, քեզի իմաստուն ու հանձարեղ վարպետներ տալով՝ քեզի հարկաւոր եղածները կը սորվեցընէ, եւ շատ չ'անցնիր՝ վարպետներդ եւ ղՆրուանդունին գոհ ընելէդ ետեւ, ան քեզի միջոց կը դանձմօրդ երթալու եւ Վահան եղբօրդ հետ միանալու»:

Աս վերջին խօսքերը կայտառ Վարդայ սիրտը շատ բորբոքեցին ու յորդորեցին: Իր մօրն ու եղբարց առջեւ քաջ ու կրթեալ երեւալ՝ մեծ երջանկութիւն կը համարէր իրեն, եւ անուն ու պատիւ իր դաստիարակին, անոր համար Գիտակին ըսածները սիրով ընդունեցաւ: Բայց անկից բաժնուիլ՝ ամենեւին եւ ոչ մտքէն կ'ուզէր անցընել եւ չկրցաւ ալ հանդչել, մինչեւ որ իրմէ խոստում առաւ որ շատ անդամ Նրուանդունւոյն ապարանքն իրեն այցելութեան կու գայ:

«Ա՛րդ, բռա Գիտակ, Ներսէ՛ ինձի դրեց որ դուն միշտ իրեն հետ պիտ'որ ելլես նստիս: Կայէ որ բոս պատշաճի իրեն պատիւ ու մեծարանք ընես: Երուանդունին ծանր ու սակաւախօս մարդ մ'ըլլալով՝ բազմահունչ ճպիտն ու թուրամրթ մարդը չի սիրեր, այլ չափաւոր, արիական վարմունք կ'ուզէ: Ապարանքի մը մէջ ազատորեարը շատ բաներ կը խօսին. բայց դուն բերնէդ խօսք չհանած՝ աղէկ մտածէ, վասն զի ելածը կը թուչի կ'երթայ եւ այնուհետեւ ետ չի դառնար: Մտոյդ է որ դժուարին դպրոց մը կ'երթաս, բայց

ոյժ ու զօրութիւն ալ ունիս. սրտի արիութիւնը՝ բերուար յաղթ արկերներէ անցնիլ եւ ամենայն դժուարութեանց ալ յաղթել կը սորվեցընէ: Նրուանդունւոյն ապարանքը փառաւորութեան մէջ կը շողայ, բայց դուն, ցանկալի՛ Վարդ, ան շքեղութենէն մի շլանար, հապա սրատես աչքով շիտակ յառաջ գնա, ինչպէս մինչեւ հիմայ դացիր: Զոր օրինակ երբ որ արկը մը իր ընթացքին մէջ անկարգ կ'աճապարէ, թէպէտ եւ բարձր գահաւանդի մը գազաթէն ծնած ըլլայ, իր ճամբուն մէջ կը պղտորի, կը կորսուի կամ խորին անդնդի մը մէջ ցատքելով, ընթացքը կը դադրեցընէ. իսկ երբ որ նեղ վտակի կամ հորի մէջ կը հեծէ եւ ինք իրեն վտայ կը դիզուի, աւելի ոյժ կ'առնէ ու ամէն բանէն ազատ ըլլալով, երկինք կը բարձրանայ ու դոյնդոյն ան գեղեցիկ տեգրով՝ զինքը տեսնողները կ'ապշեցընէ. նոյնպէս դուն ալ, սիրելի՛ Վարդ, յառաջ գնա, ընթացքդ ըրէ, բայց ուղիդ եւ առաքինութեան ճամբէն, ան պաղպաղուն ու պայծառ հոսանաց շաւղէն երբեք մի խտորիր: Հիմակուան աղքատին զգեստդ թող տալով՝ շքեղութեան մէջ պիտի թաթխուիս, գլուխդ ոսկեղէն սաղաւարտով պիտի զարդարես. բայց գիտնաս որ երկրիս վտայ աստուածպաշտութենէն աւելի զարդարուն զգեստ չկայ: Աս աշխարհքիս փառաւորութիւնը՝ դաշտի վտայ եղած ծաղիկ մը նման՝ անցաւոր է: Մոլութեան խոտաշունչ օդը՝ մարդու կեանքը կ'եղծանէ. իսկ առաքինութեան եռանդը կենդանի կը պահէ»:

Վարդ աս խօսքերը սիրով լսելէն ետեւ՝ խոստացաւ որ մինչեւ հիմայ դացած գեղեցիկ շաւղէն երբեք չի խոտորիլ եւ լած ու սորված ուսմունքն ամենեւին մտքէն չի հաներ:

Ինչպէս պատիկ առաքինութեանց երկու օրինակները նորապանչ եւ գեղեցիկ պատրաստութիւններով, իրենց մնացած քիչ ժամանակն ալ մէկտեղ անցուցին: Չմեռն իր ցուրտ շունչը դադրեցընելէն եւ ծառերն ալ զուարթ կանաչութիւն մը նորէն ստանա-

լէն ետեւ, Գիտակ օր մը զՎարդ առաւ մտաւոր գեղը տարաւ, որպէս զի պատուական Մուշէին հրաժարական ողջոյնը տայ:

Ազնիւ ծերունւոյն արամութիւնն ու բարեօրիտ գեղացւոց ցաւերը ստորագրել ոչ գրիչ եւ ոչ բերան կրնայ. անոնց աչուրներէն բխած վտակները շատ, շատ զեղան, երբ որ դժբախտներն իմացան որ ամենուն սիրելի եղած Վարդն իրենցմէ կ'երթայ, ան կանաչագեղ դաշտէն կը բաժնուի հրեշտակ մը, ան տեղերէն կը հեռանայ գլխած բարերար մը: Ամէն մարդ իրեն մօտենալ կը բաղձար, իւրաքանչիւր որ Վարդայ բերնէն խօսք մը լսել, անոր հեղեկ դէմքը տեսնել կ'ուզէր:

Վարդ յստակ եւ լուսաւոր ծակոխն վրայ անմեղութիւնը գրոյմած՝ անոնց մէջ կը կենար եւ քանի մ'անգամ, անոնց սիրոյն փոխարէն՝ աչուրներէն մէկ երկու մարդարիտ հասնեց տուաւ: Մուշէն՝ շատ տարիներէ յառաջ աղետից ու վշտաց մէջ եղող եւ իր ծոցը նետուող մանուկը նշմարելով, զՎարդ քաղցրաբարոյ եւ աշխոյժ պատանի մ'եղած տեսնելով, շնորհակալ եղաւ Աստուծոյ որ այնպէս զինքը հոգաց եւ անոր առաքինի կրթիչ ալ զԳիտակ շնորհեց:

Ազն օրը Վարդ ու Գիտակ իրենց պատուական բարեկամին քով կեցան: Լուսինն՝ իր արծաթեղէն դէմքովն աշխարհը լուսաւորելու ատեն, Գիտակ պատանեկին հետ մեկտեղ ելաւ իր սնիկը գնաց: Աերջէն գիշերն էր որ Վարդ հոն Գիտակին հետ մեկտեղ պիտի ննջէր: Վարդ իր մօրը պատմութիւնն ու անոր ուր բլրալը մինչեւ նոյն ատեն չէր գիտեր. անոր համար Գիտակի դեռ ինք եւ Վարդ հարկաւոր անդործունեութեան մէջ չընկրմամբ եւ զմարդիկ զօրացընող Չեռքն անոնց աչքը մեզմով չգողած, քաղցրաբան խօսքերով Վարդայ մտադրութիւնը շարժեց:



Գ Լ Ո Ւ Խ Է

Յանկարծախն րեւութիւն:

ԱնսուշՄԱՆ եւ անեղծ ծովու նման անտառի մը մէջ, որուն մուտքը՝ մարդ դիւրաւ, բայց ելքը՝ հազիւ թէ կրնար գտնել, մտաւ իշխան մը որսընելու, եւ անթիւ անհամար ծառայից բազմութիւն մը ետեւէն կու գար: Ո՛հ, այնպէս գեղեցիկ օրուան մէջ, սրչափ երէ կրնար մարդ զետինը թաւալել: Շատ եղջերու եւ եզն, ցիւռ ու այծեամն եւ պէսպէս թռչնոց տեսակներ իշխանին ու իր ծառաներուն ձեռօքն երկիր ինկան, վասն զի ամէնքն ալ նետաձգութեան մէջ քաջաձիգ եւ դիպեցընող էին: Որսորդն ու որսը հալածողն օրուան աշխատանքէն յոգնած էին. որսորդութենէն դառնալու ատեն՝ ամենուն սրտէն ու բերնէն զուարթութեան եւ ուրախութեան զգածումներ ու խօսքեր կը բխէին. բայց ս՛վ կրնայ յայտնել իշխանին ներքին ցնծումը, ս՛վ կրնայ զուրցել անոր բոլոր խօսքերը:

Վարեկամ, ըսաւ անիկայ իր քովէն գացողին, բարեկամ, ի՛նչ գեղեցիկ որս է ըրածնիս. ի՛նչ զարմանալի բան. ամէն մէկն այնչափ երէ որոայ. երբեք պատահած բան չէր. ստուգիւ անդիւս անտառ:

մըն է մեր անտառը: Ամէնքը պիտի զարմանան ու ապշին:

«Թագի մը վրայ եղած Հազարաւոր պատուական ու շողջողուն քարերէն լուսագոյն է աս անտառը, պատասխանեց իշխանին բարեկամը: Անհամեմատ ուրախութիւն եւ սքանչելի զուարճութիւն է որսորդութիւնը, մանաւանդ այսպէս գեղեցիկ ու ընդարձակ անտառի մը մէջ: Ըսաւ ու չուն սկսաւ: Իշխանը երիվարին վրայ քիչ մը բարձրանալով՝ աչքն անտառին չորս կողմը պտրտացոյց. արեգական ճառագայթներէն թափանցած՝ սուր պէս փայլող շողը զինքը զմայլեցընեւէն ետեւ, իր առջեւն ուրիշ զարմանալի տեսարան մ'ալ ներկայացոյց:

«Ինչ կը տեսնեմ, զոչեց մէկէնիմէկ, ինչ կը տեսնեմ աս ժամանակ անտառիս մէջ. կին մը այնպէս ուշ ատեն հոս ինչ գործք ունի. մարդկան բնակութիւններէն հեռու ինչն կը կենայ:

«Իրօք մեծ ծառի մը տակ ալ նորասքանչ կերպարանքով, բայց տժգոյն, թարշամած երեսով կին մը կար. գետինն ընկողմանած՝ քաղցր քնոյ մը մէջ, դառն վշտերու անդունդ մ'ընկղմած, անշարժ անկենդան կ'երեւար:

«Տէր, կարծեմ թէ կը քնանայ, ըսաւ ծառայ մը:

«Տուր զինուոյ շէշդ, պատասխանեց իշխանը, սուր փորձ մը կ'ուզեմ ընել եւ քանի մը կաթիլ գէմքը կաթեցընելով՝ իմանալ որ զօրութիւն ունի, թէ չէ. իսկ թէ որ չարթննալու ըլլայ, ըսել է թէ կը քնանայ, ինչպէս բոյր, բայց մշանջե՛նաւոր քուն է ան եւ ալ արթննալը չունի: Տես արիւնաթաթախ ոտուքները, մարած աչուքները տես . . . Միտ դիր, միտ դիր, բարեկամ, կը խօսի, բայց կ'երեւայ որ իր դժնդակ ցաւերէն են խօջերը:

«Ախ, տուն, հայրենիք, սրբիք, եւ դուն, սիրելի, ո՞ր էք. ամէն բան կորսուեցաւ:

«Ասեցի՞ր, բարեկամ, միտ դիր՞ ինչ ըսաւ: Ո՛հ,

ողորմելի, դժբախտ կին, թէ որ բախտդ աս է նէ, շատ գէշ, խիստ ու դաժան բախտ է. գլուխդ երկինք կործանած կ'երեւայ. գոչեց իշխանը եւ կոնջ երեսը զինի թափեց:

«Արթընցաւ եղուկ, դժբախտ կինը, առանց աչքը բանալու՝ արտաքոյ կարգի յօժարութեամբ, զինուոյ կաթիլները կուլ տուաւ ու արտասուախառն ողբոց սկիզբ ըրաւ: Ո՛ւր եմ, արդեօք հրեշտակներն իրենց եւ արդար մարդիկներուն բուն հայրենիքը տարին զեւ. արդեօք մոռացութեան բաժակը կամ բարը անթիւ անհամար երկրաւոր աղետիցս բաժանիլ խմեցի: Ո՛հ, չէ, անկարելի բան է, մոռնալու շատ բան ունիմ. մտքէս երբեք չեմ կրնար հանել. երկրաւոր բախտին ստուերներն երկնից լայսր տեսնել թող չեն տար:

«Աստուած, պոռաց իշխանը, աս ինչ բան է. կինն ինք զինք երկինք կը կարծէ: Ծառայք, բարեկամք, աղաղակ, հնչիւն մը հանեցէք, որպէս զի իմանայ որ դեռ երկրիս վրայ է: Եկէք, սիրելիք, առնենք ողորմելին տուն տանինք. երէտց որսը մեկդի գրէք, մարդն անբանէն՝ բիւր անգամ աղէկ է:

«Պոչիւնն ու աղաղակը թնդաց, սեւաթոյր աչուքները բացաւ Չուիկ: Այն կինը, սիրելի Վարդ, Չուիկ քու մայրդ էր: Չուիկ իմանալով որ երանելաց երկիրը չէ, տեսնելով որ դեռ երկրիս վրայ է, նորէն իր ողբոց մէջ ինկաւ. ցաւ մը՝ երկասյրի սրոյ պէս իր սիրտը կը վերաւորէր, եւ իր դառն աշխարհնաց վերջ մ'ալ չէր շնորհեր:

«Մեծանձն իշխանը չկրցաւ արցունք չթափել, վերցուց ձեռքերը, երկու լուսաւորը գոցեց ու քիչ մը ետքը զՉուիկ միտթարելով, Մի վախնար, կ'ըսէր իրեն, մի գարհուրիր, գիշերն աս մթին անտառին մէջ չես մնար, տունն շուտ մը հանգստութիւն եւ առողջութիւն կը գտնես: Աս իշխանը՝ բուն հրեշտակ կամ ողի մը չէր, բայց իր խօսքը հրեշտակի ձայն եկաւ Չուիկին ականջը, անոր խոստումներն իր դառ-

նութիւնները մեղմացուցին: Ասոր համար Աստուծոյ բիւր գոհութիւն մատոյց, որ այնպէս բարերար կամ ուրախարար հրեշտակ մը խրկեց իրեն:

«Չուիկ այսպիսի խորհրդոց մէջ եղած ատեն՝ ազատ իշխանը ծառաներուն հրամայեց որ զինքն անգրուարի մը վըայ գրած՝ տուն տանին, վասն զի անձամբ կամ հետի երթալու զօրութիւն չունէր:

«Անտառէն դուրս ելլելու ատեն՝ գիշերն ու մութը կոխելով, միայն աստղազարդ երկինքն ու իշխանին ապարանքը լուսաւոր էին, առջինը՝ բիւր ջահերով շողազարդ ծովու մը նման, երկրորդը՝ շատ կանթեղներով զարդարուած աշտարակի մը պէս, հրոյ մէջ կը վառուէին: Իշխանին ծառաները պատրաստ կեցած, իշխանուհին ու իր որդիքն անոր դիմայն ելած, զինքը սիրով ընդունելու ատեն, իշխանն անմիջապէս նոյն օրուան դէպքն ու սքանչելիքը պատմեց: Այնուհետեւ բոլոր ընտանիքն ալ ցուցուց որ դժբախտներն ինչպէս պէտք է հոգալ ու անոնց վշտերուն վշտակից բլլալ:

«Չուիկ քանի մ'որ հիւանդ անկողինը մնաց, եւ գրեթէ խելքը կորսնցուցած՝ իր սիրելի Հմայեկին ու չորս որդւոց յիշատակաւը կը շարշարուէր: Իր անյայտ ու ամենուն անծանօթ ողբը շատ սրտեր կը վերաւորէր: Իշխանուհին կը ջանար որ ան յաւիտենական ողբոց պատճառն իմանայ. բայց Չուիկ լուռ եւ անմուռնչ կենալով՝ բան չէր յայտնէր, որպէս զի իր ցաւերն այն ազնուասիրտ բարերարներուն աղետից ալ առիթ չըլլան:

«Այսպէս Չուիկ դժնդակ հիւանդութիւն մ'անցրնէին եւ առողջանալէն ետեւ՝ շատ անգամ կ'ելլէր կանաչագեղ դաշտերն ու ձորերը կ'երթար եւ օրերով հեռու տեղեր նշմարել կը տենչար: Ո՛հ, կ'ըսէր ստեպ մտքէն, ո՞ր են արդեօք ան տեղերը՝ զորոնք զազանաւ սիրտ մարդիկ աւեր անապատ դարձուցած, զիս մէկ կողմը փախելու ստիպեցին, իմ հաւատարիմ ծառաներուս շատը հոն մեռցուցին, եւ մնացող սակաւթիւ-

ները ջիր ու ցան բրին. բայց ան քիչերուն մէջէն ալ՝ մէկը միայն զիս ազատելու փորձ փորձեց: Այն, անգութ Աստակ, վայրենի Աարազ, ինչպէս կրցար երեք որդիքս աչքիս առջեւ Պարսիկներուն ձեռքը մատնել ու Պարսկաստան գերի խրկել տալ. իսկ պղտիկ որդիս, սիրելի Աարգա՝ չեմ գիտեր, սակայն անշուշտ հրոյ ու բոցերուն ճարակ եղած պիտ'որ բլլայ: Անտարակոյս անոնց մէջ մոխիր դարձած, աւերակներու տակ հոգին փշած կամ նոյն դաժան գազաններուն կատաղութեան կերակուր եղած պիտ'որ բլլայ: Եղբայրս, սիրելի Շաւարշն՝ իր ահագին Աարազ թշնամոյն ձեռքն ինկած պիտ'որ բլլայ, եւ իր սիրոյն ու բարեաց փոխարէն՝ մահ ընդունած: Այսպէս կ'ըսէր մտքէն Չուիկ շատ անգամ եւ դառն կ'ողբար, առատ ու արագ գետեր երկու այտերէն վար վազցրնելով:

«Այսպէս Չուիկ իրեններուն վիճակն անգիտանալով եւ ո՞ր երթալիքը չգիտնալով, զիջաւ իր հիւրընկալներուն աղաչանացը եւ յանձն առաւ անոնց քով մնալ: Հոն իր ամէնէն հաճոյական զբօսանքն էր իշխանին ապարանից քովի դաշտերն ու անտառը պտրտիլ, հիւրընկալներուն իրեն տուած Անոյշ անուն աղախնոյն հետ մեկտեղ: Չուիկ կը համարէր որ խոսովութիւններէ հեռու կեանք մը վարել միայն մենութեան մէջ կրնայ: Այն առանձնական տեղերն Աստուծոյ աղօթք ու պաղատանք կը մատուցանէր, որպէս զի գայ օր մը, որուն մէջ դարձեալ կենդանութեան շունչ առնէ, իր որդիքն եւ զՀմայեակ տեսնէ: Աղէկ գիտեր թէ որչափ բարի եւ աստուածապաշտ խորհուրդներ կը հեղու մարդուն մտքին մէջ առանձնութիւնն ու հանդարտութիւնը, եւ օտարածին ու անհանձար միտութիւնները կը մերժէ: Չուիկայ ջանքն ու փոյթը Աստուծոյ սիրոյն մէջ հաստատուն եւ կատարեալ բլլալն էր: Սիրել զԱստուած, կ'ըսէր Անուշին, անսահման մեծութիւն, անեղբ բարիք է մարդուն, ո՛հ, երանի թէ ամէնքը զինքը սիրէին, ինչպէս ես կը սիրեմ. ան ատեն կ'ուրախանայի եւ ամէ-

նէն խիստ աղէտքն ու վիշտն ալ դուրս դար, սիրով
յանձն կ'առնէի, յօժարութեամբ կը գրկէի:

«Անոյ՛ խկզըան զՉուիկ խենթ կը կարծէր,
որովհետեւ ինք անկիրթ ու առանց Աստուծոյ ծանօ-
թութեան ան հասակը հասած էր: Ա՛խ, մատաղ
մանկութեան հասակ, դուն ծագիկ չտալով, պտուղ
ալ երբեք չես քաղեր:

«Կեղութիւն ու ցաւ էր ազնիւ սրտի մը. ա-
հագին ժայռ մը ան կուրծքը կը ճնշէր, դժբախտ
Չուիկը զարհուրած, սարսափած էր Անուշին այնպէս
գէշ կըթութիւնը տեսնելով: Բայց հեղութեամբ ու
անձանձրոյթ, ան օրհորդին առջեւ դեղ ու դարման,
ուսում եւ օրինակ կը դնէր. մանկութենէն ծծած
գեղեցիկ կըթութեան հիւթը՝ Անուշին վրայ կը սրբա-
կէր. սակայն Անոյ՛ սնուցարձութեան եւ փառաւո-
րութեան սէրը չէր թողուր: Ար ցաւեր որ Աստուած
զինքը հարուստ չէր ըրած, որպէս զի կարենայ ոսկոյ
ու արծաթոյ մէջ ընկղմիլ, եւ գոյնզգոյն ու գեղե-
ցիկ զարդերով պարծիլ: Ան ատեն, կ'ըսէր, կեանքս
կեանք կ'ըլլար, ան ժամանակ վայելումս սքանչելի
կ'ըլլար. բայց ափսոս, ըսածներս թռչող խօսքեր են
կամ երազ ու ցնորք: Անոյ՛ այսպէս խօսած ատեն՝
դառնապէս կու ըսր կ'ողբար իր խեղճութեան վրայ,
մանաւանդ տեսնելով որ իր երեւակայական շէնքերը
կ'ոչնչանան եւ Չուիկ ալ իր երեսը դժկամակու-
թեամբ ու ցաւով կը նայի:

«Քոյր որ այս խօսքերուն մտադիր էր Չուիկ եւ
իր աչուքներէն վտակներ կը բխեցընէր. չէ թէ իր
կորսնցուցած առաջին փառաւորութեան համար, չէ,
չէ. հապա ան դժբախտ ու անկիրթ ողբմելի աղջկան
ունայնասիրութեան համար, զորն որ շատ եւ շատ
անգամ ջանացած էր սնուցարձիկ մարութիւններէ
ազատել, բայց պարսպ տեղ: Գո՛հ եղիւր, Անոյ՛, գո՛հ
եղիւր, կ'ըսէր Չուիկ, քու վիճակիդ վրայ, վասն զի
աղբունեաց ու մեծամեծաց մէջ երբեմն բիւրաւոր
դժբախտութիւններ ու անթիւ անհամար անձկու-

թիւններ կը ծագին, անոնց մէջ անանկ սրտմաշուկ եւ
սառսպանաց ժամեր կ'իջևեն, որոնք դուն եւ ոչ
մտքեդ կրնաս անցընել: Աստուծոյ զործքերը նորա-
սքանչ են, արամադրութիւններն անձառ ու անպա-
տու՛մ. ուստի Անոր կամացը յանձնէ զքեզ. թող Ինք
իր ամենազէտ կամքն ընէ. թող վարդը՝ փշերով զար-
դարուած աճի, ոսկին՝ աղքատութեան, պատիւն ու
փառքը՝ անարդանաց մէջ մտնեն պահուրտին. դուն
ինչ զիտես: Թէ որ աստեղաց կամ աւազի չափ շատ
լեզուներ կամ խօսքեր մէկտեղ դային, Աստուծոյ
կամքն ընող մարդուն փառաւորութիւնը մեկնել կա-
րող չէին: Այնպիսի առաքինութիւն մը բոլոր մէկալ
առաքինութեանց խուճին ալ իրեն ընկեր կ'ունենայ:

«Ք սաւ եւ զԱնոյ՛ առաւ, զարձեալ դաշտերու
եւ մարգերու վրայ զնաց. բնութիւնը նկատելով՝ իր
վշտերը փարատել կ'ուղէր, եւ ան սքանչելի բնութեան
Արարիչը գովել ու մեծարել: Գաշտն ու ձորը եր-
կուքին սրտին ալ մխիթարութիւն տալով՝ առդին
անդին կ'երթային կու դային. բայց Անոյ՛ մէկէնիմէկ
գողգոջաց, հեռուէն շողիւն մը իր աչքը զարնելով՝
նոյն տեղն անշարժ կեցաւ: Քիչ մը ետքը վազեց,
ձեպով լոյս փայլատակած տեղը գնաց եւ տեսաւ որ
ազատ իշխան մը գետինը պառկեր հագիւ շունչ կ'առ-
նէ կու տայ: Չուիկ, գոչեց Անոյ՛, եկուր դուն ալ
զարմացիր ու տես, աս դժբախտին դուն ալ օգնէ:
Չուիկ սրացաւ, աճապարեց զրեթէ մեռնելու մօտ
եղող մարդուն սաղաւարտը մէկդի առաւ, եւ առանց
բանի մը միտ դնելու, վազեց ամանով մը ջուր բերաւ
ու գունատ դէմքը սրսկեց:

«Ո՛հ, շնորհակալ եմ, ըսաւ մարդն աչքը բա-
նայով. . . բայց մէկէն սպեցաւ մնաց. իր երկու առ-
տըղները Չուիկին վրայ անկեց. . . Չուիկ. . . ա՛հ,
ազատիչս, ա՛հ, Չուիկ, դուն հո՞ս ես եղեր. աս վիճա-
կի՛ս, աս կերպարանսնց մէջ. . . Ո՛հ, երջանիկ եմ. . .
Չուիկ, դուն զիս ազատեցիր, ես ալ զքեզ գտայ,
զքեզ փնտռելու եւ ազատելու ելած էի:

«Չուիկ ուրախութենէն ու տրամութենէն այնպէս այլալլած էր՝ որ ընդ ամանը ձեռքէն վար ինկաւ, կտոր կտոր եղաւ: Բայց շուտ մը հանդարտեցաւ, եւ աչքը վեր վերցրնելով՝ Գուգարաց Աշուշայ իշխանը տեսաւ: Ո՛հ, Աստուած, Աստուած, գոչեց Չուիկ, Աշուշային հոս ինչպէս առաջնորդեցիր. արդեօք դժբախտութեան դէպքով՝ չէ նե բարբախտութեամբ հոս ինկաւ: Ո՛հ, սքանչելի, զարմանալի տեսութիւն: Պատմէ, Երկինք, բռէ ինձի, Աշուշան ինչպէս հոս ձգեցիր. իրեն տեղ Գուն խօսէ:

«Այն հարցմանց պատասխանն աս էր:

«Աշուշան լսելուն պէս՝ որ Երախանի Մամիկոնեանց բերդը Պարսիկները կործանեցին, դժբախտներուն շուտ մ'օգնել ուզեց, բայց այնչափ հեռուէն, ամէն բան լմնալէն ետեւ՝ ինչ կրնար ընել: Գեռ գիւտ ու հնարք չգտած՝ յանկարծ Հմայեկին ծառաներէն մէկը սաստիկ այլալլած իր ապարանքը հասաւ, եւ հազիւ թէ երկայն ցողոցայէն ետեւ կրցաւ բերանը բանալ ու խօսք մ'ըսել: Գողգոթուն ձայնով, Յանցանքն իմն է խօսքով մը այսպէս սկսաւ. Տէր, ըսաւ, ձեր տիկնոջ Առամանուշին Չուիկ քոյրը կորսուեցաւ. դուցէ, դուցէ թշնամեաց ձեռքն իյնալով՝ ան գազաններէն կտոր կտոր եղաւ: Երախանի բերդէն զինքը փախցրնելով՝ շատ ճամբայ ըրինք, վազելով ու խոյանալով Գուգարաց երկիրն ոտք կոխեցինք, եւ ապահովութեամբ ձեզի կու գանք բսելու ատեն՝ մէկէն զինուց շաշուներ, երիվարաց ոտքերուն գափերը զմեզ սարսափեցուց: Թշնամին ետեւնէս է, պոռայցինք, եւ վայրկեանի մը մէջ ընդարձակ անտառ մը գտնուեցանք. բայց Չուիկ աներեւոյթ եղած էր:

«Նանդարտութիւնը դարձեալ տիրեց, թշնամուց կամ մարդու ոտնաձայն չկար. ես մեղմով եւ ահօրօտով տիկինը փնտռելու ելայ. բիւր տեղեր, հազար անկիւններ մտայ ելայ, բոլոր անտառը կրնամ սպառել, բռի մաքէս. բայց այն անեղը ծովն ո՛վ կրնար լմնցրնել: Թէպէտ եւ ես չփնտռած տեղ թող

չտուի, սակայն Չուիկ չգտայ: Հիմայ հոս եկած՝ յանցանքս կը խոտովանիմ:

«Աշուշան ասոնք լսելուն պէս՝ մէկտեղ ճամբայ ելաւ. քիչ ժամանակէն ետեւ՝ երկուքն ալ անտառ մը հասան. ծառան՝ քանի մ'որ յառաջ իր ապաստանած անտառը կը կարծէր, անոր հետ շատ նմանութիւն կը գտնէր, բայց նոյնը չէր: Խորունկ թափանցելէն ետեւ՝ ամէն շաւիղն ու հեռքն անոնց աչքէն աներեւոյթ եղան: Ան ատեն ձիւրնէն վար իջած եւ անոնց սանձէն բռնած՝ խիտ անտառին մէջէն կ'երթային, Չուիկն ու մարդու հետք մը փնտռելով, սակայն ի զուր: Երիվարները ծառի մը կապելով՝ Աշուշան երկու քայլ յառաջ գնաց եւ յանկարծ երկիրն իր ոտքին տակէն փախչելով, խորունկ ձոր մ'իսկաւ: Հին Չուիկ զինքը գտաւ:

«Այսպէս Չուիկ զԱշուշան հողացած ատեն՝ Անոյշ գացած բղեշխին երիվարն ու ծառան վար բերած էր, անկից ետեւ շուտ մը իր տիրոջն ապարանքը վազելով՝ պատահած բաներն ու Չուիկայ ո՛վ ըլլալն իմացուց: Ազատը՝ Գուգարաց իշխանին դէպքն ու Չուիկայ անունը լսելուն պէս՝ ձիով հոն վազեց եւ զանոնք տուն բերելով, իրենց աստիճանին համաձայն պատուով ու մեծարանօք զերենք քիչ մը ատեն քովը պահեց: Արաց բղեշխը բաւական հանդչելէն ետեւ՝ Չուիկայ հետ ճամբայ ելաւ շորհակալ ըլլալով իր բարերար հիւրընկալին թէ իրեն եւ թէ Չուիկայ ցուցցած սիրոյն համար. իսկ ազատն ինք զինքն երանելի կը սեպէր որ այսպիսի ազնուական հիւրերու ասպնջախանութիւն ըրաւ:

«Չուիկայ ուրախութիւնը Արաց բղեշխին քով մեծ էր. շատ տարիներէն ետքն ալ՝ երբ որ իր երեք որդեքը Աշուշային միջնորդութեամբը Պարսկաստանէն կամ ան խիտ գերութենէն ազատեցան իր քովն եկան, աւելի մեծ եղաւ ցնձմը. բայց հիմայ Աւորգս, կ'ըսէր, Աւորգս ուր է արդեօք:

«Աս է, սիրելի Արդ, մօրդ պատմութիւնը»:



ՆԵՐՍԷՆ ԵՐՈՒԱՆՊՈՒՆՆՈՅՆ ԱՊԱՐԱՆԻՔ:



ՊԱՅԾԱՌ ու գեղեցիկ օր մը, Ներսէ՛հ Երուանդունւոյն՝ Մկնառինջ եղած ապարանից քով, երկու զուարթ մարդիկ եկած կեցած էին. մէկը՝ ծաղկեալ դարնան, մէկալը՝ թարշամած աշնան ցոյցն ունէր, սակայն երկուքն ալ բնութեան սքանչելիք էին: Մէկը՝ նորասրբանչ, բարձր ու յաղթ կերպարանք մը, հասարակ եւ աղքատիմ՝ բայց մաքուր ու վայելուչ զգեստ ունէր. զարդարուն ու փառաւոր եւ ազատորդուոց նման հանդերձով մը՝ ծերունւոյն քովը կը կենար մէկալը: Անցնող դացողներն առոյգ ու վառվռուն երիտասարդին կը նայէին, որն որ իր շքեղ զարդուքը, չքնադատես կերպարանօքն ու սիրուն զանգրահեր վարսիւքն ամենքը կ'ապշեցընէր, միանգամայն սեւաթոյր ականողիքն առանց պերճութեան՝ չորս կողմը դարձնելով, քաղցր ու հեզիկ հայեցուածով մը ամենուն սիրան իրեն կը ձգէր:

Վարդ առաջին անգամ Երուանդունւոյն առջեւ պիտ'որ ելլէր, ինչպէս որ Գիսակ նոյն իշխանին հետ խօսք ըրած եւ անոր ապարանքէն իր քեռորդւոյն հագուստը բերել տուած էր:

Ներսէ՛հին ապարանքը՝ որն որ մեծագործութեան հրաշակերտ մըն էր, զՎարդ զարմացուց. ան հսկայածեւ շէնքը դրսէն ալ կը շողար: Գիսակ Վարդայ հետ մեկտեղ ապարանքը մտաւ: Ամիջապէս սպասաւորներէն մէկն անոնց դիմացն ելլելով եւ իմանալով որ Երուանդունւոյն հետ խօսիլ կ'ուզէն, առաւ զանոնք ու այլեւայլ գեղեցիկ ու մարմարեայ սրահներէն անցրնելով, իշխանին խուցը տարաւ: Վարդ ապարանից զարդն ու շքեղութիւնը զննելու ատեն չունեցաւ. երբն երբն նկարները, հոյակապ սիւներն ու արձանները, որոնք մարդ տեսած ատեն կը զարմանայ, դիտել չկրցաւ. այն անհամեմատ փառաւորութեան՝ մեծապայծառ շողին ու լոյս, կայծեր եւ աստղներ ցոլանալով՝ առջի անգամ տեսնողին աչուրները կը շացընէին:

Թեթեւազէն եւ սպառազէն աւագաց ու սպասաւորաց խմբեր Ներսէ՛հին ապարանից մէջ շատ կային. բանբերներ ու Պարսից թագաւորէն եկող դացող պատգամաւորներ պակաս չէին, որոնց ամենուն աչքը միշտ Երուանդունւոյն վրայ էր. բայց հիմակ հասարակաց մտազրութիւնը նոր եկած պատանեկին վրայ ինկաւ, որն որ իր անձնեայ մօրեղբօրը քով կեցած՝ հեզիկ կը նայէր: Ասոնց առաջնորդը կանխեց Ներսէ՛հին զըոյց տալու գնաց:

Մէկէն ի մէկ դուռ մը բացուելով՝ քանի մը երեւելի մարդիկ ելան. Գիսակ հարցընելով իմացաւ որ Պարսից թագաւորէն եկած իշխաններ են: Ասոնք երթալուն պէս՝ դարձեալ նոյն դուռը բացուեցաւ եւ կարծահասակ ու վշտատես մարդ մ'ելլելով, ձիւնահեր սակայն ծեր չէ, քիչ մը ծռած գլխով ու յամբ քայլերով դէպ իրենց սկսաւ գալ: Վարդ այս պատկերին վրայ ապշած եւ քիչ մ'ալ վախցած, կը կարծէր որ տեսիլ մը կը տեսնէ, ուստի ան զարմանալի մարդուն սլ բլլալը Գիսակին հարցընել կ'ուզէր. բայց գեւբեման չբացած՝ անիկայ մօտեցաւ եւ քաղցրութեամբ ու արտասուագին աչուրներով Գիսակին այսպէս ըսաւ:

«Տէր, Երուանդունի իշխանը նախ ձեզի հետ մինակ խօսիլ կը փափաքի. աս միջոցին մէջ ինծի յանձնեց որ ձեր որդւոյն հետ խօսակցիմ: Աւտի դուք անդանդաղ իրեն գացէք»): Գիտակ իրեն հետ խօսողին զէմքը տեսնելով՝ սառեցաւ մնաց. իր զարմացումն եւ ուրախութիւնը սաստիկ էին. չկրնալով ինք զինքը բռնել՝ մէկէն նոյն մարդը գրկեց ու ճակտին վրայ համբոյր մը տալէն եւ լուսթեաննշան մ'ընելէն ետեւ՝ բաժնուեցաւ. «Ներսէսին գնաց:

Անձանօթը մեծ ուրախութեամբ Աարդ պատանին մէկ անկիւն մը քաշելով, հաճութեամբ մը աւնոր կը նայէր, կարծես թէ իր երեւին վրայ ունեցած բիւր խորշմութիւնները ջնջուելով՝ այլակերպեցաւ. սիրով եւ արգահատութեամբ Աարդայ կերպարանքը կը դիտէր: Այսպէս զինքն երկայն ատեն դիտելէն ետեւ մեղմ ձայնով մ'իրեն բտաւ. «Միրուն պատանի, Երուանդունի իշխանին ապարանքը գալը զիս շատ ուրախացուց եւ երջանիկ ալ կը համարիմ զիս՝ եթէ խորհրդով ու գործքով քեզի օգնական ձեռնառու կարենամ ըլլալ: Ար յուսամ որ շատ չ'անցնիր սերտ բարեկամ կ'ըլլանք, մանաւանդ որ զքեզ, ինչպէս Ներսէս պատմեց ինծի, շատ բնասնի ու հեզ ստորագրեցին իրեն: Ստուգիւ ամէնքն ալ պիտի ցնծան, թէ որ Երուանդունւոյն վստահութիւնը գլուխ ելլէ եւ քեզմով մեր հայրենեաց պայծառ սիւն մը կանդնուի. աս բանիս կատարումը յայտնի կը տեսնուի, վասն զի քու վառվառն աչքդ ալ անոր դուշակ է»):

Աարդ իր նոր բարեկամին առջին առանց պատասխան տալու կեցած, մանաւանդ թէ անոր վերջին գովեստի խօսքերէն շփոթած՝ գլուխը ծռելով եւ շնորհակց կերպով մը շնորհակալ եղաւ: Բարեկամը պատանոյն քաղաքավարական վարմանց ու շքեղ կերպարանաց վրայ զմայլելով, խօսքը յառաջ տարաւ ու բտաւ. «Ներխոսասարգ, քու ճակտիդ վրայ բազմազէմ ապագայ մը կ'երեւայ. բայց մի զարհուրիւր. վիշտ եւ ուրախութիւն իրարու արագ կը յաճորդեն: Ար

տեսնեմ որ իմ ում ըլլալս հարցընել կ'ուզես. տակայն չէ, հարկ չկայ, ժամանակին կ'իմանաս: Հիմակ աւելի կարեւոր նիւթեր ունինք խօսելու: Գիտնաս որ ապարանից ներքին կարգաւորութիւնն ու հոս գրանուող ազատաց եւ աւագորերոյն կարգն եւ հոգին հիմայ շատ գէշ է. որովհետեւ շատ ժամանակ էր որ իմաստուն ու բարեբարոյ Երուանդունին հոս չէր:

«Թէ որ ուրեմն, սիրուն պատանի, իմ խորհուրդներս քեզի հաճոյ են, բաշխքներս մտիկ բրէ: Մեծ դարպասներու մէջ շատ կերպ մարդիկ կան: Գուն մէկէն ի մէկ ամենուն հետ մտերիմ բնասումութեամբ վարուիլ մ'ուզեր, ապա թէ ոչ՝ շատ անգամ կը մատնուիս եւ չկարծած տեղդ կը գտնես ինք զինքդ: Ստոյգ է կան անոնց մէջն ալ լաւ ու բարի քաջեր, բայց աղէկ բնարելու է: Ներսէս ճիշդ կարգ կանոն կը պահանջէ, յանցաւորները սաստիկ կը պատժէ. բայց ինչպէս բտի, անէն երթալուն պէս՝ անկարգութիւնը կը սկսի: Աւտի իմ խորհուրդս աս է, սիրելի, որ դուն ամենուն հետ բարեկամ ըլլաս, սակայն մեկալ կողմանէ ալ կարելի եղածին շափ զգուշութիւնը սիրես ու քաշուիլը, մտածելը, ինք զինքդ բռնելը ձեռքէ չթողուս եւ կարծեմ թէ ասոր դժուարութիւն չես կրեր: Ապարանից ընթացքն ու կեանքը փոթորկի մը պէս փոփոխական ու անհաստատ է, մերթ փառաւոր ու պայծառ է, այնպէս որ մարդուն սիրտն ուրախութեամբ կը լեցընէ, եւ մերթ նուազ հով մ'ալ ամենայն ինչ կը խռովէ եւ կամայ կամայ դունդագունդ մթին ու սեւ ամպեր ժողովելով՝ զուարթութեան վրայ քող կը ձգէ»:

Աարդայ լուսաւոր դէմքը նսեմացաւ ապագային այսպիսի տխուր նկարէն. վարդագոյն այսերը սոժգունիլ սկսան: «Միրելի, բտաւ անձանօթը, հիմակունէն երեսդ չթարշամի. դուն արի ու քաջ եւ նշանաւոր ցեղէ կ'երեւաս, կերպարանքդ կը ցուցընէ որ առաքինութիւնը կ'իշխէ վրայդ, անոր համար աս դասն կեանքը ստորագրեցի քեզի, բայց ուզողին

դառն ու դժնդակ չէ, հապա շատ անոյշ ու երանալից: Վարդ . . . անունդ Վարդ չէ . . . սիրելի, Ներսէս հինձի ըսաւ որ Գիսակ քու սրտիդ մէջ հաստատուն անվանդ սկզբունք դրած է. եթէ աննք անեղձ մնալու ըլլան, անննց վրայ ինչ չէնք որ կը տենչաս նէ՛ դիր, մի վախնար, ամուր կը կենայ եւ բոլոր մարդկութեան ալ ուրախութեան պատճառ կ'ըլլայ,:

Պատանին իր խորհրդատու բարեկամին այսչափ խրատներուն համար չտրհակալ ըլլալու ատեն՝ Ներսէս իշխանէն զոյց եկաւ որ Վարդ իրեն երթայ: Պատանեկին սիրտը սաստիկ կը դարնէր, երբ որ դռան քով հասած պիտի ներկայանար: Վարդաւորը մեղմով դուռը բացաւ, Վարդ ալ հանդարտութեամբ ու խոնարհ կերպարանքով ներս մտաւ:

Մեծ ու շքեղ սրահ մը եւ անոր մէջ չքնաղ ու մեծագին դահ մը տեսնուեցան: Փառաւոր աթոռին վրայ վայելագեղ ու խայտալին Երուանդունին նստած էր. ծանր ու զուարթ դէմքով եւ կրակ ու բոց աչուրներով, ծերունայ հասակ չէր ցուցնէր. փառաւոր ու համապայծառ զգեստ մը վրան առած, զլուխը սակեղէն խոյր մը դրած, մարդարտով ու երպին երպին քարերով շողշողուն կամար մը մէջքը կապած, դինդ ախանջին ու սամյր ուսին վրայ, հանդարտութեամբ ու անշարժ նստած, աչուրներն եկող երիտասարդին վրայ անկած էր:

Գիսակ Երուանդունուոյն քով նստած էր. Վարդ ներս մտածին պէս՝ սերն եւ անկից ծնած ուրախութիւնը զինքը շարժեցին: Բայց անոր վրայ նոյն զգածումներն ունեցողը՝ մինակ ինք չէր. Երուանդունին ալ անմիջապէս խիստ շարժեցաւ պատանեկին տեսութենէն. անանկ կը կարծէր որ սքանչելի դիւցան մըն է աւջեն ելլողը:

Վարդ Ներսէսին յարգական ողջոյն մը տալով՝ լուռ կեցաւ, սպասելով որ անիկայ նախ իր հետը խօսի. իսկ Երուանդունին զինքը լուռութեամբ աղէկ մը

դիտելէն ետքը՝ Գիսակին ախանջը քանի մը խօսք զըուցեց ու անմիջապէս ելաւ Վարդայ դիմացը գնաց եւ քաղցրութեամբ ու սիրով՝ «Գարով եկար, սիրելի որդեակի», բտելով, զինքը զրկեց ու խօսքն այսպէս շարունակեց: «Գուն ինձի յանձնուած ես, սիրելի Վարդ, եւ յուսամ որ քեզի տալու հրահանգով՝ քաջ ու արի մարտիկ մ'ըլլալով, տոհմիդ անունը կը պահես, մեր դժբախտ հայրենեաց պաշտպանն ու դիւցազը կ'ըլլաս, մանաւանդ եթէ ինձի ալ հպատակ ըլլաս, ինչպէս քու սիրելի Գիսակիդ կ'ըլլայիր: Անգեմ որ վաղը անմիջապէս ուսմունքդ սկսիս ու ազատ եղած ատեններդ միշտ իմ քովս գտնուիս, հոս կամ բանակ: Նոյնպէս, սիրելի Վարդ, ինձի աղէկ կ'երեւայ որ դեռ ո՞վ ըլլալդ չշայտնես եւ այսուհետեւ Վարդ Քաջբերունի անունուիս, առանց ամենեւին տոհմիդ ու վիճակիդ վրայ խօսք բնելու»:

Ըսաւ ու սպասաւորի մը հրամայեց որ երթայ զԱրտէն իրեն կանչէ: Թուաւ ծառան եւ նոյն վայրկենին մէջ Արտէն եկաւ, ան մարդը՝ որն որ քիչ մը յառաջ Վարդայ այլեւայլ խրատներ տուած ու իրեն մեծ սէր ցուցուցած էր: «Արտէն, ըսաւ Երուանդունին, աւասիկ Վարդ Քաջբերունին քովս եկաւ, ես ալ որոշեցի որ հոս բնակի. ցուցուր իր սենեակն ու նայի որ իրեն ամէն հարկաւոր եղած ուսմունքն աղէկ արուի, լաւ հոգացուի. կը բաղձամ որ ամէն բանի մէջ կատարեալ ըլլայ, թէպէտ շատ բան արդէն Գիսակ իրեն սորվեցուցած է: Վարդայ վրայ ուրիշ աչքով նայէ, հոգարարձութիւնդ միայն ինքն ըլլայ: Արտէն, զՎարդ ինձի անուշահոտ վարդ տաս»:

Արտէն խոստացաւ որ հրամանները ճշդիւ կատարէ, եւ Վարդայ ու Գիսակայ հետ իշխանէն բաժնուեցաւ գնաց: Երթալու ատեն՝ Արտէն մտադրութեամբ կը նայէր իրեն յանձնուած երիտասարդին երեսը, եւ հին յիշատակ մը իր սրտին մէջ դառնութիւն հեղով՝ մէկ երկու դաղտնի արցունք թափեց: Նոյն ատեն ծառայի մը հասկցնելով որ աճապարէ,

մեծ ու փառաւոր սրահին քովն եղած զարդարուն սենեակներէն երկուքը բանայ ու պարաստէ, ինք զՎարդ եւ զԳիսակ ապարանին շորս կողմը կը պաշտօնցնէր. ուսկից որ կ'անցնէին սպասուորք եւ զօրականը հիւրերը մեծարանօք կ'ողջունէին: Ամրոցին կամ ապարանին ամենէն շքեղ տեղը դալով՝ Արտէն դարձաւ այսպէս բաւ. «Քաջբերունի, կարծեմ՝ քեզի ու քու սիրելի ընկերիդ հաճոյ կ'ըլլայ, թէ որ աս տան ուրիշ հրաշակերտ տեղերն ալ ձեզի ցուցնեմ, մինչեւ որ ձեր խցերը պարաստուին: Թեպէտ այսօր տան մէկ մասը միայն կրնամ ցուցնել, որովհետեւ արդէն վերջնալոյսն իր բոլը զօրութիւնը կը կորսնցրէ. բայց հոգ չէ, այսուհետեւ դուն, սիրելի Աարդ, միշտ հոս ես, իսկ Գիսակ անշուշտ ստեպ կու գայ»: Ըսելէն ետեւ դարձաւ հսկայածեւ դաւիթը մտաւ, որուն լուսամուտ երդերէն թափանցած հրեղէն գնաին երեկոյեան լոյսը՝ կարծես թէ զանանք գլխէն մինչեւ ոտք ոսկեթել հանդերձով զարդարած էր:

Աարդ առաջին անգամ դեռ նոր ապարանքը մտած ատեն, զանազան սրահից փառաւորութիւնը տեսնելով՝ զարմացած ապշած էր, սակայն հիմակ աս շքեղ տեսարանին առջեւ աներեւոյթ եղաւ ան ամէն պայծառութիւնը՝ որ նոյն ժամանակ աչքին տակ ինկած էր: Բնութիւնն ու արուեստը զինքը շատ զարմացուցին, եւ այլեւայլ զինուց ու զրահից յաճախութիւնը, թրերուն ու վահաններուն պայծառութիւնը՝ գրեթէ աչքն ալ շարժուց: Ընկից ետեւ Արտէն զերենք առաւ դէպ ի Աարդայ խուրք տարաւ եւ Գիսակայ ալ աղաչեց որ նոյն գիշեր հոն բնակի. արդէն իրեն համար ալ Աարդայ սենեկին քով խուց մը պարաստուած էր: Գիսակ Արտէնին աղաչանքը շնորհակալութեամբ ու սիրով ընդունեցաւ, որովհետեւ դեռ Աարդայ յանձնելու եւ սրվեցրնելու շատ բան ունէր:

Աարդ ու Գիսակ իրենց առաջնորդին ետեւէն երթալով՝ վերջապէս գեղեցիկ տեղ մը հասան, ուր

Արտէն կեցաւ ու Աարդայ աս խօսքերն բաւ. «Երիտասարդ, աս է Երուանդունի իշխանին սենեակը, իսկ մէկալը քու խուցդ է: Հոս երկուքնիդ ալ հանգչեցէք»:

Արդ որ երկու հիւրերն ան սենեակը մտան, շէին գիտեր թէ ինչ խորհին կամ խօսին, վասն զի սենեկին զարդն ու բիւր փալփլոյ ծրագի աստղները՝ զգիշերն օր դարձուցեր էին. իրենց առաջին խօսքն ու շնորհակալութիւնն Աստուծոյ եղաւ, երկրորդը՝ մեծանձն Երուանդունոյն, որ զերենք այնչափ սիրով կ'ընդունէր ու կը հոգար:

Այսպէս քիչ մը ատեն լռիկ մնջիկ կենայէն ետեւ, Գիսակ ցանկալի ու սիրելի Աարդայ կը նայեր, իբրեւ թէ ճակատն բան մը գուշակել կ'ուզէր: Աերջապէս ծերունին լուսութիւնը կտրելով, «Ջրուցէ ինձի, Աարդ, բաւ, ինչ ազդեցութիւն բաւ սրտիդ այսօր տեսած փառաւորութիւնդ: Կարծեմ ան շքեղութիւնն ու պայծառութիւնը, քեզի՛ մենութեան մէջ վարժողիդ, զարմացում ու նեղութիւն միանգամայն պատճառած պիտ'օր ըլլան: Սիրելի, կը բաղձամ ու կը յուսամ որ աս փառաւոր երեւցած կենաց մէջ ալ այնպէս բարի ու աստուածապաշտ կը մնաս, ինչպէս մինչեւ հիմակ առանձնութեան մէջ էիր: Արդեակ, քու մօրեղբորդ վարդապետութիւններն ու իրասններն երբեք մի մտնար: Սրտիդ ու մտքիդ մէջ կրթութեան սկզբունքն ու հիմքը անկուած են, անտարակոյս կրնաս գեղեցիկագոյն ու բարձրագոյն հրահանգներ ալ ընդունիլ: Սիրելի Աարդ, աս հաստատուն ակնկալութիւնն ու յոյսը հետս մէկտեղ իմ մենութիւնս կը տանիմ ու ապահով եմ որ դուն միշտ առաքինութեան շաղկապ վրայ կը շջլնս ու պիտի շջլնս, եւ երբեք ալ քաջ Աարդանանց ուղի հաւատքը պիտի չթողուս: Մտածէ, սիրելի, միշտ քու մայրդ՝ որ որդւոյն կը տենչայ. միտքդ բեր եղբարդդ՝ որոնք միշտ քեզի կը սպասեն. յիշէ քու պանչելի ու երջանիկ հայրդ եւ անոնց ամենուն

զքեզ տեսնելու իղձը մտածէ, եւ քաջացիր, առաքինի եղիր:

«Աս առտու իրիկուն պէտք է որ աղօթքը բնեմ, պաղատանքներս Հորին առջեւ դնեմ, որպէս զի երկինք զքեզ լուսաւորէ ու նոր ալէկոծ շաւղացող մէջ անփորձ պահէ. դժ ու զօրութիւն տայ աս աշխարհքիս ահագին ախոյեանին դէմ: Երբեմն երբեմն մենու թեւնէս քեզի կու գամ, որպէս զի անձամբ տեսնեմ ու համոզուիմ որ արդեօք նոյն Աւարդն ես եւ զիս ալ կը սիրես թէ չէ: Աւարդ, իմ հողարածութեանս եւ զքեզ հրահանգելու աշխատութեանս փոխարէն՝ հպատակելը բլայ, եւ ան բաւական է իմ ծանրացած գլուխս թեթեւցընելու, խորհուրդներս հանգիստ բնելու եւ սրտիս մեծ ակնկալութիւն ու մխիթարութիւն տալու, որ ժամանակ մը ստուգիւ Աւարդս քաջ ու առաքինի պիտի տեսնեմ, լուսաւոր ջահ մը պիտի նշմարեմ:


«Քեզմէ բաժնուիլը միայն, սիրելի Աւարդ, դժուարին, խիստ դժուարին կու դայ ինձի: Առանձին ու լռիկ հիւզիս մէջ նստած ատենս՝ կենացս ձմեռն իր ձիւները գլուխս պիտի սրսկէ. ան ատեն իմ յառաջուան վշտալի ու աղետալ յիշատակներս դարձեալ միտքս պիտի գան, սգոյ ու տրամութեան զգեստ մը զիս պիտի ծածկէ, եւ քաղցր կամ մխիթարիչ դէմք մը պիտի շտեմնեմ, որուն զուարթութիւնը միայն կարող էր ցաւերս մեղմացընել, մանաւանդ թէ՛ դրեթէ բոլորովին մոռցընել տայ: Սակայն կ'ուզեմ, կ'ուզեմ ան դաժան ու դժնդակ բախտը կրել, գիտնալով որ դուն, անձկալի Աւարդ, երջանիկ պիտ'որ բլլաս եւ սրտիդ մէջ սերմանուած բոյսերը կանաչազարդ պիտի բուսնին ու աճին»:

Գիտակ աս խօսքերը խօսելէն ետեւ՝ դժած ու գորովագութ հօր պէս զԱւարդ զրկեց. պատանին ալ արտասուազին աշուրներով ցանկալի մօրեղբօրը խոտուժ տուաւ որ իրեն ու Ներսէսին հըլու որդի կ'ըլլայ: Ծերունին՝ մինչեւ նոյն ատեն Աւարդայ տուած

խրատները բաւական չսեպելով, խօսքը շարունակեց եւ ուրիշ քանի մը ազդու խօսքեր ալ անոր սրտին խորքը անկել ուղեց: Իսկ Աւարդ անչափ սիրով ու շնորհակալութեան նշաններով Գիտակին լուսածնելուն միտ կը դնէր: «Աերջպպէս, ըսաւ Գիտակ, աս ալ գիտնաս, սիրելի Աւարդ, որ քեզի հարկաւոր եղած ամէն բանը բերած կամ բերել տուած էմ. միտ դիր աս գեղեցիկ պողովատիկ սրոյն եւ կարգաւ վրան եղած գրութիւնն ալ. Գարայ որեւ ծառաներ յետոյ սոր. խորը միայն Ասորո՞ժոյ ու արքայութեան համար է:

«Գեղեցիկ, սիրուն խօսք, գոչեց Աւարդ. նոյն զրոյցը միշտ միտքս կ'ուզեմ պահել, սուր շողացուցած ատեն նոյնն առջեւս պիտի նկարեմ»:

Աւարդ ու Գիտակ այսպիսի խօսակցութիւններ բնելէն եւ երեկոյեան կերակուրն ուտելէն ետեւ՝ նորէն խօսելու սկսան, մինչեւ որ կէս գիշերն անցաւ եւ զանոնք անոյշ քնոյ հրաւիրեց: Գիտակ նոյն հրաւերը շուտ ընդունեցաւ, իսկ Աւարդ՝ բիւր խորհուրդներ մտքին մէջ յեղեղում ուշ, շատ ուշ լսեց քնոյն ստիպիչ ձայնը:



Սաստիկ ցաւ ու գոյժ մը:

ԱՐՇԱԼՈՅՍԸ՝ մահկանացուայ լոյս շնորհելու համար իր անկողնէն դեռ նոր ելած ատեն, Վարդարթնոյցած՝ ելաւ Գիտակին խուցը դնաց ու աչքը մէկէն իր սիրելի հօրն անկողնէն դարձուց: Իր անձին ու Գիտակին մեծ ուրախութիւն մը պատճառել կ'ուզէր, անոր ձեռքը համբուրելով՝ զինքն արթնցունել կը ցանկար: Բայց ինչ ահուգոյ, սրչափ սաստիկ զարհուրանք ունեցաւ, երբ որ զԳիտակ անկողնէն չգտաւ, երբ որ տեսաւ թէ մօրեղբայրն ամենեւին տեղ մը չկայ: Տրտում տխուր ու անմխիթար սենեակը դառնալով՝ մարմարեայ սեղանոյ մը վրայ մագաղաթ մը տեսաւ, հետաքրքրութեամբ բացաւ ու աս խօսքերը կարդաց:

«Որդեակ, քեզի ու ինծի սաստիկ ցաւ չպատճառելու եւ հրաժարական ողջունով իմ ու քու սիրտդ չվերաւորելու համար, դուն դեռ քաղցր քնոյ մէջ եղած ատեն՝ աս երկու տողն այսպէս կը գրեմ: Քեզմէ բաժնուիլը շատ դժուարին բան էր ինծի. սակայն աս հաստատուն յուսով կ'երթամ ու քեզմէ կը հեռանամ, գիտնալով որ քեզի տուած ուսմանը»

հաւատարմութեամբ կը պահէս: Նոր ընթացքիդ մէջ քաջութեամբ յառաջ գնա, որպէս զի երբ որ ան բղձալի վայրկեանը գալու բլլայ, ես անձամբ գլքեզ քու մօրդ ու արի Վահանին ծոցը դարձընեմ: Ապրէ, սիրելի Վարդ, հազար ապրէ, եւ գլքեզ անշափ սիրող մօրեղբայրդ՝ դուն ալ սիրէ»:

Վարդ մագաղաթը ջերմաջերմ արցունքներով թրջեց, եւ երկու երեք անգամ կարգալէն ետեւ՝ դարձեալ կարգալ կ'ուզէր: Աս աշխարհքիս մէջ ինք զինքն առանձին ու լքեալ թողեալ կը կարճէր ու մխիթարութիւն ալ գտնել չէր կրնար: Աւտի արիութիւն ու սիրտ ստանալու համար՝ երկու ձեռուքնէն երկինք վերցուց սիրտ ի բերան աս աղօթքն ըրաւ: «Հայր, երկնաբերձ կամարին վրայ նստող Հայր, տուր ինծի շնորհք որ քու երկիւղիդ մէջ ապրիմ, շնորհէ գօրութիւն՝ որ Քրիստոսի հաւատքը պահեմ եւ բորբոքած եռանդնալից սրտով ամէն աղէտքն ու վէշտը կրեմ, ունայնութիւնն ու ամբարհաւածութիւնն արհամարհեմ, շահասիրութիւնն ու նախանձը մէկդի մերժեմ, ինծի օգտակար եղածը փնտտեմ, բնկերիս շահն ու ամենուն բարիքը շարգելեմ: Ախ, Աստուած, դարձուր քու աչքդ երիտասարդութեանս հոգաբարձուին վրայ, նայէ անոր ու շնորհէ անցաւ անտրտում օրեր, քաղցր եւ ուրախարար ժամեր: Երկրնոյ ու բազում մօրս գլխուն վրայ, սիրելի եղբարքս կենդանի պահէ, որ օր մը մէկգմէկ տեսնենք. ա՛հ, երբ իրարու պիտի մօտենանք: Գիտեմ՝ կու գայ անշուշտ այն ուրախութեան օրն ալ, այն ցանկալի ու անձկալի վայրկեանն ալ կու գայ»:

«Այնպէս է», ըսաւ մօտաւոր ձայն մը: Վարդ անմիջապէս ոտք ելաւ ու դարձաւ իրեն քով մարդ մը տեսաւ, ուրախ զուարթ դէմքի մը վրայ բիւր սիրոյ նշաններ նշմարեց. . . . Երուանդունին անձամբ եկած էր: Ներսէ՛՛՛ աջ ձեռքը վերցրնելով՝ ապշած երիտասարդին ուսը դրաւ եւ ըսաւ. «Սիրելի Վարդ, կը տեսնեմ որ Աբարչին վրայ հաստատուն ու անվանդ»

հաւատք ունին: Պահէ անիկայ, որովհետեւ Բարձր-
լայն վրայ սէր ու հաւատք ունենալէն ազնուագոյն
բան չի կրնար բլլալ: Ա՛ռգէի անձամբ տեսնել որ քեզի
համար սուած հրամաններս կատարուեցան, թէ չէ»:

Ա՛րդ աս բանիս համար իշխանին շորհակալ
բլլալէն ետեւ. «Ո՛րդեակ, բաւ Երուանդունին, Գի-
սակ մօրեղբայրդ ո՛ւր է. կը բաղձայի զըսեցել որ աս
զիշերն ալ իր բարեկամին տունը բնակի: Ի՛նչ, ար-
դեօք սուանց հրաժարական նամակը՝ Ներսէհին
Վարդ Գիսակին հրաժարական նամակը՝ Ներսէհին
ձեռքը տուաւ: Իշխանը նամակը շուտ մը կարգաւորվ,
«Ստուգիւ, կանչեց, ասոնք այնպէս ճշմարիտ խօսքեր
են, որ ազամանդեայ սիրտ ունեցող մ՛ալ անսնցմէ
կը կակղնար. ս եւ իցէ զթած որդին Գիսակին աս
տեսակ բաժնուելուն իրաւունք կու տայ»:

Ի՛սաւ ու իր բնածին արագ ընթացքով թու-
ղուց գնաց. իսկ Վարդ արամութեան եւ ուրախու-
թեան այլեւայլ խորհրդոց մէջ ընկղմած՝ աս այցե-
լութեան վրայ կը զարմանար: . . . Ատենն եկած էր,
ինքն ալ Երուանդունուոյն պիտ՛որ երթար:

Ա՛րդ վառվառն ու կայտառ՝ իրեն համար
յօրինուած վայելազեղ զրահք վրան առաւ, սեւա-
թոյր թագադանդուր վարսից վրայ սակեղէն սա-
զաւարտը դրաւ, ահագին ու շողուն վահան մը մէկ
կողմը բռնած, երկայն պողովատիկ սուր մը մէջքին
վրայ՝ մէկալ կողմը կապած, աղեղ եւ սլաք, նիզակ
ու գեղարդ իր քօվը պատրաստած, ու այլեւայլ ու-
կեղէն եւ արծաթեղէն զարդերով զարդարուած, Ներ-
սէհ Երուանդունուոյն առջեւն ելաւ, որն որ զինքը
շատ սիրով ընդունելով՝ Արտէսին հրամայեց որ մար-
մնոց կրթութիւններն անսխալապէս սկսին:

Ս՛ամիկոնեանն այնուհետեւ արագաթուռիչ եղ-
ջերուի պէս ամէն անելանելի բլրէն ու գահաւանդէն
գիւրութեամբ անցաւ յառաջ գնաց: Իր նշանաւոր ու
երեւելի վարպետներն իրեն փութոյն վրայ մեծամեծ
գովեստներ կը խօսէին, Վարդայ առաքինի ու սրան-

չելի բարբը կը գովէին, մանաւանդ թէ պարծելով մը
այսպէս աշխերտ ունենալուն վրայ կ'ուրախանային:
Քիչ ատենուան մէջ՝ ձիաւարութեան, կուռոյ, նե-
տաճգութեան ու սրոյց հրահանգաց մէջ աղեկ վար-
ժելով, անսովոր յաջողակութիւն մը կը ցուցնէր. աս
ամէն բանին բնութեամբ զօրաւոր, ջրոտ ու ամենեւին
հիւանդութեամբ չտկարացող մարմինն ալ կ'օգնէր:
Այսպէս Վարդ օրէ օր ու տարուէ տարի առաւել փու-
թալան ու առաքինի բլլալուն, Երուանդունին ալ
զինքն իր որդւոյն պէս կը սիրէր:

Ներսէհ իր ծանրութիւնն ու վերջին ժամա-
նակներուն տրտում տխուր դէմքը, իր նեղութիւննե-
րուն ու անձկութիւններուն նշաններն իրմէ կը հե-
ռացնէր, երբ որ աս զուարթ ու հրեշտակատեսիլ
երիտասարդն իր քօվը կ'ըլլար: Վարդ՝ քաջարի ու
առիւծասիրտ Ներսէհին կամ քրիստոնէութեան բռ-
բլին առջեւ, զանազան քաղցրանուագ երգեր հնչեցը-
նելով, կամ մանաւանդ հոյակապ ու երջանիկ մար-
տիկներուն եւ դիւցազանց վրայ եղած պատերազմի
միմունջներն երգելով՝ Երուանդունուոյն սիրտը կը վե-
րաւորէր, անսնցմով անոր միտքը դառն յիշատակներ
կը ձգէր: Երեւելի մարտիկն երկու աշուրները՝ դիւ-
ցանց Վարդայ առջեւ՝ շողաւոր աստղներու պէս կը
փալիւիէին: Վարդ իր քօվը չեղած ատեն՝ Ներսէհ ինք
զինքը կուռոյ լայնատարած դաշտի մը վրայ բանակած
ու նժուգի մը վրայ հեծած համարելով, ասդին ան-
դին խոյանալ կ'ուզէր ու իր բախտը փնտռել. վահան-
ներուն շկահիւնը, թրերուն շաչիւնը, մահաձայն ա-
ղեղանց շառաչիւնը, թիւնահեղ նետից հնչիւնն ու
սօսաւիւնն ականջը կը դռնչեցնէին, պատերազմը
սկսած ու յաղթութեան կշեռքն ալ իր կողմը ծռած
տեսնելէն ետեւ՝ իր քաջ գնդերուն բերնէն ան քաղ-
ցրահնչիւն ազաղակն ալ լսել կը կարծէր: «Յաղթու-
թիւն, յաղթութիւն», բայց մէկ վայրկեանի մէջ իմա-
նալով որ տեսածը զնորք է, նորէն իր տխրութեան
անգնդին մէջ կ'ընկղմէր: Միայն Վարդայ դէմքը նայե-

լով՝ թախճութիւնը կը փարատէր եւ իր դիւցազնա-
կան երեսն ուրախութեան նշոյլ մը կը նկարուէր:
Ներսէ՛՛ շատ անգամ ալ տխրած ու նեղուած, երկու
ձեռուքները նստած աթոռին վրայ տարածած, լուռ
անմունչ կը կենար եւ պատանեկին առջեւ քար կը
կտրէր:

Անգամ մը Ներսէ՛՛ մէկէնիմէկ ցատքեց տեղէն,
եւ դէպ ի Վարդ վազելով ու անոր ուսը գարնելով,
«Գիտես, բաւ իրեն, սիրելի՛ Վարդ, քու քաջ Վա-
հան եղբայրդ, որուն ես անձամբ գրով մը իմացուցած
եմ հոս բնակիլդ, հիմակ . . . այն առաքինի ու իմաս-
տուն, հանձարեղ ու բարեբարոյ մարդը, որուն լաւու-
թիւնն ու արիւթիւնը Պարսից Պերոզ թագաւորն
ալ կը գովէ եւ որուն անմեղութիւնն ու բարութիւնն
ինքն ալ գիտէ, շատ ազգակից շարանենդ մարդիկ
զինքը կ'ամբաստանեն. իսկ Գաղիշոյ Խոսիտուսին,
վայրենի ու անդու թ գազանը, հաւատադրուժ ապի-
րատը նախանձէն հալելով ու մաշելով, վերջապէս
կրցաւ . . . : Ո՛հ, գնա, սիրելի՛ Վարդ, զիս մինակ
թող . . . : Ախ, ցանկալի բարեկամ, սքանչելի Վա-
հան, քու լաւութիւնդ երբեք չի կրնար ծածկուիլ:
բայց գրածդ կրտսեր եղբորդ ալ ինչպէս զուցեմ . . . :
Սիրելի՛ Վարդ . . . դեռ հոս ես . . . թող զիս՝ քիչ
մը հանդարտիմ . . . »:

Վարդ իշխանին քովէն հեռանալէն ետեւ՝
քանի մ'որ տրտմութեան ու ազետից վիճ մ'ընկղմե-
լով, Երուանդունուոյն առեղծուածները լուծել կը
Զանար: Ապարանից մէջ մեծ շարժում մը կ'եռար.
ամէնքը պատերազմի սկիզբ կը կարծէին. մէկը մէկալը
լսած գոյժն ու աւետիսը մէկտեղ խառնելով՝ ընկե-
րին ահանջը կը հասցընէր: «Քաջբերունի, ըսին ոմանք
որ մը, գիտես որ Վահան Մամիկոնեան Պերոզին ամ-
բաստանուելով, իր երեւելի կողմնակիցները շատ բար-
կացած են, ինչպէս Ներսէ՛՛ Երուանդունին ալ:

«Ուսկից կրնայի լսել, պատասխանեց Վարդ.
եւ Երուանդունուոյն հրամանաւն Որջնահաղ երթալով,

իրեն նամակ մը բերի եւ հիմակ անմիջապէս պէտք է
որ իրեն տամ: Վերեւայ որ ստիպիչ գործք մըն է,
սաստիկ ձեպով գացած եկած եմ:

— «Եւամակը հիմայ չես կրնար տալ, պէտք է
որ երկայն սպասես, վասն զի քովը Պարսից թա-
գաւորէն մարդ եկած է. կ'երեւայ որ ծանրակշիռ բա-
նեռու վրայ կը խօսին: Պատգամաւորին գալուն բուն
պատճառը մենք ալ աղէկ չենք գիտեր, սակայն ար-
քունական բանքերին հետ եկող քանի մը սպասաւոր-
ները մեղի պատմեցին որ Վահան ինք զինքն արդա-
բացընելու համար թագաւորին գացեր ու անոր հետ
խօսեր է. այսու ամենայնիւ Պերոզ զինքն ազատ չի
թողուր, հապա իր ազատութեան համար պատանդ
կը պահանջէ: Ստուգիւ աս բանս Ներսէ՛՛ ին զլուրը
մեծ փորձանք մըն է. վասն զի Վահան Մամիկոնեան
իրեն շատ սիրելի է, կարծենք թէ ստով իր կրակ
բնութիւնը նորէն կը բորբոքի եւ գուցէ գուցէ ալ
գարձեալ կուռոյ սկիզբը բլլայ: Վարդ, դուն ինչ
կ'ըսես»:

Վարդ աս ամէն բան լսելով՝ տժգունեցաւ,
բայց գազանիքը շոյանելու համար այսպէս խօսեցաւ.
«Բարեկամք, թող տուէր որ կարծիքս քովս պահեմ.
ասոր վրայ դատաստան ընել չեմ ուզեր, եւ ինձի ալ
չի վերաբերիր: Երուանդունուոյն որոշումն ինձի ալ
համոյ կ'ըլլայ:

«Ի՛նկերք, հաւատացէք, բաւ մեծամիտ մը,
գիտնաք որ Վարդ Ներսէ՛՛ շատ սիրելի է. եւ կ'ե-
րեւայ որ իշխանն անոր վրայ սքանչելի բան մը կը
տեսնէ:

«Վարդ, երկրորդեց ուրիշ մը ծագելով, մենք
ասոր համար քեզի չենք նախանձիր, որովհետեւ մենք
ալ Քաջբերունի Վարդայ չափ պատիւ ունինք. եւ աս
ալ գիտենք որ դուն քու հօրդ հետ մէկտեղ հե-
ռաւոր երկրէ մը հոս եկար ու հիմակ ամբարտաւա-
նութեամբ ու գոռոզութեամբ Երուանդունուոյն սպա-
րանից մէջն ալ իշխել կը Զանաս»:

Վարդ աս խօսքերուն կրակ կարեցաւ . եւ տեսնելով որ իր անարդ ու չնչին սեպած երջանկութեան համար ծաղր ծանակ կ'ըլլայ ու նախանձն իրեն դէմ շատերուն սիրտը կը վառէ, ձեռքն երկնցուց, իր քովէն կախուած սուրին տարաւ ու պատեանէն կը հանէր . . . բայց շուտ մը խելքը գլուխը դարով՝ աչքէն քանի մը ջերմ արծրթէ կաթիլներ թափեց եւ հանդարտութեամբ ու ամօթով անոնց պատասխան տուաւ . «Բարեկամք, որչափ կը հաճիք նե՛՛ ձեր շըրթուները կրնաք շարժել եւ զիս ու դորձքերս նախատել ու թշնամանել : Բայց ես զիտնարով որ պարտքս կը կատարեմ ու առաքինութեան շաղկէն չեմ հեռանար, ձեր դառն խօսքերը մեղք կու գան ինձի . վասն զի դառնարուի աղբերականց ջուրն ալ շատ անգամ խմողին օգուտ կ'ընէ» :

Վարդ այսպիսի մեծանձն բարկութեամբ իր խուցը քաշուելով՝ ան մեծ ու պղտիկ աւազորերոյն վարմունքն ամչուց ու անոնց բերանն ալ լռեցուց : Նոյն ատեն՝ Ներսէ՛՛ զինքը կանչել տալէն՝ ու Պարսիկ զբուցաբեր իշխանին ցուցընէլէն ետեւ, Պարսիկն տուած հրաժարական ողջոյնը պաղութեամբ ընդունեցաւ ու նոյն տեղը Վարդայ հետ մինակ մնաց : Երուանդունին տխրութեամբ աթոռի մը վըսց նստած էր, տժգոյն ու այլայլած, աչքը՝ սեղանին վըսց եղած մագաղաթի մը սեւեռած էր : Սրտին մէջ եղած արիւթիւնն ու առաքինութիւնը, Վարդայ վըսց ունեցած սէրն ու դուժը ճակտին վըսց նկարուած էին . Պերողին դէմ՝ ունեցած ատելութիւնն ու անհաշտ թշնամութիւնը, բարկութիւնն ու վեժխնդրութիւնն երեսին վըսց զրոյմուած էին : «Աղէկ է, կ'ըսէր ինք իրեն, հով մը շնչելով՝ շատ ամպեր բերաւ, բայց փոշոյ պէս կը ցրտին : Ստոյգ է որ առիւծը կապեցին ու քակել ալ չեն ուզեր, սակայն այսպիսի ազնիւ պատանդ մ'ալ տալ . . . չէ . . . ո՛հ, Վարդ, Վարդ . . . :

«Վարդ, դուն հոս ես եղեր : Ելուր ես կանչել տուի, այնպէս չէ : Արջնահաղէն ի՛նչ լուր բերիր» :

Վարդ նամակը ձեռքը տուաւ : Ներսէ՛՛ նամակը կարդայով՝ կարմիր բոց մը երեսը պատեց, սաստիկ զայրոյթ մ'եկաւ վրան, շատ անգամ ոտքով դետինը կը զարնէր, ձեռքով օղբ կը պատուէր . «Ողորմելի ու անպիտան աւաղակներ, գոչելով, բաւական չէ՛, կ'ըսէր, որ մինչեւ հիմայ հէթանոսներն աւերցին գերփեցին ու բոլոր մեր հայրենիքն աւեր անապատ դարձուցին . ի՛նչ, ասո՛նք ալ համազդի ու հայրենակից ըլլայով՝ կ'ուզեն նոյն անօրէններուն դորձքերն երկրորդել : Բայց ասոնց ընկերներուն շատը կամ գոնէ գլխաւորը Պարսիկ պիտի ըլլայ : Սիրելի՛ Վարդ աւատիկ պատշաճ ժամանակն է . քու վըսց փորձ մը կ'ուզեմ ընել, թէպէտ եւ դեռ երիտասարդ ես, սակայն աշխոյժ ու վառվռուն ողի մը կը տեսնուի վըսց : Անտարակոյս գլուխ կը հանես : Ար բաղձամ որ բարի վախճանաւ դուն պատերազմիս . քաղաքացոց եւ դեղացոց ապահովութիւնը հողալու է . անգէնն ու տկարը յափշտակութեան բռնութենէն ու սպանութեանն ազատելու է : Խօտէ՛, ցանկալի՛ Վարդ, բտէ ինձի, կրնամ արդեօք այսպիսի դորձքի մը համար ձեռքդ սուր տալ :

«Շնորհակալ եմ, պատասխանեց Վարդ, ձեր ինձի բրած աս շնորհն ու պատիւը մեծ է . թէ որ երկնից կամքը զանոնք ջնջել է, յուսամ որ ձեր յանձնարարութիւնը յաջողութեամբ գլուխ կը հանեմ եւ նենգութիւնն ու անարգարութիւնը կ'եղծանեմ ու աս տառապեալ երկրէս կ'ոչնչացրենք :

«Ուրեմն փոզը, բաւ Ներսէ՛՛, երեսուն հեծելոց փաշտով մը Արջնահաղ կ'երթաս եւ տեղւոյն բերդապահ գլխաւորին նամակ մ'ալ տանելով, արշաւանացը ու կուռելու տեղերը կը սորվես, աւաղակաց անտառային բոյնն ալ կը գտնես : Հոն որսալու գազաններդ դարանակալ կը նստին : Փախտական ու անօրէն քառասուն հոգւոյ դունդ մը, ինչպէս կ'ըսեն, անել ու անշաւիդ անտառներուն եւ այրերուն մէջ պահուրտած՝ օրէ օր յանցանք յանցանքի վըսց


կ'աւելցնէ. անգէտ անմեղ ճամբորդքը, խաղաղ ու հանդարտ անիկն ապահով չեն, նոյն իսկ եկեղեցիներն ապահանութիւններէն ու հրձգութիւններէն ազատ չեն: Շապուհ աւազակաց գլուխը թրով ու հրով շատ տեղեր կ'ապականէ եւ դժբախտ երկիրն անոր բեռան տակ կը հեծէ: Պատէ պաշարէ զանոնք, անձկալի վարդ, բռնէ ու զամէնքը մեռցնել տուր՝ բաց ի Շապհէն. զինքը կենդանի պահէ ու շղթայի կապած՝ ինծի խրկէ, վասն զի նոյնպիսի մարդասպան ու նենգաւոր ոճրագործներուն առջեւ զՇապուհ օրինակ կ'ուզեմ դնել եւ իրեն առնելու դառն պատիժն անոնց աչքն ալ նկարել: Որդեակի, պատրաստուէ, առ արիւնտուշտ գործիքդ, ել պատերազմի դնա. բայց նայէ որ անհամար յանդգնութիւնը քեզի չմտենայ: Իմաստուն չափաւորութիւնը զինուորին զարգն է, յանդուգն ու ժպիրհ արիութիւնը՝ բարին ալ երբեմն կ'եղծանէ»:

Արեգակը՝ պազպաժուն ու կապուտակեայ յեղյեղուկ դաշար թող տալով, բարձրանալու սկսած էր, երբ որ Վարդ իր սաղաւարտովն ու սրովը զարդարուած՝ արի ջոկատին գլուխն անցած էր: Շանթածիզ աչուքներով իր պզտիկ վաշտին նայելու ատեն՝ սրտէն ու զրահէն վեհանձնութեան նշոյլ մը գուրս կ'ելլէր ու զինքը բոլոր կը լուսաւորէր: Երիտասարդ ու ծեր զինուորներն ամէնքն ալ քաջ էին: Խրաքանչիւր սք երիվարի վրայ՝ կարծես թէ թափծու պղնձէ արձան կանգնուած էր: Ծերագոյնը՝ որոնք շատ պատերազմներու մէջ մտած էին, իրենց երիտասարդ եւ կրակ ու բոց առաջնորդը նշմարելով՝ աս յազմութիւնն ալ մերն է, կ'ըսէին, եւ ամենուն միջին ու խորշմած դէմքն ուրախութեան կայծով մը կը փայլէր:

Այսպէս հռչակաւոր քաջերն ու անոնց առիւծասիրտ գլուխը մէկտեղ գալէն ետեւ, յանկարծ Ներսէհ Նրուանդունին իրենց մէջն եկաւ ու զամէնքը ողջունեց: «Բարեկամք, բաւ իր երիցագոյն զինուորակիցներուն, բաւական ժամանակ է որ խաղաղ ու

հանգիստ նստեցանք, աւասիկ նորէն գործք մ'ելաւ: Գացէք, ցուցուցէք որ իմ երեւելի մարտակիցներս էք: Հիմայ հզօր ու անհամար զօրաց դէմ չէք երթար, գաշտի վրայ ձակաս ձակատի դէմ պիտի չմիջիք. ձեր թշնամիները քիչ բայց նենգաւոր ու սորամուտ աւազակներն են: Արի Քաջբերունին ձեր ամենուն գլուխը կ'անցնի. ցուցուցէք իրեն որ Երուանդունւոյն գնդերն ինչ զօրութիւն ունին կամ ինչպէս կը կռուին: Վարդ ձեր գլխաւորն է, եւ կը հրամայեմ որ իրեն հնազանդէք, իբրեւ թէ ձեր գլուխն ու առաջնորդն ես ըլլայի: Առ, ցանկալի վարդ, աս նամակն ալ մէկտեղ առ. Աստուծոյ օգնութիւնն ու բազուկը ձեր վրայ ըլլայ»:

«Վրթանք», գոչեց պատանին. եւ մէկ վայրկեանի մէջ ամէնքը թռան, աներեւոյթ եղան:





Ա—աղակաց բայն:

ՄԻԳԱՊԱՏ ու տխուր երկինք մը Որջնհաղի անտառներն ու լեռները պատած, չորս կողմէն գոցած աներեւոյթ ըրած էր: Ան թանձրախիտ մշուշէն, որն որ նոյն վայրաց բլուրներուն եւ բարձրաբերձ ժայռերուն վրայ փափուկ ու խոնաւ իջած նրստած էր, երբեմն երբեմն ասդիէն անդիէն արեգական նշոյլ մը կը թափանցէր, բայց ան թանձրամած ու թեթեւաթուիչ ամպերէն դարձեալ նոյն նուազ լոյսն ալ կը կորսուէր: Աս անհետ ու անել անտառներուն ու լեռանց լեռնամէջքի մը մէջ կիսակործան տնիկ մը կար, որուն մէջէն սրբնթաց երազախաղաց հոսանք մը մոնչելով կը վազէր եւ աւերակաց կոտորուկներն աս կամ ան կողմը սաստիկ բռնութեամբ կը տանէր: Տընկան տանիքը կիսաբաց ու ապականած ըլլալով, եւ ամբողջ հիւզը բիւր գուր աշուրներ ունենալով, անոնց մէջէն հովն անարգել ու դառնաշունչ ներս կը հոսէր: Ամէն մարդուն ոտքն անկից կը փախչէր. միայն աւազակաց սյր ըսուելու, մարդախոշոշ խմբի մը ժողովատեղ ըլլալու յարմար էր եւ շատոնց ալ այնպիսինե-

րուն բոյն եղած էր, որոնք անլուր ու անգութ չարութիւններ կը գործէին: Օրէ օր ահագին ու սարսափելի ոճիրներ կը լսուէին: Ճամբորդն ու պանդուխտը, որ մինչեւ նոյն զարհուրելի տեղերուն յօտ բարեբախտութեամբ անվնաս կը հասնէր, միշտ ան տեղերը կը յիշէր, նոյն տնկան տակ եղող վտակին անգազար գուռացող ընթացքը, ջրոյն սաստկութեամբ երկինք թռչնող կաթիլները կը մտածէր, եւ ան բոյնէն ելած գիշերուան կարմիր շողիւնն ու գուշիւնը մտքէն անցընելու ատեն՝ կը սարսափէր կը մնար: Ան գիշատիչ ու խաւարազգած բուճններուն բոյնին մէջէն՝ մերթ խառնաձայն աղաղակներ ու վայեր, եւ երբեմն անակորժ երգեր ու խուժագուժ ձայներ կը լսուէին ու գիշերուան հանգիստը կը խուռվէին:

Օր մը աս անագորոյն գուռն իր բոյնէն դուրս ելած, ազատ օդի մէջ, փալվիլող խարուկի մը քով նստած կը ջեռնոյր եւ կը զուարճանար տեսնելով օձաձեւ օձակոր կրակին մուլը, որն որ գոյնզգոյն ամպերու հետ խառնուելով՝ երկինքը մթնցընելու սկիզբ կ'ըլլար: Քառասուն հոգւոյ չափ վայրենի գազաններ երկիրը տարածուած՝ իրենց յափշտակած ինչքերուն վրայ կը հրճուէին: Ոմանք ոսկեղէն ու արծաթեայ գանազան զարդեր, այլեւայլ գեղեցիկ ու շողշողուն գէնքեր, թուր ու նետ, գեղարդ ու նիզակ վահան ու արեղ իրենց քով ժողված էին եւ բախտի խաղերով իրարմէ ալ գրաւել կ'ուզէին. ոմանք ալ ուտելն ու խմելն իրենց գործք ըրած էին ու յանգուզն եւ պատաստող գազաններու պէս իրարու ձեռքէն կը յափշտակէին: Ասոնց գրեթէ ամենուն զգեստը պատերազմական խմբի մը զգեստուց ձեւ ունէր, բայց քանի մը նշաններ՝ անոնց գող ու աւազակ ըլլալն ալ չէին կրնար ծածկել:

Մութը կամ բոցերն երկինք ցրլացնող խառուկին քով, վերարկուաւ մը ծածկուած նշանաւոր մէկն ալ կար, գլուխն աջ ձեռքին վրայ յեցուցած. երբեմն աս կամ ան գին շարժելու ատեն՝ ձախովը

կրակին մէջ փայտ մը կը նետէր կամ իր քովը հսկող արագոտն որսական բարակ մը կը փայտայէր: Բոլոր իր զգեստն ու մեծագին սպառազինութիւնը, իր ամբարհաւած կերպարանքն ու պերճ նենդաւոր ծանրութիւնը՝ զինքը մէկալ անօրէններուն զլուխ կը ցուցնէր: Ծերութեան ու ձիւնսպիտակ ալեաց հասած՝ սոսկալի Շապուհն էր, որուն նկարագիրը՝ մալեգին վայրենութեան ու ապիրատութեան պատկերը կրնայ ըլլալ: Այրած ու ահագին դէմքէն հրաշէկ սլաքներ կը ցատքէին, անոր վրայ երկու սուր ու վերաւորող աշուրներ կային. ձերմակ մաղը, երկայն մօրուքն ու ճակտին վրայ ունեցած կարեւիւր վերքը զինքը սարսափելի կրնէին: Թէպէտ եւ նոյն խիստ հարուածը բժշկուած կերեւար, սակայն շատ անգամ ծեր աւազակին դառն ու դաժան ցաւերու պատճառ կ'ըլլար, զինքը կը նեղէր, զուրիշն ալ կը շարչարէր, իր դժնդակ երեսը նայողն ահուդողի մէջ կը խօթէր:

Շապուհ իր դորձակից ոճրարարներէն քանի մը հոգի քովը կեցուցած էր, զինքը պաշտպանելու համար: «Վնձի նայէ, Արջուկ, ըսաւ անոնցմէ մէկուն, դուն անմիտ մարդ մըն ես, արուեստդ քեզի կը նմանի, անոր պէս դաժան ու ողորմելի ես, Արջուկ: Քու բժշկութեան ըմպելիքներդ ու դեղերդ ինչ օգուտ ըրին, ոչինչ: Չոր օրինակ դրօշ մը փոթորիկի ատեն հովի մէջ կը ծփայ, բիւր կողմ կ'երթայ կու գայ. կամ հոսանքի մը շրջանն ու պոռոյտը ասդին անդին կը դառնայ ու նոյն ալիքը մի եւ նոյն տեղ կու գայ կը մնայ, նոյնպէս իմ գլխոյս ցաւոց պոռոյտն ալ հազարաւոր շրջաններ կ'ընէ եւ երբեք գլխէս չի հեռանար, նոյն վերքը զիս կը շարչարէ ու շատ անգամ ալ մինչեւ սրտիս խոքը կը թափանցէ: Գուն աղէկ պարծիլ գիտես, սպուշ, կարծես թէ բժշկութեան գիտութիւնը Յունաց դպրոցներուն մէջ սորվելով՝ առաջին ճարտարապետներէն մէկն ես: Ես հոս վերաւոր ու կատաղի գայլի մը պէս պառկած կը թաւալիմ, եւ ան ուրախ ու անհոգ անդութներուն ուրախութեան

մասնակից չեմ կրնար ըլլալ: Քեզի կ'ըսեմ, Արջուկ, օգնէ ինձի, ես Շապուհ կը հրամայեմ քեզի վերքս դարմանելու՝ միջոց, հնարք, դեղ մը մտածէ. ապա թէ ոչ՝ նետով կամ դաշունով մը սրտեզ արիւն կ'առնեմ»:

Արջուկ՝ ահուդողով Շապուհին աղաչեց որ քիչ մը համբերէ ու հանգչի. «Համբերութիւնն է, կ'ըսէր, ամէն վշտաց բժիշկը: Շապուհ, շատոնց առած ես, ինչպէս դուն անձամբ կը վիայես, աս հարուածը ուրեմն ճարտար դորձը մը կ'ըլլայ թէ որ մէկը՝ անոր ցաւերը նուազցնել միայն կարենայ, որովհետեւ մարդ կոտորած ոսկրը նորէն միացնել չի կրնար: Բարեկամ, հիմայ թող քիչ մը ցաւերդ նուազցնեմ»:

Շապուհ զլուխը բացաւ ու անշարժ անկենդան մնաց. Արջուկ իր քսակէն պղտիկ շէշ մը հանելով՝ գազանին ճակտին վրայ սոկեշող կաթիլ մը սրտից ու մեղմով վերքը լուաց: «Ո՛հ, գոչեց Շապուհ, ցուն անցաւ, շատ զովացայ. հանձարեղ մարդ մըն ես, Արջուկ, առ աս պարզեւր, քու ձեռնասուրձեանդ վարձքն ըլլայ. նայէ որ դեղովդ կեանքս երկայն պահես ու ծանր աղէտները թեթեւցրես, օր քան զօր՝ մահուրնէ աւելի կը զարհուրիմ: Արջուկ, գիտես, վերը տալու համարս շատ մեծ է, անոր համար կ'ուզէի շատ օրեր, բիւրաւոր ամաց շրջաններ տեսնել, շատ շատ: Միտքս իմացար, այնպէս չէ»:

Ըսաւ ու դարձաւ որոտական բարակին այսպէս զուրցեց:

«Վնչ, արդեօք բան մը կայ, սիրուն անասուն, ինչո՞ւ ես անհանդարտ շարժումներդ արդեօք վտանգ մը կայ»: Շապուհ շան այսպէս զուրցելէն ետեւ՝ ոտք ելաւ ու շունը քովը նստեցուց: Նոյն ատեն մօտաւոր անտառէն աղաղակ ու անյայտ ձայն մ'եկաւ: «Արդեօք Սըղակն է», պոռաց Շապուհ, եւ քովն եղած փողը հնչեցուց:

«Ա՛յն է, պատասխանեց պահակ կեցող առաջակներէն մէկը, բայց միտակ հոս կու գայ ու մէկ թեւը պատանքով մը կապած կ'երեւայ»:

Յանկարծ Շապհին դեմքը դժոխական դաժա-
նութեան գունով ներկուեցաւ: «Գ'նչ, որոտաց մոլե-
զին կատաղութեամբ մը Շապուհ, ութը ուրիշ հոգւոյ
հետ մէկտեղ որսի գացած, հիմակ առանձին կը
գառնայ . . . : Եկուր, Սըղակ, մօտ եկուր . . . Ինչու
կը դողաս . . . Խօսե, մէկալ բնկերներդ ուր են, յու-
սամ թէ . . . կամ չեմ ուզեր կարծել որ անոնք ին-
կամ ըլլան: Գժբախտ կ'երեւաս, Սըղակ, զօրացիր,
պատմէ պատմութիւնդ. մէկալնոնց վրայ բան մը
չունիս»:

Աղակ ահուգողով այսպէս խօսեցաւ: «Տէր, զի-
տես արդէն որ մենք աս անատին մէջ փոս տեղ մը
դարանի նստած էինք: Ես կը կարծէի որ դուն թըշ-
նամոյ մը ձեռքէն սպանուած ըլլաս ու մեր որոգայթ
նստած տեղերէն ալ այսուհետեւ մէկն անցնելէք
չունի, որովհետեւ աղազակ մը լսեցինք ու նորէն լու-
թիւնը տիրեց: Բայց մէկէնիմէկ քանի մը պաշար տա-
նող մարդիկ երեւցան: Մենք անմիջապէս երկու մաս
բաժնուելով, ճամբորդներէն մէկ քանին մեր քովէն
անցնելու ատեն դուրս ու անոնց վրայ յարձակեցանք.
անկից ետքն ալ մէկալ մնացած մասին հետ խիտ
կռիւ մ'ըրինք. իմ առջի նետս անոնցմէ մէկը գետինը
պտակեցուց եւ երբ որ բոլոր անոնց պաշարն եւ ունե-
ցածը չունեցածը հոս բերել կը մտածէինք, յանկարծ
հեծելոց վաշտ մը շանթի պէս մեր վրայ ինկաւ ու
մեզմէ շատերը գետին կործանեց: Ես բուն ճամբէն
դուրս ելայ, սակայն շատ թռչող սլաքներ ետեւէս
դալով մէկը թեւս դպաւ, մէկալնոնք զլխուս վրայէն
չնչելով անցան դային եւ այս կերպով ազատեցայ
առջեւդ եկայ»:

Շապուհ աս կարծ պատմութիւնն անհամբե-
րութեամբ մտիկ ընելէն ետեւ, մոլեզին կատղու-
թեամբ. «Մ, թշուառական, գոչեց, ութը հոգի ին-
կան մեռան, եւ դուն միայն, դուն ամէնէն գժբախտն
ու ողորմելին կրցար փախչիլ ու շատխօս ազգաւի պէս
առջեւս եկած, ինձի աս գոյժը կու տաս ու ազատելու

քաջութեանդ վրայ կը պարծիս: Ղատ, անպիտան էք
ամէնքդ ալ: Իսկ դուն քու ստերովդ զիս խաբէլ կը
կարծես. երկշտ գքեզ, փախչելով՝ օտար նետերէ
ազատեց դքեզ, բայց ուրիշէն չառածդ, ինձմէ կ'ըն-
դունիս . . . »:

Աղակ Շապհին դառնութիւնն ու անհաշտ
բնութիւնը գիտնալով՝ աւազակապետը զինքը մեռցը-
նելէն յառաջ, ինք զՇապուհ բռնեց, գետինը զար-
կաւ, եւ սրացաւ գնաց:

Մէկալ աւազակները՝ Աղակին վրայ դուրս,
Շապհին դեմ ատելութիւն ունենալով, փախչող
աւազակին ետեւէն ոչ իրենք դացին եւ ոչ ալ նետ
կամ սլաք մ'ուղղեցին: Իսկ Շապուհ ահագին մոլեզ-
նութեամբ ասդին անդին նայեցաւ, սակայն ամօթէն
ամենեւին բերան չբացաւ:



Գ Լ Ո Ւ Մ Ժ Ա .

Վրէժինդրոսինն ու Կապանք:



ԸՔե՛ղ զահաւանդի մը վըայ, որուն մերկ ու ժայ-
ռուա զազաթներն եղեւիններով զարդարուած
ու բարձրացած կը տեսնուէին, Վարդ իր հե-
ծեալներուն վաշտովը կը հանդէշէր: Ամէնքն ալ ա-
ռիւծներու նման՝ Վարդայ չորս կողմը բանակած՝
զինքը կը դիտէին, եւ անոր դէմքին վըայ նոր առած
արատը՝ թանձրախիտ անտառի մը մէջ մտնող ելլող
երեսի մը արատին պէս՝ ամենուն մտադրութիւնն
անոր կը ձգէր:

Վարդ իր վաշտապետը կանչելով, «Վարժեմ,
ըսաւ, ամենուզ ալ ոյժն ու զօրութիւնը նուազած
պիտի ըլլայ: Թող քանի մը հողի մօտաւոր գեղն եր-
թան ու կերակուր եւ դինի բերեն, որպէս զի նորէն
զօրանաք: Բայց չըլլայ թէ գեղացւոյ կամ ս եւ իցե
մարդու ֆնաս ու անիրաւութիւն մ'ըլլայ»:

Վաշտապետը հրամանը կատարելէն ետեւ՝ նո-
րէն ազատորդւոյն քովը դառով, սկսաւ հետը խօսիլ:
«Մեր բրած առաջին կուխն աղէկ յաջողեցաւ, ըսաւ.
դուք ալ, սիրելի՛ Վարդ, շատ քաջութեամբ կուռե-

ցաք. միայն ձեր պատերազմը տեսնելը՝ մեզի մեծ
ուրախութիւն էր: Բայց կ'աղաչեմ՝ ա՛յլ պատերազմի
մէջ մի մտնէք, կարծեմ՝ չափէն աւելի յանդգնու-
թիւն ըրիք. աւազակները՝ նենդաւոր ու անդուժ են,
իրենց դժբախտ ու ողբմելի կենաց վըայ ամենեւին
հող չունին, ուրիշին լոյսը մթնցընելու ատեն՝ զգու-
շութիւն կամ մեծանձնութիւն երբեք չեն ըներ, եւ
աղիք չունեցող զազանի պէս՝ մարդուն ամէն մէկ ան-
դամը կը ջախջախեն ու կը ջարդեն: Չեր գլուխն ին-
կած նետի կամ թրոյ մը հարուածը՝ իրենց շատ անձ-
կալի է: Ուրախ եմ որ ձեր առած վէրքը թեթեւ է,
բայց կը խնդրեմ որ այսուհետեւ անձամբ չմըցիք. ձեր
պողովատիկ սուրն այսպիսի ոճրագործաց դէմ մի
խաղցընէք, մենք ձեզի համար կը կուրինք:

«Աստուած պահէ, պատասխանեց խայտալին
Վարդ. երուանդունին զին ձեր գլխաւորն ըրաւ. իբ-
րեւ գլուխ ալ կ'ուզեմ՝ ձեզի հետ մեկտեղ կուուիլ,
թէպէտ եւ քիչ մ'աւելի զգուշաւոր պէտք է ըլլաւ.
Հասարակաց օգտին համար՝ անձկութիւն ու վիշտ,
վէրք ու մահ ձեզի հետ կ'ուզեմ կրել, վասն զի
շատ բանի մէջ զլնոյն մեկալ անդամոց օգնական ու
ձեռնտու ըլլալուն արդիւնքը մեծ է. բաւական չէ որ
զօրապետն իր մարտակիցները կուռոյ մէջ խոթէ միայն,
պէտք է զանոնք յաջողութեամբ ու ամենուն զոհ ըլ-
լալովն անկից դուրս հանել: . . . Վաշտապետ, նայե-
նով է ան. մեր ընկերները քաշկռտելով հոս մարդ մը
կը բերեն»:

Վաշտապետն ածապարեց նայելու դնաց, եւ
մէկ երկու վայրկենի մէջ բոլոր բազմութիւնը Վարդայ
առջեւ ներկայացաւ: Իր իշխանութեան տակ եղող
ձիււորներն առատ կերակուր ու բնպէլ կը բերէին.
բայց անոնց գլխաւոր որսը Շապհին բարկութեանէն
պրծած եղուկ Սղակն էր, որն որ ձեռք իյնալով՝ կա-
պանքով կապուած ու կաշկանդուած, երկու ալեւոր
զինուորներէ Վարդայ առջեւ բերուեցաւ: Վարդ ոտք
ելլելով, հրամայեց որ շարագործին ձեռուրները քա-

կուին ու տիրութեամբ մը անոր զեղնեալ երեսը կը նայէր: «Գուն ալ, գոռաց, դուն ալ ան սճրարարնե-
րէն մէկն ես, որոնք զանմեղ մարդիկ կը կողոպտեն ու
կը մեռցընեն: Քիչ մը յառաջ ոտքերուդ արագու-
թիւնն ազատեց զքեզ, որպէս զի հիմակ աւելի ապա-
հովութեամբ առջեւս բերուիս: Արագ կը զթամ,
վասն զի դեռ երիտասարդ ես, եւ բիւր յանցանքնե-
րու տակ հեծելով՝ վեղդ սրջ կը պատրաստես: Թէ որ
աշխարհքիս վրայ ընելու գործք ունիս նէ, իշխանու-
թիւն քեզի՛ կատարէ. բայց աճապարէ, քանի մը ժա-
մէն Ամենազօրին գահին առջեւը պիտ'որ ելլես. քո
կենացդ վրայ համար պիտի տաս: Հիմակ Աստուծոյդ
ու Արարչիդ ոտքն ինկիր, որպէս զի ահագին ու սար-
սափելի վայրկենին քեզի թողութիւն շնորհէ, ընդու-
նելու պատիժներդ նուազցընէ: Մօտ տեղերը քահա-
նայ չկայ, անապատ սրտիդ մէջ կրօնի վերջին մխիթա-
րութիւնը զեզուլ կրցող մը չի գտնուիր. շատ կը ցաւ-
իմ: Նոյն բարեբախտութիւնը քեզի չէի զլանար. բայց
անկարելի է»:

Արդ աս խօսքերն ըսելէն ետեւ, անմիջապէս
երեսն ուրիշ կողմ դարձուց իր գլխած սրտին զեղեցիկ
վկաները, դառն արցունքները ծածկելու համար, ու-
րոնք կարմրայտ դէմքն առատութեամբ կ'ոտոգէին: Իր
աչքին խիտ ու դաժան բան կ'երեւար մարդու մը
մահուան վճիռ տալ, մանաւանդ այնպիսի դժբախտի
մը, որն որ թեպէտ իր յանցանքներովը շատոնց ար-
դէն ան պատժոյն արժանի եղած էր, բայց հիմակ ան-
ղէն, գունատ ու դողդոջալով առջեւը կը կենար:
Արդայ ազնիւ սիրտն իր ծոցին մէջ սաստիկ կը զար-
նէր. մանաւանդ երբ որ աստղանման աչուրները դող-
դողացող աւազակին վրայ տնկեց, աւելի եւս զթա-
ցաւ ողորմելոյն վրայ ու թափանցեց անոր ներքին
փափաքը՝ որ կ'ուզէր փորձ ընել իր կենանքն ազատելու:

Իրօք ալ դժբախտը ձեռուրները տարածեց,
Արդայ ոտքն ինկաւ ու արտասուօք զանոնք թրջե-
լով՝ ըսաւ: «Տէր, գլխացէք իմ վրաս, տեսէք որ երի-

տասարդ ու զարնան հասակի մէջ եմ, եւ մահն ալ
զարհուրելի է ինձի: Չեր գեղեցիկ ու վայելչագեղ
դէմքին վրայ գութ ու արդահատութիւն նկարուած
է, բերանիդ մահուան վճիռ ինչպէս կրնայ տալ:
Չեղի մեծութիւն ու փառք է, անուն ու հռչակ է
շնորհք խնդրողի մը կենանքն ազատել: Չէք զիտեր
թէ սրչափ դժուար բան է յանցանաց ու մեղաց մէջ
զարգանալ ու աճիլ, եւ այնպիսի արիւնհեղութեան
գործքերէն դիւրաւ փախչիլ ու հեռանալ, մտրու-
թեան առաջնորդ եղող բռնութենէ մը ինք զինքն
ազատ ընել: Հեզ ու գորովադութ եղէք, իշխան,
ստուգիւ կը խոստանամ որ զեղջ ցուցընեմ եւ ուրիշ
կենաց ընթացք մը սկսիմ: Շնորհք բեք. ես ալ իմ
չարութեանս առաջնորդը, զիս մտրեցընողը ձեռք
բերելու օգնական կ'ըլլամ, զանորէն Շապուհ գանե-
լու ձեզի առաջնորդ կ'ըլլամ»:

Սրակ՝ եղուկն ու ողորմելին աս խօսքերն այն-
պէս ներքին ցաւով ու պաղատանքով ըսաւ, որ զինքը
տեսնողները վրան կը ցաւէին. ծերունի հեծեալներէն
շատերն ալ Արդայ աղաչեցին որ անոր կենանքը շնոր-
հէ, զինքն՝ աւազակաց զլխաւորը բռնելու գործածէ,
եւ Ներսէսին ապարանքն երթալէն ետեւ՝ աղաչանաց
մէկ խօսք մ'ալ բաւական է աս գործքս անմեղադիր
ընելու: Արդայ խոց ու վերաւոր սիրտն ու միտքը
շատ կը գեղեւէր, որովհետեւ Երուանդունուոյն հրա-
մանն իր գլխութեան ու արդահատութեան հետ չէր
համաձայներ. բայց Շապհոյ դիւրին կերպով ձեռք
կնխալուն հնաբքը լսելով՝ հաւանեցաւ ու աւազակին
կենանքը շնորհեց: Ահհ ու մեծանձն կերպարանքով
Սրակին հրամայեց որ ոտք ելլէ ու խօսք տուաւ որ
կենաց թելը կտրել չի թողուր, եթէ նոյն տեղերն
ապականող աւազակաց գնդին բոյնը ցուցընէ: Սրակ
ձեռքէն եկածն ընելու խօսք տուաւ եւ նորէն Ար-
դայ ոտքն իյնալով՝ անոր զգեստն ու ստուրները կը
պահէր:

Արդ զաւազակը զգուշութեամբ պահել հրա-

մայելէն ետեւ՝ իր քաջ խմբին կերակուր ու բմպելի բաժնել տուաւ. եւ վերջնալոյսը գեռ նոր կոխած ատեն՝ Որջնհաղ բերդը գացած ու աղէկ բնդունելու թիւն գտած էր: Վարդ ու վաշտապետը ամբողջ գիշերն արթուն կենալով՝ կռուելու կերպն ու միջոցները մտածեցին եւ ան արհեսարբու աւազակաց գունդը քիչ ատենուան մէջ նուաճելու եղանակն որոշեցին: Ծերունի վաշտապետին գիտութիւնն ու Սղակին տուած տեղեկութիւնները գործոյն յաջողութեան մեծ յոյս կու տային: Այսպէս ամէն բան կարգի գնելէն ետեւ՝ Վարդ Երկինքէն խնդրեց որ իրեն օգնէ ու յաղթութիւն տայ, եւ անկից ետքը զօրացուցիչ քնոյ մը մէջ իյնալով՝ իր մարմնոյն ալ հանգիստ տուաւ:

Առաւօտեան առջի շոյն երկիր տարածուելու ատեն՝ Մամիկոնեանն իր գործքին պատրաստ էր: Իր մարտակիցներուն յայտնեց որ աւազակները կիսակործան ու աւերակ անկան մը մէջ կը բնակին եւ թէ իրիկուան դէմ անոնց վրայ յարձակելու միտք ունի: Վարդայ քաջերը պատերազմող ու վշտասէր մարդիկ ըլլալով՝ ճամբայ ելլելու ատենը չէին տեսներ:

Պարծես թէ նոյն իսկ երկինքն ալ Վարդայ յաջողութիւնը կ'ուզէր. ամպերու լայնատարած քող մը ոչ լուսնի եւ ոչ ալ աստղներուն լուսոյ կայծ մը տալու կը ներէր: Ան տխուր մթութեան մէջ Վարդայ քիչուսը խումբն երիվարները մեկդի թող տարով՝ հետի ճամբայ ելաւ, որովհետեւ կը վախնար որ ձիերուն ստից գափերը զնէքը կրնայ մատնել: Սղակն ալ թեթեւ կապանքներով կապուած՝ Վարդայ հետ մեկտեղ կ'երթար, եւ հաւատարմութեամբ այլեւայլ հու վիտներէն ու անտառներէն անոր ու իր խմբին կառաջնորդէր:

Քանի մը ժամ քայլելէն ետեւ՝ Սղակ մեկէն ի մէկ լուռ ու անշարժ կեցաւ: «Տէր, կը տեսնէք, ըսաւ, ան պայծառութիւնը, որն որ ծառերուն մէջէն շողալով հոս կու գայ, ան է մեր բոյնը, քանի մը քայլ

ալ՝ եւ կը հասնինք: Բայց լուռ ու անձայն անմուռնչ կենալու է, վասն զի շորս կողմը պահակներ կը սպասեն»։ Վարդ իր բնկերներուն հրամայեց որ կենան: «Գուք հոս կեցէք, ըսաւ անոնց մեղմ ձայնով, ես երթամ լռտեսեմ ու իմանամ որ արդեօք այն վատ անպիտան գոյերը՝ մեր վրայ յարձակում բնելու պատրաստեն, թէ չէ. թէ որ յարձակելու նշան մը տեսնէք, շուտ թռէք դուք ալ եկէք»։ Զրուցեց ու իր շողաղուն զբահին վրայ վերարկու մը ձգելով, յառաջ քայլեց եւ անտառին մէկ ծայրը հասնելով՝ սուր աչքով մը մութը պատռեց, ան զարհուրելի տեղերը դիտեց:

Աւազակաց բոյնը շատ հեռու չէր, ցնորական տեսարանի մը պէս խարխուլ ու խախուտ տուն մը կը տեսնուէր, որն որ մնայլ գիշերուան ատեն լուսոյ մէջ կը փափկէր. նոյն անկան տակէն յորդահոս վտակն ալ կարկաչելով կը վազէր, եւ իր վրայ տան ճրագի շողունը արծաթահեր ու ոսկեթել մազերու պէս սրսկուած, հրաշէկ ու մարդարտանման վազող հոսանքի մը կը նմանէր: Ահագին ու վայրենի աղաղակ մը շորս կողմանէ գունչելէն դատ՝ երբեմն ան արբեցողաց բաժակներն ալ կը հնչէին, մերթ իրենց մէջ ըրած գազանաբարոյ կռիւներն ու աղմուկները կը լուռէին: Վարդ աս ամէն ուրախութեան ու անհոգութեան նշանակները տեսնելով՝ միտքը դրաւ որ անմիջապէս աւազակաց գնդին վրայ գիմէ: Բայց խմբին անզոյշ կենալուն աւելի ստոյգ ըլլալու համար, յանդգնեցաւ մինչեւ տան մօտ գնաց եւ մտադրութեամբ ամենայն ինչ գնեց: Անոնց գոռում գոչումը լսեց ու անկից ետեւ՝ ժպիրհ ու յանդուգն պատանին ելաւ առանց դժբախտութեան մը դարձաւ իր զինակիցներուն եկաւ:

«Պատրաստուեցէք, գոչեց, բոլոր խժական ու մոյի գունդը մեկտեղ է: Գուն, վաշտապետ, տասնուհինգ հոգւով՝ զնա ձախ կողմանէ տունը պաշարէ, ես ալ մնացած մարդիկներն առած՝ մեկալ գիէն հոս կու դամ, իսկ Սղակ իր պահապաններովը մեկտեղ թող հոս մնայ»:

Ի ուիկ մեջիկ քանի մը վայրկենի մէջ տունը չորս կողմանէ պաշարուեցաւ. քաջն Վարդ՝ հետը քանի մը արի ու անձնեղ զինուոր առած, տերեւներով դռնը ան փակուած դրան քովն եկաւ, ուր ամէն խօսքը կրնար լսել ու իմանալ: Ճեղքէ մը տեսաւ որ բոլոր աւազակները մեծ սեղանի մը քով նստած էին. ոմանք զինով ու արթուն պլեւայլ խենթութիւններ կ'ընէին, ոմանք ալ սաստիկ խմելէն քնոյ մէջ մտած, գրեթէ կիսամեռ գետինը պառկած էին: Անոնց ամենուն տոգոյն ու դժոխական դէմքը կը լուսաւորէր վեր վար ելլող ու իջնող եւ հոգի տուող պղտոր կայծ մը, եւ անոնցմէ մէկուն կերպարանքն ու երեսը Վարդայ ծանօթ կ'ընէր, վասն զի գերի բռնուող աւազակին ըրած ստորագրութիւնն ան էր: Վարդ ներքը զիտած ատեն՝ աւազակապետին որսական բարակը կանչելն մը հանելով՝ դեռ իմաց չտուած . . . Վարդ յանկարծ որոտաց ու տան դրան արջոյի մը զարնելով կործանեց:

«Մտք ելէք», պոռացին աւազակներն ու զէնք կը փնտռէին: Գոռաց թնդաց աւազակներն ու ձայնն ալ ու կ'ուզէր որ ամէնքը պատրաստ ըլլան եւ թուրը ձեռքը մեռնին կամ մեռցնեն: Ոճրագործները՝ թէպէտ ան բռնական դորութեան դէմ յուսահատութեամբ ու անխնայ կռուեցան, սակայն քիչ ատենուան մէջ շատերը թշնամեաց սրէն դետինն ինկան թաւալեցան ու խիստ կապանաց տակ կը հեծէին: Ծեր ու նենդաւոր աւազակապետը մոլեղին ընծի մը պէս ոգորելով, ուրիշ տասը հոգւով մէկտեղ արիւստ սիրտ ատյեաններուն դունդը ջնջել կը կարծէր: Ահագին կռիւն ան ատեն սկսաւ, երբ որ Վարդ երկու ուրիշ աւազակներու դէմ մրցիլը թողուց ու առիւծաբար Շապհոյ վրայ դիմեց: Շապուհ թողուց որ Վարդ մօտենայ իրեն ու խորամանկութեամբ երկայն սուրը վերցուց, իջեցուց. բայց Աստուծոյ բազուկն ու օգնութիւնը նոյն սքանչելի պատանին ազատեց, իջաւ ուրիշ ուժղին հարուած մը կատաղե Շապհոյ վրայ, անոր ձեռքէն արիւնարբաւ զէնքը մէկ-


զի ձգել տուաւ ու ահագին ուժով զենքը գետինը պառկեցուց: Վարդ իր գլխաւոր հակառակորդը զգետնէն ետեւ պողովատիկ թուրն առդին անդին ճօճեցրնելով, զամէնքը զարհուրեցուց. աւազակներն իրենց առաջնորդն ինկած տեսնելով, վերջապէս իրենք ալ իրենց զէնքերը նետեցին ու Վարդայ օտքն ինչալով՝ շնորհք կը խնդրէին:

Վարդ պատերազմը լնցուց ու տանութը հոգւոյ չափ գետինը պառկեցրնելով՝ պինդ կապել տուաւ. մէկալներն արդէն մշտնջենաւորութեան գոգն ինկած էին, մէյ մ'ալ աս անցական կեանքը չդառնալու համար: Վարդայ կողմանէ մէկ հոգի միայն մեռած էր, մէկ երկու հոգի ալ թեթեւ վիրաւորուած:


Շապուհ՝ կապուած ու կաշխանդուած, առդին անդին թաւալելով՝ փրփրող շթուներէն հազարումէկ հայհոյութիւններ կը բխէր. մանաւանդ երբ որ իր բարկութեան փախած դժբախտ Սղակն առջեւն եկած տեսաւ, զալանի պէս աչքն իր հաւկըթածեւ ամանին մէջ շքշքելով. «Թոշուտական, բուս անոր, դուն քու կեանքդ մեծ ու երեւելի բան մը տալով արատեցիր: Անմիտ սպիկար, կ'նչպէս զիս մատնել յանդրդնեցար: Այ, մատնիչ, թե որ կարող ըլլայի եւ դուն ալ տասը կեանք ունենայիր, բոլորն ալ քեզմէ առնել, զանոնք եղծանել կը տենչայի», Շապուհ այսպէս խօսելէն ետեւ սկսաւ ինք իրեն դէմ շատ տրտնջել եւ դէմքը գետնի վրայ տարածելով ծածկեց, որպէս զի անոր առջեւ նկարուած իր բիրաւոր նենդութիւններուն տեսութեան զարման մը տանի. սակայն պարապ: Աուրութեամբ շլացած մարդուն միտքն ու աչքը ոչ օրինաւորն եւ ոչ ալ իրաց բուն ճշմարիտ կերպարանքը դիւրաւ կը տեսնէ. մանաւանդ թէ որչափ շարութեան անդունդը կ'իջնայ, այնչափ աւելի ամէն բան իրեն մթին ու խաւարին կ'երեւայ եւ իր ժամանակաւոր երջանկութիւնն ու ազատութիւնը գտած երեւակայելու ատեն մէկէն ի մէկ մշտնջենաւորն ալ կործնցընելու յուսահատութեան մէջ կ'իյնայ:

Վարդ իր զօրաց գնդին կէսը գերիներուն քով պահապան թողուց, իսկ ինք մեկալ կիսովը գեղ գնաց եւ երիվար ու շատ մարդիկ իրեն օգնութեան առաւ՝ աւազակներուն յափշտակած ինչքն ու մթերքը վերցնելու համար: Յորեկուան լուսաւոր աստղը ծագելուն պէս՝ նորէն ետ դարձաւ: Սայլերով ու կառքերով ամէն բան գեղ տարուեցաւ: Նոյն ատեն Վարդ հրամայեց որ անօրէններուն բոյնին կրակ տրուի, որպէս զի նոյն վատանշան տեղոյն յիշատակը բոլորովին ջնջուի: Անմիջապէս հրամանն ի գործ դրուեցաւ ու ան գարշելի ապաստանարանը բոցերու մէջ պրելու սկսաւ, անոր բնակներն ալ բարկութեամբ ասն կործանման ու իրենց ողորմելի վիճակին վրայ կու լային: Ասոնք ըլլալէն ետեւ՝ Վարդ աւազակներն երեքական հոգի մեկտեղ կապել տալով եւ ասոնց ամենուն մէջտեղը զՇապուհ ձիու մը վրայ նստեցնելով, զամէնքը Արջնահաղ տանել տուաւ:

Հոն հասնելուն պէս՝ բոլոր աւարն ու գերիները գեղին գլխաւորին յանձնեց, եւ քիչ մը հանգչելէն ետեւ՝ անկից Երուանդունոյն տանելու նամակ մ'առնելով, ելաւ իր քաջերուն հետ մեկտեղ Մկնառինջ երթալու:



Բնութիւն:



ԶԱՐԴԱՐՈՒՆ սենեկի մը մէջ առանձին նստած՝ վառվռուն եւ ցաւոց ու աղետից խօսքերով Ներսէ հրուանդունին ու Գիսակ իրարու հետ կը խօսէին, եւ մէկը զմիւսը մխիթարել կը ջանար: Գիսակ զՎարդ իր սիրելի որդին տեսնելու եկած էր. բայց աստիկ ցաւոց շանթ մը սիրան իջաւ, երբ որ լսեց թէ պատանին Արջնահաղի մօտ եղած անտառներն արշաւած է: «Գիսակ, կ'ըսէր Երուանդունին, այսօր կամ վաղը Վարդ պէտք է որ գայ. արդէն շաբաթ մըն է որ զինքը խաւրեցի:

Միայն աս է հոգս ու անձկութիւնս, պատասխանեց Գիսակ, որ Վարդ դեռ կրակուբոց երիտասարդ մ'ըլլալով, այսպիսի վտանգաւոր յանձնարարութիւն մը կատարելու ատեն կրնայ երիտասարդական յանդրգնութեամբ ինք զինքը վտանգի մէջ դնել ու իր սիրուն հոտաւէտ ծաղիկը թարշամեցնել:

Ոչ երբեք, կրկնեց Ներսէ: Սիրելի բարեկամ, հոգ մ'ըներ. ես զքաջ Վարդ կուուայ խրկելէն յառաջ, աղէկ խրատեցի ու իմ ծերունի արի վաշտապետս իրեն ձեռնտու եւ օգնական տուի: Անձնեայ

ու քաջամարտիկ վաշտապետն անշուշտ զՎարդ մեզի ողջ ու յաղթող կը բերէ. ասոր վրայ բոլորովին ապահով եմ»:

Ներսէ՛հ այսպէս խօսելու ատեն՝ դրսէն փողն ու յաղթութեան աղաղակը կը հնչէր: «Ահաւասիկ կու գայ», գոչեց Երուանդունին, եւ սենեկէն դուրս վազելով՝ փրփրացող երկվարի մը վրայ յաղթող Վարդը տեսաւ, որուն դէմքին վրայ իր համանուն ծաղկին գոյնը նկարուած էր, ճակոտին վրայ ալ ուրախութեան դրոշմը կը նշմարուէր: Պատանին զՆերսէ՛հ եւ զԳիսակ յարգութեամբ ողջունելով, արագաշարժ թրուչնայ մը պէս երկվարէն վար թռաւ ու զարմանալով եւ արագհատութեամբ զԳիսակ՝ իր սիրելի մօրեղբայրը կը դիտէր:

«Վարդ, ըսաւ Երուանդունին, աւազակապետը բռնեցիր, կը բերես»:

«Հապա՛, պատասխանեց պատանին. զՇապուհ կապանքի զարնել տալէն ետեւ, ամուր տեղ մը դնել տուի, եւ ես ճամբայ ելայ, նամակ մ'ալ բերելով ձեզի»:

«Ուրեմն . . . հիմայ, կանչեց ուրախութեամբ Ներսէ՛հ, գնա, քու սիրելի հայրդ գրկէ, շատ ժամանակ է որ մէկզմէկ չէք տեսած. ես նամակը կարդալ եւ իմանալ կ'ուզեմ որ Որջնհաղ ինչ եղաւ»:

Վարդ մեծ ցնծութեամբ ու ներքին սիրով երկայն ատենէ վեր չտեսած դաստիարակն ու հայրը գրկեց համբուրեց: Իր յառաջուն մանկական սէրն ու ազնիւ բարբը պահած էր: Նոր կենաց ընթացքին ազդեցութիւններն ու փառաւորութիւնը զինքն ամենեւին չէին փոխած, բնութեան սքանչելի որդին չէին ապականած. իր սրտին պաղպաղուն ու յստակ հայելին՝ առանց պղտորութեան մնացած էր: Մանաւանդ թէ օրէ օր աւելի լուսաւոր ու պայծառ կ'երեւար, որովհետեւ ալ եկած էր դէպքը, որուն մէջ Վարդին զինքը պիտի ցուցնէր: Չէ թէ միայն առաքելութեան օրինակ, այլ հայրենասէր ու հլու որդւոյ եւ

առաջնորդի մ'ալ օրինակ կ'ըլլար Վարդ, ցուցնելով իր քաղցրութիւնն ու սքանչելի վարմունքն իր բոլոր ընկերացը, անսալով գլխաւորաց հրամաններուն, անոյ՞ ընելով իր պատուէրներն իրեն հպատակ եղողներուն:

«Ո՛հ, ազնիւ սիրելի Վարդ, ըսաւ Գիսակ լուսութիւնը կտրելով ու կաթոգին ձայնով մը, սրչափ երջանիկ եմ որ նորէն զքեզ կը տեսնեմ, շատ ատենէ ետեւ՝ դարձեալ զքեզ կրնամ գրկել. նոյն նկարը, մենութեան մէջ քովս եղած պատկերը կը նշմարեմ: Որդեակ, վրադ մեծ հոգ ունեցայ՝ երբ որ իմացայ թէ պատերազմի գացեր ես. բայց Աստուծոյ ձեռքը պահպանեց զքեզ, անվիշտ, անվնաս նորէն մեզի խաւրեց»:

«Այսպէս է, պատասխանեց Վարդ, ստուգիլ զիս Վերնոյն բազուկն ազատեց: Կատարեալ վարձք մ'ալ առի, սիրելի հայր, զձեզ հոս գտնելով: Ամէն օր, ամէն վայրկեան ձեր վրայ կը մտածեի, ձեր յիշատակն ու խրատները պաշտպանն ու անվիանդ վահան էին մտացս: Գործքս յաջողութեամբ գլուխ հանելով, Որջնհաղի գերփիչն ու սպականիչը կապած հոս կը բերեմ, որպէս զի ըստ իրաւանց դատուի ու իր պատիժն ընդունի»:

«Վրդեօք առանց հարկաւորութեան մարդու արին չթափեցիր, հարցուց Գիսակ»:

«Պարելի եղածին չափ ինայեցի, պատասխանեց կայտառ պատանին. բայց ան սորաւում նենգաւոր աւազակաց բոյնը պաշարելու ատեն, չկրցայ զօրքս արգելել որ չարաթոյն գնդին կէսը չմեռցնէ»:

«Իրաջութեամբ ու արութեամբ կատարեր ես գործքդ, կանչեց Երուանդունին, որն որ նամակը կարդացած լմնցուցած էր եւ Վարդայ խօսքերուն միտ կը գնէր: Վարդ, վրադ շատ գոհ եմ: Ամենեւին վնաս չէր ըլլար, թէ որ բոլոր արիւնուշտ չարագործները մեռցնել տայիր. թէպէտ եւ իրենց դժբախտ աստղը Որջնհաղ ալ պիտի մարի: . . . Բայց պատմէ ինձի, սիրելի Վարդ, զանոնք ինչպէս ձեռք ձգեցիր»:

Վարդ Տաւատարմութեամբ ու ճշգրտութեամբ իր արշաւանաց նկարը հանեց: Ներսէ՛՛հ ու Գիսակ աւնոր խօսքը մտադրութեամբ մտիկ կ'ընէին, եւ պատմութիւնը լմննայուն պէս՝ Երուանդունին քաջ երիտասարդին ուսը զարկաւ ու Գիսակին դառնալով, «Ստուգիւ, սիրելի բարեկամ, ըսաւ իրեն, շատ յարմար ու պատշաճ ատեն եկեր ես, աս մեր ուրախութեան դուն ալ մասնակից ըլլալու: Աս գործքին համար Վարդայ վարձք ու փոխարէն տալ չեմ՝ մոռնար. բայց հիմակ դացէք դուք իրարու հետ խօսեցէք: Վարդ, պահապաններուն զուրցէ որ աւազակապետան ինծի բերեն, որպէս զի իր դատաստանը տեսնեմ»,:

Ներսէ՛՛հ իր սենեկին մէջ իր մտաց խռովութեանէն ասդին անդին կ'երթար կու գար, եւ իր խորհրդականներէն մէկուն հրաման տալէն ետեւ, որ աւազակին դատը մտիկ ընելու պատրաստուի, ինք աթոռի մը վրայ նստաւ:

Երուանդունւոյն գոյնն ու զուարթութիւնը դէմքէն նուազած, մթին ու զարհուրելի արտեւանունքն եւ ոչ բանալ կ'ուզէր՝ կարծես թէ ահագնութեան պատկեր մը, անհաշտ դատաւորի կերպարանքն առած՝ գահի մը վրայ նստած էր ու յանգաւորին գալուն կը սպասէր: Քանի մը վայրկեանէ ետեւ՝ շղթայի հնչելն մ'որոտաց ու մէկէնիմէկ երկու զինուորաց մէջտեղ անօրէն Շապուհ Ներսէ՛՛հին առջեւն ելաւ: Այլագունած, մահուան նկար մ'եղած, բայց բարկութեան ալ կատղած ու մաղերը սնկուած էին Երուանդունւոյն առջեւ եկած ատեն, սակայն իր մուկնունութիւնը հեղութեան կերպարանք առաւ: Շապուհ յտաջմուան կատղութիւնն ու խիստ յամառութիւնն անբերելի թեղած էին, մահուան երկիւզ ու զեղջ մը՝ անոր դէմքը նկարուած էին, այնպէս որ զինքը տեսնողներն ի գութ կը շարժէին: Ներսէ՛՛հ առջեւ կեցող դիակին երկայն ատեն նայեցաւ եւ վերջապէս քննութիւնը սկսաւ: Հարցում՝ հարցման յաջորդեց, բիւր քննութիւններ քննութեանց ետեւէն եկան. Շա-

պուհ ալ մեղմ ձայնով ու երկիւղազին եւ առանց շեջանի ու պատիպատ խօսքերու պատասխան տուաւ եւ բոլոր իր յանցանքները խոստովանեցաւ: Խօսակցութիւնը մէկ ժամէն աւելի տեւեց. նոյն ատեն Երուանդունւոյն քով մուտ գտնել ոչ սք կրնար: Վերջապէս քննութեան վերջն եկաւ եւ ոճրագործը դարձեալ իր բանտը տարուեցաւ, ուր յուսահատութեամբ ծանր ու դժնդակ կապանաց տակ կը հեծէր եւ կը հառաչէր ողորմելին:

Շապուհ իշխանին խոցը թողուց չթողուց, Ներսէ՛՛հ զԳիսակ կանչել տուաւ: Գիսակ զէրուանդունին սաստիկ բարկութեան մէջ գտաւ, անոր դէմքը զարհուրելի տեսաւ: «Բարեկամ, ըսաւ Ներսէ՛՛հ, զքեզ կանչել ատի, որպէս զի առած նորանոր ծանօթութիւններս քեզի ալ հաղորդեմ: Միտ դիր զարմանալի բանի մը. Շապուհ աւազակապետը զորն որ քիչ մ'առաջ առջեւս դատաստանի կանչեցի եւ ճիշդ քննեցի, աս Շապուհն ու քու Վարագդ, Երախանի Մամիկոնեանց բերդը կործանող նենգաւորը մի եւ նոյն մարդն է եղեր, քու տունդ այրել տուող, զքեզ աղետից մէջ ձգող Վարագն աս Շապուհն է եղեր: Անոր ճակատին վրայ դես քեզմէ առած վերքը հաստատուն կը կենայ. զլուխը ճերմակ մազեր, բոլոր անդամները՝ երկիւզ ու զարհուրանք պատած են. իր յանցանքներուն բազմութիւնն ու անոնց խոստովանութիւնն իր հին գազանութիւնը ճնշած, յամառութիւնը ջնջած կ'երեւան:

«Ո՛հ, գոչեց Գիսակ նոյն ատեն, ան, աստեղաց ու ամպոց վարիչ Աստուած, սրչափ սքանչելի են քու միջոցներդ: Քու Չեռքը զարագործն ո՛ր եւ իցէ տեղէն կը գտնէ կը հանէ, թէպէտ երկրէ երկիր փակչի, թէպէտ կարծր երկրիս ծոցն իջնայ, կամ անանկ անդունդներ գահափոխի, որոնց բերանը գոցելու համար՝ ահագին ժայռեր թաւալած եւ մեծամեծ լեռներ ինկած ըլլան եւ նոյն ոճրագործն ալ ծածկած: Հգօր բազուկդ ամէն գաղտնի տեղէն անօրէնը դուրս կը

Հանէ ու կամքդ զինքը կը դատէ: Ան փափուկ ու մատաղ մանուկը, որն որ երբեմն ահագին դիշերուան մը սպառնալիքներէն ու հրոյ մէջ եղող բերդէն կըրցաւ ազատիլ ու փախչիլ, հիմայ մեծնալով ու զօրաւոր երիտասարդութեան հասակի մը հասնելով՝ զինքն երկրէս ջնջել ուզող արիւնկալը շղթայի կապած՝ դատաւորի առջեւ բերաւ: Ան մարդը՝ որն որ իմ ամենագեղեցիկ յոյսս իր չարութեան թունովը թունաւորեց, ան՝ զորն որ ես իմ ձեռօքս զարկի ու կը կարծէի թէ Երախանի բերդին տակ թաղուած է, զեռ կենդանի մնացեր եւ յանցանք յանցանքի վրայ կ'աւելցրնէ եղեր. մինչեւ որ արդարութեան սուրն անոր կենաց մանուած թելը կարէ:

«Բայց կ'աղաչեմ», սիրելի Ներսէ՛հ, պատմէ ինծի ինչպէս Վարազ բերդին բոցերուն ու աւերակներուն տակէն ազատելով՝ աւազակութեան սկիզբը բեր է:

«Ինչպէս ինք անձամբ խոստովանեցաւ, պատասխանեց Երուանդունին, քեզմէ կարեւեր վերաւորուելով՝ գաղանի պէս գետինն ինկեր թաւալեր է: Նորէն խելքը գլուխն եկած ատեն՝ ինք զինքը պզտի խցի մը մէջ, գլուխը կապուած եւ սաստիկ ցաւերով պատած գտեր է: Նոյն սենեկին մէջ գտնուած բաները խիստ նորաբանչ երեւցեր են իրեն եւ կարծեր է թէ կ'երազէ: Յանկարծ իր աչքին առջեւ զրահ, նիզակ ու այլեւայլ զէնքեր եւ մարդու ոսկրներ ելեր ու դարձեալ գլխոյն պողոյսները սկսեր են: Վարազ այսպիսի շփոթութեան մէջ քիչ մը կենալէն ետեւ՝ նոյն միայնակ սենեկին դուռը բացուելով՝ իր անկողնոյն քով անձանօթ մարդ մը մտեցեր եւ զինքը՝ կիսամահ պառկող հիւանդը թմբբութենէն արթնցած տեսնելով, շատ ուրախացեր է:

«Վարազ, պուացեր է ներս մտնողը, հոս ինչպէս եկար, հիմակ ինչ վիճակի մէջ ես: Ինք պատասխաներ է թէ ոչ յիշել եւ ոչ գիտնալ կրնայ, որովհետեւ ան տեղը բերուելու ատեն՝ խելքը գլուխը

չէր: Շապուհ իր վերքին ցաւերէն քիչ մը հանգչելէն ետեւ՝ Պարսից եւ ուրացեալ Հայ զօրաց բաժին մը զինքն Որջնահողի քովերն եղած անտառները բերեր են, ուր որ Գայլ անուամբ մէկու մը գեղերուն զօրութեամբն առողջացեր ու նոյն Գայլուն նմ ըլլայն եւ ինչ գործքի մէջ գտնուիլը շուտ իմացեր է:

«Գայլ նոյն տեղերուն յանգուզն ու պատասուող գաղանն ու աւազակն էր: Գայլուն բնակարանն երթալ եւ անկից նորէն ետ դառնալ մէկը կարող եղած չէր. ահագին ու կատաղի շանագլխոյն գէմքը տեսնել ոչ զք կրցած էր: Մինակ մթին գիշերները, երբ որ սեւաթոյր ու մուսլ ամպեր երկինքն ու երկիրը կը պատէին, Գայլ իր բնակութենէն դուրս կը յարձակեր յափշտակելու համար, պատասուող ու քանասարիկ գայլի մը պէս ոչխարաց եւ ուրիշ բանի վրայ կը դիմեր: Վարազ Գայլուն արուեստին մէջ աղէկ կրթուեցաւ. վասն անագորոյն գործքերուն մէջ անուշութիւն կը զգար. երկու գաղան՝ չորս կողմը մահ ու աւեր կը պատճառէին: Վարազ իր վարպետէն աւելի ժպիրհ ու յանդուզն ըլլալով եւ անօրէնութեան մէջ ալ յաջողակ, առանց Գայլուն գիտութեան՝ ստրկաց ու սրիկայից գունդ մը կազմեց: Երբ որ Գայլ Վարազին ինքնիշխանութեան բաղձանքն իմացաւ ու զինքը կշտամբեց, Վարազ սուրը քաշելով իրմէ տկար գաղանը գետինը կործանեց:

«Այսպէս Վարազ զինքն ազատողը մեռցրնէլէն ետեւ, քիչ ժամանակուան մէջ զարհուրելի խմբի մը գլուխ եղած էր, որուն հիմայ Վարդ՝ մեր առիւծաւիտ ու քաջարի բմբիշը յաղթեց: Աս է, սիրելի Գիսակ, քու ահագին թշնամուրդ անագորոյն ու անօրէն կեանքը, զորն որ վաղը ժամը տասնին իր ատելի սճրագոծութեանց համար պիտի կորնցրնէն»:

Գիսակ աս պատմութիւնը լսելով՝ խորին մտածմանց մէջ ինկաւ ու ստուած պաղած մնաց. սակայն իր սրտին մէջ զեղուող ազնիւ խորհուրդները ծոցէն ելան՝ երեսին վրայ նկարուեցան: Վերջապէս աշուրները

վեր վերցուց ու հեղեկ եւ քաղցրաբան խօսքերով այսպէս բաւ. «Միրելի՛ Ներսէ՛հ, ինձի շնորհք մը կ'ընես»:


«Կեռ խնդրուածքը բերնէդ չելած, պատասխանեց Երուանդունին, շնորհքն բրած եմ. միայն Շապհոյ կեանքը շնորհելու խօսք մ'ըներ, ուրիշ ինչ որ կը բաղձամ՝ զրուցէ»:

— «Խնդրածս Շապհոյ կեանքը չէ. թող աւագակապեալ ու ապականիչ մը օրինաց տակն ինայ. զինքը մահուրնէ ազատելու բաղձանք չունիմ: Ինք անխնայ ու մոլեգնութեամբ երկրիս վրայ նենգաւոր գործքեր բրաւ, իր զոհերուն արիւնք երկինք կը բողբփէն. անոր աս երկրիս վրայ ունենալու վարձքը մահն է: Աւղածս՝ զինքը տեսնել, անոր հետ քանի մը խօսք խօսիլ է. իր վերջին ու դժուարին վայրկեանէն յառաջ՝ Քրիստոսի կրօնից շունչը դիւրաբեկ ճառագայթներու նման՝ անոր խտացած սրտին մէջ թափանցել տալ է իղձս, եւ ասոր համար քեզմէ շնորհք կը խնդրեմ: Այսուհետեւ ան ողորմելին ինձի ասելի չէ. հին ցաւերս ու բիւրաւոր աղէտքս շատնց սրտէս գացած հեռացած են. ահագին եւ վնասակար թշնամեցոյ առջեւ՝ հանդարտ ու հեզ կ'ուզեմ երեւալ, զինքն այնպիսի բաժանման մը կետէն յառաջ միութարեւլ ու զօրացընել կը տենչամ: Ծեբունի, տկար ու ապիկար մարդ մըն է, որն որ բռնական մահուամբ պիտի մեռնի. դժբախտ մը՝ որն որ անշուշտ Աստուծոյ դատաստանէն հիմայ կը սկսի դողալ եւ իր գործքերուն վրայ համար տայր յիշատակէն անտարակոյս հիմայ սարսելու սկսած է. . . : Լաւ ու առաքինի մարդ մը կարծես թէ քաղցր քնոյ մէջ կը մանէ, երբ որ իր անկողնոյն չորս կողմն իր սիրելիները պսակ բռնրած՝ անոր կենաց վերջին վայրկեանին կը սպասեն: Ինք՝ ձեռուրներն Երկինք վերցընելով ու հոս մնացող լացողներուն վրայ անկից երկնաւոր օրհնութիւն մը խնդրելով՝ շունչն ու հոգին կը սկսի տալ: Երկնից խաղաղութիւնն անոնց ու իր թարշամած կենաց վրայ

կու գայ կը հանգչի. իր հոգին երկնաւոր դարպասը կը սրանայ, իսկ մարմինը խաղաղ դերեզմանը կը մանէ ու սիրոյ յաւիտենական արցունքներով կը թրջի: Բայց կապանաց մէջ ու յանցաւոր եղող մարդ մը՝ սրտին վրայ աշխարհք մը կը կրէ, երեւակայութեան ահագին ստուերներէն ու պատկերէն կը շարչարուի. աչքին առջեւ մահն ու կառափման տեղն ունենալու ատեն, կրօնի միութարութեան հարկաւորութիւնը տեսնելու տեղ՝ կրնայ յուսահատիլ եւ իր մահկանացու մարմնովը մէկտեղ անմահ հոգին ալ կորսնցընել: Շապհոյ նկարագիրն ու վիճակն ալ աս չէ՛ մի: Միրելի՛ Ներսէ՛հ, այսպիսի ողորմելոյ մը օգնական ու ձեռնտու բլլալու համար է խնդիրս»:

Ներսէ՛հ իր ծեբունի բարեկամին խօսքերէն խիստ շարժեցաւ ու սիրով եւ արգահատութեամբ ձեռքն անոր երկնցընելով, «Բարեկամ, գոչեց, փառաւոր ու գեղեցիկ բան ստացեր ես դուն աս աշխարհքիս մէջ: Երուանդունին՝ Պարսիկները գողացուց ու քաջութեան պսակով մը իր գլուխը զարդարեց. իսկ դուն հաստատուն ու զօրաւոր հաւատքովդ եւ զարմանալի վեհանձնութեամբդ երկինքն ուրիշներուն հետ ալ հաշտեցընել կ'ուզես, եւ շատնց արդէն քու գլուխդ հանգստաւեալ խաղաղութեան վարդերով զարդարել տուած ես: Գնա, սիրելի. առ քեզ հետ քահանայ մ'ալ եւ գացեք ան դժբախտին քով. կ'ուշացընեմ մէկ երկու ժամ ալ անոր մեռնելու ատենը, որպէս զի գոնէ մէկալ աշխարհքն ապրի ողորմելին»:

Ներսէ՛հ աս խօսքերէն ետեւ՝ աճապարեց դուրս ելաւ իր սրտին ցաւերը շայտնելու համար. Գիսակ ալ Վարդայ քով զնաց ու անոր հետ մէկտեղ խաչելութեան մ'առջեւ իյնալով՝ իր ընելու փորձին համար Երկնքն զօրութիւն կը խնդրէր:



տարակոյս երկրիս վրայ ինծի համար արգահատու-
թիւն չկայ. երկինքն ալ ինծի տալու գուժ չունի...
Ախ, դժնդակ բախտ. երկիւղ, զարհուրանք, դացեք,
հեռացեք ինծմէ,»:

Իսկոյ չէ. դեռ դահճին ժամանակն եկած չէր.
եկողը դահիճը չէր... բարձր, գեղեցկահասակ Գի-
սակն էր, որն որ ձեռքը լուսատու ջահ մը բռնած՝
եկաւ աւազակապետին առջեւը կեցաւ: Աւրազ շա-
ցած աչուրներով եկողին երեսը նայելուն պէս՝ կար-
ծես թէ երկնքէ իջող շանթէ մը զարնուելով, ինկաւ
գետինը կործանեցաւ: Գոռաց, որոտաց դազանը, բո-
լոր բանար թնդացուց. «Այ, գոչեց, մեռեալները կը
յառնեն, ընդդայք, դիւաց դնդերը զիս կը պաշա-
րեն...: Ախ, երկինք, շնորհք... շնորհք: Ա՛ղա-
չեմ, կը գղջամ... ինայե կամ հեռացիր ինծմէ,
զարհուրելի ստուեր. ա՛հ, սիրտս կը պատռի...»:

Աւրազ սաստիկ սարսափած՝ իր աչքը ստուեր
կարծած կերպարանքին վրայէն դարձրնելով ու երեսը
ծածկելով՝ անոր քովէն փախչել կ'ուզէր: Ասկայն
Գիսակ խաղաղութեան հրեշտակի մը պէս անոր մո-
տեցաւ ու սիրտը թափոնցող ձայնով մը պոսպէս պո-
ռաց. «Ո՛չ մահ էւ ո՛չ սուր կը բերեմ, բարեկամ. թէ
որ երկնաւոր շնորհքն ընդունիս կամ չարգելես, քու
զղջացող սրտիդ մխիթարութիւն ու հանգիստ կը բե-
րեմ: Անդունդներէն ելած ուրուական կամ մեռեալ
առջեւդ եկած չէ, եկողը գրեզ նեղելու համար եկած
չէ. գերեզմանները գոց են, անոնցմէ դուրս ելլող
չկայ: Երեսս նայէ, Աւրազ, մի վախնար. ան մարդը,
որուն կենաց բաժակը դուն դառն լեղով խառնեցիր
ու մատուռակեցիր, ան է քեզի եկողը. ես, Աւրազ,
կենանքդ կնքելու ատենդ՝ քեզի հետ կը հաշտուիմ:

Գիսակին աս քիչ խօսքերը զարմանալի ու ժգը-
նութեամբ մը վշտակիր ու կիսամեռ դիակին զօրու-
թիւն սուին: Ծերունի ոճրագործը կամաց կամաց իր
ողորմելի վիճակէն դուրս ելլելով՝ գնաց հաշտուիլ
ուզող Գիսակին ոտքն ինկաւ եւ անոր ձեռուրները

Գ Լ ՈՒ Խ Ժ Գ .

Չէղջ ու իսկոյ-իկն:

ՍՈՐԵԲԿԵԲԱՅ ու ընդարձակ բանտի մը մէջ, կա-
մարներով եւ մեծամեծ սիւներու վրայ շինուած
չէնքի մը տակ, ուր որ միայն դողդոջուն ու
տկար լոյս մը կար, ծեր աւազակապետը ծանր շղթա-
ներու բեռան տակ ճնշուած՝ ահուգողով կը նստէր:
Հոն պղտիկ լուսամուտ երգերէն մտած՝ միայն օդոյ
անյայտ շչիւն մը կը լսուէր եւ ան ամայի գերեզմա-
նատեղւոյն մշտնջենաւոր լուսիւնը կը կարէր: Գրե-
թէ անշարժ անկենդան կեցած էր Աւրազ, միայն մեղմ
դողդոջալու շարժում ու քստմունք մը կը տեսնուէր
վրան. քարերուն եւ գետնին դուրս տուած ցուրտ ու
սառուցեալ շունչը՝ անոր բոլոր սոկրները կը թա-
փանցէր:

Աւրազ այսպէս գունատ ու կիսամահ երկիր
տարածուած ատեն, յանկարծ բանտին դուռը կ'ոնչեց
ու բացուեցաւ: Աւազակապետն անմիջապէս ոտք ելաւ
եւ իր բուրտիքը զարհուրելի նայուածք մը ձգելով՝
հառաչեց ու «Պու գան, գոչեց: Ո՛հ, ողորմելի,
թշուառական, ոճրագործ մարդ, կ'ըսէր ինք իրեն Աւ-
րազ. անշուշտ աս խօսքերը քեզի պիտի զրուցուին: Ան-

քաշեց իր աչքին ու բերնին տարաւ: «Ախ, սքանչելի, բարեւիրտ իշխան, պուսայ աւազակապետը, երանի թէ ան զարհուրելի գիշերը ձեր սայրասուր սուրը զիս գետինը կործանէր. գուցէ, գուցէ ան ատեն Ամենագորին անհուն շնորհքը վրաս կու գար, զիս զեղի կը բերէր: Սակայն հիմակ, այնչափ ժամանակուան չարագործի մը ալ շնորհք, զթու թիւն չկայ: Քիչ ատենէն ետեւ մահուանս վճիռը պիտի հնչէ. անոր զարհուրանքն արդէն զիս պատած է. դժբախտներուն գաւառին մէջ շնորհք ողորմութիւն ամենեւին չկայ. քնձի պէս վատանշան չարագործի մը թողութիւն երբեք չկայ:

«Մի յուսահատիր, դժբախտ մարդ, պատասխանեց Գիսակ, Աստուծոյ ողորմութիւնն անչափ է: Ա՛ր նայէ, տես Անոր հզօր բազուկը, մտեցիր կամ թող որ իր ձեռքը քու գլուխդ տարածէ, եւ ան ատեն կ'ազատէ, երանելեաց երկիրը կը տանի զքեզ: Ստոյգ է, աս անցաւոր ընթացքդ շատ գեշ անցուցիր, բազմապատիկ յանցանքներդ երկինք կը բողբեն. բայց թէ որ ճշմարտութեամբ զղջալու ըլլաս, երկնաւոր Արդւոյն արիւնը քեզի ալ թողութիւն կու տայ, բոլոր ոճիրներդ կը ջնջէ: Աչքդ Աստուծոյ վերցուր, թեթեւցուր ծանրացած խիղճդ ուղիդ խոստովանութեամբ մը. անձնական արիութեամբ ու քաջութեամբ դժբախտութիւնը վրայէդ մերժէ»:

Ա արագին աչուրներն արցունքներով լեցուն ըլլալով՝ Գիսակին չէր կրնար նայիլ, սակայն անոր ամէն մէկ խօսքին միտ կը դնէր. նոյն ատեն աւազակապետին սիրտը՝ ան մթին կապանաց բանտէն մինչեւ երկինք բարձրացաւ, իր հոգին՝ որն որ շատ ժամանակ դառն կապանաց մէջ կապուած կաշկանդուած էր, բարձրագոյն խորհուրդներու մտեցաւ: Սկսաւ Աստուծոյ ողորմութեան վրայ յոյս ունենալ, որով եւ մտաւոր մահուրէն ալ յաւաքուան չափ սաստիկ վախ չէր զգար: Եկէք, ըսաւ քահանային, որն որ Գիսակայ հետ եկած էր, եկէք երկնից ճշմարիտ պատգամաբեր,

զեղէք դառնացեալ սրտիս վրայ առատ մխիթարութիւն, պատրաստեցէք զիս վերջին ու հեռաւոր ճամբորդութեանս»:

Գիսակ ու քահանան Արագին քովէն երկայն ատեն չբաժնուեցան. ամէն մէկ վայրկեան աղօթքով ու մխիթարական խօսքերով կ'անցընէին, եւ անանցմով ապաշաւող սրտին խաղաղութիւնը կ'աւելնար: Ա երջապէս ուրախութեամբ տեսան աս նենգաւոր չարագործին զարմանալի դարձը:

Արջալուսոյ ճառագայթները բանալը դեռ նոր թափանցած ատեն՝ մահապարտն ան խիստ ու բռնական մահուան պատրաստ էր եւ կրօնին սուրբ խորհուրդներովն ամրացած: Իր գէմքէն դառնութեան ու դաժանութեան նկարագիրն աներեւոյթ եղած եւ անոր տեղ հանգիստն ու սրտի խաղաղութիւնն եկած բնակութիւն առած էին:

Մահուան ժամը գալուն պէս՝ արդարութեան սպասաւորները բանտ մտան: Արագ իսկզբան սուկաց, բայց շուտ խելքը գլուխը գալով՝ սպասաւորներուն ետեւէն գնաց, իրեն հետ մէկտեղ Գիսակն ու քահանան ալ: Սոսկալի տեղը հանելէն ետեւ, Աւարաղ նորէն իր հոգին Աստուծոյ ձեռքը յանձնելու ատեն՝ իջաւ մէկէնիմէկ ան զարհուրելի հարուածը, ինկաւ ողորմելին, արդարութիւնն ալ հաշտուեցաւ:

Ասոնք ըլլալու ատեն, Աարդ տխուր տրտում առանձին իր խուցը նստած՝ աւազակապետին վիճակը կը մտածէր, ինք զինքը նեղութենէ ազատելու գիւտ կը փնտռէր: Իր խորհուրդները թռչնոց արշաւանքի մը նման՝ առդին անդին կը թռչնէին. անհանգիստ ու անհանդարտ, ծովուն հայելոյն վրայ վայրապար հանդէլու տեղ կը փնտռէին. նոյն ատեն յանկարծ աննոց դիմացը Գիսակ ելաւ նէ, Աարդ սարսափեցաւ մնաց: Բայց իրօք Գիսակ իր սենեակն եկած էր: «Միրելի Աարդ, կանչեց Գիսակ, ի՛նչ, ես քու հաւատարիմ դաստիարակդ, քու երկրորդ հայրդ չե՞մ մի, ինչու կը վախնաս:

«Գողթիւն շնորհեցէք, պատասխանեց պատանին. դժբախտ աւազակապետին բախտը կը մտածէի, որուն մահուան դուք, սիրելի Տայր, ներկայ էիք. անոր մահը զիս սաստիկ ցաւոյ մէջ խոթեց: Չինքն ես բերի հոս, անոր համար խորհուրդներս զիս կը շարշարեն ու անհանգիստ կ'ընեն: Արդեօք ողորմելոյն աս բռնական մահուան պատճառն ես չեղայ: Ահագին ծանրաբեռն բեռ մը սիրտս կը ճնշէ. Շապհոյ վրայ լալ կ'ուզէի, թէպէտ ան ալ յայտնի է որ նշանաւոր սփրազործ մըն է:

«Նանդարտ, սրդեակ, մխիթարուէ, գոչեց ուրախութեամբ Գիսակ, եւ Շապհոյն պատմութիւնն իրեն պատմելէն ետեւ, ուրախացիր, Ասրդ, ըսաւ, որովհետեւ Աարազ բարի քրիստոնէի մը պէս մեռաւ: Գուն իր արիւնխառն մահուան ամենեւին պատճառ չես. Երուանդունոյն հրամանը կատարեցիր, երկիրը շատ ծանր անձկութիւններէ ազատեցիր: Արիւն թափողին արիւնն ալ, կ'ըսէ Ս. Գիրքը, պիտի թափուի: Որչափ հողոյ արիւն թափեց Աարազ: . . . Ես բոլոր գիշեր իր քովն էի. անոր անդամանդեայ խիստ սիրտը՝ աստուածային լուսոյն չկրցաւ դէմ դնել ու լուսաւորուեցաւ: Ելաւ մթին տարտարոսէն եւ զղջացած մեղաւորի մը պէս հողուով վեր թռաւ: Մտածէ, սիրելի Աարդ, թէ որ Աարազ չբռնուէր, կրնար բլալ որ անդեղջ մահուամբ, լեռան մ'անդունդի մէջ դահա՛վիժելով՝ մեռնէր, երբ արիւնխաթաթախ ձեռուրները գեռ լուացած չէր: Ան ատեն իր եղբունաւոր գործակեցները զինքը կը պաշարէին կամ թէ գոցէ ալ զինքը թող տայով կը փախչէին. ան ժամանակ ստուգիւ ողորմելի կ'ըլլար. մարդկան օգնութիւնն ու Աստուծոյ շնորհքը չունենալով՝ հողուով ու մարմնով ալ կը կորսուէր: Ասրդ, ինչ կ'ըսես, ան վիճակը թէ աս աղէկ է:

«Ա՛ս, աս, պոռաց Աարդ, եւ աչքէն քանի մը արգահատութեան ու ուրախութեան փալփիլուն կաթիլ թափեց. քիչ մը ետքը խօսքը շարունակելով՝

Հայր, ըսաւ, դուք հրեշտակի մը պէս անոր կենաց վերջին ժամերը քաղցրացուցիք. զինքը բիւրաւոր կապանքներէ ու ծանր շղթաներէ ազատեցիք: Թող տուէք, սիրելի Տայր, որ ես ալ ձեր գիրկը դալով՝ ցաւերէս ազատիմ ու ինծի համար ալ ինդրեցէք երկնքէն որ ձեզի պէս ըլլամ, հաւատքս ու յոյսս երբէք չկորսընցընեմ, մանաւանդ կենացս վերջին ժամերը,:

Գիսակ իր քեռորդին գրկեց ու քիչ մը լուռ կենալէն ետեւ, «Ո՛հ, սրդեակ, ըսաւ, արդեօք վերջին տեսութիւնս է աս. քեզի, սիրելի Աարդ, յետին հրաժարական ողջնս ինչպէս պիտի տամ. . . »: Չբուցեց ու Աարդայ քովէն բաժնուեցաւ գնաց. սակայն Երուանդունոյն ապարանքէն չհեռացաւ:



Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

Տիրութիւնն ու անշարունակ:

ՎԱՐԳ ԻՆՔ զԻՆՔՆ ԵՐՋԱՆԻԿ ԱՆՎԱԾ ԱՄԵՆ, ԳԻՍԱ-
 ԿԻՆ ԱՆՏՈՒԹԵԱՄԲԵՐ ԽԱՂԱՂ ՈՒ ՀԱՆՁԻՍԱՒ ԿԱՐ-
 ԾԱԾ ԺԱՄԱՆԱԿ, մէկէն անոր վերջին խօսքերն
 ու հեռանալ երթալ՝ կրկին սլաքներու պէս
 սիրաբ մտան ու զինքը խոցեցին: Երբ որ աս երկու
 ցաւերը պատանուոյն խորքը թափանցեցին, զարթեալ
 անոր ծոցին մէջ ուրիշ երրորդ մ'ալ աւելի սաստիկ,
 որն որ շատոնց զինքը կը նեղէր: Վարդ քանի մ'որ
 յառաջ Վահան եղբօրը վրայ Ներսէ՛հէն եւ ուրիշնե-
 րէն ալ երկու երեք խօսք լսած էր. հիմակ ան խօս-
 քերուն նկարը գոյնգոյն կերպարանաց մէջ իր ե-
 րեւակայութեան առջև դալով՝ իր ջերմ՝ արիւնն ալ
 աւելի բորբոքեցին:

Ե ատոնց արդէն գիշերն իր խորին մթութեան
 մէջ թաթխուած էր եւ Վարդ դեռ գեղեցիկ աչուը-
 ները չէր գոցած, հանգիստ ու հանդարտութիւն կը
 փնտռէր եւ ծանր ու քնոյ կարօտ գլուխը դեռ բարձի
 վրայ դրած չէր: Գիշերուան զով հովը հեզիկ կը շն-
 չէր, միայն տերեւոց սօսաւիւնը կ'աւրեր բնութեան

վրայ տիրող խորունկ լուսթիւնը եւ անով կարծես
 թէ Վարդայ սրտին զարկն ալ կը խռովէր: Մութ
 խցին մէջ քնանալ ուղած ատեն՝ երեւակայութեան
 առջև ցնորական տեսիլներ, գիշերաշըջիկ բիւր կեր-
 պարանքներ կը տեսնէր. երբեմն ալ աչուըներն ասդին
 անդին դարձուցած ժամանակ, թեթեւութիւն մնայ
 մը նորէն ան ամէն ցնորից վրայ իր տօգոյն քողը կը
 ձգէր:

ՎԵՐՋԱՎԵՍ ՎԱՐԴ քուն մտաւ. բայց բռնու-
 թեամբ տուած շունչը, եւ դէմքը՝ որն որ դադարնի հա-
 ուդողէ մը այլադունած ու թարշամած կ'երեւար,
 կը ցուցնէին թէ զարհուրելի երազներ իր հոգին կը
 շարչարեն: Մերթ կը հեծէր ու կ'ողբար, երբեմն ա-
 շուըները կը բանար եւ դարձեալ թեթեւ քնոյ մէջ
 կ'ընկղմէր եւ նոյն քնոյ քողին տակ երազն ալ ան-
 դադար իր խաղը կը խաղար: Նորէն արթնցաւ Վարդ
 ու տեսաւ որ օրը գիշերական մթութեան հետ կը
 մրցի. եւ քիչ մը ետքը հրոյ ծովէ մը երկրիս վրայ
 անթիւ անհամար ոսկեթեւ ճառագայթներ տարա-
 ծուելով, արեւելակողման երկինքը շեկակարմիր ներ-
 կելով եւ երկրիս մշուշն ու ամպոյից խաւարն ալ
 փարատելով, բոլոր աշխարհքը լուսաւորեցին ու անոր
 կենդանութիւն տուին:

ՎԱՐԴ անկողնէն ելլելուն պէս՝ Երուանդու-
 նուոյն հրամանը զինքն իրեն կանչելով, ելաւ հոն վա-
 զեց: Գիսակ նոյն սենեկին մէջ՝ երբ որ իր սիրելին
 տեսաւ, ելաւ դրկեց ու անով սրտին խռովութիւնը
 փոփոխակի թեթեւնալու կամ սաստիկանալու հակա-
 ոակ նշաններ կու տար:

Ներսէ՛հ իր աթոռը նստած՝ տրտում տխուր
 կերպարանաց մէջ էր, տօգունած դէմքը մեծ ան-
 հանգստութիւն կը ցուցնէր եւ իր մթին տեսու-
 թիւնն ասդին անդին թափառեցնելու ատեն, աւելի
 եւս կը պզտորէր ու աչուըները սեւեռելու տեղ չէր
 գտնէր. մանաւանդ թէ առանց շարժման՝ գլուխը
 կուրծքին վրայ յեցուցած ու աչքն ալ դետինը խո-

նարհեցուցած էր: Աս դրից մէջ երկայն կենալէն ետեւ. «Ո՛հ, Աստուած, գոչեց մեկէնիմէկ, գուցէ . . . գուցէ . . . բայց չէ, չեմ կարծեր, աս զարհուրելի մտածմունքներէս կամ աչքիս առջեւ եկած տեսիլքներէն երբեք պիտի չազատիմ», : Ներսէ՛՛հ ինք իրեն հազարումէկ հարցումներ ընելէն եւ անոնց լուծումը տալ չկրնալէն ետքը, աչքը բացաւ՝ առջեւը դճիտակ եւ զԱւարդ գրկախառնութեան մէջ տեսաւ: Գեղեցիկ հրեշտակ մը, խաղաղութեան նկարին գիրին ինկած, տխուր ու աղմկած կերպարանաց քով մտանալու համար՝ անոր հանդարտելուն կը սպասեր:

«Ղեկուր, սիրելի՛ Աւարդ, եկուր, ըսաւ Երուանդունին քաղցր ձայնով, մտեցիր գրկեմ գքեզ. եւ որովհետեւ ակ ճար չկայ, վերջին հրաժարական ողջոյնս տամ: Աստուած գիտէ, որդեակ, որ ես այսուհետեւ սրջափ կ'ապրիմ. սպիտակալի զլուխս կը գուշակէ թէ քիչ է կեանքս: Ուրեմն մտիկ բռէ աս վերջին խօսքերս ու կոտակ բլլան քեզի: Գիտես արդէն որ Ահհան եղբայրդ՝ իր վրայ եղած զոպարտութիւններէն ու ամբաստանութիւններէն ինք զինքն ազատելու համար՝ ելաւ Պարսից աշխարհքը, Պերոզ թագաւորին գնաց ու իր հաւատարմութիւնն այլեւայլ նշաններով ցուցուց: Սակայն նշաններէն մէկն ալ . . . ո՛հ . . . ողորմելի կեանք. դժբանստ մարդ . . . երկիւղն ու տկարութիւնը զինքն ուրացող բոլին . . . այսու ամենայնիւ թագաւորը զինքն ազատ թող չխտար. պատանդ կ'ուզէ . . . : Աւարդ, գքեզ . . . որդեակ, անոր ազատութեան ու հաւատարմութեան տեղ . . . գքեզ պատանդ կը պահանջէ»:

Աւարդ՝ եղբօրն ուրացութիւնն ու մայրն եւ եղբարքը տեսնելու յապաղման առիթը լսելով՝ խոր արամութեան անդունդ մը գահավիժեցաւ: Բայց անմիջապէս նորէն ոգի ու շունչ առաւ, վստահութիւնն Աստուծոյ վրայ զնելով՝ վեր նայեցաւ ու այսպէս խօսեցաւ: «Միտով Պարսկաստան ու աշխարհքիս ծայրը կ'երթամ, միայն թէ եղբայրս ազատի: Ա՛հ. ուր է,

արաթուիչ արծուի պէս թեւեր ունենայի՛ նէ, հիմակ անմիջապէս հոն կը գանուէի: Սիրելի, սքանչելի եղբօրս կեանքը, անոր աս ու յաւիտենական կեանքը պահելու համար, իմ լոյսս կու տամ: Գիտեմ որ անոր ուրացութիւնն ապիրատ ու զարհուրելի գործք մըն է. սակայն աս ալ գիտեմ որ ժամանակաւոր ու տկարութեան գործք մըն է: Թող տուէք, սիրելիք, թողուցէք զիս, բարեկամք, թողիմ իրեն երթամ, զինքն ազատեմ ու ես անոր տեղ մեռնիմ:

«Յանկալի Աւարդ, պատասխանեց անոր՝ Ներսէ՛՛հ, մեռնելու վախ չկայ: Գուն միշտ խօսքերս յեղէ. քու դաստիարակիդ ու հօրդ խօսքերը միտքդ բեր: Մարմնաւոր կենացդ՝ զգուշութիւն, մշանջենաւոր ու հողույ կենացդ՝ հող տար: Մտածէ որ անմահ հողուցի համար վերին գաւառներուն մէջ հաշու ու պատասխան պիտի տաս. յեղէ քու քաջ հայրդ, երանելի Հմայեկին արութիւնն ու հաւատքն առջեւդ նկարէ: Նայէ որ միշտ հիմակուան պէս առաքինի ու քաջ բլլաս եւ ժամանակին ալ ուրիշն օգնես: Իշխանին կեանքը միայն իրեն համար չէ. մերձաւորաց կամ հպատակաց պէտք է որ միշտ ձեռնտու բլլայ: Չեռքը կապած անհող կեցողը՝ ընկերին առջեւ անարդ, իր անձին մնասակար կ'ըլլայ»:

Ներսէ՛՛հ աս խօսքերը զըուցելէն ետեւ՝ ողբով ու թախծութեամբ սիրուն պատանին, իր սքանչելի բարեկամին նկարն իր ծոցը քաշեց ու գրկեց: Աւարդ ալ այնպիսի բարեկամէ ու բարերարէ մը բաժնուելուն համար՝ դառն արցունքներ թափեց եւ լալով, «Ա՛խ, գոչեց, գուցէ, ս' գիտէ, գուցէ բոլոր կենացս մէջ ակ մէյ մ'ալ զձեզ չեմ տեսներ», : Գարձեալ զԵրուանդունին համբուրեց Աւարդ, եւ աղաչեց որ Աստուծմէ իրեն արութիւն ու զօրութիւն խնդրէ. Աստուծոյ հաճոյ բլլալու՝ Երկնքէն օգնութիւն ուզէ. աղետից ու վշտաց մէջ համբերութեամբ մշանջենաւորելու, հաւատոյ մէջ հաստատուն կենալու իրեն շնորհք խնդրէ. որ եթէ Անոր խնամքն ու կամքն ուզէ, դար-

ձեւը հոս իրար տեսնեն. ապա թէ ոչ՝ ետքը հոն, ան շքեղ ու կապուտակազոյն կամարին վրայ եղած դարպասին մէջ մեկտեղ բնակին:

Գիսակի որն որ երկայն ատեն արտասուագին արտեւանունքն իր սիրելոյն վրայ սեւեռած էր, «Այնպէս ըլլայ», կանչեց ու Ներսէհին դառնալով՝ աս խօսքն բաւ. «Ընորհակալ եմ՝ քեզի, ցանկալի բարեկամ», բոլոր քու հոգաբարձութեանդ համար: Քու եւ իմ՝ անոր տուած հրահանգներն ու կրթութիւնները կարծեմ զմեզ չեն ամբչցրներ. անշուշտ մէկին հազարապատիկ պտուղ կը բերեն, դուցէ քիչ ատենուան մէջ մենք ալ կը լսենք առաքինի երիտասարդին դորձքերն ու անձամբ զինքն ալ կը տեսնենք: Անտարակոյս, անշուշտ կը տեսնենք»:

Այսպիսի խօսքերով երեք սիրելի բարեկամները մեկզմէկ կը մտիթարեին, մինչեւ որ երեկոյեան արեգակն մերձէն շոյն իրենց բնակարանէն ալ բաժնուեցաւ գնաց:

Վարդ՝ ան վերջին զիշերը հանգիստ ու հանգարտ եւ ամենեւին հոգ ու վիշտ չունեցողի մը պէս քաղցր քնացաւ: Առջի օրուան երկիւղն ու զարհուրանքը դադրած, ցնորքները փարատած էին. միայն երբեմն երբեմն Գիսակէն ու Ներսէհէն բաժնուելու ցաւն իր մտաց առջեւը կը շողար. իր սիրելի մայրը դեռ չտեսնելու վիշտը զինքը կը չարչարէր, թեթեւ ու երանալից երազներու թռիչներ՝ իր քունը կ'ընդհատէին:

Երբ որ շափուղեայ երկինքն երկրիս չորս ծայրերուն վրայ անզարդ անասող մնաց, բնութեան հետ մեկտեղ Վարդն ալ արթնցաւ եւ սենեկին դուռը բացած՝ մտադրութեամբ դուրս կը նայէր: Առաւօտեան գեղեցիկ օդը զինքը զուարթացուց. սեւաթոյր աչուրներն ասդին անդին հեռուները պտրտցընելով՝ բոլոր բնութեան շքեղութիւնը զննեց. դարձուց այնուհետեւ երկու շողջողուն աստղներն ու Երուանդունեղն ապարանից բուրաստանն առջեւն ելաւ: Հոն

չարժուն ու ոսկեհոս վտակներ տեսաւ, պէսպէս երփնազոյն ծաղիկներ ու այլեւայլ անկեր նշմարեց. ազգի ազգի ծառերը, արեգդէմ դահլաւանդներն ու հովանաւոր ձորերն ու ծործորները զինքն ապշեցուցին. ծառախիտ անտառներն ու այրերը իր աչուրները շլացուցին: Նոյն գեղեցիկ դրախտին բուն նորայրանչն ու զարմանալին ան էր՝ որ արուեստն ու հնարքը չէին երեւար, կարծես թէ զարդն ու դիրքը բնութեան ձեւն առած էին եւ արուեստն ամէնէն աւելի զուարթ բնութեան նմանիլ կ'ուզէր: Պարտիզին ծառերը ծաղկեցընող սիւքը երկնաւոր ու սքանչելի էր. մշանջնաւոր ծաղիկով՝ պտուղն ալ միշտ կը տեսէր. մէկ տեսակը հասնելու ատեն՝ մեկալը լմբնալու կը սկերբալտորն ու թուզը, զեղծն ու սերկեւիը շատ աւառ կը գտնուէին: Տեղ մը՝ ոսկեզոյն, տեղ մ'ալ կանաչազարդ հանդերձով խնձորներ կը տեսնուէին: Ոստախիտ տերեւալից ուռը՝ արեւտես բարձրաբերձ տեղերը կամակոր սողացած, դառն կանաչ եւ անոյշ ոսկեհասաողկոյզներ ունէր, որոնք թանձր օշարակով լի էին: Ասոնց նման ուրիշ բիւր պտուղներ ալ կային, զոր օրինակ սաթագոյն նարինջն ու կորաղենի շաքեր ունեցող նուռը, որոնք բնութեան գեղեցիկ զարդերն ըլլալով, մարդը կը զմայլեցընէին եւ իրենց Արարիչն ալ գովել կու տային: Բայց ասոնցմէ աւելի ո՞վ կրնար ան կանաչազարդ ոստոց վրայ նստող երփն երփն ու բիւրազգի թռչունները տեսնել եւ անոնց օդը թընդազընող մրմունջն ու իրենց Ղուսատուն փառաւորելը լսել ու չզարմանալ: Վարդ այս ամէն բանը զննելով՝ սիրտը զմայլելու սկսաւ եւ բնութեան Հաստչին վրայ զարմացած՝ ինքն ալ նոյն Ամենազօրն ու Բարձրալը գովեց եւ արտաքոյ կարգի եռանդով իր սովորական առաւօտեան աղօթքն ընելէն ետեւ՝ ելաւ իր անձկաւոյն Գիսակին սենեակը գնաց:

Գիսակ դեռ խորունկ քնոյ մէջ էր: Երջանիկ ու անոյշ հանդարտութիւն մ'իւր դէմքին վրայ կը հանդէպէր: Վարդ Համարձակելով զինքն արթնցնել,

երկայն ատեն լուիկ մնջիկ անոր առջեւը կեցաւ: Աւեր-
 ջապէս ծերունւոյն աշուրները բացուեցան եւ անմի-
 ջապէս երիտասարդին կայտառ կերպարանաց վրայ
 ինկան: Աւարդ «Բարի՛ լոյ», խօզքը բերնէն չհանած,
 Գիսակ ոտք ելլելով՝ զինքը չարթընցընելուն պատ-
 ճառը հարցուց: «Միրելն հայր, պատասխանեց Աւարդ,
 զձեզ խռովել ինձի կարելն չէր. որովհետեւ հէզիկ ու
 քաղցր քնոյ մէջ էիք եւ դեռ շատ կանուխ էր: Եր-
 թանք հիմայ մէկտեղ սիրելն Ներսէ հին. իրեն վեր-
 ջին հրաժարական ողջոյն կ'ուզեմ տալ»:

Երկու սիրելիներն Երուանդունւոյն գացած
 ատեն՝ բոլոր ապարանքը կը հնչէր, Աւարդայ Մամիկո-
 նենոյ անունն ամենուն հռչակուած էր. անոր Մամիկո-
 նեան ըլլալն ու զարմանալի արկածները ծանուցուե-
 լով՝ ամէկքը կը զարմանային: Իւրաքանչիւր ոք մէկ
 կողմանէ զինքը կը դովէր՝ որ եղբայրն ազատելու կ'եր-
 թայ, մէկալ կողմանէ ալ կը տրամէր՝ որ այնպէս ա-
 ռաքիների ու սքանչելի ազատորդի մը պիտի կորսընցը-
 նէ: Բուն ողբալի տեսարանը բացուեցաւ Աւարդայ
 Ներսէհէն բաժնուելու ատեն: Բարեսիրտ իշխանն
 իրմէ բաժնուող պատանին կարծես թէ չէր կրնար
 թողուլ, զինքը դրկած՝ իր երկու ականակիտ աղբիւր-
 ներն անոր վրայ կը հասեցընէր. վերջապէս Աւարդ
 զներսէհ աւելի եւս դառն թախծութեան մէջ չձգե-
 լու համար, «Թող տուէք, ըսաւ, ցանկալի Տէր, ձեր
 աղէտքն ինձի համար մ'աճեցընէք», եւ անոր բազուկ-
 ներէն պրծաւ ելաւ:

Վիսակ Աւարդայ տրուած խրատներուն վրայ
 ուրիշ խրատներ ալ աւելցուց: Անկից ետքը Ներսէ-
 հին կողմանէ իրեն քանի մը սպասաւոր տուաւ եւ ա-
 նոնց մէջ Երուանդունւոյն ապարանից Արտէն հոգա-
 բարձուն ալ, որն որ մեծ ուրախութեամբ գոչեց.
 «Աւարդ, ես քու մանկութեանդ ատեն, երբ որ քու
 հայրենի տունդ ու կեցած խուցդ այրելու սկսած էր,
 ես զքեզ ազատողն եղայ եւ քու մօրեղբօրդ ձեռքը
 յանձնեցի. հիմայ դուն իմ ձեռքս կը յանձնուիս.

եւ ալ քու սիրելն մօրեղբօրդ պէս զքեզ կը հո-
 գամ»:

Աւարդ նորէն Ներսէհին վերջին հրաժարականը
 տալէն եւ զԳիսակ երկայն ու անմուռնչ գրկած կե-
 նալէն ետեւ, անջատեցաւ, ձի հեծաւ եւ վայրկենի
 մը մէջ իր սպասաւորներով մէկտեղ թռաւ, մէկ եր-
 կու անգամ նորէն ետեւը նայելով, արտասուախառն
 «Բարեկամք, մնաք բարով», կանչեց ու աներեւոյթ
 եղաւ:



Գ Լ ՈՒՒ Տ Ժ Ե

Ուրացոյնիւն գոյժ:

ԸԱՏ անգամ, մանաւանդ երբ որ մարդուն մտքէն չ'անցնիր, Երկինքը վերէն իրեն պլեւայլ վտեր կը խրկէ, անոր արութիւնն ու հաւատքը փորձելու, սէրն ու յոյսն աւելցընելու համար:

Այսպիսի աղետարար դէպքեր Մամիկոնեանց ազգատոհմին շատ կը պատահէին, որոնք իրենց հանդարտութիւնն ու խաղաղ կեանքը կը խռովէին, անոնց հետ մէկտեղ բոլոր Հայոց ազգն ալ դժբախտութեան մէջ կը ձգէին, բայց շատ անգամ ալ ան փոթորիկէն ետքը՝ բարեբախտութեան կը հասցընէին:

Չուիկ շատ տարի Գուգարաց աշխարհքը, Աշուշայի ապարանքը բնակելէն ետեւ, երբ որ իր ցաւերը քիչ մը նուազած էին, ելաւ իր երեք որդիներովը մէկտեղ Մամիկոնեանց Տարօն գաւառը, Աշտիշատ ականն եկաւ, եւ նորէն Հմայեկին մահն ու իր կըրտսեր որդւոյն Վարդայ կորուստը կու լար կ'ողբար: Չէր գիտեր որդրմելին որ քիչ մ'ատենէ ետեւ ուրիշ աւելին մեծ կորուստ մ'ալ պիտ'որ ընէ: Եղած լմրնցած էր դժբախտ ապիրատ գործքը եւ Չուիկ զեռ բան մը

լսած չէր: «Մայր, ըսաւ որ մը Չուիկին՝ Վասակ Մամիկոնեանը. թողութիւն տուր որ այնպիսի տխուր ու վշտալի գոյժ մը պիտի տամ քեզի ու անով սիրտդ պիտի վերաւորեմ, բայց մինչեւ երբ լուծ: Եթէ Վահան եղբօրս մահուան բօթը լսեցի ըսեմ, չեմ սխալիր: Գնա, սիրելի մայր, զնա սենեակդ կամ մենաւոր տեղ մը, լացիր ցաւոցդ ու ահագին վշտացդ վրայ: Արտասուքը մարդկային բան է, ոչ ոք կրնայ զքեզ արգելել. սակայն եթէ կրնաս նէ՛ այն արտասուքդ պաղատախառն աղօթից փոխէ, որպէս զի Վերինն աւելի սիրով քու ցաւոցդ ողորմի . . . : Ես ալ նոյնպէս պէտք է որ ողբամ, ես քեզմէ աւելի դառն պէտք է որ լամ: Վահանին մահը, անոր հողուոյ կորուստը հարկ է որ աշխարեմ,»: Ըսաւ ու սխաւ յորդառատ ջերմ եւ դառնադառն կաթիլներ թափել. քիչ մնաց հեծութենէն սիրտն երկու կ'ըլլար: Բայց նորէն հողի առնելով եւ յոյսը բոլորովին չկորսընցընելով. «Մայր, գոչեց, լացիր, սակայն մտածէ միանգամայն որ ամենայն ինչ Աստուծոյ ձեռքն է. Հզօրին կարողութիւնը զարը բարուոյ կրնայ փոխել. հաստատութեամբ Անոր վրայ յուսալու է եւ Իրմէ խնդրելու է որ դարձեալ քու սրդիդ ու իմ մտրրեալ եղբայրս, առ երեսո մեզութեան օրէնքն ընդունողը, թողու ան ժանտ եւ չարաթոյն դիւապաշտութիւնն ու իր Աստուծոյն դառնայ: Շատոնց Վահանէն նամակ առած եմ, որուն մէջ կըսէ թէ զըպարտութիւններէն ազատելու եւ իր հաւատարմութիւնը ցուցընելու համար այսպէս ընելու ստիպուեցայ: Գարձս ալ, կը զրէ, շատ չ'ուշանար . . . : Վահ, ողորմելի ու տկար խօսքեր: Վահան, եղբայր, ինչ բերո՞ւ:

Վասակ այս խօսքերը զըուցելէն ետեւ՝ լուռ կեցաւ ու նորէն իր արտասուաց վտակներովը դետինը կ'ողողանէր: Իսկ Չուիկ բոլոր աս վիպին ժամանակը՝ ողբայլէն ուրիշ բան չըբաւ. գլուխը ծռած, գրեթէ մինչեւ երկիր խոնարհեցուցած եւ գէմքն ալ երկու ձեռուրներով ծածկած՝ կ'աշխարէր ու կը հեծէր եւ

երբեմն երբեմն ալ «Վահան, որդեակ, ինչ բերի, որդեակ», տրանջանաց խօսքերը բերնէն կը հանէր:

Այսպէս Չուիկ անմխիթար շատ լալէն ետեւ՝ «Որդեակ, բաւ, Վասակին, եկուր մէկտեղ աղօթք բնէք. Աստուած՝ մէկտեղ աղօթողներուն մտիկ կ'ընէ, անոնց խնդրուածքը շատ անգամ կը կատարէ: Մուրեաները բոլորովին ձեռքէ չի թողուր, մանաւանդ զանոնք՝ որոնք երբեմն իրեն հաւատարիմ էին ու քաջութեամբ առաքինութեան շաւղաց մէջ կը պարտէին»:


Չուիկ ասանկ խօսեցաւ ու երեսի վրայ ինկաւ եւ երկնաւոր Որդւոյն Մայրը մխարը բերելով. «Մ՛հ, անուշակ Գշեց, գոչեց, ինչ էն իմ վշտերս, էթէ քու անշահի աղետիցդ հետ համեմատելու ըլլամ...: Չէ, տրանջել չեմ ուզեր. բերէ թող Աստուած ինչ որ կ'ուզէ նէ գլուխս. համբերութեամբ կրել, յուսով ամէն բանն իրեն յանձնել կը տենչամ, նաեւ էթէ ասիկց շատ աւելի վշտեր վշտանամ: Ար զգամ, ներքին ձայն մը իմաց կու տայ թէ կրածներս դեռ ոչինչ են, կարծես թէ ներքին խթան մը սիրտս խոցելով՝ գոչել կու տայ որ գլուխս դեռ ուրիշ շատ անձկութիւններ ու ցաւեր ալ պիտի դան . . . : Բայց Աստուած բոլորովին չի Լքաներ, կ'ըսէ ձայնը, կու տայ զօրութիւն որ ամենայն ինչ համբերութեամբ կրես, եւ վերջապէս աղէտըք ու տրամութիւններդ՝ ուրախութեան կը փոխէ»:

Չուիկ այսպիսի ազդեցութիւններով քիչ մը հանդարտեցաւ ու սկսաւ Վասակին հետ խօսակցիլ: «Մայր, բաւ Վասակն ալ ի մէջ այլոց, սիրելի մայր. Վարդ եղբայրս կենդանի է. Շաւարշ եղբայրդ Հայաստանի մէջ է, գրեց ինձի Վահան: Ան երկուքին ալ պատմութիւնը սքանչելի կ'երեւայ ինձի, բայց սկիզբէն մինչեւ վերջը նկարել միայն անոնք կրնան. ես մինակ աս գիտեմ որ երբ որ Վարդ մեզի գալու մտք ունէր, Պերոզ զենքը Պարսկաստան կանչեց, որպէս զի Վահանին տեղ ինք հոն կենայ ու Վահան ելլէ Հայաստան դառնայ եւ ետքը . . . :»

Չուիկին անձկութիւնը ժամէ ժամ կ'աւելնար, լած այլեւայլ խօսքերն իր սիրտը կը վերաւորէին, երկայնաբանութիւնն ու անկից յառաջ եկած անհամբերութիւնը զենքը կը նեղէին. բուն իրին վերջը կ'ուզէր, սակայն դեռ Վարդայ Պարսից աշխարհքը կանչուելուն պատճառը Վասակին բերնէն չէլած՝ մէկէն ապարանից սրահներն ուրախութեան ազալակներով ու գոչիւններով հնչեցին, Չուիկ սենեկէն դուրս ելաւ. աս եւ ան կողմը կը նայէր, հարցնելու մարդ կը փնտռէր. բայց ապարանքը մարդ մնացած չէր, ամէնքը վազելով կ'երթային, բազմութեամբ՝ բազմութեան գեմ կ'երթային: «Մ՛նչ կայ, պոռաց Չուիկ, ո՞վ կու գայ», եւ եկող խուռն ամբոխը գիտելու ատեն իր Վահան որդին տեսաւ, որ մեծ չքով կու գար:


«Վասակ, Վասակ, գոչեց, եղբայրդ կու գայ, եկուր շուտ, երթանք զենքը դիմաւորենք», բսելու ատեն Վահան արդէն երիվարէն իջնալով՝ ապարանքը մտաւ եւ անմիջապէս մօրը գիրկն ինկաւ: Բայց կարծես թէ սիրտ սրտի զարնելով՝ Վահանայ սիրտը կտոր կտոր եղաւ. աներեւոյթ երկիւղէ մը սարսափած՝ մօրմէն հեռու քաշուեցաւ գնաց, դէմքը տփուռնած, արիւնը սառած, գիակի մը նման մարմարեայ սիւն կտրած՝ անոր դիմացն անմուռնչ կեցաւ: Քիչ մը լուռ կենալէն ետեւ՝ իր սիրելիները մէկզի քաշեց ու «Մ՛հ, ցանկալի մայր եւ սիրելի եղբայր, պոռաց. որչափ երջանիկ կ'ըլլար Վահան, էթէ իր երանութիւնն ինք անձամբ չեղձանէր, ինք զենքը վտանգի մէջ չդնէր: Սակայն աւասիկ տեսէք, հիմակուրնէ պատիժս կը կրեմ, երկրիս վրայ հիմակուրնէ կը չարչարուիմ: Աւրացութիւնս կարծեմ ինձի սուղ պիտի նստի, սակայն յամառութիւն ամենեւին չունիմ: Ո՛հ, Աստուած, Աստուած, կրնամ արդեօք յուսով որ իմ ժանգալթոյն սխալմունքս հիմայ կը ջնջես եւ ետքն ալ երանելեաց դրախտն երթալ կը թողուս, որպէս զի այնուհետեւ Քեզմէ ու իմ սիրելիներէս երբեք չբաժնուիմ. . . :»

Վաճան այսպիսի սաստիկ ցաւոց մէջ ինկած՝ գլուխն ու դէմքը ծածկեց, որովհետեւ իրեն կ'երեւար որ իր առջեւ կեցողները մէյմէկ յանդիմանութեան պէք ծոցը կը խոթեն ու իր յանցանքը կը կշտամբեն: Այսպէս անմխիթար մայրն ու որդիքը կեցած, ամէնքը բիւրաւոր աղետից մէջ մտած, ոչ պէ կը համարձակէր տխուր լուծիւնը լուծել: Վերջապէս Վաճան նորէն հոգի ու շունչ առաւ եւ գրեթէ քնէ մ'արթնցած. «Մայր, ըսաւ, վրաս փոփոխութիւն կը զգամ, երկնառայր ազդեցութիւն մը կու գայ. անշուշտ ըրած աղօթիցդ պտուղը պիտ'որ ըլլայ: Շարունակէ, սիրելի մայր, պաղատէ, խնդրէ երկնքէն իմ դարձս: Գուն ալ, ցանկալի եղբայր, իրեն հետ միացիր: Չեր նոյն ազանաց մէջ միշտ զՎարդ ալ յիշեցէք, որպէս զի Պարսկաստան շքեղ վարդ մնայ ան սքանչելի պտտանդը, ժամանակաւ ալ առաքինի ու քաջ հոս դառնայ»:



Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ

Բանարիւնիւն ու պատուիւն նշոյլ:



ՎԱՐԴԱՏ ճամբորդութիւնը խոյացող թռչուններուն արշաւանաց նման էր, որովհետեւ շուտ մը Պարսից հոյակապ քաղաքն եկաւ: Տիրան թագաւորական քաղքին ընդարձակութիւնն ու մեծութիւնը, փողոցներուն փառաւորութիւնն ու ապարանից շքեղութիւնը զՎարդ զարմացուցին: Երկնաբերձ պարիսպ մ'ու այլեւայլ ամրոցներ քաղաքը պատած, շատ մեծամեծ ապարաններ, շքեղ ստորուշաններ ու մեհեաններ եւ պէսպէս բուրաստաններ զՏիգրոն կը զարդարէին: Սակայն ասոնց ամենուն պսակն էր թագաւորին դարպանը: Ընդարձակ ու ամենաբարձր երեւակայութեան նկար մը կրնար ըսուիլ: Բազմապատիկ սեանց վրայ շինուած՝ ոսկւոյ ու արծաթոյ մէջ կը շողար: Պատերն ու ձեղուններն այլեւայլ գեղեցիկ զարդեր, միեղջերուի եւ ուրիշ գազանաց կերպարանքներ փորուած, տեսնողին աշուրները կը շացընէին. բոլոր աս զարդերուն համեմատ էր՝ ապարանից մէջ տեղն եղած սրահն ալ: Հոն սքանչելի շատրուան մը՝ յասպիս պատուական քարերէ կը փալկէր, չորս կողմն ալ վեց զոյգ կենդանիներ կային. առիւծներն

ու վիշապները, միեղջերուներն ու ցլերը, արծիւներն ու սիրամարգերն իրարմէ գեղեցիկ էին եւ ամենուն բերնէն ալ պղպայջուն ջրեր կը վազէին: Ապարանից ամէն մէկ սենեակն ալ փառաւորութեան ու շքեղութեան մէջ կը լողար, չկար տեղ՝ որ անդարդ ըլլար: չկար տեղ՝ որ առանձինն գեղեցիկութիւն մը չունենար:

Վարդ ասոնց ամենուն վրայ շատ կը զարմանար, բայց ան զարմանաց հետ մեկտեղ շատ անգամ իր սիրելիներուն յիշատակը խառնուելով՝ նոյն հրաշակեմանն իրեն ոչինչ կ'երեւային, մանաւանդ թէ կը գարշէր անոնցմէ, մի միայն ցանկալի ու գեղեցիկ բան իր հայրենիքը համարելով, իր սիրելի մայրն ու եղբարքը տեսնել ուզելով: Սոսոյզ է, տեսաւ Վարդ հոս իր Ահա՛ն եղբայրը, բայց սրջափ եւ ինչպէս: Քիչ, խիստ քիչ ժամանակ, որովհետեւ Ահա՛ն իր ուրացութեան համար՝ մարդու առջեւ ելելու կը շփնէր. իսկ առաքինի Վարդ եղբօրը հետ երկար ատեն խօսիլ ամենեւին չէր ուզեր. նախ իր ամբօժն ու խայտառակութիւնը ծածկելու եւ երկրորդ անոր սիրտը չվիրաւորելու եւ զինքը մշտնջենաւոր վշտաց մէջ չխտթելու համար: Ասոր համար Վարդ ու Ահա՛ն տեսն մեկգմէկ, սակայն շուտ ու սրտառուչ եւ լալազին իրարմէ բաժնուեցան: Այսպիսի յիշատակ մը ինչպէս կրնար Վարդ մտքէն հանել: Երբեք նոյն օրը չէր մոռնար. միշտ Հայաստան ու իր սիրելիներուն քովն երթալ կը տենչար: Պարսից աշխարհքը բնակելու ամէն մէկ վայրկեանն իրեն բիւրաւոր գարեր կ'երեւային: Պարսկաստան կենալը մեծ տրտմութիւն էր իրեն, վասն զի հոն իր կրօնին մխիթարութիւնները չունէր: Քրիստոնէից կրօնը Պարսից ատելի էր, Պարսից կռապաշտութիւնն՝ իրեն գարելի: Վարդ մոգութեան օրէնքն ու արեգական եւ կրակի պաշտօնը շատ կ'ատէր. ատրուշաններէն ու անոնց մէջ եղած վաճառական կրակէն ու բոցէն կը զգուէր. ան դիւական պաշտօնը, երկրիս ու երկնից վրայ եղող արարածոց երկրպագութիւնն ու զոհը տեսնելով, սիրտը կտոր կտոր կ'ըլլար:

Վարդ անոնց յորդորուելու ջանքերն իրմէ մերժելէն զատ, Պարսից մոգերն ու անոնց զենակիցները քաղցր ու մեղմով շատ անգամ կը յանդիմանէր:

Թեպէտ եւ երկայն ատեն նորապանչ փառաւորութեանց մէջ մնաց, սակայն բիւր նեղութիւններէ ալ կը շարշարուէր, իր հայրենիքէն ու մօրը քովէն հեռու ըլլալուն համար սաստիկ կը նեղուէր: Իր միտքն ու խելքը աս հեռաւորութիւնը վերցնելու, միջոց ու գիւտ փնտռելու վրայ էր. բայց տեսաւ վերջապէս գրեթէ անկարելին, երբ որ յանկարծ կապանաց ու շղթաներու, զարհուրելի ու խաւարչտն բանտի մէջ ինկաւ: Աս բանտն ապարանքէն հեռու չէր, անոր համար ստորերկրեայ ճամբով մը շատ անգամ թաղաւորը կ'ելլէր բանտարկելոց պոյնելութեան կ'երթար. բայց չէ թէ անոնց աղէտքը նուազցնելու, հասկա իր ներկայութեան ահազնութեամբն եւ զանոնք ծաղր ընելով՝ ան դժբախտներուն վշտերն աւելցնելու համար: Նոյն բանտին ողորմութիւնը մեծ էր. պղտիկ ծակ մը միայն ահազին ու ստուար պատերէն քիչ մը լոյս կը թողուր, որպէս զի Վարդ ու իր բնկերներն իրենց բնակարանին խեղճութիւնը տեսնեն: Պատերուն ներքին ճակատը սեւ եւ խոնաւ էր, ձեղունն ալ այնպէս ցած՝ որ հազիւ մարդ ուղղորդ կրնար կենալ: Մէկ կողմն անհարթ քարէ սեղան մը կար՝ Վարդայ ջուրն ու հացը, իր մի միայն կերակուրն ու բմպելին դնելու համար. մէկալ կողմը դեմնի վրայ իր ողորմելի անկողնը կ'երեւար, քիչ մը յարդ՝ անոր վրայ լաթ մը տարածուած: Ծանր երկաթէ շղթաներ ձեռքն ու ոտքը կը ճնշէին: Վարդագոյն դէմքը տժգունած ու խորշմամ էր, եւ աչքն ալ շատ արցունք թափելէն՝ կարմիր արիւն ու կրակ գարծած: Բայց Վարդ բոլոր աս աղէտքն ու վշտերը համբերութեամբ ու հեղութեամբ կը կրէր: «Ո՛հ, կ'ըսէր ինք իրեն շատ անգամ, բանտիս աղէտքն ինչ է, թէ որ սրտիս անձկութիւններուն հետ համեմատելու ըլլամ», երբեմն ալ «Ա՛խ, սիրելի մայր, եղբարք, քաջ ու արի Վահան, կը գոչէր, ինչ

վիճակի մէջ էք», եւ նորէն նորէն լալու կը սկսէր: «Շնորհակալներ, որչափ սիրով կը կրէի զձեզ, եթէ գիտնայի որ դեռ սիրելիներս կ'ապրին եւ իրենց թշնամեաց հալածանքներէն ազատ են: Աս անառողջ ու խոնառ գեանոյն վրայ որչափ յօժարութեամբ կը պառկէի, եթէ միայն գիտնայի որ սիրելին Շաւարշ, երկրորդ հայրս, ողջ ու հանդիստ, Ասհան եղբայրս մոգութեան օրէնքէն ազատ եւ մեաստեղաբանութեան սպառնալիքներէն ու անոնց հետեւութիւններէն գուրս է: Սակայն աս կապանացս պատճառն սկ է. անշուշտ Ասհան մոգութեան օրէնքը դարձեալ արհամարհած պիտ'որ բլլայ, իր հօրը շաղագջ հետեւիլ ուզած պիտ'որ բլլայ. եթէ բանտարկութեանս պատճառն աս է նէ, ուրախ եմ»:

Իրօք ալ ան էր պատճառը եւ Հայոց ու Պարսից մէջ նորէն պատերազմ բացուած էր:

«Բայց ես չեմ գիտեր, կ'ըսէր ինք իրեն Աբրդ, տարակուսանաց մէջ եմ, կը գեղեւիմ, աղետիցս մէջ կը ծնդիմ կը մաշիմ. բոլոր անգամներս կը դողան ու կը թառամին: Գոնէ ան մխիթարութիւնն ունենայի. գոնէ ընկերներէս մէկն աս բանտին մէկալ մուսլ անկիւններէն քովս բերէին . . . : Սակայն ան դժբախտներն ալ ինչ կրնան ընել. անոնք ալ կը ծիւրին . . . : Բայց չէ, մարդկային մխիթարութիւն չեմ ուզեր: Քեզի կը դառնամ, Քեզի, մշանջնաւոր ու անկոր Աստուած: Գուն զիս շատ խուճապական վտանգներէ, բիրաւ որ ազտից մէջէն ազատեցիր: Աս անգամ ալ Գուն կազատես: Երբ որ միտքս կը բերեմ անթիւ անհամար արկածները՝ որոնք մանկութենէս սկսեալ մինչեւ հիմայ գլուխս եկան. երբ որ կը մտածեմ որ անչափ սիրով ու հայրական իմաստութեամբ զիս հողացիր, ինձի պաշտպան եղար . . . կը բորբոքի սրտիս եռանդն ու յոյսս եւ վստահութիւնս ողորմութեանդ վրայ կը հաստատեմ: Գիտեմ որ Գուն հոս բանտին մէջն ալ քովս ես, եւ քու արբանեակներդ ալ ինձի կ'օգնեն»:

Այսպէս Աբրդ աղօթք ու պաղատանք ընելով՝ վերէն մխիթարութիւն ու հանգիստ կը գտներ: Աս տխուր մենութեան մէջ ունեցած խորհուրդները շատ էին, ինք իրեն խօսած խօսքերն անթիւ էին: Երբեմն մայրն ու եղբարքը յաւիտեական բնակութիւնը գացած կ'երեւակայէր, անոր համար ինքն ալ հոն թռչիլ կ'ուզէր, որպէս զի անոնց հետ անբաժին միանայ: Երբեմն ալ յուսալով որ դեռ կենդանի բլլան, յոյս կ'ուներնար որ երկրիս վրայ անգամ մ'ալ զիրենք տեսնէ: Իրեն մեծ ցնծութեան ու զուարճութեան պատճառէր՝ Մուշէ երիցուն տուած զիրքը, որուն մէջի հօրեղբօրն ու հօրը եւ անոնց մարտակիցներուն պատկերը զինքը շատ կը սիրէր: Աբրդ նոյն գիրքը քովը կը պահէր եւ երբ որ բանտապետէն ամենեւին վախ չէր ունենար, ան ատեն կը հանէր ու բանտին մէջ մանող նուազ լուսոյն առջեւ բռնելով՝ կը գիտէր, երկայն կը նշմարէր, եւ անով իր սիրելի ու երջանիկ հօրը յիշատակն ալ մտքին մէջ կը զարթուցանէր: «Մ՛հ, պատուական երէց, կ'ըսէր ինք իրեն, կրնայիք արդեօք մտքէդ անցընել որ աս գիրքն ու մէջի պատկերը զարհուրելի բանտարկութեանս ատեն վշտացս սիրտանք ու նուազում պիտ'որ բլլայ: Բայց ասով՝ զքեզ ու անձկալի Շաւարշ մօրեղբայրս ալ կը յիշեմ՝ եւ ան երջանիկ ժամանակները. անի, ո՛ր են ան տեղերը, ո՛ր խաղաղ ու մենաւոր գեղեցիկ ձորերը, ինչպէս անցաք, ո՛ր թռաք աներեւոյթ եղաք, զուարթարար օրեր: Ներսէհ ու ցանկալի Գիսակ, ո՛ր մնաց ձեր խոստումը . . . քանի մը տարիէն մայրս ու եղբարքս պիտի տեսնէի . . . »:

Ստեպ այսպէս կը գոչէր Աբրդ, երբ որ ան յիշատակները միտքը կու գային, եւ իր ցաւերն ու գանձեր տեսնելու իղձը կը նորոգուէին: Անկից ետքը արաստուաց վտակներ սիրտը կը բանային. գլուխը բանտին պատին կ'թռնցընելով՝ ամբողջ գիշերներ կու լար կ'ողբար: Ամաց կամաց աս ցաւերն ու երանախառն յիշատակներն՝ ազատութեան փափաքի մը փոխուեցան .

անոր համար խեղճն ան տխուր առանձնութեան մէջ նստած՝ միշտ լոյս տուող ծակէն ազատ տեղերն ու բնութիւնը կը գննէր: Գրտէն թռչուն մը թռչելով անցնելու ատեն՝ անոր կը նայէր, հեռու, շատ հեռու որչափ որ կրնար նե՛ աչքն անոր վրայ կը սեւեռէր ու կ'ըսէր. «Ա՛հ, ես ալ փետուր ու թեւ ունենայի եւ քեզի պէս, սիրուն արարած, ազատ օդի մէջ սրանայի. ս՛հ, դուն, դուն, գեղեցիկ, ազատ ես ու բոլոր երկնքի տակ եղող ընդարձակ անջրպետը քու բնակարանդ է. իսկ իմ՝ բնակութիւնս . . .»: Երբ որ դարձեալ երկվայրով գացող ճամբորդ մը կը տեսնէր, մեղմ ձայնով ու նշանացի՝ «Եկուր, կ'ըսէր անոր, եկուր զիս ալ առ, ասկից հեռու աշխարհք մը տար: Ի՛նչ, չե՛ս լսեր . . . զնա ուրեմն, եւ թէ որ նորէն դառնալու ըլլաս, ինձի համար մահ բեր . . .»: Ասոնք լսելէն ետեւ՝ անոր կը նայէր, մինչեւ որ ան մարդուն կերպարանքը պզտիկնալով, կէս մը կ'երեւար եւ վերջապէս իր աչքէն անհրեւոյթ կ'ըլլար:

Այսպէս շատ օրեր ու օրեր անցան, ամիսն ու տարին ալ անոնց հետեւեցան. վերջապէս խրկեց Աստուած Վարդայ դառն վտերուն քիչ մը քաղցրութիւն: Քանտապեան անոր ջուրն ու հացը բերած ատեն՝ զուարթ գեմք ցուցնել սկսաւ, ան սքանչելի երիտասարդին համբերութեան վրայ զարմանալով՝ օրէ օր իր վայրենութիւնը կը նուազցնէր: Վարդ առ տեսնելով՝ անոր աղաչանք մ'ընելու համարձակութիւն ստացաւ եւ խնդրեց որ իր քովը բերուին իր ընկերները՝ որոնք նոյն բանտին մէջ ուրիշ հեռուոր անկիւն մը նետուած էին, որպէս զի կարող ըլլան իրարու յաւիտենական ողոր նուազցնել: Քանտապեան իսկզբան չլսել կը ձեւացնէր եւ կարելի եղածին չափ Վարդայ չէր մօտենար, որպէս զի չըլլայ թէ համոզուի կամ անոր սրտաշարժ կերպարանքէն ամբողջով իր խտաբար ու անդամանդեայ սիրտն ալ կակղնայ ու անոր խնդրածը կատարէ: Սակայն ամէն բանէն չկրցաւ պրծիլ իր ներքին գթոյ ու աղեաց ազդեցութեան տեղի տուաւ:

եւ զԱրտէն ու Վարդայ մէկալ ծառաները քովը բերաւ: Բայց առ չնորհչքին տեղ՝ անոնց շղթաները կրկին ու կրկին ծանրացուց. եղուկներուն մէկ սիոսիանքն իրենց հազարապատիկ աւելի վեշտ ու անձկութիւն արժեց:


Պժեբախտ ու ողորմելի վշտահաններն՝ անհանգուրժելի աղետից մէջ մէկվմէկ մխիթարել կ'ուզէին, բայց այնուհետեւ ան բնակութիւնն ամենուն անտանելի եղած էր: Օր աւուր վրայ զարհուրանքն ու նեղութիւնները կը շատնային. ծառաներն իրենց սիրելի իշխանին գունատ երեսը տեսնելով, անոր տկարութիւնը նշմարելով, դիտելով որ անոր կայտառ ու վառվռուն բնութեան նշոյլն երթալով կը նուազի, կը զարհուրէին. եւ թագաւորին անագորոյն ու անգութարտին, Պարսից վայրենասիրտ ու ժամտաժուռ բարուց վրայ դառն խօսքերով կը արանջէին: Վարդ առ խօսքերը լսած ատեն՝ վշտերու մէջ եղող ընկերները կը յորդորէր ըսելով. «Բարեկամք, ի՛նչ պէտք է մեր ունեցած նեղութեանց վրայ ուրիշ աղէտներ ալ աւելցնել: Աստուած միայն կրնայ զմեզ ազատել»: Այսպէս խօսելէն ետեւ՝ կը սկսէր պաղատանքն Երկնք դարձնել, անկից ազատութիւն խնդրել եւ եռանդուն խօսքերով ալ ընկերները մխիթարել որ իրենց յոյսն ու ակնկալութիւնն Աստուծոյ վրայ գնեն, Անոր կամաջը համաձայնին եւ ասոր նման ուրիշ բիւր խօսքեր կը զուցէր, մինչեւ որ վրան աստիկ տկարութիւն մը գալով, իր քաղցրաբան շթունքը մեղմով զոցելու կը ստիպուէր:

Անգամ մը այնչափ խօսելէն ետեւ, նուազած իր աղքատիկ անկողնոյն վրայ ընկողմանելու ատեն, բանտի շղթայակապ դուռը բացուեցաւ ու բանտապետին հետ մէկտեղ Պարսիկ երեւելի իշխան մ'եկաւ: Իշխանը Մամիկոնեանին մօտեցաւ, իսկ բանտապետը թողուց գնաց: Վարդ ահիւ ու գողութեամբ հազուութի կրցաւ ոտք ելլել:

«Ինչո՞ւ կը գողաս, սիրուն պատանի, բառ Պարսիկը. մի զարհուրիւր, մի արտմիւր, քաջալերուէ. Եր-

կինքը բոլոր ցաւերդ կը բուժէ: Գիտնաս որ ես քու եւ ընկերներուդ վրայ շատ կը ցաւիմ: Մամիկոնեանց ազգատոհմին վրայ շատ բաներ լսած եմ, հազարաւոր քաջագործութիւններ ու սքանչելիք տեսած եմ. շատոնց միտքս դրած էի որ քեզի պցցելութիւն ընեմ, սակայն պատշաճ ժամանակ չէի գտներ: Աւասիկ հիմայ քովդ կ'ուզեմ նստիլ եւ անունդ ու պատմութիւնդ լսել»:

Վարդ աս մարդուն ապշած կը նայեր, վասն զի անոր դէմքն իրեն ծանօթ կու գար, բայց ուր եւ երբ տեսած ըլլալը չէր յիշեր: Այսու ամենայնիւ իրեն ազատիչ մը կ'երեւար, անոր համար բարձրաձայն դռչեց. «Ո՛հ, Աստուած իմ, շնորհակալ եմ քեզի, որ գորու վազութի սիրտ մը խրկեցիր ինձի: Ամէն տեղ բարեբարոյ մարդ կը գտնուի եղեր, նաեւ աս դարպասին մէջ: Ասկից ետքը սկսաւ Վարդ իր պատմութիւնը պատմել, որուն շատ գութ ու արգահատութիւն ցուցուց իշխանը. եւ բանտապետը կանչելով, «Նայէ, ըսաւ անոր, Վարդայ ու իր ընկերներուն վիճակը շատ դէշ է. զիւրենք քիչ մ'աւելի աղէկ հոգաւ եւ անոնց շղթաներն ալ թեթեւցուր. գիտես արդէն», իշխանը բանտապետին հետ այսպէս խօսելէն ետեւ՝ Վարդայ կողմը դարձաւ ու աս խօսքերով զինքը մխիթարեց: «Համբերէ, սրդեակ, գիտեմ քու աղէտըդ ծանր են, սակայն գուցէ Երկինք յաջող եւք ու աղատութիւն կը խրկէ: Ես ալ քեզի օգնելու կարող ըլլայի... բայց ս'գիտէ...: Ձիս կը ծանշնան. ես Պարսկաստանէն Երուանդունուոյն ապարանքն եկող զրուցաբերն եմ. Ներսէ՛հ՝ վրադ շատ բան պատմեց եւ զքեզ գովեց. ան ատեն սիրեցի զքեզ, հիմայ կը գթամ վրադ»: Ըսաւ ու մեկնեցաւ զնայ:



Փոխանոր:



ՎԵՐՋԵՆԱՆՈՅՍՆ ԵՐԿՐԷՆ աներեւոյթ եղած ասան՝ գիշերը մօրը խիստ ծոցէն ելլելու սկսած էր. անոր ջինջ ու պաղպաջուն ցօղոյ թեթեւութունը երթեւեկներն օդին մէջ խաղալով եւ ծաղկանց ու կանաչութեան վրայ իջնալով՝ անոնց կենդանութիւն կու տային: Նոյն գիշերը Վարդ ինք զինքն ու իր ընկերներն ան զուլացուցիչ օդին մէջ գտաւ:

Երբ որ առաքինի պատանին իր վշտայ ու աղետից մէջ ընկղմած ու յարգաչէն անկողնոյն վրայ պառկած՝ քիչ մը հանդչել կ'ուզէր, մէկէնիմէկ բանտին դուռը բացուեցաւ ու մեղմ ձայն մը իր անունը տուաւ ըսելով. «Վարդ, Վարդ, արթնցիր ու մտիկ բրէ:

«Ո՛վ կրնայ ըլլալ, մտածեց Վարդ, հիմակ ո՞վ եւ ինչո՞ւ կրնայ զիս կանչել, բայց եթէ գիշերով խեղդամահ բնելու համար:

«Ն՛րիտասարդ, ես եմ, բանտապետն է, մի վախնար:

«Ո՛հ, Երկինք...: Բանտապետ, ինչո՞ւ համար գաղտնի կամ գիշերով զիս մեռցընէլ կ'ուզէք. եթէ

յանցաւոր ու ապիրատ մարդ մըն եմ, ցուցուցէք
յանցանքս. գոնէ ընկերներս ազատ թողուցէք:

«Հանդարտէ, սիրելի Վարդ, ազատիչդ է մի
զարհուրիւր. թող մէկդի առնեմ՝ շղթաներդ. առ դա-
շոյնն ալ առ, գուցէ հարկաւոր ըլլայ. փախչելու ա-
տեն պահապաններն իմանալու ըլլան, անշուշտ մեզի
դէմ կը կռուին. առ առ թուրն ու զքեզ պաշտպանէ:
Ամենեւին մի վախնար, միայն թէ շուտ. առ զարհու-
րելի բանտէն ու ապարանից չորս կողմը կեցող ասպա-
րափակ պահապաններէն ու ամբուլթենէն դուրս ելլե-
լու ըլլանք՝ բանը լմնցած է: Հոն քեզի արագոտն
նժոյգ մը եւ քանի մ'ուրիշ երկիւրներ ալ քու ըն-
կերներուդ համար պատրաստած եմ, հոն հասնելուն
պէս՝ կը հեծնայք ու կը փախչէք: Ել ուրեմն, սիրելի
Վարդ. դուք ալ, ծառաներ, մի դանդաղէք, երթանք,
երթանք . . . :

«Մասնիչ, ո՛չ դուն եւ ո՛չ անոնք կրնան փախ-
չիլ, հնչեց սարսափելի ձայն մը ու հզօր բաղրակ մը
բանտապետին ուսին վայր ինկաւ եւ զինքը բռնեց: Բան-
տապետը հազիւ կրցաւ զինքն այն ձեռքէն ազատել
ու սուրբ մերկացնելով եւ պատին կռթնելով՝ ան
ահագին յարձակման դէմ՝ գնել: Բանտապահ զօրաց
գլխաւորն էր, որն որ բանտին մէջ եղած խօսակցու-
թիւնները լսելով՝ վեց հոգւով ներս մտած էր ու ան
մթին մէջ բանտապետը բռնել կ'ուզէր: Սակայն բան-
տապետը մեծ արութիւն ու քաջասրտութիւն ցու-
ցուց: Քանի մը վայրկեանի մէջ պահապանաց գլխաւորն
արեան մէջ թափախուած ու անոր սուրն ալ ձեռքէն
ինկած էր: Իր օգնականներէն ալ երեք հոգի մահա-
բեր գործիքներուն ճաշակն առնելով՝ գետինը թաւա-
լեցան: Բայց կռիւն աւելի մնչեղնութեամբ սկսաւ, երբ
որ մնացած երեք պահապաններն իրենց գլխաւորէն
շատ պատիժներ կամ բիւրաւոր պարգեւներ ընդու-
նելու երդումը լսեցին:

Բանտապետը խիստ տկարացաւ, սակայն հաս-
տատուն միտքը գրած էր ու աւելի մեռնիլ կ'ուզէր,

քան թէ ինք զինքն եւ զՎարդ ան դադաններուն
ձեռքը մատնել: Կռիւն այսպէս սաստիկացած ատեն՝
լուսաւոր ամպի մը պէս տեսիլ մ'երեւցաւ ու սաստիկա-
ձայն ազաղակով մը բոլոր բանտը թնդացուց: «Թրե՛րը,
անամօթներ, թրե՛րը մէկդի թողուցէք. հոս արիւն
թափելու տեղ է. ժամանակն է հիմայ»: Ամենքը
զարհուրած՝ թող սուին սրերը որ խոնարհին, դե-
տինն իյնան. նոյն իսկ պահապանաց գլուխը խոնար-
հեցուցած ու դողդողալով՝ կարծես թէ սառեցաւ
մնաց: Երեւոյթ կարծուած մարդն իրեն հետ եկող
երիտասարդին նշան ըրաւ որ Վարդայ ընկերներն առ-
նու երթայ. իսկ ինք բանտապետին դառնալով՝ այս-
պէս գոռաց: «Ժպիւրհ ու յանդուգն մարդ, առ կեր-
պով երբեք չես կրնար նպատակիդ հասնիլ. կորսուէ
առջեւէս, սպիրատ», ըսաւ ու ինք անոր քովէն անց-
նելով՝ անմուռնչ կեցող Վարդայ մտեցաւ եւ իր
ետեւէն զայլու նշան ըրաւ: Վարդ դողդողալով գնաց:
Աքանջելի երեւոյթը զՎարդ շատ աստիճաններէ ու
անձուկ շափոյներէ անցուց: Գոններն ու պարիսպները
կարծես թէ անոնց առջեւէն կը հեռանային: Շատ
չքեզ ու փառաւոր խցերու մէջէն անցան, իրենց դի-
մացն ելլողը մեծարանօք զերենք կ'ողջունէր: Վերջա-
պէս ահագին պարիսպներով գոցուած բուրաստան
մ'եկան, եւ հոն առաջնորդը դուռ մը բանալով՝
զՎարդ դուրս հանեց ու ըսաւ: «Ընկերներդ, սիրելի
Վարդ, ասկից քիչ մը հեռու կը գտնես: Գնա փա-
խիւր շուտ, ապա թէ ոչ՝ բարձրացող արեւը դիակդ կը
տեսնէ: Ես . . . », պոռաց ու գուռը գոցելով՝ զՎարդ
թողուց գնաց:

Լսյապէս Վարդ ինք զինքը դաշտի մը վրայ
գտաւ եւ Տիգրոն քաղաքն ու թագաւորական ապա-
րանքն ալ հայելոյ պէս առջեւը տեսաւ: Իսկզբան
չէր գիտեր թէ գլխէն անցածն ինչ է. կը կարծէր որ
երազ է: Բայց ականջը դռնչելով իր սքանչելի առաջ-
նորդին ու ազատչին խօսքերը թէ «Ժամանակ պէտք
չէ կորսնցնել, արագ փախչելու է», զինքը շփոթու-

թենն արթընցուցին: Անմիջապէս ընելիքն որոշեց: Վազեց, քիչ մը յառաջ գնաց ու ընկերները գտաւ: Անոնց քով քանի մը վայրկեան շունչ առնելէն ետեւ՝ ամենուն հետ մեկտեղ ճամբայ ելաւ:

Ղբիկայն ատեն վազեցին ու քալեցին դժբախտ փախստականները. կը կարծէին որ Հայոց սահմանները կրնան հասնիլ կամ նոյն տեղերն իրենց հայրենակիցներուն բնակութեան տեղ եւ կամ գունդ մը գտնել. բայց պարապ: Ա՛՛ իրենց սրտին մեծ գառնութիւն էր, սակայն ի՛նչ օգուտ. յառաջ երթալ չէին կրնար, կենալը վտանգաւոր կ'երեւար. ուստի ընելիքնին պէտք էին որոշել, վասն զի կերակուր ու բմակելի ալ չունէին: Խորհուրդն այսպէս որոշուեցաւ: Վարդ եւ Արտէն նոյն տեղերը ասդին անդին քանի մը շրջան պիտ'որ ընէին. նախ դիտելու եւ քննելու համար թէ ո՛ր կը գտնուին կամ կայ արդեօք ան տեղերը Հայոց բնակութիւն, եւ երկրորդ քիչ մը կերակուր ու ջուր գտնելու համար: Մէկալ ծառաները գաղտնի այր մը պահուրտելով՝ անոնց պիտի սպասէին: Գացողներն երկու օրէն աւելի պիտի չուշանային:

Պամաց կամաց Վարդ ու Արտէն բլրոյ մը վրայ ելլելու սկսան եւ անկից ալ բարձրաբերձ լեռ մը հասան: Ահագողն ու երկիւղն իրենց վրայ տիրած էր. թշնամեաց երկրին մէջ եւ ընկերներէն ալ զատուած, անդէն ու տկար ի՛նչ կրնային ընել. իրենց ամուր վահանը՝ զօրացուցիչ զաւազաններ էին: Գիշերուան աչքն՝ ան մթութեան մէջ իրենց լոյս կու տար. մինչեւ կէս գիշեր քալեցին ողորմելիները, անկից ետքը անտառի մը մէջ արշալուստ երեւնալուն սպասեցին:

Արեւը ծագելուն պէս՝ նորէն ոտք ելան ու նուազ հեռք մը իրենց առաջնորդ առնելով՝ խորածոր մ'իջան, ուր գեղ մը կար: Հոն Վարդ քանի մը հոգի տեսաւ, որոնք հաց եփելու զբաղած էին, երկու վըշտակիրներուն խորհուրդը միաբան չէր, բայց վերջապէս որոշեցին որ անոնց մօտենան եւ իրենց ճամբէն չեղած բլբլն իմացրնեն: Խօսքն արդիւնք բլբլուն

պէս, Պարսիկները վշտակցութեամբ կը նայէին անտառին մէջ թափառող դժբախտներուն եւ անոնց քիչ մը հաց ու ջուր տալէն ետեւ՝ իրենց գեղը հրաւրեցին: Ծերունի Պարսիկ մը երկուքն ալ իր տունն առաւ եւ անոնց առջեւ գինի ու միս դրաւ: Հոն իմացան երկու բարեկամները թէ նորէն Հայոց ու Պարսից մէջ պատերազմ բացուած է: «Ահազին ու անթիւ գնդեր, կ'ըսէր ծերունի առաջնականը, անհամար խմբեր Հայոց դէմ կ'երթան, եւ կարծեմ աս անգամ զամէնքը կը ջնջեն, Հայոց երկիրն անապատ կը դարձրնեն», Վարդ ու Արտէն աս գուժերէն զատ ուրիշ շատ բան ալ լսեցին եւ ծերունոցն շնորհակալ բլբլալէն ետքը՝ աղաչեցին որ իրենց քիչ մ'ալ պաշար տայ. բարեսիրտ Պարսիկը յանձն առաւ ու ելաւ ուղածնին գնելու գնաց:

Պարսիկը հաց ու պտուղ գնելու համար երթալուն պէս՝ երկու բարեկամք տրտում տխուր իրարու երեսը կը նայէին: Երկուքին սիրան ալ վերաւորուած եւ անոնց վրայ մեծամեծ ու ահազին ժայռեր ինկած կ'երեւար. մէկը զմէկալ չէր կրնար մխիթարել: Սահմաններն անցնելու համար պէտք էր շրջան, մեծ շրջան ընել. Պարսից զօրքերը Հայոց սահմանները բռնած էին: Աս վշտագին խօսակցութեան ատեն սոսկալի դռնչիւն մը օդը թնդացուց: Վարդ ու Արտէն սարսափած՝ անէն դուրս վազեցին. պարսկական զօրաց խումբ մը գեղը մտնելով՝ իր գազանաձայն երգովը գեղը կ'ողջունէր. . . : «Վարդ, ըսաւ Արտէն, մեր հոս կենալն ինձի գէշ կ'երեւայ. ծերունի Պարսիկն իմացաւ որ մենք Հայ եւք, բայց մեզի կը խնայէ. աս գազաններէն մէկը զմեզ տեսնելու բլբլայ, ձեռքէն չէնք կրնար ազատիլ. որչափ կրնաս ն՛՛ վազէ, ետեւէս եկուր», Արտէն նոյն խօսքերն ըսաւ ու տան պարտիզին մէջէն անցնելով՝ մերձաւոր անտառ մը մտաւ: Գունդն անոնց փախչիլը տեսած էր. քանի մը հոգի եղուկներուն ետեւէն ինյալով՝ նոյն ծառախիտ անտառին մէջէն զանոնք կը հալածէին: Այսպէս Վարդ

ու Արտէն՝ դրդուած ու հալածուած գազանի պէս, որն որ պարապ տեղ կը ջանայ զինքը հալածողներէն պրծիլ, անդադար առդին անդին կը թափառէին:

Յանկարծ իրիկուան մօտ սարսափելի փոթորիկ մը բոլոր բնութիւնը սեւաթուր քողով մը ծածկեց. շանթը՝ հօւր վառած կը շողար, սրտումը կը թնդար, անձրեւը սրբնթաց հեղեղներու պէս կը թափուէր, աս ամէն բան ողորմելի փախչողներն ահուդողի մէջ կը խոթէր: Շատ հեղ իրենց քով ահագին ու երկնաբերձ ծառեր շանթէ զարնուած՝ կտոր կտոր կ'ըլլային. մութն երթալով աւելի կը սաստիկանար, անոր համար ալ մեկզմէկ տեսնել չէին կրնար. գոչելով միայն հազիւ կրնային իրար գտնել ու մէկը մէկալին խօսքն իմանալ: Արծեւով որ դեռ կը հալածուին, շարունակ դար վեր կը վազէին: Իրենց երեւակայութիւնը հալածչաց անդուծ անագորոյն աղաղակը, անոնց նետերուն ու սլաքներուն հեծելուն ձայնն ահանջնին հասցրնելով՝ իրենց վազքին թեւեր կուտար: Յորդահոս վտակ մը փախչողներուն երազ շարժումը կեցուց. բայց աներկիւղ ու ճեպով անցնելէն ետեւ, Վարդ սարսափեցաւ մնաց, երբ որ տեսաւ որ ընկերն աներեւոյթ եղեր է:

Արիւ ժամէն աւելի զանիկայ գտնելու համար շորս կողմը գնաց եկաւ: Գիշերն ադուաւի գունով մը ամէն բան ծածկած էր, Վարդայ աղաղակին պատասխան տուող չկար, իր գոռում գոչումը պարապ կ'երթար: Ուրիշ բան չէր կրնար ընել, բայց եթէ իր փախուստը մինակ շարունակել կամ նորէն ընկերը փրկուուելու համար լըրնալըն սպասել: Իր սիրելի բարեկամին սերը յաղթեց: Երբ որ գիշերը հեռացաւ գնաց, Վարդ եկած տեղերէն նորէն գնաց անցաւ, բոլոր անտառը զննեց, վտանգն ու երկիւղն ոչինչ սեպեց. ամէն տեղ մտաւ ելաւ, բարձր ձայնով կանչեց, բայց զուր, ընկերը չկար, եւ ոչ իսկ նշմարանքը կ'երեւար: Ան ատեն Վարդ իր հաւատարիմ ընկերը կորսնցրնելուն համար խիստ տրտմած, ծամբան մի-

նակ յառաջ տարաւ ու իր ծառաներուն կեցած այրն ու զեց երթալ: Ճամբուն մէջ իր անօթութիւնը քանի մը լեռնային պտուղներով անցուց, վճիտ աղբիւրներէն ծարաւը նուազուց:


Ախօրուան մօտ իր տկարութիւնն ու արեւուն սաստիկ ջերմութիւնը զինքը շուքի մը տակ նստելու ստիպեցին: Իրիկուան դարձեալ ծամբայ ելաւ. ասողներն իրեն առաջնորդ պիտ'որ ըլլային, սակայն մըրբկալեց օգն երկինքը նորէն ամպերով պաշարեց եւ զՎարդ շփոթուց. ողորմելին ստիպուեցաւ սաստիկ աշխատութեամբ ու ջանքով ծամբայ փնտռել:

Այս գիշերուան մօտ երկինքն երթալով աւելի կը նսեմանար. երկնաբերձ ու սեպածեւ լեռ մը Վարդայ դիմացն ելաւ: Պատանին անոր վրայ ելլել սկսաւ, վասն զի կարծէր որ եթէ անոր գազալիս ելլելու ըլլայ՝ զրեթէ իր ընկերներուն պահուածքած այլը հասած կը սեպուի: Գոժուարաւ ու սողոսկելով վերջապէս գազալիս կը մօտենար. երբեմն ոտքին տակ քարեր կը թաւալէին, երբեմն խորին վճեր իր ընթացքը կ'արգելէին: Յանկարծ բոլոր անդամներուն ու սկրներուն մէջ սարսափ մը թափանցեց մտաւ. Վարդ ինք զինքն օգի վրայ կը կարծէր, ստուբներուն տակ երկիր չկար. պզտիկ ու ծանր քարեր ետեւէն գալով՝ զինքը դեպիսն ճնշեցին, պարապ տեղ կ'աշխատէր զինքը ճնշող բեռէն ազատել. իրեն այնպէս կ'երեւար որ խորունկ անդունդ մ'ինկած ըլլայ: Նոյն ատեն կսկծելի ու սաստիկ ցաւեր սիրտը խոցեցին, շատ հարուածներ բուր մարմինը վերաւորեցին. խելքը կորսնցուց, մարեցաւ, անշարժ ու անկենդան մնաց:



Գ Լ ՈՒ Խ Ժ Ը

Կենդանացած խեղճը:



ՎԱՆՆ Պարսկաստանէն դառնալուն պէս՝
 Չուիկ ուրախութեան նշոյլ մ'ունեցաւ, սակայն նոյնը շատ կորսնցուց: Իր սրբույն կրկին դարձն ու զինքն անձամբ տեսնելը մեծ երջանկութիւն կ'երեւար իրեն: Բայց Վահան իր ուրացութեան պատճառաւ մարդու երես տեսնել չէր ուզեր, կարծելով որ ամէնքը զինքը սաստկակոծ պիտ'որ ընեն ու յանդիմանեն: Այսպիսի սքանչելի սրբույ մը երեսը չտեսնելը շատ մեծ վեշտ էր Չուիկայ: Շատ անգամ իր խցին մէջ Աստուծոյ առջեւ կ'իյնար եւ անկից շորհք ու սղորմութիւն կը խնդրէր, աշուրներն երկինք դարձուցած այսպէս կը գոչէր. «Տէր, դուն տուր, դուն առիր: Բայց Տիմայ քու առջեւ ինկած, կ'ազաչեմ, կը խնդրեմ քեզմէ . . . : Սոսկալի արեւոյց գիշեր մ'ինկած է գլուխս. այսուհետեւ ամենեւին մխիթարութիւն չունիմ: Հմայեակս . . . անհ, սիրելի Հմայեակ, շատոնց բաժնուած հեռացած է ինձմէ . . . : Վահանս չեմ գիտեր ինչու չի տեսնուիր . . . ինչ վեճակի մէջ ես, Վահան. ինչ մտաց վրայ ես արդեօք . . . որդեակ, ո՞ր ես. գոնե եկուր զիս մխիթարէ,

կամ ինձմէ սփոփանք մ'ընդունէ: Հոս դալեդ ետեւ ինչու չես տեսնուիր: Քու անձկալի դարձդ զՎարդ մեզմէ հեռու տարաւ. ուրեմն դուն երեւցիր, երեսդ մի ծածկեր . . . : Երկինք, աւասիկ կը տեսնես որ ամէնքը զիս թողուցած են. բայց ես գիտեմ որ դուն թող տուած չես: Բոյսը սրգիքս, սակայն զՎահան եւ զՎարդն աւելի քեզի կը յանձնեմ: Միացուր զմեզ, գոնե վեր կանչէ ու հոն միացուր. աւասիկ պատրաստ ենք, մի դանդաղեր, կանչէ, կանչէ,»:

Չուիկ առ խօսքերով մէկտեղ առատաբոխ արտասուաց հոտանքներ կ'իջեցրներ եւ անոնցմով իր ճնշուած սիրտը թեթեւցրնել կ'ուզէր: Այս եզանակաւ շատ օրեր անցուց եւ վերջապէս ծանր հիւանդութիւն մը անցած դառնութիւնները պատկեց: Ախտին սաստկութիւնը զինքը գրեթէ գիակ մը դարձուցած էր. տկար ու անզօր, անմուռնչ եւ առանց արբորնջանաց խօսքի մը, անկողնոյ մէջ դամուած էր, եւ միայն միտքը՝ որն որ Աստուծոյ կամքին հետ միացած էր, զինքն ամեն ծանր վշտերուն ու անձկութիւններուն մէջ կը սփոփէր ու կը մխիթարէր:

Վահան ծանշնալով որ իր մօրն ազեւոյց ու հիւանդութեան պատճառն ինքն է, չարագործի մը պէս՝ որն որ դատաւորին առջեւ պիտ'որ ելլէ եւ անոր բերնէն մահուան դատաւճիւր պիտի լսէ, իր սենեակը նստած կը հեծէր: Երեւցաւ քանի մ'անգամ հիւրնդցած ու տժգունած մօրը, սակայն առջեւէն շուտ կը փախչէր. կ'ուզէր ինք զինքը քաջասիրտ երեւցրնել, բայց չէր կրնար: Իր Վարդ եղբօրը յեշտակը, վշտահան մօրը կարեւոր ու մշտնջենաւոր խօսքերը, անդադար ակնաջը կը դռնէին: «Վահան, գեշ ըրիր, ուրացութիւնդ յաւիտենական մահ է քեզի. դարձդ՝ անշուշտ Վարդ եղբօրդ մշտատեւ բանտարկութիւն. եւ դուցէ ժամանակաւոր ու յաւիտենական կենաց վտանգի մ'ալ պատճառ,»: Աս խօսքերը Վահանին մտաց նկարներն ու երազներն էին: Իրեն կ'երեւար որ մոգութեան օրէնքը թող տալով, նորէն Պարսիկն-

բուն հետ կուռիլ ու զանոնք Հայաստանէն մերժել ուղեւու որ բլայ, ժօրք վշտերը մէկ կողմանէ պիտի թեթեւցընէ, մէկալ կողմանէ ալ աւելի պիտ'որ աճեցընէ. իսկ Վարդայ անտարակոյ մահուան առիթ պիտ'որ բլայ: Ար լսէր շատ անգամ հեռուոր Վարդայ խօսքերը. կ'երեւակայէր որ ան առաքինին իր առջեւն եկած՝ այսպէս կ'ըսէ. «Վահան, սիրելի եղբայր, թէ որ ես մեռնելու բլամ», քեզի թողու թիւն կու տամ. միայն թէ դուն միտքդ երկինք դարձուր, մոգութեան օրէնքը մէկդի թող»:

Վահանայ սրտին մէջ կարծես թէ թունաւոր օձ մը մտած՝ սողալով սողին անդին կը թափառէր, ու իր աղբաներէն մահարեւր հիւթ մը հեղով՝ ողորմելոյն արիւնն ու մարմինը թունաւորել կը բաղձար: Անոր կենդանացած խիղճն էր, որն որ իր ուրացութիւնը կը կշտամբէր:

Պայծառ ու աստեղագարդ շողշողուն գիշեր մը, երբ որ ամէն տեղ խաղաղութիւնն ու խոր լռութիւնը կը տիրէր եւ իւրաքանչիւր որ իր հանդիսան ու հանդարտութիւնը քաղցր քնով մը կը վայելէր, Վահան իր միջին սենեկին մէջ արթուն կեցած էր ու կը մտածէր: Խաղաղ օդը մեկենիմէկ փոխուեցաւ ու խռովութիւն սկսաւ. իսկ Վահան շատոնց արդէն անոր մէջն էր ու հանդիստ չէր կրնար դռնել: Ինչպէս որ Պետրոս իր ուրացութեամբն երկչոտ ու անարի եղած, եւ իր խղճի մտաց ահագին ցաւերը զգալով, սողին անդին կը թափառէր, նոյնպէս Վահան իր սրտին անձկութեամբն ու անհանդարտութեամբը չէր կրնար տեղ մը կենայ: Երթալով աւելի խիստ կը շնչէին գիշերուան հովերը, ալ սաստկագոյն կը գոռար փոթորիկը. սակայն անոնցմէ աւելի ահագին ու սարսափելի էր Վահանայ կուրծքին մէջ թնդացող որոտումը: Այսպէս մարդ շատ անգամ անխորհուրդ գործք մը գործելով, ինք իրեն չարեաց առիթ եւ ուրիշներուն ալ ցաւոց պատճառ կ'ըլլայ:

Ղոյսը ծագեցաւ եւ անոր հետ մէկտեղ օդոյ

խաղաղութիւնն ալ երկրիս վրայ իջաւ, բայց Վահանին աղմուկը նոյն էր: Նոյն օրը բարեկամ կամ ծառայ իրեն չերեցաւ. ինքն ալ ամենուն առջեւն կը փախչէր: Գիշերը նորէն եկաւ, Վահան քնանալու խուցը գնաց. ան խաղաղիկ խուցն ալ զարհուրելի խիղճն իրեն հետ մէկտեղ տարաւ: Անեկին դուռը բանալով՝ գլուխը դուրս կ'երկընցընէր, ծակատը պատին կը կռթնցընէր. բայց այն հնարքերուն զովութիւնն իրեն չէր օգնէր. ինք զենքը միշտ հրոյ, միշտ հնոցի մը մէջ նստած կը կարծէր: Երբեմն աչուրները բարձր լեռներու եւ հարթ դաշտերու վրայ կ'ուղղէր, սակայն անոնց գեղեցիկութիւնն իրեն չէր երեւար. երկնաւոր կամարը, անոր վրայ եղած բիւրաւոր աստեղաց փայփլելը, լուսնոյ արծաթագեղ դէմքը՝ իր աչքին տակ չէին իյնար. վեր նայելու ալ ինք զենքն արժանի չէր սեպեր: Բոլոր սքանչելի բնութիւնը, որն որ հասարակօրէն իր շքեղութեամբն ամէն ազնիւ ու բարեպաշտ սիրտ իրեն կը քաշէ, Վահանին համար անզօր ու տկար էր: Ուր որ աչքը կը դարձնէր, իր դժբախտ կերպարանքը կարծես թէ հայելոյ մէջ կը տեսնէր եւ առ խօսքերուն սրտաբախ հնչիւնը կը լսէր. «Վահան, դէշ բըիր»:

«Ո՛հ, դստն, խիստ խօսքեր, պոռաց Վահան այնպիսի անձկութիւններու մէջ. ալ դադրեցէք, այսուհետեւ զիս մի հալածէք», Բայց պարսպ, դադանի ու զարհուրելի ձայն մը կը գոչէր. «Գէշ բըիր»: Վահան իր կենդանացած խիղճն ու անկից ծագած խռովութիւնը չէր կրնար հանդարտեցընել: Գաղանի զօրութիւն մը զենքը կը չարչարէր եւ մահացու անձկութիւն մ'ալ բոլոր անգամները թափանցելով՝ զենքը գրեթէ անշունչ անկենդան կ'ընէր: Ուստի նուազած՝ տեղ մ'իսկաւ նստաւ եւ քանի մը վայրկեան այնպէս մնաց: Սրտին հանդարտութիւնը կորսնցուցած, իր ջերմ արիւնը սառած, երակներուն մէջի երթեւեկութիւնն ու շրջանները դադրած էին: Վահանայ մտաց ու աչքին առջեւ եկող այլեւայլ պատկերները՝ Վար-

դայ ու Չուիկ իր դժբախտ մօրը նկարներն էին: Վարդայ տեսութիւնն իր մտաց մէջ նորոգուած էր. կը կարծէր որ Վարդ զինքն ազատելու համար Պարսկաստան նոր եկած, զինքն առաջին անգամ տեսնելուն կը գրկէ: Գարձեալ Վահան ինք զինքն ան ատենուան բաժանման մէջ կը կարծէր. առաքինի Վարդն եւ ուրացող Վահան քովէ քով նստած, մէկն ուրախութեամբ, մէկալը տրտմութեամբ իրարու կը նայէին. Վահան այնպիսի անմեղ պատկեր մը իր տեղը Պարսկաստան թող տալուն համար կու լար կ'ողբար. իսկ Վարդ զինքը կը վսիթարէր ու կը քաջալերէր. «Աստուծոյ օգնութեամբն ու կամօքը նորէն կը տեսնուինք», կ'ըսէր:

Վահան աս մտացածին նկարին վրայ աչուրները սեւեռած ատեն, սկսաւ սիրար կակոնայ ու երկու աչուրները լեցուիլ: Ազնիւ խորհուրդներու մէջ ընկրման եւ մտօք Վարդայ քով փոխադրուած՝ անոր ձայնը կը լսէր, որն որ արդայնատութեամբ իրեն կ'ըսէր. «Վահան, ցանկալի եղբայր, քու վերքդ մեծ է, սակայն զնա աս դարպասէն, շուտ հեռացիր ու քաջութեամբ եւ Աստուծոյ շնորհքովն ահադին ու մշտնջենաւոր վերքդ բուժէ:

«Այն, անձկալի Վարդ», գոչեց Վահան նոյն երազին մէջ, եւ թեւեւր տարածեց եղբայրը գրկելու համար, բայց երկու ձեռքովն իր կուրծքը ճնշեց: Ասկից ետքը կամաց կամաց վրան սրտի թեթեւութիւն մ'եկաւ եւ կարծես թէ քաղցր քնէ մ'արթնցած ու իրօք Վարդէն նոր բաժնուած, սկսաւ դեղին ու գրեթէ սպիտակ այտերուն վրայէն վտակներ անցընել: «Սիրելի Վարդ, ըսաւ ցաւով մը, գոնէ քու անմեղութիւնդ ու հաւատքդ ունենայի ես: Յառաջագոյն հաւատք, յոյս ու սէր ունէի, աղօթք ընէի կարող էի . . . : Իսկ հիմա . . . սէր է հաւատքն ու սերը . . . : Աստուած, ան ատենէն վեր ես ինչ եղայ: Արընամ եղեր հաւատքիս մատնիչ բլլալ . . . չէ, չէ. այլ չեմ կրնար աս աղետալի վիճակին մէջ մնալ . . . բայց

թէ որ Պարսիկները փոփոխութիւնս իմանալու բլլան, անշուշտ Վարդ եղբայրս շլթայի կը դարնեն եւ գուցէ գուցէ հաւատքն ուրանալու վտանգի մէջ ալ կը խոթեն:

«Սակայն վերիվերոյ զղջումս ու անգործունեայ կեանքս ինչ օգուտ է, եթէ թողում որ եղբայրս հոն մարմնով մեռած սեպուի, ես հոս հոգւով վախճանած համարուիմ: Արնամ արդեօք երկու չարիքներէն ալ ազատիլ: Շատ դժուարաւ . . . : Թէ որ Պարսիկները միտքս իմանալու բլլան, նորէն ինծի դեմ կ'ելլեն, ապականիչ պատերազմը դարձեալ կը բորբոքի եւ սկզբտէ երբ կը շիջանի . . . »:

Իսեղճն այսպիսի բերազդի խորհրդոց մէջ կը ծփար ու կը դեղեւէր, երբեմն խռովելով եւ երբեմն մեղմանալով, մերթ աղօթելով եւ մերթ լուռ կենալով. բայց վերջապէս երկնաւաք նշոյլ մը միտքը թափանցելով՝ այսպէս պոռաց. «Չէ, պէտք է որ զիս ու եղբայրս ալ ազատեմ. այսուհետեւ ուրացող չեմ. եկեղեցւոյ արհամարհանքը, հաւատակիցներու գայթակղութիւնն ու իմ նախատինքս պէտք է որ վերցընեմ: Շնորհակալ եմ, Աստուած, որ այնպիսի ազդեցութիւն մը սիրտս խոթեցիր. այնպիսի հրեշ մը մնալէն զիս ազատեցիր: Այսուհետեւ կամացը ու ազդեցութեանդ կը հետեւիմ: Ես ինչ որ բլլամ նե բլլամ. միայն Վարդ եղբօրս վրայ կը վախնամ, սակայն ան ալ քեզն յանձնելէն ետեւ ինչու պիտի վախնամ: Մեռնիլ աւելի, քան թէ ուրացող ու յանցաւոր մնալ. թող հոս մեռնիմ եւ մեռնելովս նախատինքդ ջնջեմ»,:

Վահան աս խօսքերը զուրցելէն ետքը. «Վայ ձեզի, Պարսիկներ, գոչեց. այսուհետեւ դուք մեր հայրենիքը գործք չունիք. ալ մեր կրօնն ազատ պիտ'որ բլլայ, ամէն մարդ բաւական կրեց»,: Ըսաւ ու դուրս յարձակելով՝ ծառայ մը կանչեց, եւ իր սուրն օդը շողացընելով, հրամայեց որ իրեն երկվար մը բերէ, կարելի եղածին չափ շուտ բերէ: Բայց շփոթութե-

նէն բրածը չէր գիտեր, որովհետեւ պատերազմ սկսե-
լու համար նախ այլեւայլ պատրաստութիւններ պէտք
էր ընել եւ նախարարաց խումբն ալ ժողովել: Ծա-
ռան իր սիրելի տիրոջ բարկութեան ու այլայլութեան
պատճառը չգիտնալով, ձի բերելու չէր համարձակեր.
Վիթութեան մէջ ինկած՝ ընելիքը չէր գիտեր: Աւեր-
ջապէս հոգի առնելով՝ երկար մ'առաւ բերաւ: Աւ-
հան իր մտաց խռովութենէն սթափելով՝ իմացաւ որ
իր աճապարեւն անօգուտ է, մանաւանդ թէ փասա-
կար ալ կրնայ ըլլալ. անոր համար նախ այլեւայլ իշ-
խանաց նամակներ խաւրեց եւ անկից ետքը ձի հեծ-
նելով ու յանձնելով որ սիրելի մօրը զղջացող որ-
դւոյն բարեւը տանին, ինք խոյացաւ իր զօրաց քովը
գնաց. բայց միտքը Պարսիկներուն դէմ յայտնի վտա-
րանջել չէր:

Հայոց իշխաններուն ու նախարարներուն միտքը
Աւհանին մտաց համաձայն չէր. շատերն եկեղեցւոյ
արհամարհանքն ու քրիստոնէից քակտումը տեսնե-
լով՝ կը հալէին ու կը մաշէին եւ անոր ճար մը կը
փնտռէին: Արոնք որ Պարսից հետ մէկտեղ միաբան
պատերազմի գացած ու դարձած էին, Պարսիկներուն
Հեփթաղաց դէմ բրած պատերազմին անյաջողու-
թիւնը տեսնելով եւ Արաց Ասխթանի թագաւորին
ապստամբութիւնը լսելով՝ հոգի ու յոյս առին եւ
ծածուկ իրարու հետ խօսակցելով եւ կրկին ու կրկին
մէկմէկու քով դալով, իրենց խորհուրդը Աւհանին
ալ յայտնեցին: Ան ատեն իմացուց իրենց Աւհան
որ ինչ վշտաց ու վարանմանց մէջ է, իր խղճին
անհանգստութիւնը ծանոյց անոնց եւ զրուցեց որ
մահը հազարապատիկ աւելի կ'ընտրէ, քան հաւա-
տագրութեւ ու ռիտազանց մնալ, սակայն վտարան-
ջութեան խորհրդոյն ալ չի կրնար ինք զինքն որո-
շել, որովհետեւ ուրիշն օգնութենէն յոյս չունի,
Հայոց նախարարներուն անմիաբանութեան փորձն ալ
անձամբ շատ անգամ առած է: Այսպիսի խօսակցու-
թիւններէն ու խորհուրդներէն ետեւ, երբ որ նախա-

բարը Աւհանայ ըսածներուն հաւանեցան եւ իմաս-
տութիւնը գովեցին, բայց միանգամայն անոր առ-
ջեւ զրին որ ալ չեն կրնար համբերել եկեղեցւոյ
այնչպիսի արհամարհանքը տեսնելով, Աւհան ու Աւ-
սակ իր եղբայրն ալ անոնց արիւթեան վրայ զարմա-
նալով, յայտնեցին որ իրենք պատրաստ են եկեղե-
ցւոյ ու հայրենեաց համար իրենց արիւնը թափել:

Այն ժամանակ Աւհանայ ցաւագին յիշատակ-
ները դարձեալ նորոգուեցան. Արդ եղբայրը միտքն
եկաւ, անոր համար այսպէս գոչեց. «Ախ, ցանկալի
իշխաններ, գիտէք որ Արդ եղբայրս Պարսից դուռն
է. թէ որ անոնք մեր ապստամբին իմանալու ըլլան,
անշուշտ եղբայրս բանտ կը դնեն, շատ տառապանաց
մէջ կը խոթեն. բայց ամենայն ինչ Աստուծոյ ձեռքն
է»: Ասկից ետքը ամէնքն ալ հոգւով ու մարմնով
միանալով եւ Աւետարանի վրայ ալ ձեռք դնելով՝
երգում ըրին որ իրենց հաւատքին մէջ հաստատուն
մնան, իսկ ուրացողը թողուն որ իր պատիժը գտնէ:

Այնուհետեւ պատերազմն ու յաղթութիւնը
մէկտեղ կ'ընթանային. Հայոց դիւցազներուն քաջու-
թիւններն ու Հոբրին բրած սքանչելեքն ո՞վ կրնայ
պատմել: Աւհան ան երեւելի յաղթութիւններէն
ուրախացած ու յորդորուած՝ նոյն ձմեռը հանգարտ
կենայէն ետեւ, զարնան նորէն կուռոյ սկսաւ: Խրկեց
նաեւ հրեշտակներ չորս երեւելի նախարարութեանց
ալ Արծրունեաց, Անձեւացեաց, Ռշտունեաց եւ Մու-
կաց ու յորդորեց որ զան իրեն հետ խառնուին, հա-
տարակաց ազատութիւնն ու փրկութիւնը հոգալու
համար. սակայն անոնց սահմաններէն միայն երկու
հոգի զալու յօժարութիւն ցուցուցին. սեպուհ մը
Յովհան Անձեւացի եւ Ներսէս Երուսնդունի իշխանը՝
քաջն ու երեւելին:

Ներսէս շատ ատեն չէր որ Տայոց աշխարհքը
թողուցած՝ Հայաստանի հարաւային կողմերն եկած
էր: Թէպէտ եւ հայրենեաց հեծութիւններն ու ող-
բերը պակաս չէին, սակայն Պարսիկներուն յարձակում

ներն առ ժամն դադրած ըլլալով, Ներսէ՛՛հ իր սիրելի
 Շաւարշ բարեկամն առած ու բուն իր երկիրները դա-
 ցած էր, հոն խաղաղ ապրելու համար եւ պատշաճ
 դէպքով մ'ալ ղՇաւարշ՝ Չուիկ քրոջը ներկայացրնե-
 լու: Սակայն շատ ժամանակ չ'անցած՝ նորէն պատե-
 ռազմը բորբոքեցաւ եւ Վահանայ յորդորն ու հրաւերը
 բոլոր իշխանաց գնաց: Ե՛կ կողմանէ Երուանդունոյն՝
 հասարակաց օգտին վրայ ունեցած սերը սաստիկ էր,
 մէկալ կողմանէ քաջ Վահանայ հրաւերն ազդու եւ
 զօրաւոր էր. անոր համար ելաւ Ներսէ՛՛հ Շաւարշին ու
 Յովհանն Անձեւացւոյն հետ մէկտեղ եւ ուրիշ շատ
 քաջերով Գուին քաղաքը գնաց ու հոն Վահանայ
 հետ միացաւ: Հոն տեսնելու էր Վահանայ ու Երուան-
 դունոյն ուրախութիւնը մէկզմէկ տեսնելուն համար.
 հոն դիտելու էր Վահանայ ամօթը զՎարդ իր պատ-
 ճառաւ Պարսկաստան գերի բնելուն համար: Սակայն
 Ներսէ՛՛հ իմաստուն ու մեծանձն ըլլալով՝ Վարդայ
 վրայ ամենեւին յիշատակութիւն չբրաւ, որպէս զի
 զՎահանա աւելի շարտմեցնէ: Նոյնպէս Շաւարշ սպի-
 տակալի ծերունին շատ ցնձաց, երբ որ իր քեռոր-
 դիները տեսաւ, բայց դեռ ինք զինքը ճանչցընելու
 ժամանակը չէր:

Այսպէս ասոնք եւ ուրիշ նախարարներ ու իշ-
 խաններ Վահանայ հետ միանալէն ետեւ, ելան ա-
 մենքն ալ Հեր ու Զարեանդ դաւառներն իջան, որուն
 մտերը Պարսից բիւրաւոր զօրքն եկած բանակած էր:

Վահան պատերազմի պատրաստութեան ու
 ազգի ազգի վշտաց մէջ եղած ատեն, իր սիրելի մօրը
 մերձաւոր մահուան դոյժը լսեց: Չուիկ ալ իր որ-
 դուցը կենաց վրայ մեծ հոգ ունէր. սակայն որդւոյն
 դարձի եկած ըլլալը զինքը կը մխիթարէր ու հան-
 գիտ կ'ընէր: Եւ յուսահետեւ իր սրտին վրայ եղած ա-
 հագին վէմը վերցուած էր եւ դիւրաւ կրնար շունչ
 սունել տալ: «Վահան, սիրելի որդեակ, կ'ըսէր ստեպ
 ինք իրեն, այսուհետեւ հանդարտութեամբ կը մեռ-
 նիմ», իր վերջին օրերը նոյն խօսքերը կրկնելու ա-

տեն՝ քիչ մ'ոյժ ու զօրութիւն առնելով՝ անկողնոյն
 մէջ նստաւ ու թղթի մը վրայ յաջորդ խօսքերը գրեց,
 պատուիրելով որ նոյն նամակը Վահանայ ձեռքը տան:

«Որդեակ, վերջին անգամ կու տամ քեզի աս
 յորջրջումը: Գողգոթուն ու տկար ձեռքով կը գրեմ քե-
 զի աս կտակս. սիրտս յամր ու դանդաղ կը զարնէ. զօ-
 րութիւնս նուազած, դէմքս գունատ եւ աչուրներս
 տխուր են: Անդամներուս մէջ սառոյց մը կը սկսի տա-
 րածուիլ. դիտեմ որ քիչ մ'ետքը մահը սենեակս ու
 վրասպիտի դայեւ զին յաւիտենական տունը պիտի անանի:

«Որդեակ աս կենանքն ի՛նչ է. վիշաք ու աղէտք.
 իսկ մէկան՝ աղէկ ապրողներուն համար ուրախութիւն
 ու մխիթարանք: Աս է իմ վիճակս ալ, սիրելի Վա-
 հան: Անտարակոյս կը յիշես ան զարհուրելի դիշերը,
 երբ որ Վարդիս համար գլուն արցունքներ թափեցի-
 միտքդ են ու դիտես բիւրաւոր աղէտքս ու անձկու-
 թիւններս, զորոնք քեզի համար կրեցի . . . : Բայց
 հիմակ ուրախ եմ որ նորէն մխիթարութիւն ու հան-
 դիտ գտայ . . . : Որդեակ, հանդիստ ձեզմէ կա-
 խուած է . . . : Վահան, ընդունէ քեզի տալու խրատ-
 ներս, մտիկ ըրէ շատոնց ու շատ անգամ լսած խօս-
 քերդ, որպէս զի կենացդ թեւն առաքինութեամբ
 շարունակես. կը յուսամ որ ըսածներս մէկալ եղ-
 բարցդ ու Վարդայ ալ կը հաղորդես եւ վերջին սիրոյ
 ողջոյնն ալ անոր կու տաս . . . : Ա՛խ, Վարդ, Վարդ,
 անձկալի որդեակ. վիճակդ գիտնայի . . . կամ վայր-
 կեան մը զքեզ տեսնէի . . . :


«Վահան, գիտնաս որ մէյ մ'ալ տուն գալու
 ըլլաս ու ձեպես փութաս մայրդ գրկելու, զինքը տես-
 նելու համար, մայրդ . . . պիտի . . . չգտնես, ո՛չ իր
 սենեկին մէջ կամ ուրիշ տեղ, ո՛չ ալ աշխարհքիս
 մէջ պիտի տեսնես: Ո՛հ, ի՛նչ պիտի զգաս ան ատեն
 . . . : Անձկութենէդ պիտի գոչես ու դարձեալ գոչես.
 Մայր, սիրելի մայր, ո՛ր ես, ո՛ր գացիր . . . բայց պա-
 րապ տեղ. մայրդ հոս պիտի չգտնես. գուցէ ան ատեն
 մարդ մը գունատ ու այլայլած դէմքով առջեւդ ելլէ

ու լայ եւ ականջդ խօսք մ'որոտայով՝ ըսէ. «Մայրդ, ցանկալի Աահան. մայրդ հոս չէ, այլ հոս չէ, հեռու, ասկից շատ հեռու տեղ. . . երկինք դնաց», դարձեալ նոյն մարդը գրեզ ձեռքեդ բռնած՝ գուցէ շիրիմն տանի ու քեզի հետ մեկտեղ նստի ողբայ եւ աս հիմայ գրած նամակս ձեռքդ տայ:

«Պարդա ան ատեն աս վերջին խօսքերս ալ: Մարդուս առաջին ու ամենէն ազնիւ գանձն Աստուծոյ սէրը պիտ'որ ըլլայ. նոյնը քու սիրտդ ալ անկէ, սիրելիս, ծաղկեցուր շքեղ ու անթառամ տունկի մը պէս, թող որ սրտիդ մէջ բոց ու հուր մը վառուի, որպէս զի ամէն օտարոտի բան սպառէ: Սիրէ խաղաղութիւնն ու համբերութիւնը, զգեցիր հեղութիւնն ու հաւատքը, որոնք երբեք չեն հիւնար: Բայց ինչո՞ւ երկընցրենժ, խօսքերս. ասոնք մանկութենէդ լսած չէ՞ս. միտքդ բեր լսածներդ: Մերժէ քեզի մտենալ ու զող մոլութիւնները, նախանձը, ատելութիւնը, անմիբանութիւնն եւ ուրիշ բիւր ակտերը. առ, պահէ քովդ առաքինութիւններով լեցուն դանձ մը. մի կորսնցրներ, մանաւանդ թէ ապահովընէն զատ՝ այլ եւայլ ծաղիկներով ու մարգարիտներով աւելի առատացուր:

«Ասոնք են, սիրելի Աահան, վախճանելու մօտ եղող մօրդ վերջին խօսքերը. ասոնք են սիրտդ անկելու եւ պահելու համար քեզի տուած շողջղուն ու պատուական քարերը, որոնք ուրիշ քարերուն պէս գրեզ ճնշելու տեղ՝ զարմանալի բնութեամբ աւելի կը սիրուին: Ալ չեմ կրնար գրել, զօրութիւնս բոլորովին հատաւ: Աստուած գրեզ սուրբ պահէ, որպէս զի կենացդ յետին վայրկեանը կարող ըլլաս ըսելու. Եկուր, եկուր, անձկալի մահ, առ տար զիս Աստուծոյ ու ճնողացս քով. . . : Մնաս բարով. . . մնաս բարով. . . սիրելի. . . Աահան: Նամակիս վրայ թափուած արցունքները պագ, վասն զի մօրդ սէրը թափեց զանոնք. գուցէ քանի մը վայրկենէ ալ չըլլամ: Մնաս բարով. . . մայրդ յիշէ. . . »:

Չուիկ ասոնք գրելէն ետեւ՝ ալ աւելի չկրցաւ գրել: Բողբովին նուազած՝ անկողին ինկաւ եւ քանի մը ժամէն նորէն զօրանալով, նոյն նամակն առաւ ու քովը կեցող ծառայի մը յանձնեց ըսելով. «Բարեկամ, տուր սիրելի որդւոցս ողջոյնս եւ աս նամակն ալ Աահանայ ձեռքը գիր»: Անկից ետեւ ուրախ զուարթ էր Չուիկ, բայց քիչ կը խօսէր:



Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ .

Հիւրերնիւ աւրոյց մը:

ԱՆՐԴ զժնդակ թմբու թեւէն ու քնէն արթնեցած ատեն, բոլոր իր անդամները կտորտած ու ջախջախուած էին. սակայն սրտի թեթեւութիւն եւ զովացուցիչ հանդստութիւն մը կը զգար: Ապշած ու զարմացած՝ շորս կողմը կը նայէր, կարծելով որ երազ կը տեսնէ. գտնուած տեղը բանտ չէր, խոնաւ, անպիտան ու խաւարչտին տարտարոս չէր. ծիծաղող եւ ծաղկաւէտ դաշտ ու ձոր մըն էր: Նոյն ձորոյն հեղեկ սիւքերը մրմնջելով՝ իր ջերմ ու բոց ձակատը կը զովացընէին. իրմէ քիչ մը հեռու եղած անտառակն եւ անոր մէջ տնկուած նռնենեաց ոսկեշող պտուղներն ու անոնց ձեղքէն տեսնուող կորազեոնահատ շարքերը զինքը կը զմայլեցընէին. իր գըւխոյն վրայէն անցնող գացող գոյնզգոյն թռչուններն իրենց անոյշ դայլայլելովը զինքն կը զուարթացընէին. ան պէսպէս թռչնոց երգին հետ մէկտեղ միացող առուակի մը կարկաշտ, որն որ իր ոտքին քովէն անցնելով՝ մարդերը կ'ուռդանէր, կարծես թէ իր մարմնոյն ալ զօրութիւն կու տար: Ելաւ Աւրդ պառկած տեղէն եւ անդամներն իրարմէ քայքայած ու կտոր-

տած տեսնելով, միտքն եկաւ անցած գիշերուան դժբախտութիւնն ու բարձրաբերձ ժայռերէն դահաւիթիլը: Ահուդողով վեր նայեցաւ ու խիստ զարհուրեցաւ, երբ որ ան երկնաբերձ դահաւանդը տեսաւ: Ատուծոյ բազուկն էր միայն որ այնպիսի դահաւիթութեան ատեն զինքը պաշտպանեց ու մահուրէն ազատեց: Աւրդայ սրտին ու մտաց առաջին իրձն ու խորհուրդն Ատուծոյ շնորհակալութիւնն եղաւ. երկրորդն իր Արտէն բարեկամին յիշատակը. «Մհ, ցանկալի բարեկամ, գոչեց, գոնէ դուն քովս ըլլայիր»:

Աւրդ իր թախծութեան ու տկարութեան շնայելով՝ ելաւ կարկաշտասօ վտակին քով դնաց, նստաւ հոն իր ծարաւն անցուց եւ քիչ մ'ատեն հանգչեցաւ: Ատուծոյ հայրական զուլթը դիտելով՝ որն որ զինքն իր թշնամիներէն ազատեց ու անդնդախոր փոշուրէն պահեց, շատ մխիթարուեցաւ ու դարձեալ վստահութեան վահանաւ ինք զինքն ամրացուց: Ան տեղերուն պողատու, գեղեցիկ ու կենդանի որպիսութիւններն իրեն հոգի տուին. այնուհետեւ այնպիսի տեղ քաղց ու ծարաւ կրելու վախ չուներ, ինչպէս ան զարհուրելի ու ամայի բանտին մէջ: Թէ որ աս ձորոյն մէջ, կ'ըսէր ինք իրեն, բնակութիւն մը կայ, ինծի լաւագոյն է, վասն զի այսպիսի չքնաղ դրախտի մը մէջ անաղորոյն ու արիւնարբու անձանց բնակարան մը չեկրնար ըլլալ. հոստեղի բնակները՝ բնութեան պէս հեղաբարոյ ու հիւրընկալ պէտք է որ ըլլան»:

Փախտատկանն աս խորհուրդներով քիչ մը հանգչելէն ետեւ, ոտք ելաւ ու ծամբայ ընել սկսաւ՝ ոտից նուազ հետք մ'իրեն առաջնորդ առնելով: Երթալով աւելի սքանչելի ու սիրուն եւ զարդարուն կերպարանք կ'առնէր բնութիւնը, կամաց կամաց աւելի առատ ծաղիկներ ու պտուղներ երեւան կ'ելլէին: Մեկենիմեկ հնչէն ու ձայն մը թնդալով՝ Աւրդին ականջն եկաւ. իրօք ալ նոյն դաշտերը ծարակող ոչխարաց հօտ մը կար, որուն պահապաններն երկու երիտասարդ վայելչատես եղբարք էին: Ասոնք մարդու

մը դայտտեանն անգէտ ու անկասկած՝ ուրախ զուարթ-
կեցած ատեն, իրենց ոչխարներուն հզօր պահապանին
հաչիւնն օտարի մը դայն իմաց տուաւ: Անմիջապէս
ոտք ելան երկու եղբարք ու զարմացած եւ վախցած՝
Վարդայ կը նայէին, սակայն անոր դուռնատ ու նիհար
դէմքէն հոգի առնելով. «Այսպիսի տկար երիտասար-
դէ մը վախնալ պարապ է», ըսին: Վարդ մօտեցաւ ու
սրտաշարժ խօսքերով պատմեց իր խեղճութիւնն ու
առջի օրուան իյնալն եւ աղաչեց որ օգնեն իրեն:

«Վժբանաւ մարդ, պատասխանեց երկու եղ-
բարց մեծը, կարծեմ թէ մեր հօրեղբայրը գրեզ պի-
տի չընդունի. թէպէտ եւ իր սիրան ազնիւ ու բարի է,
բայց օտարները չիսիրեր. շատ տարի է որ հոս ամե-
նեւին օտարական մ'եկած չէ. սակայն եկուր դուն
մեզի հետ», ըսաւ ու եղբօրը ցած ձայնով այսպէս
զրուցեց. «Համազասպ, տուն վազէ, եւ պատմէ մեր
հօրեղբօրն աս երիտասարդին հոս դալը, իր դժբախ-
տութիւնն ու Հայ ըլլալն ալ իմացուր. շատ աղաչէ
ողորմելոյն համար, կը տեսնես արդէն թէ որչափ
նուաղած ու անզօր է:

«Մ'եսրոպ, պատասխանեց Համազասպ, ձեռքես
ամէն եկածը կ'ընեմ անոր ընդունուելուն համար»,
եւ վազեց դնաց:

Մ'եսրոպ զՎարդ իրեն հետ դալու հրաւիրեց
եւ կամաց կամաց բլրակի մը վրայ ելելով ու Վարդայ
դաժան ցաւոցը վշտակից ըլլալով՝ յառաջ կը քալէր:
Ճամբան օձակոր էր եւ թէպէտ իսկզբան ձորամէջը
տեսնելու արդեւքները շատ էին, սակայն երթալով
կը նուազէին: Վերջապէս Մ'եսրոպ ուրախութեամբ
գոչեց. «Նայէ, բարեկամ, աւասիկ մեր տունը վարն
է. յուսամ որ հօրեղբայրս կ'ընդունի գրեզ, միայն
թէ դուն միշտ ճշմարտութեամբ ըստէ. Վահրիճ քեզի բան
մ'ըսելու կամ պատուիրելու ըլլայ, մ'ընդգիմանար,
վասն զի ինք ստութիւնն ու ընդգիմութիւնը շատ
կ'ատէ, իսկ ճշմարտութիւնն ու հլուութիւնն իր սիրտը
շուտ կը գրաւեն»,:

Վարդ զարմացած վար կը նայէր. այսպիսի
արժարժիչ ու կենդանացուցիչ տեղ մը կեսնքին մէջ
տեսած չէր: Նոյն ձորոյն ընդարձակութիւնը մեծ բան
մը չէր, սակայն բնութեան գեղեցկութեան լրումն իր
մէջը կը բովանդակէր: Վտակ մը՝ զօրն որ մինչեւ նոյն
ատեն ծառերն իր աչքէն կը գոցէին, մեկէնմեկ անոր
առջեւ ներկայացաւ: Անոր ջրերը բարձր տեղէ մը
մեծամեծ ժայռերու վրայ սահանաձայն վազելով՝ հոն
ջրակոյտ մը կը կազմէին եւ անկից ալ իրենց սասու-
կածայն կարկաչելովն ու մինչեւ վաճառքի բնակա-
րանէն կ'անցնէին: Ասոր չէնքը բերդանման, հաստա-
տուն ու վիմաշէն զարմանալի ամուր մըն էր եւ կ'ե-
րեւար որ հնութեան յիշատակարան մ'ըլլայ: Չորս
կողմը գետակ մը պատած՝ հոն մտնելու նեղ ու ան-
ձուկ անցք մը միայն թողուցած էր: Գետակէն քիչ
մը հեռու անտառներ կային. անտառներէն անդին
երկնաբերձ ու սեպածեւ լեռներ իրենց հսկայածեւ
գագաթները բարձրացուցած՝ գրեթէ բոլոր ձորը կը
պաշարէին, հզօր ու անվիանդ բազուկներու նման տա-
րածուած ժայռեր՝ ձորոյն հովանի կ'ընէին: Վարդ աս
շքեղութեան վրայ զարնուած. «Ո՛հ, պողաց, հոս
պէտք է որ զուարթութիւնը հանգչած, խաղաղու-
թիւնն իր գահը գրած ըլլայ:

«Մինչեւ հիմայ, պատասխանեց ծանր ու մեղմ
ձայն մը, միշտ բնակեցաւ, եւ կը յուսամ որ դուն ալ,
պանդուխտ, նոյնը չես խռովեր»,:

Ը փոթած վեր նայեցաւ Վարդ ու մեծարոյ կը
սքանչելի ծերունոյ մը կերպարանքը տեսաւ: Վահ-
րիճ՝ երկու եղբարց հօրեղբայրն էր, որն որ կողմնակի
ճամբէ մը զգուշութեան համար իր բոլոր սպառազի-
նութեամբը հոն եկած, զՎարդ՝ ան եղուկ ու օգնու-
թիւն խնդրող երիտասարդը կը դիտէր:

«Վ'երիտասարդ, ըսաւ Վահրիճ, արտաքին կեր-
պարանքդ գրեզ Հայ կը ցուցնէ:

«Ըսնայէս է, պատասխանեց Վարդ, Պարսիկ
չեմ: Անգէն ու անզօր ըլլալով՝ կը յուսամ որ ինձի

ձեռնառու կ'ըլլար եւ բնակութեան տեղ մ'ալ կը շնորհէր»:

«Շատ ուրախ եմ որ Պարսիկ չեաւ: . . . Ի՞նչ պէս եղաւ շիտակ ճամբէն խտորիկդ եւ ուստի կու գաս»:

Արդ իր բանտարկեալ ըլլալը, փախուստը, հալածումն ու գահաւանդէն վար իյնալն առանց ինք զինքը ճանչցնելու պատմեց: Ահա՛ ի՞նչ մտադրութեամբ մտիկ կ'ընէր ու իր սուր աչուրներովը կարծես թէ օտարականին ներքինը թափանցել կ'ուզէր: «Գրծբխտ», գոչեց մէկէնիմէկ, կը հաւատամ որ ստոյգ կ'ըսես. միայն գահավիժմամբ կամ որսթռիչ արծուի մը թեւերով կ'նայիր դուն նոյն ձորն իջնալ: Քոյ՛վ բնակութիւն կը գտնես, կենալու ժամանակը քեզմէ կախուած է. բայց անունդ ու ազգատոհմիդ յորձրջումը կ'ուզէի իմանալ»:

Համադասպ իր հօրեղբոր երեսին վրայ ուրախութեամբ ու շնորհակալութեամբ նայելու ատեն՝ Աարդ իր պատմութիւնն իսկզբանէ մինչեւ նոյն ատեն նկարագրեց: Այն նկարագրութեամբ իմացաւ Աահրիժ՝ Աարդայ առաքինի ու զարմանալի բնութիւնը, մակաբերեց անոր ձիւրքերն ալ եւ շատ ուրախացաւ՝ լսելով որ իր հիւրը լանջագեղ Հմայեկին որդին է. այսպիսի ուրախութեամբ ու այլեւայլ խօսակցութիւններով վերջապէս բերդը հասան: Հոն Մեսրոպ սիրով ու մեծարանքով բնդունեցաւ իր հօրեղբայրն ու հիւրը, եւ զամենքը կերակրոյ խոցը տարաւ, ուր պարզ կերակուրն ու պտուղը, գինին ու առողջարար շուրը պատրաստուած էին:

Աահրիժ՝ Աարդայ սերտ բարեկամութիւն ու սերցուցուց, բոլոր հայրենեաց բարերար Հմայեկայ որդւոյն ինքն ալ երախտաւոր ուզեց ըլլալ եւ անոր քաղցն ու ծարաւն անցընել տալէն ետեւ, իրեն հանգստաւետ ու պայծառ սենեակ մը տուաւ, ուր քաղցը քունը պատանւոյն գիրդ ու փափուկ բայց աշխատութեան ու աղետից վարժ անդամները հանգարտեցուց:

Աարդ բաւական հանգչելէն ետեւ՝ անկողնէն ելաւ ու խցին դուռը բացաւ վար գեղեցիկ պարտեզը նայեցաւ: Թեպէտ լոյսը դեռ նոր ծագած էր, բայց Աահրիժ ու իր երկու եղբորդիքը կ'աշխատէին. աւնոց օգնական ուրիշ երկու մարդիկ ալ կային, որոնք կ'երեւար որ ծառայ ըլլան: Աարդ անմիջապէս պարտեզ վազեց եւ ամենուն Քարի լոյս մաղթելէն ետեւ, «Պատրաստ եմ, ըսաւ անոնց, ձեզի օգնելու, հասարակաց գործքն ամենուն կը վերաբերի: Ո՛վ որ այնպիսի գործքի մը ձեռքը կապած կը կենայ կը նայի եւ հասարակաց օգուան ու բարիքը հողալէն հեռու կը կենայ, ամենուն վնաս կ'ընէ եւ ինքն ալ բոլորին անդամ անուանուելու արժանի չէ»:

«Ամիկնեան, պատասխանեց Աահրիժ ծիծաղելով մը, օգնութիւնդ յօժարութեամբ կ'ընդունինք, բայց նախ աղէկ հանգչէ ու զօրացիր եւ գիտցիր որ գործել ուզողին՝ աշխատութիւն երբեք չեպակտիր»:

Ըսաւ եւ զՎարդ առաւ պարտիզին փառաւորութիւնը ցուցուց, որն որ պէսպէս ազինէ բանջարեղէններով ու պտղատու ծառերով եւ գոյնզգոյն ծաղիկներով լեցուն էր: Անկից տարաւ ոչխարներուն ու եզերուն ատուրը պտրացուց. պարտիզին մէկ ծայրն եղող ու վտակին հետ միացող բնդարձակ ձկնարանը ցուցուց, որուն ձկերը՝ Այրարատայ կարմրախայտ ու իշխանաձուկն ձկանց համն ունէին: Այսպէս ամենայն ինչ կարողով ու բնական կամ արուեստական կերպով շինուած էր:

Նոս Աարդ շատ հանգստաւետ օրեր անցուց, այնպէս որ երբեք արտմութիւն չունեցաւ, ամենեւին բան մը չպակսեցաւ իրեն: «Ո՛հ, ինչ տարբերութիւն է աս, կ'ըսէր շատ անգամ ինք իրեն: Ի՞նչ էր բանտն եւ ինչ հիմակ աս դաշտն ու ձորը. հոն մթութիւն ու ամայութիւն կը տիրէր, հոս զուարճալի ու պտղաւետ շքեղութիւն. բանտին մէջ քաղց ու խեղճութիւն կ'իշխէր, իսկ հոս՝ առատութիւն ու անչափ ցնծութիւն. բանտը՝ կարօտութեան, թշուառութեան ու յուսահատութեան տեղ էր ինձի, աս տեղը՝ խաղա-

զուժեան, բարեկամութեան եւ սիրոյ ու վստահութեան բնակարան. հոն դատարկութեան ու ձանձրութեան օրեր կ'անցընէի, հոս զուարթարար աշխատանաց եւ երբեմն ալ զբօսանաց ժամեր,։ Իբօք ալ Վարդ ամենայն ինչ ունէր ու կը վայելէր հոս. բայց գործելէն ալ ետ չէր կենար: Երկրագործութեան ու պարտիզպանութեան արուեստներուն մէջ ճարտար ու տեղեակ ըլլալով, ինչ չէր կրնար բուսցընել, մանաւանդ այնպիսի երկրէ մը, որն որ ամէն բան անաշխատ կրնար մատակարարել: Վարդ նախ քանի մը ծանօթութիւն տուաւ Վահրճին՝ որոնց համար շատ զարմանալով՝ օր մը այսպէս պոռաց. «Մտուդիւ, քրանչելի՛ Վարդ, դուն ուսմիկ կամ անդէտ մարդ չես, Մամիկոնեան ես. բաճնեղդ, գիտութիւնդ ու իմաստութիւնդ կը հաստատեն,»։ Վահրճին ուրախութիւնն ա՛լ աւելի սաստկացաւ, երբ իմացաւ որ Վարդայ հանձարը միայն ասոնց վրայ չէր, հապա ուրիշ շատ գիտութեանց ու լեզուաց վրայ ալ:

Վարդ այսպիսի ձիւղերով Վահրճին սիրելի ըլլալով, ծերունին ամէն բան իրեն, հանձարեղ ու խոհեմ պատանեկին յանձնեց ու անոր իշխանութեան տակ ձգեց: Վարդ անոր փոխարէն իր գործունէութիւնն ընծայեց: Պարտեզն ընդարձակեց ու զարդարեց, այնպէս որ ամէն աչք անոր շքեղութեան ու գեղեցիկութեան վրայ կը զարմանար: Հոն դտնուած պրտազատու եւ վայրենի ծառոց տեսակներն անչափ էին. գեղեցիկատես ծաղիկներն ու անոնց զմայեցուցիչ կարգերը զամէնքը կը զբօսցընէին: Ուրիշ բիւր գեղեցկութիւններու եւ օգուտներու ալ առիթ եղաւ Վարդ. բերդէն դուրս պզտիկ ալօթանոց մ'ալ որոշեց, ուր բոլոր ընտանիքն Աստուծոյ ալօթք կ'ընէին: Վարդայ բարութիւնը, իր յստակ ու հաւատարիմ սէրն ու բարեկամութիւնը, անխոնջ գործունէութիւնը զինքը քիչ ատենուան մէջ ամենուն սիրելի ու հաճոյ ըրին: Վահրճ զինքն որդւոյ պէս կը սիրէր. անոր ծառաները զինքը կը մեծարէին ու իրեն մեծ սիրով կը ծառայէին.

Մեսրոպ ու Համադասպ ալ երրորդ եղբայր մը ստացած էին: Վարդ իր նոր եղբարքը նկարչութիւն ու երաժշտութիւն կը սորվեցընէր:

Այսչափ փոփոխ սիրոյ նշանակ՝ երկու բարեկամաց քաջած վշտերուն պատմութեան հարրդութիւնն ու կրկնումն էր: Վահրճ ալ պատմեց իր պատմութիւնը սիրելի բարեկամին ու որդւոյն միանգամայն: . . . Հմայեկեանց վերջին ու երեւելի պատերազմին մէջ Վահրճ ալ իր որդիներով մէկտեղ՝ կրօնից ու հայրենեաց համար պատերազմած եւ շատ քաջութիւններ ցուցուցած էր. սակայն նոյն ատեն իր որդիներուն իյնալն ու մահը տեսած, իր տան կողոպտուիլն ու այրիլն ալ լսած էր: Ան ժամանակ իր ներքին վերքերուն ցաւերն աւելնալով՝ աւելի դառնութեամբ պատերազմելու սկսած էր. բայց իր արտաքին վերքերն ալ շատցան: Հայք թէպէտ եւ աս կռուոյն մէջ յաղթեցին, բայց իրենց բանը միշտ գէշ էր. այլեւայլ թշնամեաց գնդեր անդադար կռուելու վրայ էին: Վահրճ գրեթէ միշտ վտանգներու եւ մահուան մէջ տատանած, երբ որ իր երկու որբ եղբօրորդիքը բանակ բերուած էին, Պարսիկներընորէն Հայոց գնդին վրայ ինկան ու զամէնքը ցիր ու ցան իրարմէ բաժնեցին: Վահրճ իբրեւ պաշտպան հաւատոյ ու հայրենասէր որդի՝ իր պարտքն ըրած էր եւ խիստ վերաւորուած ու միայն իր երկու զինուորակցաց կամ ծառաներուն քաջութեամբ ու սիրովն ազատած, եղբօրորդիներով մէկտեղ Պարսից երկիրը փախչելու ստիպուեցաւ եւ հոն եղջերուի պէս հալածուած՝ ասդին անդին կը պտտէր: Քանի մ'օր թափառելէն ետեւ, Հայոց սահմաններուն մօտ եղող բարձրաւանդակէ մը ձոր մը նշմարեց: Անոր կենդանութիւնը, գեղեցկութիւնն ու պողաբերութիւնն իրեն վար իջնալու նշան ըրին ու զինքը հրաւիրեցին . . . բայց մէկ երկու օր այնչափ կարօտութեան ու անօթութեան մէջ չկրցաւ ան առատութենէն բան մը վայելել, վասն զի հոն իջնալը շատ դժուարին էր: Վերջին կարօտութիւնն իրեն ու իր ծառանէ-

րուն հոգի ու զօրութիւն տուաւ: Անոնցմէ մէկը՝ որն որ այնչափ ցաւ կրած չէր, իր սիրոջ սիրոյն համար ան ահագին ու սեպածեւ ժայռերուն դադաթննրէն վար իջնալու յանդգնեցաւ: Չեռքէն ու ոտքէն արիւն թափելով՝ վար իջաւ եւ հոն անբնակ ու ամայի ամրոցը գտաւ: Այնուհետեւ հնարք մը կը փնտռէր ամէնքը վար իջեցընելու եւ շատ ատեն մտածելէն ետեւ՝ տեսաւ նեղ ու անվտանգ շաւիղ մը եւ անկից զՎահրիճ ու անոր եղբորորդիքը նոյն բերդը բերելով, ապահով ու թշնամիներէ ազատ բնակութիւն պատրաստեց:

Ա՛հարիճ թեպէտ նոյն ամրոցին մէջ կամաց կամաց առողջացաւ, սակայն իր հասակին ու վերքերուն պատճառաւ նորէն հայրենեաց համար ձեռքը սուր տանել չէր համարձակեր: Իր գործունեայ կենաց բաւական զբաղմունքն երկրագործութիւնն ու Մեսրոպայ եւ Համադասպայ կրթութիւնն էին: Գրեթէ աշխարհքէն բաժնուած իր ամրոցը տանող շաւիղն ալ անանցանելի բրած էր: Կերակուր ու բմպելի բոս բաւականին ունենալով՝ ինքն ալ ասկից հեռանալու հարկաւորութիւն չունէր. միայն երեւելի տօն ու երկիրը խաղաղ եղած ատեն, կ'ելլէին իրենցմէ հեռու չեղող սահմանն անցնելով՝ մտաւոր դեղի մը եկեղեցին կ'երթային, եւ շատ անգամ ան եկեղեցւոյ երէցն ալ իրենց կուգար, բայց երիցուէն ուրիշ մարդ անոնց բնակութեան տեղը չէր գիտեր: Վարդ հոս գալու ատեն՝ արդէն աս երթ եւեկութիւնները զաղրած էին Պարսից ու Հայոց մէջ նորէն պատերազմ բացուելուն համար: Դոյն երանալից դրախտին մէջ օրեր ու ամիսներ անցուց Մամիկոնեանը: Միայն մօրն ու եղբարքը յիշատակը զինքը կը չարչարէին. անոր համար՝ «Ախ, կ'ըսէր շատ հեղ, եթէ սիրելիներս ալ հոս բնակէին, բոլոր աշխարհքին մեծութիւնները կը մոռնայի, աս սքանչելի մեծութեան մէջ շատ աւելի գոհ կ'ըլլայի . . . : Բայց նոյն իսկ անոնց հոս ինծի հետ մէկտեղ գտնուելովն ալ ես իմ հայրենեացս եւ բոլոր ազգին նեղութիւններն ի՞նչպէս կրնայի մոռնալ ու հոս անհոգ եւ դա-

տարկ կենալ»: Գժբախտ պատանւոյն սէրը հոս կը բորբոքէր իր սրտին, մայրն ու եղբարքն այնչափ տարիներէն ետեւ գտնելն ու տեսնելը մեծ երջանկութիւն կը համարէր. անոնց տրամութիւնն ու սուգն ալ ուրախութեան փոխել շատ կը փափաքէր: Միշտ իր մանկութեան պատմութիւնները միտքն էին: Ստեպ իր սիրելի մօրը՝ Շաւարշէն լսած բարութիւնն ու բարեպաշտութիւնը Վահրիճին կը նկարէր. եղբարցն եւ մանաւանդ Վահանին բրած քաջութիւնները, իր սքանչելի հօրն առաքինութիւնները, անոր հայրենաւ սիրութիւնն ու ժողովրդեան եւ կրօնից բարոյն համար մեռնիլը յիշելու ատեն, ինքն ալ նոյնպիսի արութեան կը յորդորուէր: Բիւր անգամ անոնց հեռուութիւնը զաղտնի ողբաց, անթիւ անհամար անգամ անոնց երթալու բորբոքը զսպեց, բայց վերջապէս չկրնարով ինք զինքը բռնել. «Ո՛հ, պոռաց օր մը, ո՛ր էք, սիրելիք . . . : Աղին Վահրիճ, թող այսուհետեւ անոնց երթամ. վտանգներն ու դժուարութիւններն առջեւս ոչինչ են, անկարելին հնարաւոր կը տեսնեմ»:

«Իբաւուր ունիս, ցանկալի Վարդ, պատասխանեց Վահրիճ, տունդ երթալու փափաքը բարի է. բայց մտածէ որ քու անձինդ ու սիրելիներուդ աւելի վնաս եւ ցաւ կրնաս պատճառել: Չեա դիտեր որ Պարսից ու Հայոց մէջ նորէն պատերազմ ծագեցաւ, եւ դժտան ու անազօրոյն կատաղութեամբ Պարսիկները Հայաստան կը դիմեն: Ի՞նչպէս կրնաս արիւնսարբութիւնմեաց մէջէն անցնիլ. սակայն դիցուք որ հայրենիքդ ու տունդ հասնիս. ս դիտէ հոն ինչ դժբախտութեանց մէջ պիտ'որ իյնաս, աս խիստ կուռոյն վերջն ո՛վ կրնայ գուշակել: Վարդ, սիրելի, կեցիք մեր քովը, ապաստ որ աս փոթորկալից ամպն ալ ցրուի. մնացիք, ցանկալի, քու բարութեանդ համար է. կարծեմ թէ ես քեզմէ աւելի հոգ ունիմ վրադ»:

Ա՛րդ տրամութեամբ լուեց. կ'իմանար աս պատճառներուն զօրութիւնը, Վահրիճին բրած անկարելութիւնն ալ կը ճանչնար, սակայն իր հայրենիքը

դառնալու եւ սիրելիքը տեսնելու կենդանի սէրը ծոցին մէջ ժամէ ժամ աւելի կը բորբոքէր: Ա՛րեւակայէր միշտ իր մօրը վշտերը, որն որ թախճութենէն ու տաւրիներուն շատութենէն ծնագած՝ երկիւղի ու յուսոյ մէջ կը սպասէր իր սիրելի կորսնցուցած որդին նորէն տեսնելու: Ե՛կեալ կողմանէ ալ կը մտածէր այնպիսի բարեկամներէն բաժնուելու դժուարութիւնը: Ա՛հՏրիճ իրեն միշտ սերտ բարեկամութիւն կը ցուցնէր, Մեհրոպ ու Համազասպ կը ջանային որ իր արտմութիւնը փարատեն, իրենց բնակութիւնն անոր սիրելի ընեն: Անգամ մը երբ որ մէկէնիմէկ Աարդ սրտին անձկէն շարժարուած ու ստիպուած՝ ամենուն առջեւ «Ա՛լ պէտք է որ բաժնուիմ», պոռաց, Համազասպ զարհուրելով գոչեց. «Գ՛նչ, զմեզ թողնու՛ կ'ուզես, ցանկալի՛ Աարդ. կրնաս. անկարելի բան է . . . ինք զինքդ ստոյգ վտանգի ու մահուան մէջ ինչո՞ւ դնել կ'ուզես . . . լքեալ թողեալ եղած ատենդ՝ զքեզ ո՞վ հոգաց. եթէ զքեզ չընդունէինք, հիմակ ո՞ր եւ ի՛նչ կ'ըլլայիր . . . : Սիրելի՛ Աարդ, հիմայ տունդ չես կրնար երթալ. անշուշտ զքեզ դարձեալ գերի կը բռնեն, եւ գուցէ ալ կը մեռցընեն»:

Ա՛րդ գորովէն ու ցաւէն ինք զինքը կորսնցուցած, անոնց կը նայէր: «Գիտես, պատասխանեց իրեն ԱհՏրիճ, որ մեզի ամենուն սիրելի ես. ուրեմն մեր քովը մնացիր: Գարձեալ կ'ըսեմ՝ քեզի, ապահովութեամբ հայրենիքդ երթալն անկարելի կ'երեւայ ինձի. վտանգներ շատ կան: Թէ որ մայրդ ու եղբարքդ այսպիսի ապահով տեղ ըլլալդ դիտնային, անտարակոյս կ'աղաչէին քեզի որ հոս մնաս, մինչեւ որ աս փոթորիկն ալ անցնի: Աս սրտի անհանգստութիւնը ոչ մենք եւ ոչ ալ դուն պէտք ես կրել, անձկալի՛ Աարդ. դեղեւիլը մէկդի, հաստատուն բան մ'որոշէ, բայց վճիռդ հոս մնալու վճիռ ըլլայ: Կարծեմ մեր խաղաղութիւնը պղտորել չես ուզեր. քու առջեւդ տխուր դէմք ցուցընելու զմեզ չես ստիպեր: Ուրեմն շուտ վճռէ, սիրելի՛ Աարդ, երեք օրէն ետքը նորէն կը հարցը-

նեմ. աղէկ մտածէ եւ Աստուծոյ ալ խորհուրդ հարցուր»:

Ա՛ս երեք օրը Աարդայ դժնդակ կուռոյ ու փորձութեան օրեր էին, խիստ ցաւոց ու աղետից սրտում: Իր հանգստութիւնն ու աս ձորոյն վայելումն ի՛նչ էր համեմատութեամբ հայրենեաց սիրոյն. երբ որ մայրն ու եղբարքն իրեն համար ողբոց ու աշխարանաց մէջ կ'երեւակայէր՝ կը հալէր ու կը մաշէր: Փորձութեան երկրորդ ու երրորդ օրն եկած էր, բայց ինք դեռ բան մ'որոշած չէր: Իրիկուան մօտ մատուռն երթալով ու երեսի վրայ իյնալով՝ Աստուծո՛վ լոյս ու շտորհք կը խնդրէր, օգտակարն ու շահաւէան ընտրելու բարեկամաց ուրակութիւնն ալ արտմութեան չփոխելու: Ամէն բան կշռեց, իր մտաց կոիւն երթալով կը սաստկանար, փորձութիւնը կ'աւելնար, բայց աղօթքն ալ եռանդնալից կը շարունակուէր: Վերջապէս հայրենեաց սէրն ու իրեններուն գութը յաղթեց. սրտաբուխ ու գորովագութ ձայնով այսպէս գոչեց. «Ա՛խ, սիրելի՛ մայր . . . եղբարք, ան վիճակին մէջ դձեզ չեմ կրնար թողուլ. ես ալ պէտք է որ ձեզի օգնական ըլլամ, մեր հայրենեաց, հաւատոյ ու կրօնից համար ձեզի ձեռն տու ըլլամ. յաղթեմ կամ մէկտեղ մեռնիմ: Հոս հանդարտ ու հանդիստ վայելելն ինձի ամօթ է . . . : ԱհՏրիճ, Մեհրոպ ու Համազասպ, պարտքս կատարելուս համար չբարկանաք . . . : Ո՛հ, Աստուծո՛վ, Աստուծո՛վ, օգնէ ինձի, որ կարող ըլլամ այնպիսի դժուարին անջատման ատեն դիմանալ»:

Ա՛արդ աղօթքով զօրացած ու մխիթարուած՝ ելաւ զուարթութեամբ բերդ գնաց. հոն զԱհՏրիճ եւ զՄեհրոպ միայն սեղանի վրայ գտաւ, վասն զի Համազասպ քիչ մ'անհանգիստ ըլլալով՝ չէր եկած: ԱհՏրիճ այն իրիկունը շատ ուրախ ու զուարթ կ'երեւար: Աարդին վրայ արտաբոյ կարգի սէր կը ցուցնէր եւ հաղար անգամ որդեակ յորջորջումը կը կրկնէր. ուրիշ դիշերներէ շատ աւելի ու երկայն ատեն Աարդայ քովը նստելով՝ իրեն հետ կը խօսակցէր: Բայց այս ամե-

նայն Վարդայ սիրան աւելի կը վերաւորէր: Վահրիճ քնոյ երթալու ատեն, ձեռքը պատանւոյն ուսին վրայ դնելով, «Սիրելի Վարդ, բաւ, գիտեմ որ զմեզ չես թողուր», Վարդ ուղեց խօսիլ ու իր միտքը յայտնել. բայց Վահրիճ զինքն արդէն չեց. «Չէ, չէ բաւ, այսօր հարկ չկայ վաղը կը խօսինք . . . գիտեմ արդէն որ հոս կ'ուզես մնալ»,:

Վարդայ որոշումն այսպիսի սիրոյ ու ստիպման առջեւն ալ չեղծաւ. սակայն իր վրայ դառն ցաւոց ծով մ'եկաւ, զինքը ծածկեց. անոր համար մինչեւ կէս գիշեր բիւր անձկութեանց մէջ կը չարչարուէր ու աչքը գոցել չէր կրնար. վերջապէս բիւր մթընցաւ: Բայց դարձեալ շուտ արթննալով տեսաւ որ Համազ զասպ մէկ ձեռքը գեղեցիկ թուր մը բռնած, մեկալը ջահ մ'առած, ելիւր կը զրուցէր իրեն: «Յանկալի, Վարդ, կ'ըսէր մեզմ' ձայնով, ելիւր ինձի հետ եկուր. ամենեւին ձայն մի հաներ, ասնաձայն չլուրի: Գիտնաս որ երեկուան աղօթքդ ու որոշումդ դադանի տեղ մը կեցած՝ լուցի. երթալ կ'ուզես, այսպէս չէ: Իրաւունք ունիս. թողութիւն տուր որ մինչեւ հիմակ արդէնցինք զքեզ: Արդէնք զնոզը մեր սէրն էր. բայց չենք կրնար դէմ դնել քու որդիական սիրոյդ՝ որն որ մերինէն աստիկ է: Վահրիճ զքեզ չի թողուր, վասն զի զքեզ շատ սիրեց. կ'երեւայ որ վտանգ մը կը տեսնէ: Իր բարկութիւնը դուն զեռ չես ճանչնար, չէ բռնել: Ելայ, առջեւը մէյ մ'ալ չես կրնար խօսիլ. ասոր համար եկուր, անձկալի Վարդ, ես դադանի ծամբէ մը զքեզ աղատել կ'ուզեմ: Առ աս սուրն ալ մէջքդ կախե ու անով զքեզ պաշտպանէ. բայց թրէն աւելի Աստուծոյ դթութիւնն ու սերը քեզի օգնական կ'ըլլայ»,:

Բաւ եւ զՎարդ առաւ ծամբայ ելաւ:

«Համազասպ, դուն ես . . . սէ, արգահաստող ու գթած սիրտ. ինչպէս կրնաս դուն ինձի փախչելու ծամբայ սորվեցրնել . . . : Վահրիճին բարկութենէն չէն փախնար:

«Վահրիճ կը բարկանայ ու թողութիւն կու

տայ, պատասխանեց Համազասպ. ինքն ալ կրնայ մտածել որ հնարքը դէշ չէր՝ թէ մեզի թէ քեզի ցաւ չպատճառելու համար»,:

Համազասպ իմաստութեամբ պատասխանելով, Վարդ ելաւ անոր հետ գնաց: Առաջնորդը զՎարդ պարտիղին մէջէն տանելով՝ վտակին քովէն անցուց. կամաց կամաց ժայռերով շինուած պատի մը քով բերաւ, հոն նստարանի մը տակ դռնակ մը կար, որն որ աչքի չէր իյնար: Համազասպ նստարանը մեկդի առնելով դռնակը բացաւ եւ շատ աստիճաններէ վեր ելլելէն ետեւ, ուրիշ դուռ մը հասան: Համազասպ ան ալ բացաւ եւ զՎարդ աղատեց: Անկից իրեն հետ մեկտեղ բարձր բլուր մ'եկաւ եւ մատով իրեն Հայոց երկիրը ցուցրնելով՝ «Վարդ, գոչեց, մեր հայրենեաց սահմաններն անոնք են. զանոնք անցնելուն պէս՝ չէր ու Չարեւանդ դաւառները բարեկամական ողջոյնը կուտան քեզի: Գնա, խայտակն Վարդ, գնա . . . նորէն տեսնուելու խօսք չեմ՝ ընէր, վասն զի դժուարին կ'երեւայ ինձի: Հոգի հրեշտակ մը առաջնորդ բլլայ քեզի ու պահէ զքեզ. ցանկալի հայրենեացս եւ քու մերձաւորացդ բարեւ բրէ իմ կողմանէս . . . երթաս բարով, սիրելի . . .», բաւ ու աշուրները սրբելով՝ դարձաւ յամր քայլերով ամրոցը կ'երթար:

«Մի՛հ, Համազասպ, Համազասպ, պոռայ ցաւով Վարդ, այսուհետեւ զքեզ երբեք պիտի չտեսնեմ. կեցիր, բարեկամ, մտիկ բրէ . . .»: Սակայն Համազասպ իրեն երթալու նշան բրաւ ու արտասուազին ձայնով գոչեց. «Վարդ, մօրդ ու եղբարցդ, մեր կողմանէ ողջոյն տար եւ զմեզ մի մոռնար»,:

Իշուրը գլուխը վեր բարձրացուցած՝ երկու հաւկառակ ուղղութեամբ իջնող բարեկամները բաժնեց:



Արևի գերաններ:



ԱՐԻ ցաւով ու արտմութեամբ ճամբան յառաջ կը տանէր. միայն ըստ խղճի եւ պարտուց Տամաձայն գործելուն վրայ ուրախ էր: Ատուանց կանուխ խոնջ ու տկարացած՝ քիչ մը հանգչելու համար տեղ մը նստելով, ձեռքն եղած քսակին մէջ բան մը դտաւ, որն որ իր տկարութեան կրնար օգնել, սակայն անքուն աշուրներն ալ աւելի կրնար պղտորել. զօրացուցիչ ոսկեգոյն հեղուկն էր, Համազասպայ գաղտնի պարզեւներուն ամէնէն փոքր ընծան: Վարդ հոստորունկ կամ հեռաւոր տեղերէ եկող հընչին ու աղաղակ կը լսէր. փոշի մը՝ որն որ բարձրաբերձ ամպի պէս կ'ելլէր կը բարձրանար, սրտին երկիւղը կ'աւելցրներ: «Գուցէ, կ'ըսէր ինք իրեն, թշնամիք ըլլան», Շատ յառաջ չգացած՝ իմացաւ որ իր անձկալի հայրենեաց սահմաններն առջեւն են, բայց քաջութիւն ու հնարք պէտք էր զանոնք անցնելու: Մեծամեծ վտանգներու եւ դժուարութեանց մէջէն անցնիլ երթալ կ'ուզէր, սակայն նոյն օրն ամեն փորձը պարապի ելաւ. Պարսիկք անցքերը բռնած էին: Նոյն գիշերը մացառուտ տեղ մը պահուրտեցաւ ու ցորե-

կուան ճամբորդութենէն զօրութիւնը կարած՝ խորունկ քնոյ մէջ մտաւ:

Արեւուն բոլորչի դեմքը շատ վեր ելլելէն ետեւ, քանի մը բրտագոյն հարուածք զՎարդ արթնցուցին: Չտրհուրելով, դողդողալով՝ աշուրները բացաւ նայեցաւ, եւ... ո՛հ, դժբախտ ու եղբակ պատանի... պահած ու շուշանի գոյն առած, սկսաւ ստանասառոյց քրտանց մէջ լողալ: Նորէն Պարսից գերութեան մէջ ինկած, պղտիկ անակ մը տարուեցաւ, ուր ուրիշ շատ փրաւոր եւ առողջ Հայեր կային: Վարդ հոն լուռ ու տրամագին եւ կարծես թէ շլացեալ աչքով նրստած, գլուխը անկան մէկ անկիւնը կռթնցուցած, ձորը, խաղաղութիւնն ու բարեկամութիւնը եւ թողուցած հանգստութիւնը կը մտածէր: Գարձեալ գերութեան լծոյն մէջ գտնուիլը, կարօտութեան եւ անազօրոյն մարդիկներու ձեռք իյնալն ու իր սիրելիներէն զրկուիլը՝ խիստ ցաւ ու դառնութիւն էր իրեն. եկաւ մօտեցաւ նորէն Վարդայ սիրտը մոլորեցուցիչ փորձութիւն մը եւ երիտասարդին արիութիւնն ու վերէն տրուած ակնկալութիւնը ջնջել կ'ուզէր...: Իրօք ալ ծանր բան էր՝ հայրենեաց ծոցը մանկու վայրկեանը, երբ որ անկից երկու երեք քայլով բաժնուած էր, նորէն գերի ըլլալ...: Ինչէր չէր փափաքէր զուհեւր Վարդ՝ իրեն երջանիկ երեւցող երկիրն անցնելու համար, բայց պարապ. դիւտ ու միջոց ամենեւին չկար: Աս մտածմանց մէջ ընկղմած՝ կը կարծէր որ սիրտը բիւրազդի ցաւերէն դուրս պիտ'որ ելլէ, եւ այնուհետեւ յուսահատութեան վիճ մը պիտ'որ իյնայ:

Այսպիսի վիճակի մը մէջ օր ու գիշեր մ'անցուց. երկրորդ առտուն ինչ տեսնէ...: Ուրք էլաւ, գնաց, մօտեցաւ եւ մեղմ ձայնով. «Ո՛հ, դուն ես, սիրելի բարեկամ, ըսաւ, դուն ես, ընկեր բանտի եւ աղետից. ծառաները հոն են եղեր. աս ինչ զարմանալի միաւորութիւն է...: Արտէն, ի՛նչպէս բռնուեցար»:

Վարդին ընկերն իսկզբան շփոթած՝ ընկելքը

չէր գիտեր, իրեն ժամանակ պէտք եղաւ համոզուելու որ ստուգիւ Վարդն է առջեւն եկողն ու խօսողը, վասն զի մինչեւ նոյն ատեն զինքը մեռած կը կարծէր: Այսպիսի անակնկալ տեսութենէն՝ Արտեմիսն ունեցած ուրախութիւնն արտաքոյ կարգի էր, անոր համար իր սրտին զուարթութիւնն ու բոլոր զգածմունքն անմիջապէս ստորագրել զժողովուն էր իրեն: Նախ Վարդ սկսաւ եւ ետքը Արտեմ լմնցուց . . . : Այն խոր մթին գիշերը, երբ որ երկուքն ալ լեռնէ լեռ կը փախչէին, Արտեմ ծառի մը կոճղէն զարնուելով՝ գետինն ինկաւ եւ նոյն անկումն իրեն այնչափ միասեց որ ինք զինքը կորսնցուց եւ մինչեւ առտու հոն գրեթէ անշունչ անկենդան մնաց, ասոր համար Վարդայ ձայնն ալ պարսպ տեղ ոգը կը թնդացնէր: Երբ որ Վարդ խոնջ ու վշտագին հանդարտ տեղ մը կը հանգչէր, Արտեմ հազիւ թէ իր հարուածներուն ցաւերէն ու անզգայութենէն արթնցած՝ ճամբայ ելլաւ ու այնպէս ուղղութիւն մը բռնեց որ իր ընկերներուն կարենայ հասնիլ՝ յուսալով որ Վարդ ալ անոնց քով կը գտնէ: Հասաւ ու գտաւ ընկերները, որոնք անձկութեամբ ու յուսով իրեն եւ Վարդայ կը սպասէին, սակայն զՎարդ չտեսաւ:

Ողորմելի փախստականը որոշեցին որ իրենց վերջին ճիգն ի գործ դնեն ու ձեպով սահմանները հասնելով՝ յանդգնին անցնին եւ գոնէ իրենք ազատին, ստոյգ դնելով որ իրենց սիրելի իշխանը մեռած կամ նորէն գերի բռնուած է: Ողորմելութիւնը, ջրոյ ու կերակրոյ կարօտութիւնն արտաքոյ կարգի էին, իրենց աս ազատութեան վիճակը՝ բանտարկութենէն ու գերութենէն շատ գեշ էր, իրենց զօրութիւնը նուազած էր, քայլելու ոյժ չունէին: Բայց յոյսերնին բոլորովին կտրելու ժամանակ Աստուած իրենց օգնեց: Հայոց սահմաններն առանց պահապաններու գտնելով՝ անցան, եւ իրենց անձկալի սակայն զժբախտ հայրենակիցներէն կերակուր ու բնակելի բնիկներուցան: Բայց դեռ իրենց բարեբարներուն բերնէն լուր մը եւ Պարսից

ու Հայոց մէջ նորէն բարբոքած պատերազմին գոյժը չլսած, մէկէն ի մէկ Պարսիկ զօրաց պահեստի գունդ մը շանթի պէս իրենց վրայ ինկաւ եւ զամենքը բռնեց, նորէն սահմանէն դուրս, նորէն խիստ կապաւնաց մէջ ծնդելու տարաւ:

Արտեմ այսպիսի խօսքերով իր ու ընկերաց պատմութիւնը պատմած ատեն, զՎարդ գերի բռնող գնդին զօրագլուխն անոնց բանտարկուած տնակն եկաւ. կրակ ու բաց աչուքներով, թուրը ձեռքը, մտնեցին ու կատարել խօսքերով. «Մոռութեան օրէնքն ընդունողին մահ չկայ, կը գոչէր, շանսացողին դառն ու խայտառակ կախաղանի մահ է», կ'ըսէր: Այն անօրէն հրամանին մէկը միայն հետեւեցաւ. մէկալնոնք ամէնն ալ մահուան դատապարտուեցան, որոնց մէջ առաջին նահատակները պիտ'որ բլլային Վարդ ու Արտեմ հաւատարիմը: Ռաբացող յաղթողի պէս ու ծաղրելով՝ իր աչքն առարինի Վարդայ դարձուցած էր, որն որ աւելի անոր քան թէ իր մեռնելուն վրայ զարհուրած, մարմարեայ արձան մը կտրած էր եւ բոլորովին ալ անոյցն ու անմիտութար կը կենար: Ըն հաւատադուժ ու վատ ոճրագործին, սրբութեանց, հաւատոց ու հայրենեաց մասնչին կենաց շտրհք կ'ըլլար, իսկ Վարդայ ու իր ընկերներուն կենաց թէլը կը կտրուէր: Ո՛հ, զարհուրելի վճիռ . . . : Վարդ կամաց կամաց իր մահուան ալ մօտաւորութիւնը միտքը բերելով՝ դողալու սկսաւ. մտքէն շատ խուրհուրդներ, բիւր մտածմունքներ կ'անցնէր . . . : Շատ անգամ «Արեւօք խաղաղ ձորը թող տայով՝ հայրենեաց ու կրօնի պարտքս կատարելու համար է աս մահը, կ'ըսէր ինք իրեն. բանտէն փախչելուս կամ գուցէ ուրիշ յանցանք մը գործելուս համար է աս պատիժը. թէ որ անցաւոր պատահաս մը այնչափ ահագին կ'երեւայ, ի՞նչ պիտ'որ բլլայ մշանջնաւորը»: Ընմիտարութիւնն ու սարսափը Վարդայ սրտին մէջ վայրկեան վայրկեան կ'աւելնային. վատահամբաւ մահը դեռ դառն դահիճներէն չկանչուած, ինք իրեն զՎարդ մեռցնելու եկած էր.

դժբախտ պատանւոյն աշուրները շաղան, շունչը հասաւ. հաւատքն ու յոյսն իր կենաց սիւները, որոնք այնպէս հաստատունն ու հօր էին, շարժելու եւ խորտակելու նշաններ կու տային: Ի՛նչ, Արդայ զթած ու հեղ եւ երկնաւոր Հայրը կրնար զինքը թողուլ: Այսպիսի թշնամանք ու խեղճութիւն մը կարելի՞ էր որ Արդայ գլուխն իջնար: Այսու ամենայնիւ անոր անմխիթարութիւնը կամաց կամաց յուսահատութեան կը դառնար, ամենեւին յենարան մը չունէր, ձեռնտու ձեռք մը վար չէր գար, զինքն աս ողբալի անգնդէն հանելու բազուկ մը չէր երեւար: Զինքը ծաղր ու ծանակ ընող աղաղակներ կը հնչէին. անհաւատներն իր մինչեւ հիմակ ունեցած հաւատքն ու կրօնքը կը թշնամանէին . . . մեծամեծ ալեաց դեմ զնող հաւատքը հիմայ շիջանելու նշաններ կը ցուցնէր . . . երթալով մութն ու խաւարը զինքը կը պատէին . . . :

Պարսիկները Արդայ ձեռուրները կապելու ատեն, ամենեւին ընդդիմութիւն չբրաւ. խօսք մը զըուցելու բերան չբացաւ. աչքը գետինը սեւեռած՝ դահճաց ետեւէն կ'երթար: Պարսիկ մ'անոր վրայ գլխալով, իրեն քանի մը մխիթարական խօսք զըուցեց, սակայն Արդ իր ողբերունն ու պատերազմներուն մէջ ընկղմած՝ ամենեւին բան չսեց: «Գուցէ, ըսաւ Պարսիկը, խօսքերէս աւելի պաղ ջուր մը զինքը կը մխիթարէ», եւ մէկ ձեռքը քակել տալով՝ անոր բաժակ մը ջուր տուաւ: Արդ ջուրը խմեց եւ աշուրներն երկինք դարձուց . . . : Նոյն վայրկեանն երկնառաք լոյս մը սիրար թափանցեց. կարծես թէ աղբու եւ յանդիմանական ձայն մ'իրեն այսպէս կը դռչէր. «Արդ, ո՛ր մնացին Շաւարշայ խրատներն ու քու խոստումներդ. քու հօգդ ու թախծութիւնդ քեզի շատ վնասակար կրնան ըլլալ . . . : Թող, Արդ, վատարտութիւնն ու յուսահատութիւնը մէկզի թող. յոյսդ Անոր վրայ դիր, որուն անպատում է զորութիւնը, անչափ՝ սէրը: Տուր իրեն քու վատահու-

թիւնդ. տուր ունեցածդ ու կեանքդ եւ զիտցիր որ անոնց տեղ երանալից կեանք կը ստանաս»,:

Յանկարծ կարծես թէ Արդայ սրտէն տխուր գիշերը ջնջուեցաւ ու ցորեկուան պաղպաջունն եւ պայծառ լոյսը նոյն տեղը դահճ գտաւ. անմխիթարութիւնը հեռացաւ. Արդ դարձեալ իր առաջին զուարթ նկարն առաւ. արիութիւնը նորէն իր ոսկրներուն մէջ մտաւ. ծոցին մէջ երկինք թռչելու փափաք մը վառուեցաւ, ասոր համար շնորհակալութեամբ ու գոհութեամբ կը քալէր: Պարսիկներն այս զարմանալի ու յանկարծական փոփոխութեան սաստիկ զարմացան. անոր աշուրները՝ որոնք քիչ մ'առաջ այլալաճ ու շփոթած էին, հիմակ հեղ ու քաղցրահայեաց լուսով կը փալփէին. դեղնեալ ու դիմաման դեմքը՝ վրան վարդանմանն ու անոյշ գոյն մ'առնելով՝ կը զմայլեցընէր. ծոած գլուխը շտիռուելով ու ծանր եւ դանդաղ կերպարանաց նկարագիրը մէկզի երթալով, արագընթաց ու վառվառն պատանեկի նկարը նորէն եկաւ իր վրայ նստաւ: «Այնիւ, պոսաց ջուր տուող Պարսիկը, քաջարի մը այնպէս պէտք է որ մահուան ալ երթայ»,:

Այսպէս կախուելու տեղն եկան: Պարսից զօրագլուխը բոլոր գերիներուն արութիւնն ու մանաւանդ Արդայ քաջարտութիւնը տեսնելով՝ կատղած էր, եւ ճակատը ձգտելով, աղբաները կրճտելով՝ շարաշար մահուան մը միջոց կը փնտռէր: Բայց երիտասարդին ազնիւ ու հանդարտ վարմունքը, քաղցրութիւնն ու սիրուն պատկերն անոր անգութ սիրտն ալ շարժեցին:

«Դնծի նայէ, վատանշան պատանի, ըսաւ Արդայ, կեանքդ կ'ուզէ՞ս ազատել. մոգութեան օրէնքն ընդունէ՞ ու եկուր մեզի հետ միացիր կուռոյ երթանք:

— «Ա՛յս Պարսից օրէնքն ընդունիմ ու Հայոց դեմ կուռիմ . . . ո՛չ երբեք:

— «Ա՛նմիտ, աղէկ մտածէ. երիտասարդութեանդ ու անձինդ խնայէ: Հայրենակիցներէդ շատ

մարդ մեզի հետ միացաւ . . . մէյ մ'ալ կը զըռցեմ՝
աղէկ մտածէ:

— «Այլազգ չեմ կրնար բնել. քու ուզածդ
իմ խղճիս ու պատուոյս գէմ է:

— «Գ'նորէ կ'ըսեմ կեանք կամ մահ:

— «Ա'նորէնութեան տեղ՝ մահ, ամօթոյ տեղ՝
գերութիւն կ'ընտրեմ: Երկինքն ինձի օգնական է, և
բռաւ ու մէյ մ'ալ բերան չբացաւ:

Օրագրութիւն մընդհանուր թեամբ վերջին անգամ
Վարդայ նայերէն ետեւ, «Վէսին մահ», պոռաց ու
թռաւ անկից գնաց:

Արդ տեսնելով որ ալ ազատութեան յոյս
չկայ, միտքն Աստուծոյ վերացուց: Նորէն իր ծնողքն
ու աննախնիքն երեւակայութեան առջեւ եկան, որոնք
իրենց սուրբ հաւատքին ու հայրենեաց սիրոյն համար
մեռան: Յորդանան արտառնք իջուց իր այտերուն
վրայ՝ գիտնալով որ ինք ամայի տեղ, մացառներու մէջ
ու անտուրբ գետին մը պիտի մեռնի եւ անթաղ մնայ ու
անշուշտ գիշտտիչ թռչնաց կերակուր պիտ'որ բլլայ:

Երբ որ ինք այսպիսի խորհրդաց մէջ էր, դա-
հիճները լուռ ու մունջ կեցած՝ պատանւոյն ցաւազին
նկարն ու պատկերը կը դիտէին. վերջապէս անտնցմէ
մէկը Վարդայ վիզը խեղզն անցուց ու զենքն երկրէն
քիչ մը վեր վերցընելով. «Ուրախ եղեր, երիտասարդ,
զոչեց, մէկ վայրկենի մէջ դուն անդիի աշխարհք մեր
վրայ կը ծիծաղես»: Վարդ այս խօսքերը լսելուն պէս՝
ստոկաց. Անցաւոր ժամանակ, Մահ ու Յաւիտենական
նութիւն իր մտաց առջեւ կ'երթեւեկէին: Գժբախտ
պատանին մէյ մ'ալ իր չորս կողմը նայելով՝ գոռաց.
«Թէ որ հոս առաքինի ու արդար մարդ մը կայ նէ, եր-
թայ թող աս բօթը հայրենեացս ու սիրելիներուս
տանի եւ զըռցէ որ զՎարդ Մամիկոնեան կախեցին»:
Այսպէս խօսելէն ետքը լռեց եւ լի յուսով երկինք կը
նայեր:


Մէյ մ'ալ նոյն վայրկենին պատերազմի աղա-
ղակ, գոռում գոչում մը բռնաւ. հետուէն պարտա-

կան զօրք երեւցաւ. անոր առջեւէն եկողը կամ մա-
նաւանդ երկրի վրայ՝ եղջերուի նման, օգի մէջ՝ սրա-
թուիչ արծուի պէս խոյացող առաջնորդը դէպ ի կա-
խուողներուն կը վազէր: Երեւելի Պարսիկ իշխան մըն
էր. եկաւ ու տեսաւ. «Վեցէք», պոռաց եւ զՎարդ դար-
ձեալ գետաինն իջեցընելով ու վզէն խեղդը մէկդի առ-
նելով՝ նորէն սրացաւ մտեցող զօրաց գլուխն անցաւ:



Գ Լ ՈՒ Խ Ի Ա .

Կ-ի- կո-ո-ոյ վրայ:



ՔԱՌԱՏԻՆ ու սերն արիութիւն կը ծնանին, Աստուծոյ բազկաց զօրութիւնն անթիւ անհամար զօրքը՝ փոշոյ պէս կը ցրուէ, կ'ըսէր Մանգակունի կաթողիկոսը: Աստուած մեզն հետ ըլլալէն ետեւ, վախնալու ինչ կայ, Պարսից բանակը շատ հեռու չէր. Վահան Ներսէհայատ գեղը գալով՝ հոն զօրաց կարգ դրաւ. իր քիչ՝ բայց քաջ ու հօգելից զօրքն երեք բաժնեց: Միջին բաժինը՝ քաջածիզ Սահակ մարզպանին յանձնեց. աջ թեւը՝ լայնալիճ աղեղ վերցնող Բարշղ Վահեւունուոյն տուաւ, անոր քով նիզակակից դնելով զԲաբելէն Սիւնին, արագոտն Աստու գնունին եւ զՓայակ Պարունին, ամէն մէկուն հեծելոց վաշտերովը, ձախ թեւը՝ Ներսէհ Վամաւրականին ու անոր Վահան եւ Հրահատ եղբայրներուն իշխանութեան տակ ձգեց, անոնց օգնական նիզակակից տալով իր Վասակ եղբայրը: Իսկ ինք քաջերովը մէկտեղ զՎրէն Վանանդեցին՝ հսկան ու երեւելին, եւ զՊապ Արտակունին իրեն թեւ թիկունք առած բոլոր բանակին օգնելու պատրաստութիւն կը տեսներ: Վահան իր յոյսն ու ակնկալութիւնն Աստուծոյ վրայ

դրած էր, որն որ ստուգիւ կրնար իրեն զօրութիւն ու յաղթութիւն տալ: Ատրներսէհ սպարապետին հակառակ, բիւրաւոր պարսկական զօրաց եւ անոնց հետ եղող հաւատադրուժ Հայ իշխանաց դէմ պիտ'որ էլլէր, հայրենեաց ու ազգին մատնիչներուն դէմ պիտի կուտէր, որոնք Աստուծոյ հաւատարիմ չըլլալուն փորձն առած ու պատիժը շատ անգամ գտած էին:

Արեգական ճառագայթները դեռ նոր աշխարհքս տարածուելու ատեն, Աստուծոյն ու Սիւնեաց դէնակորոյս զուեղն արագ ու ճեպով եւ ահագին սաստկութեամբ Հայոց վրայ յարձակելու սկսան: Վահան անոնց դէմ քաջութեամբ կուտինք բռնելու ժամանակ, արդէն Պարսից զնդերը Հայոց աջ թեւին հետ խիստ կը պատերազմէին. թեպէտ անոնք Բարշղ զօրավարն ու հայագնդին մեծ մասը փախչելու ստիպեցին, սակայն մէկ ու մէկալ կողմանէ ալ շատ հոգիներ՝ ոմանք անգունդ եւ ոմանք ալ երկինք գացին ու կ'երթային: Սահակ մարզպանն ու Ատրներսէհ Պարսիկը դիմացէ դիմաց եկած առիճնեբու պէս իրենց նժոյզներուն վրայ կանգնուած էին. երկու անշարժ ու անառիկ վէմեր՝ ոչ շանթէ մը եւ ոչ անոր սաստկակոծ հարուածէն կրնային շարժիլ կամ անկից մնաւ մը կրել: Երկուքն ալ իրենց երկայն նիզակներն երեք անգամ շարժելէն ետեւ, ուժգնութեամբ իրարու վրայ դիմեցին. պարպալ ելաւ զարնուելը. դողդոջուն շառաչմամբ նիզակներուն կտորներն երկիր գամուեցան, քանի մը կտոր ալ բարձրացան երկինք ելան: Այնուհետեւ ըմբիշներն իրենց ամեհի երթիվարներովը քովէ քով եկած միացած՝ մէկզմէկ պատուել կ'ուզէին. իրենց թրերն ալ փշրեցան, ալ գործածելու զէնք չէր մնացած, անկից ետքը թեւն ու բազուկն էր գործողը. ով որ նախ վեր կը հանէր վար կ'իջեցրէր՝ սաստիկ հարուածն անվրէպ կու տար. հարուածէն՝ մոլեգնութիւն, մոլեգնութենէն՝ այլայլութեան ու դաղանութեան մղումներ կը հետեւէին. իրենց ամբողջ մարմինները կը դողդողային. Սահակ

զԱտրներսե՛հ, Ատրներսե՛հ զՎահակ գետին կործանել
կը փափաքէր. կարծես թէ երիվարաց վրայ կոփա-
մարտիկ կուի մը կ'ըլլար: Արջապէս երկու նահա-
տակներուն զօրութիւններն ալ նուազեցան. բայց
Ատրներսե՛հ աւելի տկարացած, ձիէն ինկաւ ու ահա-
գին բազմութեան մէջէն որոգայթէ մը պրծող թըրու-
նոյ պէս փախաւ, որով եւ Սահակ նորէն հոգի առաւ
ու զօրացաւ:

Այսպէս ամէն դի պատերազմը գրգռուած ա-
տեն, Վահան իր աջ թեւէին փախուսան ու թշնա-
մեաց դռուղանալը դիտելով՝ զարհուրելի ճայնով գո-
ուաց. «Վրէն Վանանդեցի, գնա ալ թեւէին թշնա-
մեաց վրայ եւ ան տկարներուն՝ քու ահագին զօրու-
թիւնդ ցուցուր»: Վրէն սաստիկ շփոթութեանն ու
յանկարծական խռովութեանն ահուգողի մէջ մտած,
իրեն հսկայ ըլլալը մտցաւ. տկար ու անզօր տղու պէս
«Ես չեմ կրնար, վրաս մի վստահիր, պատասխանեց.
այսպիսի ատեն ես ինչ կրնամ ընել»: Ան ատեն
Վահան ինք զինքը Խաչի նշանով կնքելով՝ իր հաւա-
տարիմ երիվարովը վազեց. նժուզին օդը դռուցընող
հովի պէս սրալը բաւական չէր, Վահան անոր վրայ
յառաջանալու նշաններ կը ցուցնէր. ինկաւ մէկէն
քաջարին թշնամեաց աջակողմեան թեւէին վրայ. հոն
հասան երկու զարմանալի եղբարքն ալ՝ Ներսե՛հ ու
Հրատ Ամնարականներն եւ անկից ետքը սկսան

...: Աս երեք պանչելի մարտիկներուն արութեան
գործքերն ու քաջութիւններն որ ականատես մարդը
կրնայ տեղնիտեղ պատմել կամ լսելէն ետեւ մտքին
մէջ նկարել: Ո՞վ կրնայ ստորագրել թշնամեաց ահա-
գին բազմութիւնն ու անդթութիւնը, իր հանած խիտ
ու թանձր ամպերու պէս փռչին՝ որն որ երկինքն ու
երկիրը կը պատէր, ան սաստիկ գրգռութիւնը՝ որն որ
հոգիները հուր կը վառէր...: Առաջին խռնորդին մէջ՝
սաղաւարաններն ու վահանները կտոր կտոր եղան, նի-
զակներն ու սլաքները շառաչելով կտորացան. տեղ
մը՝ երիվարներու դիակներ, ուրիշ տեղ մը թափառող

ձիերու խմբեր կը նշմարուէին, առդին անդին մեռած
զինուորներ պառկած էին, շատ տեղ ալ գեռ շունչ
տուողներ, որոնց ողբն ու հեծեծանքը հազիւ կը
լսուէր. կարծես թէ այլազգի ու այլատեսակ բիւր դա-
զանաց կուի էր եղածը:

Արթալով աւելի դառն ու խիստ կ'ըլլար խառ-
նուրդը: Թշնամեաց հատու սուրն ու բարկութիւնը
սաստիկ էր. անօթի դայլերու պէս ուրիշին աղէքնե-
րովն իրենց սիրտը յազեցընել կը փափաքէին, բայց
Հայք անոնց հուրն ու զօրութիւնը մէկ երկու հա-
ուռածով ջղատեցին: Վահան զՎին Խորեանը մեռ-
ցուց, շատ արիներ անդունդ խրկեց եւ ուրիշ դիա-
կանց բազմութիւն մ'ալ անոնց վրայ դիզեց. նոյնպէս
Ներսե՛հ կամարականն ալ զՎշնասպ իր երիվարէն
մղեց գետին կործանեց ու անարգ վայրենի դաղանի
մը պէս զինքը սատկեցուց. ուրիշ քաջ Հայերը զՀրա-
հատ կամարական, զՆերսե՛հ Երուանդունին եւ
զՇաւարշ ծերունին ու անոնց բրած սքանչելի գործ-
քերն ուր թողում. թշնամեաց ձախկողմեան թեւէին
Չարդը, ցիր ու ցան ըլլան ալ ինչպէս մոռնամ. կր-
նամ արդեօք ըսել որ ան ահագին հակառակորդաց
բանակը Հայք գրեթէ բոլոր ջնջեցին ու փախուցին
...: Այսու ամենայնիւ ըրին: Այնուհետեւ քանի մը
տկար ու վատասիրտ Հայեր ու անոնց հետ մէկտեղ
Բարշղն ալ Պարսից փախչիլը տեսնելով, նորէն հոգի
ու շունչ առին եւ փախչողներուն ետեւէն ինկան:
Թռան անոնց օգնութեան Ներսե՛հ Երուանդունին ու
Շաւարշ երեւելին ալ, եւ Պարսիկներուն զօրքը սահ-
մաններէն դուրս մղեցին. սակայն հոն Պարսից զօրաց
գունդ մ'ալ փախչողներուն հետ միանալով՝ դարձեալ
կուիւր սկսաւ: Մէկէնիմէկ Հայերն ու Պարսիկները նո-
րէն անշարժ կեցան. գոչիւնն ու թնդիւնը նորէն որու-
տաց, դարձեալ պատերազմն ու Չարդը սկսաւ:

Գերիներուն ազատութեան վայրկեանը հա-
սած էր. զՎարդ կախելու ատեն՝ Պարսից իշխանին
գարուն ու «Աեցէք», պոռալուն րոպէն աս էր. անկից

ետքը գերիններուն նայող չկար: Աարդ իր ընկերներուն վը քիչ մը հոգի առնելէն ետեւ, Աստուծոյ գոհութիւն տուաւ որ գերեւը մահուան վերջին ժամանակ ազատեց, անկից ետքը վազեց ու բանտարկեալ կեցած անկան մէջէն Համազասպին իրեն տուած թուրն առաւ եւ Հայոց օգնելու գնաց: Պատերազմին խառնաշփոթութեան ատեն իր ընկերներովը մէկտեղ Հայոց կողմն անցաւ: Ազատութեան ուրախութիւնը մեծ, սակայն հաւատոյ ու հայրենեաց համար Պարսից դէմ կռուին իր սրտին շատ աւելի մեծ զուարթութիւն էր: Հայք իրենց նոր եկած օգնականները դիտելով եւ անոնց մէջ քաջ ու վաւճառն երիտասարդը՝ զԱարդ նշմարելով, ապշեցան. զօրաւոր ազդեցութիւն մը՝ կարծես թէ իրենց սրտին իմաց կու տար անոր սլըլլալը: Տուին իրեն անմիջապէս յաղթ երիվար մը ու գլուխը սաղաւարտ դրին, որոնցմով Աարդ կրկին կենդանութիւն ստացաւ. եւ ան զարհուրելի խառնարկին մէջ մտնելու ատեն՝ իր եւ ուրիշի մը աշուրներն իրարու զարնուեցան: Սառեցաւ մնաց Աարդ. «Ո՛հ, իմ ազնիւ բարեբարս, դուք հոն էք եղեր», պոռայ ու աչքէն ուրախութեան արցունքներ թափելով՝ թեւերը բացաւ, գնբրսեհ երթալ դրկել կ'ուզէր. սակայն Ներսէհ իրեն նշան ըրաւ որ պատերազմելու սկսի եւ ետքը . . . :

Աարդ Երուանդունւոյն առջեւ խիստ կը պատերազմէր. փոթորկալիւր հովի մը պէս յառաջ երթալով՝ դիմացն եկող գետինը կը կործանէր: Նոյն ատեն Ներսէհին ձայնը զինքն ետ կանչեց. «Աարդ, գոչեց, աջակողմեան թեւին օգնութեան գնա. փութա, առձապարե ան նեղ մտնող հայազնդին օգնելու»: Աարդ առանց մտածելու՝ ձին մտրակեց եւ իր ընկերներովե ու բոլոր խմբովը մէկտեղ հոն գնաց:

Շաւարշ իշխանը, որն որ ան հայազնդին գըլխաւորն էր, թեպէտ սպիտակալի, սակայն երիտասարդի պէս ու քաջութեամբ կը կռուէր: Պատերազմին բորբոքման ատեն, յանդգնեցաւ քիչ հոգւով շատ

յառաջ գնաց: Պարսկաց բազմաթիւ զունդ մ'իրեն դիմացն ելլելով՝ գրեթէ իր մնացած բոլոր հաւատարիմները սրբուր եւ նետից հարուածներով երկիր կը խորտակէր. դուցէ վայրկենէ մը զինքն ալ զՇաւարշ յաղթանդամն ու սքանչելին իր մշանջենաւոր ննջարանը խրկէր, թէ որ Աարդ Երուանդունւոյն հրամանաւր շանթարձակ երազութեամբ ան քաջ ու հոգեւից ծերունւոյն օգնութեան չգար: Երկայն ատեն պատերազմեցաւ Աարդ իրեն անձանօթ եղող ծերունին ազատելու համար. վերջապէս աս միայն կրցաւ յաջողքնել որ անոր վըայ թշնամիներէն քանի մը թեթեւ հարուածներ իջնելէն ետեւ, առնուն զինքը կռուէն հեռու տանին ու ապահով տեղ մը գնեն:

Պատանւոյն սաստիկ կրակն ու բոցը Պարսիկները քիչ մը Լքուց. բայց մէկը կողմանէ ալ աւելի կատողեցուց. նորէն խիստ ու գաժան կռիւ մը սկսաւ: Ներսէհ փափաքելով նոյն մարտին վերջը տեսնել եւ անձամբ ալ Աարդայ արութիւններուն հանդիսատես ըլլալ, վազեց ան տեղն եկաւ եւ առաքինի պատանւոյն ամէն շարժումն ու գործքը մտադրութեամբ կը դիտէր: Շատոնց արդէն թանձր ու մթին փոշոյ ամպ մը երկու բանակներն ալ ծածկած էր. Հայք կրկին զօրութեան դէմ կը կռուէին. թշնամեաց ահագին ոյժը նոյն տեղը ժողվուած էր: Մահացու նետից անձրեւ մը Հայոց ու Պարսից զնդերը թըրջած էր. արեան լճի մը մէջ՝ օգնութիւն տեսնողը խիստ պէտք էր ուրախանալ. ասոր համար Հայոց զօրքը Աարդայ բերած նոր օգնութիւնը խրախուժեան աղաղակներով ընդունեցաւ: Չարհուրելի կերպով կ'իշխէր երկու զօրաց մէջն ալ մահը: Հայերն իրենց նոր եկած ձեռնառութեամբ հոգի եւ ոյժ ստացան. Պարսիկները Աարդայ սքանչելիքը տեսնելով՝ յուսահատեցան: Աարդ առանց վէրք առնելու՝ վերին բազկէ մը պաշտպանուած՝ շարունակ յառաջ կ'երթար, բայց . . . ո՛հ, յանկարծ . . . ծանր . . . սաստիկ հարուած մը անոր գլուխն իջաւ ու իր սաղաւարտն երկու ձեղքեց . . . թնդաց

դռնչեց մէկ կողման ուրախութիւնը, մէկալ կողման զարհուրանքը: Վարդայ մարմինը, անոր ամէն մէկ անդամը սարուաց. դժբախտ պատանին ահագին հարուածէն խելքը կորսնցուցած էր. «Ո՛հ, Աստուած», գոչելով՝ երիվարէն վար իյնալու ատեն, Ներսէ՛հ Երուանդունին կարծեց որ իր սիրելին հոգին փչեց: Ինք նորէն զօրաց քաջալեր տուաւ ու երկու վայրկեանի մէջ Պարսիկները փախչելու եւ անձնատուր բլալու ստիպուեցան: Նոյն ատեն մէկ կողմանէ ինք, ուրիշ կողմանէ մ'ալ երեւելի Պարսիկ մը դէպ ի Վարդ վազեցին. Երուանդունին պաշտպանութեան սուրբ հանց եւ քիչ մնաց Պարսիկն կուրծքը կը խոթէր. բայց . . . Պարսիկն իր ամէն զէնքն ու երիվարը թող տալով, եկաւ Վարդայ օտքն ինկաւ ու իր սիրելին եւ առաքինին լալու սկսաւ՝ պատմելով նախ Ներսէհին մէկ երկու խօսքով իր Վարդայ հետ ունեցած յարաբերութիւնը:

Աս ատենս Շաւարշ առանձնական ու մենաւոր տեղ մը նստած ցաւոց ու խորունկ մտածմանց մէջ էր: Իր անձանօթ ազատչին հասակն ու կերպարանքն առջեւը գալով՝ իր մտաց մէջ հին յիշատակներ կը յարուցանէին: Վահանայ նոր ու մեծ յաղթութիւնը, աս վերջին պատերազմին մէջ Պարսից ցուցուցած յուսահատական կատաղութիւնն ու անոնց կոտորածը զինքն ըստ մասին կը խոսկէին: «Այնպիսի գործքերէն ետեւ, կ'ըսէր ինք իրեն, իմ ցանկալի Վարդ»՝ Պարսկաստանէն, բանտէն կամ մահուրէն ինչպէս կրնամ ազատ տեսնել. անշուշտ մինչեւ հիմայ զինքը մեռցուցած պիտ'որ ըլլան»:

Շաւարշ այսպիսի խորհրդոց մէջ եղած ատեն՝ Երուանդունւոյն բերնէն իր ազատչին անունը լսեց: Աս լուրը կարծես թէ ճերուռուոյն բոլոր անդամները կտոր կտոր ըրաւ եւ ամբողջ մարմինն ալ վերքերով լեցուց, որովհետեւ իբրեւ ստոյգ միտքը դրած էր որ ան սքանչելի պատանւոյն կեանքը մոլեգին թշնամեաց հարուածներէն պիտի չազատի: Այսու ամենայնիւ իր

սիրելին տեսնելու փափաքն իրեն ոյժ տուաւ ու այսպէս գոչեց. «Երթանք, ցանկալի բարեկամ, Վարդին երթանք. անոր հետ մեռնիլ կ'ուզեմ»: Ներսէ՛հ իրեն իմացուց որ պատերազմը լմնցաւ եւ յաղթութիւնն ալ իրենց եղաւ. սակայն կարծելով որ Վարդայ վիճակը գէշ է, չէր ուզեր որ Շաւարշ անոր քովն երթայ, որպէս զի չըլլայ թէ յանկարծական ուրախութիւնը պատանւոյն աւելի փնասէ կամ թէ Շաւարշին անհանգստութիւնն աւելի սաստկանայ: Սակայն Շաւարշ զՆերսէ՛հ կը ստիպէր ու «Թող, բարեկամ, կ'ըսէր, թող անոր երեւնամ. գոնէ իբրեւ անձանօթ միայն անոր դէմքը տեսնեմ»: Ներսէ՛հ զինքը միտքից օտարացուցաւ որ քիչ մը համբերէ. «Վարդ, ըսաւ Շաւարշին, քիչ մ'անհանգիստ է, կեցիր երթամ՝ ես տեսնեմ ինչպէս է, եւ ետքը մէկտեղ կ'երթանք»:

«Ներսէ՛հ գեւ Վարդայ քով չգացած» երիտասարդին առջեւ գեղեցիկ տեսարան մը բացուած էր: Ողբացող Պարսիկ իշխանն աննշան մարդ չէր. անոր համար Երուանդունին անոր պատմութիւնը լսելէն ետեւ, իրեն սիրոյ նշան մը ցուցուցած՝ Շաւարշին քով գացած էր: Անկից ետքը սկսաւ Վարդ իր մտաց շփոթութենէն արթննալ ու գլխոյ ծանրութենէն թեթեւնալ: Իր սաղաւարտին վրայ իջած ահագին հարուածը գլխոյն չէր հասած, միայն անոր սաստկութիւնն ու թնդիւնն էր զինքը խլացնողը: Վարդ կամաց կամաց աչքը բանալով՝ քովը Պարսիկ մը տեսաւ. . . սակայն ինչ ուրախութիւն ունեցաւ՝ երբ ճանչցաւ որ Երուանդունւոյն ապարանքն եկող պատգամաւորն է. ինք Պարսկաստան բանտի մէջ եղած ատեն՝ վրան գլխացողն ու զինքն անկից ազատողն է: Ոտք ելաւ, ինկաւ իր բարեբարին վեղը, եւ անոր հետ պագնուելով՝ հարցուց որ իր քովն ինչպէս եկեր է: «Թէ որ, ըսաւ Վարդ, քեզի փնաս մը հասած է կամ հայագրէն մը գերի բռնուած ես նէ, գիտնաս որ անփուշապէս հատուցումը կ'ընդունիս ու ազատ ես»:

“Հայազնդէ մը բռնուած չեմ, պատասխանեց իշխանը, այլ ես իմ կամքս քեզի եկայ, սիրելի Վարդ, ան սոսկալի հարուածը տեսնելով: Երբ որ պատե-
րազմը լմրնցաւ ու մեկալնոնք փախչելու սկսան, ես քեզի վազեցի, որպէս զի քու վիճակդ իմանամ եւ կը յուսամ որ քեզի պէս առաքինի պատանեկէ մը թու-
ղութիւն կ'ընդունիմ” ի հարկէ քեզի դեմ կուռելուս համար:”

Այսպիսի խօսքերէն ետեւ, Պարսիկ իշխանը Վարդէն ինդրեց որ իրմէ բաժնուելէն ետեւ իրեն դիպածները պատմէ: Վարդ անոր փափաքը կատարեց, ինք ալ անկից շատ բան իմացաւ եւ դեռ այլեւայլ բաներ լսելու վրայ էր, երբ որ մէկէնիմէկ Ներսէս եկաւ եւ զՎարդ ուրախացուց: Երուանդունոյն ներ-
կայութիւնը Վարդայ սրտին այնպէս սաստիկ ազդե-
ցութիւն ըրաւ՝ որ ցնծումէն տղու պէս սկսաւ լալ: Թեպէտ քիչ մ'առաջ երկուքն ալ մէկզմէկ տեսած էին, սակայն աս կրկին ու մտաւոր տեսութիւնն եր-
կայն ատեն թէ մէկը թէ մէկալն անշունչ անմառունչ դիմացէ դիմաց կեցուց. անոնց կերպարանաց ու դեմ-
քին վրայ գութն ու սերը նկարուեցան. վերջապէս իրարու ծոցն ինկան, շատոնց բաժնուած սրտերը նու-
րէն միացան: Լուութիւնն ու խաղաղութեան համ-
բոյրը բիւր խօսքերու տեղ բռնեց. եւ երկայն դրկա-
խառնութենէն բաժնուելով՝ Վարդ այսպէս սկսաւ.
“Փառք Աստուծոյ, որ իմ անձկալի բարեբարս մէյ
մ'ալ կրցայ տեսնել. աս կենացս մէջ դարձեալ զձեզ
տեսնելու յոյս կտրած էի, սակայն Աստուած աս
շնորհքն ալ ըրաւ:

“Դս եւ Շաւարշ, պատասխանեց Ներսէս, մարդկան բախտը Վարդին վրայ դրած էինք մեր ակն-
կալութիւնը: Աւասիկ զքեզ, սիրելի Վարդ, շատ արկածներէ ազատեց եւ աս խիստ պատերազմէս ալ
անփորձ հանեց: Երթանք այսու հետեւ, աս պատե-
րազմն ահագնութենէն հեռանանք. մեր ցանկալի
հայրենիքն երթանք. եկուր, ալ զքեզ քու սիրելի-

ներուդ տանիմ, բայց ես մինակ չեմ տանիր, այլ քու
սիրելի յորեղբայրդ ալ մէկտեղ կ'առնենք, սքանչելի
Շաւարշը՝ որն որ ասկից շատ հեռու չէ:

“Այն, պուաց Վարդ փալելուն աչուրներով,
նւր է, կ'աղաչեմ հոս կանչեցէք. կամ թէ որ հեռու
է նէ, ըսել տուէք որ իր որդին . . . Վարդ զինքը
տեսնել կ'ուզէ: Ա'աղաչեմ կը խնդրեմ, իրեն եր-
թանք. իմ տկարութիւնս ոչինչ է. պատերազմի մէջ
առած հարուածս Երկինքը գլխէս հեռացուց:

“Շատ մօտ է, պատասխանեց Երուանդունին,
կարծածէդ աւելի մօտ է: Աս դժոխակ կուռոյն մէջ
իր աչքին առջեւ պատերազմեցար, քու կեանքդ իր
կեանքին համար վտանգի մէջ գրիր: Վարդ, Շաւարշ
էր ան՝ որ թշնամեաց ձեռքէն արութեամբ կրցար ա-
զատել. դուն՝ այլագունած ծերունին դաշտի վրայէն
մէկդի տանել տուիր. ինքն ալ զքեզ չէր ձանչցած,
բայց ետքն իրեն իմացուցի որ իր կեանքն ազատողը
դուն ես: Հիմակ ինք շատ աղէկ է, ամենեւին բան մը
չունի:

“Իայց ինչո՞ համար հոս չի գար, կրկնեց այ-
լայլութեամբ ու ցաւով Վարդ, ինչո՞ մեզմէ հեռու
կը կենայ: Ան ատեն Երուանդունին դուրս ելաւ եւ
զՇաւարշ առած՝ նոյն տեղն եկաւ: Վարդ չէր կրնար
տարակուսիլ որ Ներսէսին հետ եկողն սով է. բոլորու-
վին ապշած անոր կը նայէր, որն որ “Որդեակ ու
Վարդ” գոչելով՝ թուաւ Վարդայ գիրկն ինկաւ:

Պարտար լեզուի կամ գրչի մը անկարելի է
այնպիսի տեսիլ մը ստորագրել, ուր երեւան կ'ելլեն
բիւրաւոր զգացումներ, ամենաբարձր երկրաւոր երջանու-
կութիւն մը, շատ ժամանակէ վեր մէկզմէկ շտեմնող
երկու սիրելի անձանց նորէն տեսնուիլը, կեանք ու
վտանգ մահու, աղատութիւն եւ ուրիշ ասոնց նման
բաներ: Այնուհետեւ ցաւ ու վիշտ աներեւոյթ եղած
էին. նկար մը՝ որուն մէջ այլեւայլ անձանց զգած-
մունքն ու ձեւերը կը փայլէին, մարդ հեռուէն ալ
տեսնելով՝ կը զմայլէր: Վարդայ դէմքը հեզ ու զուարթ

եր, կերպարանքն ու հասակը վայելուչ եւ բարձր. զգեստը զինուորականի ամենեւին նշան չունէր. Վահր- ճին ամբողջն ելլելու ժամանակ ամենայն ինչ պար- սիկ քաղաքացւոյ մը նման հագած՝ քովը միայն Հա- մազասպայ իրեն տուած թուրը կը կրէր, զորն որ հի- մայ քովէն մէկ դի ձգած, իր վրանին տակ՝ կռուոյ մէջ երկու ձեղքուած չքնաղ սաղաւարտին քով դրած էր: Շաւարշ ան սքանչելի երիտասարդին տե- սութեամբը զմայլած, անոր ծակատը համբուրելէն եւ աչուրներէն ալ քանի մը մարգարիտ գետին թափե- լէն ետեւ, վերցուց զանոնք Երկինք ու հոն դամած՝ Բարձրերդն շնորհակալ կ'ըլլար որ զինքը հասցուց իր երկրորդ որդին նորէն տեսնելու: Երկայն ատեն այս- պէս զմայլման մէջ եղած ատեն՝ Ներսէ՛հ զանոնք չառօյլելու եւ նոյն ուրախութեան մէջ թող տալու համար, քաշուեցաւ քիչ մը հեռու գնաց եւ ինքն ալ շփոթած ու խրախացած անոնց կը նայէր: Անդին Պարսիկ իշխանը նստած՝ սպիտակալի ձեռունոյն, Շաւարշին կը նայէր, ան քաջին՝ որն որ խիստ պատե- րազմի մը մէջ մտած անհնարին ջարդ տուած էր: Բա- րերար Պարսիկը՝ Վարդայ թմբութեանն ու արթնու- թեանն եւ մեկզմեկ նորէն ողջ առողջ տեսնելու ուրա- խութեանն՝ սաստիկ այլայլութեան մէջ էր, գրեթէ ինք զինքն ալ կորսնցուցած, անոր համար զացած վէմի մը վրայ նստած էր: Ան ատեն քանի մը Հայ զե- նուորներ Պարսիկն յառաջագոյն մէկդի թողուցած նժոյգն ու զէնքերն իրեն բերին. երիվարն իր գլխուն վրայ տարածուող ու հովանաւոր ծառին կապեցին, զէնքերն ալ անկից կախեցին ու քովէն մեկնեցան զա- ցին: Ազատաբարոյ իշխանը կամաց կամաց դարձեալ հանդարտելով եւ ան երկու ազգակիանները տեսնե- լով՝ մէկ կողմանէ կը զարմանար, մէկալ կողմանէ ալ կ'ուրախանար որ աս սքանչելի վայրկեանին գլխաւոր պատճառն ինքն եղած էր: Աս նորանշան ու նկարա- դեղ դիրքին մէջ շորս հոյակապ մարդիկները կեցած, նոյն զուարթարար ժամուն մէջ, ամէնքը՝ մարդուս

աղէտքն ու ցաւերը մոռցնել տուող արբուութեան մը մէջ ընկղմած էին, մինչեւ վերջապէս դարձեալ արթննացան եւ մարմնով ու մտքը ալ միաբանած կը զուարճանային: Ա՛լ պատերազմն ու հոգերը դադրած էին. անոր համար Շաւարշ ու Ներսէ՛հ գեռ Վարդայ սքանչելի ազատութեան պատմութիւնը չլսած, ուղե- ցին զինքն իր փափաքած, շատոնց տեսնելու տենչա- ցած մարդիկներուն տանիլ ու պարսպ տեղ հոս չզան- դաղիլ:

Վարդայ սաղաւարտին վրայ իջած հարուածն ոչինչ էր. Շաւարշայ վէրքերը վտանգաւոր չէին. եր- կուքն ալ բաւական հանգիստ էին, միայն Տայրենիքէն դուրս գտնուիլն ու սիրելի մերձաւորներէն հեռու ըլ- լալն իրենց մեծ շարշարանք էր: Անոր համար անմի- ջապէս ծամբայ ելան ու քիչ մ'ատենէ ետքը Վարդ ու մէկալ Ազատները, Արտէն եւ իր բոլոր ծառայա- կիցները բուն Հայոց բանակը հասան: Միայն Պարսիկ երեւելի իշխանը կամ Վարդայ բարերարը պատանուոյն բիւր թախանձանացը չանսալով, շատ արտասուք թա- փելէն ետեւ՝ բաժնուեցաւ Հայոց սահմաններուն քով, եւ Պարսիկաստան գնաց մէյ մ'ալ զՎարդ՝ իր սիրելին ու առաքինին չտեսնելու համար:

Վարդայ դալստեան լուրը բոլոր բանակը թըն- դացուց. Մամիկոնեան Վահանայ ու Վասակայ ուրա- խութիւնն արտաքոյ կարգի եղաւ. իրենց սիրելի եղ- բօրն ընծայած սիրոյ նշաններն անթիւ անհամար, գուլթն ու մեծարանքը չափէն աւելի էին: Սակայն Վահանայ սրտին ցաւն ու տրտմութիւնն ալ սաստիկ էր, վասն զի զմայրը գէշ վիճակի մէջ թողուցած ու դառնագոյն գուժեր ալ առած էր: Ասոր համար ելաւ ինք ամէնէն յառաջ Տարօն երթալու, որպէս զի թէ որ զՉուրիկ գեռ աշխարհքիս մէջ գտնէ, իրեն յաղ- թութեան աւետիսը տայ եւ զինքն աս մեծագոյն ու- րախութեան ալ պատրաստէ:





Գ Լ Ո Ւ Խ Ի Յ

Ուրախութեան քննութիւն:

ՍԱՐԻՎՈՒՆԵԱՆՅ ապարանից մէջ արդէն խրախու-
թիւնը սկսած էր, որովհետեւ Չուիկ իր ծանր
հիւանդութենէն ազատած կ'երեւար: Ան
տրտմագին նամակն իր Վահան որդւոյն գրե-
լէն եւ քանի մ'որ ծանր հիւանդ ու անզգայ պառ-
կելէն ետեւ, նորէն սկսաւ հանդարտութեան ու
հանգստութեան նշաններ ցուցնել եւ օր ըստ օրէ
կ'աղէկնար:

Չուիկ ան դժնդակ ու վայրենի պատերազմին
ատենն ուրիշ բան չէր կրնար ընել, բայց եթէ աղօ-
թել ուստի ստէպ Արտաշէս որդւովը մեկտեղ սենե-
կի մը մէջ փակուած՝ անձկութեամբ ու արտասուօք
Աստուծոյ կ'աղաչէր որ աս կռիւն ալ յաջողութեամբ
լմբննայ, որպէս զի կարենայ իր սիրելի որդիքը տես-
նել, կարող ըլլայ աշխարհքը՝ խաղաղ, կրօնքը դար-
ձեալ իր առաջին պայծառութեան մէջ տեսնել:
Այսպիսի աղօթքէ մը ետքը, երկուքն ալ կ'ելլէին
ու մէկգմէկ մխիթարել կը ջանային, սակայն ինչ մխի-
թարանք, որպիսի վեհերոտ ակնկալութիւն: Չուիկ

Վահանայ քաջութիւնը գիտէր, սակայն թնամեաց
ոխն ու կատուութիւնն ալ ըսած էր: «Ո՛հ, կ'ըսէր ինք
իրեն շատ անգամ, գուցէ ան՝ վերջին անգամ եղած
ըլլայ . . . դառն բաժանում, մտնելնաւոր անջատում
եղած ըլլայ ան վերջի գիշերուան բաժանումը . . .
ան, կարող ըլլայի զղջացեալ որդւոյս եւ հաւատոյ
մէջ եռանդուն եղող որդւոյս հրաժարական ողջոյն մը
տալ», Չուիկ ասոնք մտածելով մէկ կողմանէ կը հա-
լէր կը մաշէր, մէկալ կողմանէ ալ ուրախ էր, որ այս-
պիսի առաքինի որդի ունի, եւ ան տրտմութիւնն ալ
փարատելու համար, ուրախ զուարթ ըլլալու համար,
երբեմն երբեմն յստակ ու պարզ օգը կ'ելլէր կը զբօս-
նուր:

Այսպէս օր մը որդւոյն հետ դարձեալ պար-
տելու՝ անոր հետ խօսակցելու ժամանակ «Այսպէս
չէ՞ մի, Արտաշէս, ըսաւ իրեն, Աստուած ամէն բան կը
հոգայ. մարդկային երջանկութիւնն ու դժբախտու-
թիւնն Անոր ձեռքն են. ուրեմն Անոր յանձնեք աս
մեծ պատերազմներուն յաղթութիւններն ալ եւ Վա-
հան ու Վասակ եղբարցդ բախար: Բարձրելոյն կամքը
յաւիտենական օրէնք է, բոլոր իր ըրածներն ալ բարի,
նաեւ անոնք՝ որ մեր կամացը հակառակ են»,:

«Այսպէս է, սիրելի մայր», պատասխանեց
Արտաշէս, եւ եղբարցն երջանիկ ու դժբախտ վի-
ճակը միտքը բերելով կարմրայտ դէմքին վրայ շատ
արցունքներ սփռեց: «Բոլոր մարդիկ եւ ուրիշ բա-
ներն Աստուծոյ ձեռքն են եւ առանց Անոր կամաց
ու գիտութեան եւ ոչ զլիտոյ մազ մը երկիր կ'իյ-
նայ . . .»:

«Միտ դիր, Արտաշէս, մտիկ ըրէ, ինչ է ան
աղաղակը, ան հեռուէն եկող հնչիւնները», Ամաց
կամաց թռչող հեծելոց գունդ մ'աւելի աղէկ երեւ-
նալու սկսաւ, որուն բերնէն «Յաղթութիւն, յաղ-
թութիւն», ձայնը կը թնդար: Վահան՝ որն որ նոյն
վաշտին առաջնորդն էր, կարծես թէ թեւ առած՝ օդի
մէջ կը սրանար ու շատ հեռուէն իր մայրը տեսնելով:

«Բարեկամք, գոչեց, ան երկու պտրտողներէն մէկը Չուիկ մայրս է, ան է», ու մեկաշնորէն բաժնուիլ կ'ուզէր եւ երթալ մօրն առողջութեան ուրախակից ըլլալ, մեծ յաղթութիւններն աւետել եւ Վարդայ գալուստն ալ յայտնել: Սակայն Հրահատ Կամարականը զինքը չթողուց. «Բարեկամ, ըսաւ, գուցէ Չուիկ իր ծանր հիւանդութենէն նոր ելած ըլլայ, կրնան իրեն այսպիսի արտաքոյ կարգի ուրախութեան դէպքեր մեծ փնաս ընել», Վահան՝ Կամարականին խօսքերուն անսաց, յառաջ երթալու տեղ՝ կամաց կամաց եւ քաշուելու սկսաւ:

Վահանայ գնդէն շատ հեռու չէր մեկալ երեւելի քաջաց խումբն ալ, որուն մէջէն նոյնպէս Շաւարշ, որ դեռ Վահանայ եւ ուրիշ շատերուն ալ անձանօթ էր, կը փափաքէր յառաջ երթալ շատ տարիներէ վեր չտեսած քոյրը տեսնել ու այնչափ ժամանակուան հեռաւորութեան դառնութիւնը մէկ վայրկեանի մէջ քաղցրացընել. բայց զինքն ալ Ներսէս արգելեց ու աղաչեց որ քաշուի բազմութեան մէջ պահուրտի:

Նեծելոյց զնդերն ետեւէ ետեւ կը մօտենային: Չուիկ ու Արտաշէս իսկզբան կը վախնային սր եկողները թշնամիք չըլլան. սակայն վախը շուտ մ'արտասուախտան ուրախութեան փոխուեցաւ, վասն զի ծանօթ մարդիկ էին մօտեցողները: Մէկէնսիմեկ Արտաշէս «Վահան, եղբայր, պոռայով վազել կ'ուզէր. Չուիկ «Որդեակ, սիրելի Վահան, դուն ես եղեր», գոչելով՝ անոր երթալ կը բաղձար: Բայց դեռ երկուքն ալ իրենց տեղէն չշարժած, Վահան թռաւ անոնց հասաւ ու մօրը գիրկն ինկաւ. «Ախ, Աստուած, ըսաւ մեղմ ձայնով, ինչ երջանիկ վայրկեան է աս, ինչ անսահման ուրախութիւն, չէի կարծեր, ցանկալի մայր, որ մէյ մ'ալ տեսնեմ զքեզ. չէի յուսար որ զքեզ տեսնելու արժանի ըլլամ», Վահան ասոնք զբողոցեց ու լռեց: Մայր եւ որդի լուծեան մէջ ընկղմեցան. իրենց սրտերն առատ ցնծումով զեղուած էին, անոնց

լեզուն քաղցր խօսքեր բխելու տեղ՝ աչուրներն անոյշ աղբիւրներ կը բխէին:

Աս տեսարանը շատ, շատ երկայն տեւեց, մինչեւ որ Վահան նորէն լուծիւնը կտրեց ու մայրը պատրաստելու համար այսպէս սկսաւ. «Սիրելի մայր, քու ուրախութիւնդ դեռ կատարեալ չէ, մինչեւ հոս գալու աշխատութեանդ պէտք է որ ուրիշ հատուցում մ'ալ ըլլայ:

«Ախ, որդեակ մեծ է զքեզ դարձեալ տեսնելու ուրախութիւնը. բայց եթէ կարելի է նե՛ պատմէ ինծի ուրիշ լուր մ'ալ, որով խրախութիւնս կատարեալ ըլլայ կամ որպէս զի Աստուծոյ աւելի շնորհակալ ըլլամ՝ մեզի ըրած հազարումէկ բարերարութեանցը համար:

«Ախ գոհութիւն տանք Աստուծոյ, պատասխանեց Վահան, որ աս յաղթութիւններն ալ մեզի շնորհեց. ասկից զատ . . . պատրաստուէ, մայր, ուրիշ հաճոյական լըոյ մ'ալ: Եղբայրս, . . . Վարդ՝ անուշահոտն ու առաքիներն, Աստուծոյ օգնութեամբը, ես ալ կերպը չեմ գիտեր, խիստ կապանքներ ու շղթաներէ, զարհուրելի բանտէ մը եւ ամրապարսպ տեղերէ, այնչափ ասպարափակ պահապանաց զնդերէ ու թշնամեաց երկրէն ազատելով՝ Հայաստան եկաւ. հոս, սիրելի մայր, աս տեղը զինքը կը տեսնես ու կը գըրկես. կարծեմ աս դաշտէն շատ հեռու չէ:

«Ինչ, կանչեց զարմանալով Չուիկ, հեռու չէ: Չբուցե, ո՞ր է. ո՞ր է. երթամ զինքը գտնեմ. . . : Ա՛հ, ցանկալի Վարդ, ո՞ր էս, ինչո՞ւ կը ծածկես զքեզ. եկուր. մի վախնար որ այլայլելով փնասուիմ. . . բարեկամներ, կ'աղաչեմ հոս կանչեցէք . . . »:

Աս գորովալիբ խօսակցութեան ատեն, գեղեցիկ ու զարդարուն, իշխանական ու վայելչագեղ զինուորական հագուստով՝ ձիւնահեր ազնիւ ճերուռի մ'եկաւ մէջտեղը կեցաւ եւ ուրախութեամբ ամենուն սիրոյ ողջն մը տուաւ: Ասոր վրայ ամէն մարդ, մանաւանդ Վահան ապշած կը նայէր, եւ իր սրտին մէջ

սիրոյ ազդեցութիւն մը գրգռուած, ան ծերունոյն ճակտին վրայ մերձաւորութեան կնիքը դրոշմուած կը տեսնէր: Աբանչելի ծերոյն աչաց վրայ արտասուքը կը գողգողար. ինքն ալ ընելիքը չէր գիտեր. որուն վազէ, զով գրկէ, թէ մէկը թէ մէկալն ու բոլոր անձանօթ մերձաւորներն ալ իրեն ո՛վ բլլալը գիտնալ կ'ուզէին: Աերջապէս շարժեցաւ ինք ու Չուիկայ դէմ գնաց եւ ուրախութեան ազաղակով մը «Քոյր, սիրելի Չուիկ», կանչելով, անոր ծոցն ինկաւ. անկից թռաւ Աահանին ու զինքը գորովոյ համբոյրներով համբուրեց: Կու լար ու կը հեծեծէր բախտաւոր ծերունին իր քաջ քեռ-որդւոյն կուրծքն ընկղմած, վասն զի կը տեսնէր որ Աահանայ ապշութիւնը սաստիկ էր, անոր յորդառատ ողբը զինքը կ'ողողանէր, եւ իրարմէ բաժնուելու համար ժամեր ու ժամեր պէտք էր:

«Աստուական ազնիւ ծերունի, ի՞նչ բոխք. արգեօք ճշմարիտ է: Ես ձեր քեռորդին. դուք իմ մօրեղբայրս. ինչպէս կրնայ բլլալ. արգեօք երազ կամ տեսիլ կը տեսնեմ, սոցոյդ է . . . հապա ինչո՞ւ համար յառաջագոյն չձանուցիք ինծի: Ես, սիրելի Շաւարշ, ես շատոնց զձեզ գերեզման կը կարծէի . . . Գուք Աարդ եղբօրս ազատիչն ու դայեակը չէ՞ք»:

«Ես եմ, ցանկալի Աահան, պատասխանեց Շաւարշ. գեռ կենդանի եմ, տեսիլ ու երազ չես տեսներ. Շաւարշ մօրեղբայրդ է տեսածդ: Ես ան ատեն զԱարդ՝ մանուկ ազատեցի. Աարդ հիմայ զիս՝ ծերունի ազատեց», բսա ու նշան մը տալով՝ մէկէն բազմութեան մէջէն՝ վայելչագեղ ու հրեշտականման, խայտալին ու բարձրահասակ երիտասարդ մը սրացաւ. գոչելով ու սասնելով Չուիկին գիրկն ինկաւ. «Սիրելի մայր, ազնիւ մայր. ա՛հ, քանի ամաց շրջաններ անցան որ շտեսայ զքեզ. կամ ան մանկութեան հասակին մէջ ինչպէս տեսայ. այսու ամենայնիւ դուն ես, ցանկալի մայր. սիրտս կը սիրէ զքեզ, միտքս կը ճանչնայ զքեզ . . .»:

«Ո՛հ, երկինք, երկինք, պողոսց ան ատեն Չուիկ

քու քովդ եղած երջանկութիւնները հիմակուրէն՝ մեր վրայ կ'ուզես զեղուլ . . . Արգեօք վերին ճաշակն ի՞նչ պիտ'որ բլլայ: Ուրեմն ա՛լ փափաքելու բան չմնաց . . . հազիւ կը հաւատամ որ Աարդ սիրելի որդիս հոս է եկած ու ծոցիս վրայ կ'ընծան», բսա եւ զԱարդ նուրէն համբուրելով՝ անկից բաժնուեցաւ: «Գուն ես, սիրելի, սիրուն որդեակ, կրկնեց Չուիկ, սիրտս իմաց կու տայ: Ա՛խ, գիտնայիր որ քանի ու քանի արցունք թափեցի քեզի համար. բայց ա՛լ դադրեցան, ասկից ետեւ ա՛լ արտնջելու նիւթ չունիմ, փափաքելու բան չունիմ. . . այսուհետեւ մէկ բան միայն կը խնդրեմ՝ Աստուծմէ՛ երթալ զինքը տեսնել, անձկալի Հմայեկիս հետ միանալ»:

Չուիկ իր խօսքերուն մէջ ցաւալի յիշատակ մ'ալ մէջ բերաւ, ասկայն ոչ ինք կատարեալ եւ ոչ ալ մէկալնոնք անոր միտ գրին. անոր համար ինքն ալ նորէն առաջին խրախութեան մէջ ընկղմած. «Գնա, որդեակ, բսա Աարդին, աճապարէ քու մօրեղբօրդ Շաւարշին բազուկներն ինկիր, վասն զի ան ալ Աստուած մեզի շնորհեց»:

Աարդ անմիջապէս վազեց զՇաւարշ գրկեց, իր սիրելի անուցչին ու հօրը ձեռուրները կրկին եւ կրկին համբուրեց. եւ մէյ մը մօրն ու եղբարցը կը վազէր, մէյ մը Շաւարշին ու Երուանդունոյն կը գիմէր: Ազնիւ ծերունին ալ երբեմն ասոր երբեմն անոր կ'երթար եւ շատ տարիներէ վեր շտեսած բարեկամներն ալ ողջունելէն ետեւ, նոյն կանաչագեղ դաշտին վրայ ծունկ եկաւ, ձեռուրներն ու աչուրներն երկինք վերցուց. իր օրինակին բոլոր բազմութիւնը հետեւելով՝ մէկերկու վայրկենի մէջ լուսթիւնը տիրեց: Գաշաղ՝ տաճար, անոնց սիրտը խորան եղած էր, ուսկից որ եւ ուանդանալից պաղատանք ու շնորհակալութիւնք կը բխէին ու սրտին խորին անդունդներէն երկինք կը բարձրանային: Ասոր նկարը մտաց առջեւ ունենալու համար, նոյն սրտաշարժ ու շքեղ տեսարանին հանդիսատես բլլալու էր:


Մամիկոնեանց ուրախութեան լուսնն աս էր. այնուհետեւ մայր ու որդիք, ազգականք ու բարեկամք Մամիկոնեանց սպարանքն երթալու ատեն, ամէնքն ալ ատանց բացառութեան՝ ապշութեան ու զմայլութեան մէջ էին: Վահան՝ որն որ Վարդ եղբորը գարուստը գիտէր ու մեկանքնն ուրախացընել ու սպաշեցընել կ'ուզէր, անոնցմէ քիչ չշարժեցաւ: Բոլոր Հայոց աշխարհքը նորանոր յաղթութեանց ու Վարդայ գալստեան լուրը լսելով՝ ուրախութեան տօներ ու հանգէտներ կը կատարէր: Ամենուն բերանը քաջ Վահանայ անունն էր որն որ կրօնի ազատութիւնը նորէն հաստատեց, մեծին ու պատիկին խօսքերը Վարդայ Մամիկոնեանց հրաշալի ազատութեան վրայ կը դառնային:

Արդ իր հայրենի տունը հասնելէն ետեւ, պատմել տուաւ իր սիրելիներուն իրենց պատմութիւնը. Շաւարշէն լսած աղէտալի դէպքերն ու նկարագրութիւնները նորէն լսեց. ամէնէն ետքն ինքն ալ նկարագրեց իր սքանչելի արկածները, սրտնց վերջը Աստուծոյ հզօր բազկաւ տեսած էր: Ուստի երբեք մտքէն չէր հաներ իր զարմանալի երկրորդ հօրն ու դաստիարակին ան խօսքերը՝ զորոնք իրեն շատ հեղկրկնած էր. «Ինչպէս՝ Աստուած, կ'ըսէր ստեպ ծերունին, երկնից կամարին վրայ աստեղաց ընթացքն ընել կու տայ, ինչպէս՝ ծովու եզերքին վրայ եղած անթիւ անհամար աւազը կը համրէ ու անոնց թիւը գիտէ, նոյնպէս մարդկան անչափ բազմութիւնը ձեռքէ չի թողուր, անոնց ամենուն կարօտութիւնն ու վիշտը ճանչնալով կը հողայ»:

Արդ այնուհետեւ իր սիրելիներուն հետ շատ երջանիկ օրեր անցուց, խաղաղ ու հանգստաւետ տարիներ տեսաւ. անոնց շատին երկինք երթալէն ետեւ ալ ինք երկայն ամաց շրջաններ ունեցաւ, որոնց մէջ առաքինի ու հզօր, Մամիկոնեան անունն արժանի սպարապետ ու մարդպան եւ իբրեւ Տարօնոյ փոքրիկ թագաւոր կը փայլէր ու կը ծաղկէր:

ԳԼՈՒԽ Ա.	Մենութիւն	1
ԳԼՈՒԽ Բ.	Տխուր գիշերուան հիւրերը	9
ԳԼՈՒԽ Գ.	Յաւալի բաժանման վայրկեան	23
ԳԼՈՒԽ ԳԴ.	Անակնկալ ազատութիւն	31
ԳԼՈՒԽ Ե.	Երջանկութիւնն ու երկնաւոր պսակ	40
ԳԼՈՒԽ Զ.	Ուրախութիւն եւ վիշտ	46
ԳԼՈՒԽ Է.	Յանկարծական տեսութիւն	54
ԳԼՈՒԽ Ը.	Ներսէս Երուանդունուոյն սպարանքը	64
ԳԼՈՒԽ Թ.	Սաստիկ ցաւ ու գոյժ մը	74
ԳԼՈՒԽ Ժ.	Աւազակաց բոյն	84
ԳԼՈՒԽ ԺԱ.	Վրէժխնդրութիւնն ու կապանք	90
ԳԼՈՒԽ ԺԲ.	Քննութիւն	99
ԳԼՈՒԽ ԺԳ.	Ձեղջ ու թողութիւն	108
ԳԼՈՒԽ ԺԴ.	Տխրութիւնն ու անջատում	115
ԳԼՈՒԽ ԺԵ.	Ուրացութեան գոյժ	122
ԳԼՈՒԽ ԺԶ.	Բանտարկութիւնն ու ազատութեան նշոյլ	127
ԳԼՈՒԽ ԺԷ.	Փախուստ	135
ԳԼՈՒԽ ԺԸ.	Կենդանացած խեղճը	142
ԳԼՈՒԽ ԺԹ.	Հիւրընկալ ամրոց մը	154
ԳԼՈՒԽ Ի.	Կրկին գերութիւն	168
ԳԼՈՒԽ ԻԱ.	Կռիւ կռուոյ վրայ	176
ԳԼՈՒԽ ԻԲ.	Ուրախութեան լուսնը	188





« Ազգային գրադարան



NL0248499

